



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**«Ռիո+20»
ԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑ**

Երևան 2012

© Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:



Սույն հաշվետվությունը տպագրվել է ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:



1992 թ.-ի Կայուն զարգացման Ռիո դե Ժանեյրոյի զագաթածո-ղովը Հայաստանի համար առաջին միջազգային բարձր մակարդակի ֆորումն էր, որին մեր երկիրը ներկայացավ որպես համամարդկային արժեքների գերակայության և ժողովրդավարության ձգտող նոր-անկախ պետականություն: Հայաստանը, չնայած ժառանգած աշխարհաքաղաքական խնդիրներին և անցումային տնտեսությանը բնորոշ դժվարություններին, իր հետագա քսանամյա ժամանակակից պատմության ընթացքում միշտ առաջնորդվեց «Ռիո»-ի սկզբունքներով և հիմնարար հասկացություններով՝ իր ապագա ծրագրերն ու ռազմավարությունը կերտելիս: «Ռիո»-ի գործընթացը շրջադարձային եղավ ժամանակակից քաղաքակրթության համար:

2002 թ.-ին Հայաստանում ստեղծվեց Կայուն զարգացման ազգային խորհուրդ, որն իր կարևոր ներդրումն ունեցավ զարգացման պետական ծրագրերի կազմման և օրենսդրական բարեփոխումների մեջ:

Կայուն զարգացմանն ուղղված «Ռիո»-ի նպատակները, դրանց իրականացումն ու կիրառումը միջազգային հանրությունից պահանջել և պահանջում են սերտ համագործակցություն և հավաքական աշխատանք: Բնության բարիքները հավասարաչափ չեն բաշխված ազգերի և պետությունների միջև: Երկրագնդի վրա ոմանց շոյալաբար բաժին են ընկել այդ բարիքներից, մինչդեռ մյուսները ստիպված են ամեն օր մաքառել իրենց առօրյա գոյության համար: Բոլորս պետք է գիտակցենք, որ այս երկրագունդը բոլորիս տունն է և մենք միասին պետք է օգտագործենք ու բազմապատկենք նրա բարիքներն ապագա սերունդների համար: Ցավոք, արդի աշխարհում բնության բարիքների անխնա օգտագործումն իրականացվում է՝ առաջնորդվելով նեղ էսասիրական և այժմեական շահերով, ի հաշիվ մարդկության ընդհանրական շահերի: Այս առումով, «Ռիո+20» զագաթածոդովն իր մեծ նպաստը կարող է բերել աշխարհի բոլոր երկրներին, քանի որ այն կարող է բացահայտել վերջին քսան տարիների ընթացքում նրանց անցած ճանապարհի նվաճումներն ու բացթողումները՝ հնարավորություն տալով համեմատել անցած ուղիները:

Միջազգային հանրությունն արդեն գիտակցում է, որ գուտ սպառողական մոտեցումը կործանարար է մարդկության ապագայի համար և հղի է անդառնալի հետևանքներով: Հավատացած են, որ Կայուն զարգացման «Ռիո + 20» զագաթածոդովը նոր շունչ կհաղորդի 20 տարի առաջ հիմնադրված գործընթացին, նոր լուծումներ կառաջադրի երկրագնդի բնակիչներին միասնական և միահամուռ ուժերով «կանաչ տնտեսություն» և «կանաչ երկրագունդ» ստեղծելու համար, որտեղ բոլորը կունենան հավասար հնարավորություններ և հավասար պարտականություններ:

ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 5

1. Կայուն զարգացման ապահովմանը միտված ձեռնարկումներ վերջին տասնամյակում.....7

1.1 Սոցիալ-տնտեսական իրավիճակ 7

1.2 Շրջակա միջավայրի պահպանություն..... 25

1.3 Զարգացման ազգային ծրագրեր..... 45

2. Պետական կառույցների և քաղաքացիական հասարակության համագործակցություն71

2.1 Պետական կառույցներ և գործարար/մասնավոր հատված..... 71

2.2 Պետական կառույցներ և հասարակություն..... 76

3. Դեպի «Կանաչ տնտեսություն»84

3.1 Ներառական տնտեսական աճ և եկամուտների արդար բաշխում..... 84

3.2 Ժամանակակից գիտատար, էներգախնայող և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների զարգացում..... 89

3.3 Հիմնական խնդիրները..... 96

4. Զարգացման նախադրյալներ և առկա մարտահրավերներ98

4.1 Զեռքերումներ 98

4.2 Մարտահրավերներ գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում..... 100

4.3 Առաջարկություններ 103

Հապավումներ.....104

Հավելվածներ

Հավելված Ա Համառոտ աշխարհագրական տվյալներ Հայաստանի Հանրապետության մասին..... 105

Հավելված 1 Սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների դինամիկ շարքեր..... 106

Հավելված 2 Շրջակա միջավայրի վիճակ 128

Հավելված 3 ՀՀ օրենսդրություն, 2002-2012թթ. 130

Հավելված 4 Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային կոնվենցիաներ..... 135

Հավելված 5 Քարտեզներ..... 137

Հավելված 6 Էկոլոգիական գործոնների կայուն զարգացման գնահատման համակարգում..... 146

Ներածություն

Ինչպես հայտնի է, 1992 թվականը բեկումնային եղավ մարդկության նորագույն պատմության ժամանակահատվածում: Ջարգացնելով 1972թ.-ին Ստոկհոլմում կայացած շրջակա միջավայրի հիմնախնդիրներին նվիրված ՄԱԿ-ի գիտաժողովի արդյունքները, 1992թ.-ի Երկրի գազաթաժողովը Ռիո դե Ժանեյրոյում սկիզբ դրեց արդի քաղաքակրթության կողմնորոշմանը դեպի կայուն /ներդաշնակ, հավասարակշռված, համընթաց/ զարգացում բոլոր մակարդակներում՝ գլոբալ, ռեգիոնալ, ազգային, տեղական:

2002թ. Յոհաննեսբուրգում ՄԱԿ-ի կազմակերպած «Ռիո+10» /Ստոկհոլմ + 30/ Կայուն զարգացման համաշխարհային գիտաժողովը գնահատեց անցած տասնամյակի նվաճումներն ու հիմնախնդիրները կայուն արտադրության և սպառման, տնտեսական զարգացումը սոցիալական արդարության և էկոլոգիական անվտանգության հետ ներդաշնակեցնելու ասպարեզում: Գիտաժողովը հստակեցրեց առաջիկա ծրագրերը, ինչպես նաև 2005-15թթ. հռչակեց «Հանուն կայուն զարգացման կրթության տասնամյակ»:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն մասնակցեց 1992թ. գազաթաժողովին և հաջորդ քսանամյակում, անցումային շրջանի և շրջափակման դժվարին պայմաններում, ջանքեր գործադրեց ընդունված պարտավորությունները հնարավորինս իրականացնելու, երկրում կայուն զարգացման սկզբունքները արմատավորելու ուղղությամբ:

Առջևում 2012թ.-ի հունիսին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ՄԱԿ-ի «Ռիո+20» /Ստոկհոլմ + 40/ Կայուն զարգացման գազաթաժողովն է, որի հիմնական թեմաներն են.

- Կանաչ էկոնոմիկան հանուն կայուն զարգացման և աղքատության հաղթահարման,
- Կայուն զարգացման ինստիտուցիոնալ հենքի ամրապնդումը:

Գազաթաժողովի խնդիրներն են.

- ապահովել նորացված քաղաքական համաձայնագրերի ընդունումը և իրականացումը,
- գնահատել առաջընթացը և խզումը ընդունված համաձայնագրերի ու դրանց իրականացման միջև,
- բնութագրել և հստակեցնել նոր ու արտակարգ մարտահրավերները:

Գազաթաժողովին երկրի պատշաճ մասնակցությունը ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2011թ. հուլիսի 19-ի 2011 թվականի N 685 - Ա որոշմամբ ստեղծվել է Նախապատրաստական աշխատանքները համակարգող ազգային հանձնաժողով՝ ՀՀ արտաքին գործերի ու բնապահպանության նախարարների համանախագահությամբ:

Հանձնաժողովին, որը կազմվել է պետական, հասարակական և գիտական հատվածների ներկայացուցիչներից, հանձնարարվել էր ապահովել «Ռիո+20» համաշխարհային գազաթաժողովին Հայաստանի Հանրապետության մասնակցության հետ կապված նախապատրաստական միջոցառումների իրականացումը:

Երկրի կողմից իրականացվող նախապատրաստական աշխատանքների կարևոր բաղադրիչն է Ազգային զեկույցի մշակումը, որը նվիրված է կայուն զարգացման ուղղությամբ երկրի նվաճումների, նաև մտահոգություն առաջացնող առկա հիմնախնդիրների/մարտահրավերների գնահատմանը: Հաշվի առնելով «Ռիո»-ի գազաթաժողովի հիմնական թեմաները, զեկույցում հատուկ շեշտադրվում են այդ հարցերին առնչվող ազգային խնդիրները:

Համակարգող հանձնաժողովի որոշմամբ ստեղծվել էին խմբագրական կոլեգիա և կայուն զարգացման ասպեկտներին համապատասխանող թեմատիկ խմբեր՝ կառավարական ու հասարակական հատվածների ներկայացուցիչների համանախագահությամբ, որոնք և նախապատրաստել են ազգային զեկույցի համապատասխան բաժինները, ուր հատկապես շեշտադրվել է վերջին տասնամյակի գործընթացների գնահատումը, քանզի 2002թ.-ին երկրի և միջազգային հանրությանը արդեն իսկ ներկայացվել է «Ռիո+10» ազգային գնահատման զեկույցը:

Հանրային լայնածավալ, բավականին թեժ քննարկումների և ՀՀ վարչապետի գլխավորությամբ գործող Կայուն զարգացման ազգային խորհրդում քննարկման ընթացքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի առնելով, արդյունքում ձևավորվել է սույն զեկույցը: Վերջինիս բովանդակությունը վկայում է, որ երկրում անցումային շրջանի պայմաններում հիմնականում գերակշռել է տնտեսությունը վերականգնելու և տնտեսական աճ ապահովելու առաջնայնությունը, հաճախ ի վնաս շրջակա միջավայրի: Սակայն հետզհետե կայուն զարգացման սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը դարձել է առաջնային, ինչին աջակցել է նույնպես միացումը մի շարք միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի, ինչպես նաև ակտիվ համագործակցությունը ՄԱԿ-ի կառույցների, մասնավորապես, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի և ՄԱԿ-ի Շրջակա Միջավայրի Ծրագրի հետ: Կայուն զարգացման

սկզբունքները հատկապես արտացոլվել են հանրապետությունում վերջին տարիներին ընդունված օրենքների և սոցիալ-տնտեսական զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության ծրագրերի մեջ: Նշված գործընթացներին ակտիվ աջակցություն է իրականացրել Կայուն զարգացման ազգային խորհրդի գործունեությունը, ինչպես նաև անգնահատելի դերակատարություն է ունեցել քաղաքացիական հասարակությունը:

«Ռիո+20» ազգային գնահատման զեկույցի հեղինակային կոլեկտիվը ջանացել է պատրաստել առավելագույնս օբյեկտիվ փաստաթուղթ և լիահույս է, որ գալիք զագաթաժողովը կարդարացնի մարդկության բազմակողմանի, բյուր սպասումները, կիրականացնի քաղաքակրթության կայուն զարգացման ուղիների և չափանիշների վերաբերյալ համաձայնության հարթակի իր առաքելությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունը իր արժանի ներդրումը կունենա այդ կարևորագույն գործընթացում:


1. Կայուն զարգացման ապահովմանը միտված ձեռնարկումներ վերջին տասնամյակում

1.1 Սոցիալ-տնտեսական իրավիճակ

1.1.1. Տնտեսության զարգացման միտումները: ՀՆԱ-ի և կառուցվածքի փոփոխությունները

21-րդ դարի առաջին տասնամյակը Հայաստանի համար եղավ տնտեսական բարձր աճի ժամանակաշրջան: Տնտեսության գրեթե բոլոր հատվածների զգալի զարգացումները նպաստեցին 2004-2008թթ.-ի ընթացքում համախառն ներքին արդյունքի՝ **ՀՆԱ-ի** երկնիշ ցուցանիշով աճին՝ միջինը 11.6% (Հավելված 1): Սակայն, համաշխարհային տնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց երկրի տնտեսության կայունացումը: Այն իրական արտացոլումն ստացավ 2008թ-ի վերջին եռամսյակի տնտեսական ցուցանիշներում: Արդեն 2009թ. արձանագրվեց տնտեսության 14.1 տոկոս անկում՝ Համաշխարհային բանկի կանխատեսած 11 տոկոսի դիմաց: Չնայած 2010 թվականին փաստվեց **ՀՆԱ-ի** նախորդ տարվա համեմատ 2.1 տոկոսով աճ, սակայն տնտեսության մի շարք առաջատար ճյուղեր դեռևս խոր ճգնաժամ էին ապրում: Հարկ է նշել, որ նշված ցուցանիշը նախատեսվածից բարձր է արձանագրվել, քանի որ կրել է կառավարության հակաճգնաժամային փաթեթի ազդեցությունը:

Գծապատկեր 1.1. ՀՆԱ-ի դինամիկան



2011 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցվել է **տնտեսական ակտիվության ցուցանիշի (SU3)¹** 5.9 % աճ: Ընդ որում, տնտեսական ակտիվությանը նպաստել են բոլոր ճյուղերը՝ բացառությամբ շինարարության: Հետճգնաժամային վերականգնման զարգացումները վկայում են այն մասին, որ Հայաստանի տնտեսական աճի մոդելը զարգացել է և առաջիկա տարիներին կշարունակի փոփոխվել: Մասնավորապես, մինչև 2008թ. արտասահմանից ստացվող դրամական փոխանցումների հաշվին աճող շինարարությունն աստիճանաբար իր դիրքերը զիջելու է տնտեսության արտահանելի հատվածին: Վերջինս, ներկայումս, տնտեսական վերականգնման շարժիչ ուժերից մեկն է հանդիսանում՝ հիմնականում կրելով հանքագործության աճի բարձր տեմպերի ազդեցությունը: Սակայն, դեռևս անելիքներ կան արտահանման բազայի ընդլայնման առումով, որը կարևորվում է արտաքին կայունության ապահովման տեսանկյունից: Նշվածը վկայում է, որ 2009 թվականից մինչ օրս իրականացված մակրոտնտեսական քաղաքականությունը եղել է խելամիտ՝ արտաքին շուկերի կլանման և մակրոտնտեսական կայունության ապահովման գործում:

Վերջին տարիների ընթացքում **սպառողական գները** հիմնականում կայուն են եղել՝ չգերազանցելով 4(+/-1.5) տոկոս միջակայքը: Թերևս բացառություն է 2010 թվականը, երբ տարելվերջին 12-ամյա գնաճը


¹ 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել SU3-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական SU3-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական SU3-ը չի ընդգրկում արտադրանքի գուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԾՉ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

(տվյալ տարվա դեկտեմբերի ցուցանիշը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ) կազմել է 9.4%: Բարձր գնաճային միջավայրը հիմնականում պայմանավորվել է առաջարկի գործոններով՝ առավելապես գյուղատնտեսության ճյուղի խորը անկմամբ, ինչի հետևանքով արձանագրվեց գյուղատնտեսական ապրանքների աննախադեպ բարձր գնաճ: 2012-2014 թվականներին կանխատեսվող 12-ամսյա գնաճը կպահպանի նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքով մակարդակը:

2002-2008 թվականներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականությունների արդյունքում **ընթացիկ հաշվի** հիմնական ցուցանիշների զգալի բարելավմանը հաջորդած համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումների արդյունքում կրճատվեցին Հայաստան ներհատող տրանսֆերտները և գործուային եկամուտները, ինչպես նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: Արդյունքում, 2009 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը կազմեց ՀՆԱ-ի 15.8 տոկոսը՝ զերազանցելով 2000 թվականի առավելագույն մակարդակը: Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում ՀՀ կառավարության քաղաքականությունը արտահանման խթանման ուղղությամբ 2010 թվականից տվեց իր դրական արդյունքները՝ տնտեսության արտաքին հատվածի բարելավումը ձևավորվել է ավելի արագ, քան սպասվում էր (Հավելված 1):

Տնտեսության հատվածների տարաչափ զարգացումները զգալի կառուցվածքային տեղաշարժերի հանգեցրեց ՀՆԱ-ի կազմում (Հավելված 1): Հատկապես նկատելի է եղել **շինարարության աճի** բարձր տեմպը, որն ապահովել է 2008թ. ՀՆԱ-ի աճի 39.1 %-ը և ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռն աճել է մինչև 25.3%: Ի հակադրություն դրան, 2009թ.-ին շինարարության ծավալների մեծ չափով անկումը (41.6%) կազմել է ՀՆԱ-ի անկման 74.5%-ը և ՀՆԱ-ի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը նվազել է մինչև 18.6%: 2009թ. նկատմամբ 2010թ.-ին շինարարության աճի տեմպը կազմեց 3%, սակայն տեսակարար կշիռը՝ (17,2%) 2008թ.-ի (25.3%) նկատմամբ մնաց ցածր:

Գծապատկեր 1.2. Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը, %



2006-2008թթ.-ին ՀՀ ազգային դրամը շարունակեց արժեզրկվել ԱՄՆ դոլարի և այլ արտարժույթների նկատմամբ, որը պայմանավորված էր նաև արտարժույթի ավելացող ներհոսքով (մասնավոր տրանսֆերտների, պետական դրամաշնորհների և օտարերկրյա ուղղակի ներդրումների տեսքով), իսկ 2009-2010թթ.-ին դրամը արժեզրկվել է՝ կապված 2009թ.-ի մասնավոր դրամական փոխանցումների և 2009-2010թթ.-ի՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների նվազման հետ: Տնտեսության անկմանը զուգահեռ նկատելի է ՀՆԱ-ի նկատմամբ տնտեսության վերջնական սպառման մակարդակի աճ (2010թ.-ին 94.0% 2008թ.-ի 81.8%-ի դիմաց): 2010թ.-ին միջին տարեկան գնաճը կազմել է 8.2%:

2010թ.-ին **արդյունաբերությունում** նույնպես գրանցվեց տնտեսական աճ՝ 10.5%, 2009թ.-ի 6.5% անկման դիմաց, որը 1.4 տոկոսային կետով նպաստեց 2010թ. ՀՆԱ-ի հավելաճին: Իսկ գյուղատնտեսությունում, որի վիճակը 2009թ.-ին համեմատաբար բարվոք էր, ընդհակառակը, գրանցվեց տնտեսական անկում (15.7%) պայմանավորված բնակլիմայական անբարենպաստ պայմաններով, որն էլ իր հերթին 2.7 տոկոսային կետով բացասաբար անդրադարձավ ՀՆԱ-ի հավելաճի վրա:

Որոշակի կայունացում և աճ է արձանագրվել արդյունաբերության առաջանցիկ ոլորտում՝ հանքարդյունաբերությունում /տես ստորև աղյուսակը, իսկ ավելի մանրամասն հավելված 1-ում/: Այն ավելի ակնհայտ է գունավոր և թանկարժեք մետաղների արդյունահանումում: Իսկ ոչ մետաղական հանածոների, մասնավորապես, շինարարական հանածոների մի մասի մոտ /քար, ավազ և այլն/ դեռևս պահպան-

վում են նվազման տեղեկները:

Արտահանման մատով պահպանվել են մի շարք գունավոր մետաղների և ոչ մետաղական հանածոների /բացառությամբ օր. մոլիբդենի խտանյութի, պելլիտի/ արտահանման աճի տեմպերը:

Աղյուսակ 1.1. Մի շարք պինդ օգտակար հանածոների արդյունահանված ծավալներն ու Կորուստներն արդյունահանման ժամանակ (մետաղները հանքաքարում)

	2008		2009		2010		2011	
	Արդյունահանում	Կորուստները մարվող պաշարներից, %	Արդյունահանում	Կորուստները մարվող պաշարներից, %	Արդյունահանում	Կորուստները մարվող պաշարներից, %	Արդյունահանում	Կորուստները մարվող պաշարներից, %
Ոսկի, կգ	720.5	4	498.7	4.0	1946.1	3.3	2735.7	4.9
Արծաթ, կգ	44321.8	2.3	10794.5	4.2	21892.4	4.8	25205.1	6.8
Պղինձ, տ	28280.3	2.4	32920.4	1.8	40946.1	2.2	43093.7	2.1
Ցինկ, տ	8468.8	4	7238.5	3.2	8971.8	5.8	10492.2	7.9
Պղնձամոլիբդենային հանքաքար, հազ. տ	13245.8	2	13745.0	1.8	15882.6	1.8	16497.1	1.5
Մոլիբդեն, տ	5594.7	2.1	5311.6	1.8	5408.0	1.9	5745.1	1.5
Բազալտ, խոր. մ	165276.8	18.7	138497.2	16.7	196222.6	14.0	176688.9	13.3
Տուֆ, խոր. մ	154735.5	32.7	115820.2	22.8	118864.6	17.7	122503.4	20.7
Մարմար, խոր. մ	468.9	89.5	330.4	87.1	531.0	83.4	83.0	90.0
Տրավերտին, խոր. մ	38742	19.5	44375.2	19.8	45578.6	23.8	55403.6	11.8
Պեղիտ, խոր. մ	129700	19	84142.0	18.7	74200.0	19.0	74627.0	19.0

Աղյուսակ 1.2. ՀՀ արտահանված և ներմուծված մի շարք օգտակար հանածոների ծավալները, տոննա

	2008		2009		2010		2011	
	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում
Պղնձի հանքաքար, խտանյութ	67,715.2	-	81,401.9	-	115,964.3	40.1	118,332.5	0.042
Մոլիբդենի հանքաքար, խտանյութ	783.1	501.1	1,192.6	53.9	300.0	160.5	860.0	136.4
Նավթ և նավթամթերք (բենզին, մագուիթ, նավթ, դիզ. վառելիք, յուղ)	-	399,543.0	571.0	344,487.4	127.8	377,686.1	97.1	357,306.1
Բնական և հեղուկ գազ	22,989.1	1,587,344.5	22,286.1	1,226,743.7	51,703.4	1,295,882.5	55,807.7	1,504,699.6
Գրանիտ, բազալտ, ծիրանաքար, ավազաքար	4,648.2	1,273.9	4,432.4	783.8	5,670.8	781.5	6,117.5	1738.4

Գյուղատնտեսությունը հանդիսանում է հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը: 2008-2010թթ. տվյալներով գյուղատնտեսությունում ձևավորվել է երկրի համախառն ներքին արդյունքի շուրջ 17 %-ը, իսկ ագրովերամշակման հետ մեկտեղ այն կազմում է 21.7 %:

Հաշվի առնելով երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում գյուղատնտեսության կարևորությունը՝ անկախության հռչակումից անմիջապես հետո ընտրվեց հողի և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցների, սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերք իրացնող ու վերամշակող կազմակերպությունների մասնավորեցման քաղաքականություն: Արդյունքում, ներկայումս ագրոպարենային ոլորտում ձևավորվել է շուկայական հարաբերություններով կարգավորվող ազատ

տնտեսական համակարգ, որը ներառում է ավելի քան 340 հազար գյուղացիական տնտեսություն, գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ, գյուղատնտեսության սպասարկման, գյուղմթերքների իրացման ու վերամշակման բազմաթիվ մասնավոր ընկերություններ:

2008-2010թթ. միջին տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է շուրջ 606 մլրդ դրամ (Հավելված 1), ընդ որում բուսաբուծության ճյուղի մասնաբաժինը 63 % է, իսկ անասնապահությանը՝ 37.0 %: Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում երկրի զբաղվածների ընդհանուր թվի շուրջ 45 %-ը: Հանրապետության 915 համայնքներից 866-ը գյուղական են: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ, գերակշռող մասը ապահովվում է մասնավոր հատվածի կողմից:

Երկրի արտաքին ապրանքաշրջանառության կառուցվածքում, 2008-2010 թվականների տվյալներով բուսական և կենդանական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմել է 17.9 %:

Գյուղական բնակավայրերի բնակչության եկամուտների գերակշռող մասը ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և գյուղատնտեսությունում վարձու աշխատանքից: Այդ իսկ պատճառով գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը մեծապես պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտի տնտեսական աճով:

Ըստ հանրապետության **ազգային պարենային հաշվեկշռի** տվյալների, էներգետիկ արժեքով հաշվարկված կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակը կազմում է 58-60 %: Հանրապետությունում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, կաթի, մանր եղջերավորների մսի, ձվի համար, իսկ ցորենի, հատիկազուրկ մշակաբույսերի, թռչնի և խոզի մսի ինքնաբավության մակարդակը շարունակում է ցածր մնալ:

Գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների և փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների միջև աստիճանաբար ձևավորվում են պայմանագրային հարաբերություններ, որոնք հուսալի նախապայմաններ են ստեղծում լուրջ, պտղի, խաղողի և կաթի արտադրության ավելացման համար:

Վերջին տասնամյակի 2001-2008 թվականներին գյուղատնտեսության ոլորտում ապահովվել է որոշակի տնտեսական աճ: Ինչ վերաբերում է 2009-2010 թվականներին, ապա գյուղատնտեսությունում գրանցվել է տնտեսական անկում, որը հատկապես ընդգծված էր 2010 թվականին, երբ ճյուղի համախառն արտադրանքը, նախորդ տարվա համեմատությամբ, հիմնականում անբարենպաստ բնակլիմայական գործոններով պայմանավորված, կրճատվեց 13.6 տոկոսով: Գյուղատնտեսության ոլորտում համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2010թ. նոյեմբերին ընդունվել է «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության զարգացման ռազմավարությունը»: Մասնավորապես են զարգացման 17 խումբ խնդիրներ, որոնք ներառում են, մասնավորապես, հակաճգնաժամային բազմանշանակ մեխանիզմների ներդրումը, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը, սննդամթերքի անվտանգության ապահովումը, հողօգտագործման արդյունավետության բարձրացումը, օրգանական գյուղատնտեսության զարգացումը և ոլորտի այլ գերակա ուղղություններ:

Էներգետիկայի ոլորտում շեշտադրվել են էներգաանվտանգության ապահովումը, էներգախնայողությունը և այլընտրանքային էներգետիկայի զարգացումը: Էներգետիկայի ոլորտի ազգային քաղաքականության հիմնական նպատակներից մեկը սահմանված է որպես էներգախնայողության բարելավումը և վերականգնվող էներգետիկ աղբյուրների հետագա զարգացումը: Մշակվել և ընդունվել են համակարգը կարգավորող մի շարք առանցքային փաստաթղթեր:

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում **նոր միջուկային էներգաբլոկ/ներ/ի** կառուցման մասին» ՀՀ օրենքը (2009թ.), ՀՀ կառավարության 2005թ. որոշումը «Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համատեքստում էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարությունը», Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության դրոյթներով նախատեսված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը, Հայաստանի Հանրապետության էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ազգային ծրագիրը, Հայաստանի Հանրապետության հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական զարգացման ծրագիրը տեղայնացվել և ներդաշնակեցվել են Եվրոպական տեխնիկական հանձնաժողովի կողմից սահմանված բնակելի և հասարակական շենքերի էներգատարության և էներգաարդյունավետության թվով 7 ստանդարտներ:

Հարկ է նշել, որ ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հիմքում դրված են 1992 թ. «Ռիո»-ի համաժողովի ընդունած Կայուն Զարգացման գործողությունների գլոբալ ծրագիրը, Յոհաննեսբուրգի գազաթաժողովի՝ Կայուն Զարգացման նախանշած սկզբունքները, Եվրահանձնաժողովի Կանաչ Գրքում արտացոլված «էներգամատակարարման անվտանգության, մրցունակության և կայունության ապահովման

Եվրոպական ռազմավարությունը», Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք այլ բնապահպանական կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները:

Ոլորտում իրականացված միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ գնահատել Հայկական ԱԷԿ-ի հնարավոր փակման հետ կապված հետևանքները և փոխարինող հզորությունների անհրաժեշտ ծավալների հիմնավորումները՝ ուղղված հանրապետության էներգետիկ անկախության և անվտանգության ապահովմանը, գնահատել Հայաստանի Հանրապետության էներգիայի պահանջարկի բավարարման տարբերակները՝ Հայկական ԱԷԿ-ի շահագործումից դուրս բերելու պարագայում, ապահովել բնական գազի պահանջարկի կանխատեսումները՝ կախված Հայկական ԱԷԿ-ի աշխատանքի դադարեցման ժամկետներից, և այդ պարագայում բնական գազի պահանջարկի ապահովման գործում Հայաստան ներկրվող գազի ծավալների ավելացման հարցը՝ Իրան-Հայաստան գազամուղով, մշակել էներգահամակարգի զարգացման տնտեսապես օպտիմալ պլանն ու սահմանել ատոմային և վերականգնվող էներգետիկայի դերը տնտեսական զարգացման գործում: Ներկայումս գործում է Իրան-Հայաստան գազամուղը, ներդրվել է էլեկտրաէներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգը, էլեկտրաէներգետիկական համակարգի ավտոմատ կառավարման (SCADA) համակարգը, արտադրող կայանների ռեժիմների օպտիմալացման արդյունքում հաջողվել է պահպանել էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր նվազագույն սակագինը, շահագործման է հանձնվել Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երկրորդ գիծը և մեկնարկել է էլեկտրահաղորդման երրորդ գծի շինարարությունը, ավարտին են մոտենում էներգահամակարգի 220 կՎ ենթակայանների արդիականացման աշխատանքները:

Մասնավոր ներդրումների հաշվին 2004-2011 թթ. ընթացքում կառուցվել և շահագործման են հանձնվել շուրջ 160 ՄՎտ տեղակայված հզորությամբ թվով՝ 111 փոքր ՀԷԿ-եր /ընդհանուր առմամբ ՀՀ-ում Հիդրոէլեկտրակայանների արտադրած հոսանքը կազմում է հանրապետությունում արտադրված էլեկտրական հոսանքի մոտավորապես 35%-ը, որի մեջ փոքր ՀԷԿ-երի մասնաբաժինը կազմում է շուրջ 7%, շահագործման է հանձնվել տարածաշրջանում առաջին ցանցային հողմաէլեկտրակայանը՝ 2,6 ՄՎտ հզորությամբ, շահագործման է հանձնվել Երևանի ՋԷԿ-ի նոր շոգեգազային համակցված ցիկլով էներգաբլոկը՝ 240 ՄՎտ տեղակայված էլեկտրական հզորությամբ, շահագործման է հանձնվել 440 ՄՎտ հզորությամբ գազային կցատուրբինով Հրազդանի 5-րդ էներգաբլոկը, կառուցվել են 6,1 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ /էլեկտրական/ համակցված ցիկլով գործող կոգեներացիոն կայաններ:

2002-2011 թվականների ընթացքում **ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը** ավելացել է միջինը 17.8 տոկոսով (Հավելված 1): Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումների հետևանքով 2009 թվականին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համեմատ կրճատվել է 26.5 տոկոսով, տեղի է ունեցել արտահանման և ներմուծման ծավալների կրճատում համապատասխանաբար 32.8 և 25 տոկոսով: Ներմուծման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած ազգային արժույթի՝ դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Սակայն 2010 թվականից, պայմանավորված համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության աշխուժացմամբ, արտաքին առևտրի ցուցանիշները բարելավվել են և դրսևորել են աճի միտումներ: Արտահանման ցուցանիշի բարելավման վրա դրական ազդեցություն է ունեցել նաև կառավարության նպատակային քաղաքականությունը, ըստ որի ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերվում արտահանողներին:

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը 2011 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 14.4 տոկոսով, ընդ որում տեղի է ունեցել ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դոլարային արտահայտությամբ ծավալների աճ. արտահանումն աճել է 27.7 տոկոսով (կազմելով 1329.5 մլն. ԱՄՆ դոլար), իսկ ներմուծումը՝ 10.7 տոկոսով (կազմելով 4151.5 մլն. ԱՄՆ դոլար): Արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «Հանքահումքային արտադրանք», «Թանկարժեք քարեր և մետաղներ» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի աճով, որոնք արտահանման 27.7 տոկոս աճին նպաստել են համապատասխանաբար 8.8, 6.0 և 5.1 տոկոսային կետերով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված է եղել «Հանքահումքային արտադրանք» և «Թանկարժեք քարեր և մետաղներ» ապրանքախմբերի աճով, որոնք ներմուծման 10.7 տոկոս աճին նպաստել են համապատասխանաբար 4.2 և 1.5 տոկոսային կետերով: ՀՀ հիմնական գործընկեր երկրներն են Ռուսաստանը, Գերմանիան, Իրանը, Նիդերլանդները, ԱՄՆ-ն, Վրաստանը, Բելգիան, Բուլղարիան, Չինաստանը:

2002-2011թթ. **առևտրային բանկերի** կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ զգալի ավելացել է: Հատկանշական է, որ նույնիսկ ճգնաժամի ժամանակահատվածում նշված ցուցանիշի նվազում չի արձանագրվել, ինչում կարևոր դերակատարություն է ունեցել կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում համակարգաստեղծ ձեռնարկություն-

ներին, ինչպես նաև արտահանման և ներմուծման փոխարինման ուղղվածություն ունեցող ՓՄՁ սուբ-յեկտներին կառավարության կողմից տրամադրված ֆինանսական օժանդակությունը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2002-2011թթ. նույնպես աճել են: 2011 թվականի վերջի դրությամբ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդները նախորդ տարվա համեմատ ավելացել են շուրջ 267 մլրդ դրամով կամ 38.1 %-ով² և ՀՆԱ-ի մեջ կազմել շուրջ 25.1%: 2012-2014 թվականների համար կանխատեսվել է, որ առևտրային բանկերի վարկերը և ավանդները շարունակելու են աճել:

2002-2011 թվականներին **պետական բյուջեի եկամուտները** ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են միջինը 20%, դրսևորելով շարունակական աճի միտումներ: 2011 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.5%, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 20.1%:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2002-2011 թվականներին կազմել է միջինը 22.1%, իսկ 2009 թվականին՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին հակազդելու քաղաքականությամբ, կազմել է 29.6%:

ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2002-2008 թվականներին միջինը կազմել է ՀՆԱ-ի 1.0%: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ հավաքագրվող եկամուտների կրճատումը և անապահովներին ու խոցելի խմբերին պաշտպանելու, ինչպես նաև տնտեսական գործունեությունը ողջամիտ մակարդակում պահպանելու անհրաժեշտությունը հանգեցրեց նրան, որ կառավարությունը ներգրավեց պակասուրդի արտաքին ֆինանսավորման միջոցներ, որի արդյունքում **2009 թվականին պետական բյուջեի դեֆիցիտ/ՀՆԱ մակարդակը կազմեց 7.6%:**

2010 թվականից պետական հատվածի քաղաքականության հիմնական ուղղությունը միտված է պարտքի արդյունավետ կառավարման և պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման ապահովմանը: 2009 թվականին իրականացված հնարավորինս ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության դիմաց հետագա տարիներին իրականացվում է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն:

Հայաստանի ընդհանուր պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հաստատուն կերպով նվազեց՝ 1999 թվականի 49 տոկոսից 2008 թվականին կազմելով 16.4 տոկոս, իսկ **անվանական մեծություններով ընդհանուր պետական պարտքը**, 1999 թվականի 0.9 միլիարդ ԱՄՆ դոլարից ավելացավ 1 միլիարդ ԱՄՆ դոլարով: Նույն ժամանակահատվածում պետական և պետության կողմից երաշխավորված (ՊՊԵ) արտաքին պարտքն ավելացավ՝ 0.87-ից հասնելով 1.58 միլիարդ ԱՄՆ դոլարի, իսկ ներքին պարտքը հնգապատկվեց՝ 0.06-ից կազմելով 0.33 միլիարդ ԱՄՆ դոլար: Հայաստանի պետական պարտք/ ՀՆԱ ցուցանիշը 2000 թվականի 47,8 %-ից աստիճանաբար նվազել է՝ 2008 թ. հասնելով 16.3%-ի, (ինչն արտացոլում էր տնտեսական աճի բարձր տեմպերը), իսկ հետագայում Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով աճեց մինչև 40,4% (2010 թ.): Պարտքի այսպիսի կտրուկ աճը հիմնականում պայմանավորված էր իրական տնտեսությունը պաշտպանելու նպատակով միջազգային պահուստների և բյուջեի դեֆիցիտի ավելացմամբ, ինչպես նաև դրամի արժեզրկմամբ: Այդ ժամանակ կառավարությունը ստիպված էր արտաքին աղբյուրներից ներգրավել փոխառություններ, որոնց մի մասն ուղղվել է մասնավոր հատվածին՝ զուտ վարկավորման գործառնությունների միջոցով: 2010թ. պարտքը պայմանավորող հիմնական գործոնը առաջնային դեֆիցիտն էր, ինչպես և նախաճգնաժամային տարիներին:

Հարկ է նշել նաև, որ 2000 թվականից մինչև 2008թ. ավելացել է դեֆիցիտի ներքին ֆինանսավորումը (6-ից 16%), որը 2009 թվականին նվազել է (11%): Սակայն ակնկալվում է, որ հետագայում ցուցանիշը կբարձրանա՝ կապված կենսաթոշակային և ապահովագրական ոլորտներում իրականացվող բարեփոխումների հետ:

Պարտքի կայունության վերլուծության արդյունքները հիմնականում փաստում են, որ միջնաժամկետ ծախսային ծրագրերի՝ ՄԺԾԾ-ի հիմքում ընկած մակրոտնտեսական կանխատեսումների և հարկաբյուջետային քաղաքականության նախատեսված վարքագծի միջոցառումներով պայմանավորված, պակաս հավանական են պարտքի կայունության խաթարման լուրջ վտանգները և պարտքի բեռը բնութագրող ցուցանիշները կզտնվեն կառավարելիության շրջանակներում: Սակայն, պարտքի կայունության վերլուծության շրջանակներում կատարված ստրես-թեստերը բացահայտում են նաև, որ արտաքին պարտքի կայունությունը առավել զգայուն է փոխարժեքի կտրուկ արժեզրկման նկատմամբ, իսկ ֆիսկալ կայունության մասով՝ ցածր տնտեսական աճի նկատմամբ: Հետևաբար, ՄԺԾԾ-ի մակրոտնտեսական շրջանակի հիմ-

² Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

քում դրվել է այնպիսի պարտքի կառավարման ռազմավարություն, որը չի սահմանափակի տնտեսական աճը, վերջինս էլ կնվազեցնի փոխարժեքի արժեզրկման ռիսկերը:

1.1.2. Սոցիալական պատկերը և աղքատությունը

Հայաստանի անկախացմանը հաջորդած տարածաշրջանային քաղաքական իրավիճակը, շրջափակումը, վառելիքաէներգետիկ խորը ճգնաժամը ամբողջապես կազմալուծեցին երկրի տնտեսությունը, իսկ բնակչության աղքատությունը հասավ 55 %-ի: Երկրում իրականացված տնտեսական ռեֆորմների արդյունքում գրանցվեց կայուն տնտեսական աճ, որը ՀՀ-ում պահպանվեց մինչև Հայաստանի ներքաշվելը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ՝ 2008թ. վերջերը: 2009թ. արձանագրվեց տնտեսության 14.1% անկում, որին սկսեց հաջորդել դանդաղ, փոփոխական միտումներով վերականգնում:

Աղյուսակ 1.3. Աղքատության մակարդակը Հայաստանում 1996-2010 թթ.-ին

	1996	1998/99	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
Աղքատության մակարդակը հանրապետությունում 1996թ. մեթոդաբանությամբ	(54.7)*	55.1	50.9	49.7	42.9	39.0	---	---	---	---	---	---
2004թ. Մեթոդաբանությամբ	---	56.1	---	---	---	34.6	29.8	26.5	25.0	23.5	28.7	28.9
2009թ. Մեթոդաբանությամբ	---	---	---	---	---	53.5	---	---	---	27.6	34.1	35.8

* 1996թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունն անց է կացվել մեկ ամսվա ընթացքում: Այնուհետև 1998/99թ.-ին և սկսած 2001թ.-ից այն իրականացվում է տարեկան պարբերականությամբ: Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ


2000-ականների սկզբին տնտեսության կայուն զարգացումը բերեց աշխատավարձերի բարձրացման, զբաղվածության մակարդակի կայունացման և բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի ավելացման: Այդ ամենը, մասնավոր տրանսֆերտների աճող հոսքի հետ մեկտեղ, նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով Կայուն զարգացման ծրագրի հիմքում դրված մակրոտնտեսական գործընթացները, նպատակադրումներն ու կանխատեսումային ցուցանիշները դարձան ոչ իրատեսական:

Մինչդեռ ժամանակակից տնտեսական աճի (աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի՝ ԱՀՌԾ իրականացման) ժամանակահատվածում, համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ամենամյա հետազոտության (ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, Հավելված 1) ըստ 2009թ. Մեթոդաբանությամբ վերահաշվարկված ամփոփ արդյունքների, հանրապետությունում գրանցվել է աղքատության կրճատում՝ 2004 թվականի 53.5% (ծայրահեղ աղքատություն՝ 4.4%) մինչև 2008 թվականին՝ համապատասխանաբար՝ 27.6 % (ծայրահեղ աղքատություն՝ 1.6%): Այս հետազոտություններով յուրաքանչյուր տարի գնահատվում է նաև իրականացվող սոցիալական պաշտպանության ծրագրերի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա: Հարկ է նշել, որ աղքատությունը 2010թ.-ին շատ չի տարբերվում ըստ քաղաքային (35.7%) և գյուղական բնակավայրերի (36.0%):

Եթե սոցիալական պաշտպանության ծրագրերը չիրականացվեին, ապա այդ նույն տարիներին աղքատության մակարդակը կգրանցվեր՝ 2004 թվականի 44.8 % (ծայրահեղ աղքատություն՝ 15.4%) մինչև 2008 թվականին՝ համապատասխանաբար՝ 39.5 % (ծայրահեղ աղքատություն՝ 19.6%): Այսպիսով, սոցիալական պաշտպանության ծրագրերի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա 2004 թվականին կազմել է 10.2 տոկոսային կետ (ծայրահեղ աղքատության՝ 9 տոկոսային կետ), իսկ 2008 թվականին՝ համապատասխանաբար 16 և 16.5 տոկոսային կետ:


Գծապատկեր 1.3. Ծայրահեղ աղքատությունը և աղքատությունը Հայաստանում /Ըստ ՀԲ 2009թ. մեթոդաբանության/



Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ, 2010

Գծապատկեր 1.4. Աղքատության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 2008 և 2010թթ.

(տոկոսներով)




Աղբյուրը՝ ՏՏԿԱՀ 2008 և 2010թթ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի նոր փուլով պայմանավորված հանրապետությունում գրանցվել է աղքատության մակարդակի բարձրացում՝ 2009թ.-ին. աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակը գրանցվել է՝ 34.1% և 3.6%, իսկ 2010թ.-ին՝ 35.8% և 3.0% (Հավելված 1): Աղքատության խորության 8.1% գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ, և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի 8.1%-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսակա՛նորեն կվերանար, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե աղքատության խորությունը հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա այն ցույց է տալիս աղքատության պակասորդը, այսինքն՝ այն ցույց է տալիս, թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից:

Աղքատության սրությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը: Այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներին՝ շատ մոտ: 2010թ.-ին աղքատության սրությունը եղել է 2.5%: Զգալիորեն ավելացել է նաև Զինիի գործակիցը:

Գծայատկեր 1.5. Ջինիի գործակիցը



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ 2008 - 2010թթ

2008-2010թթ.-ին Հայաստանում աղքատության մակարդակի աճը պայմանավորող առավել կարևոր գործոնը 2009թ.-ին տնտեսության խոր անկումն էր՝ 14.1%: Հայաստանի տնտեսությունը 2010թ.-ին մի փոքր աճեց նախորդ տարվա նկատմամբ, սակայն աճը կազմեց միայն 2.1%: Տնտեսության խոր անկումը գուցարդվելով բնակչության եկամուտների ավելացող անհավասարության հետ, նպաստել է բնակչության սպառման նվազմանը: Ինչպես բացահայտում են 2010թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները, ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008թ.-ի համեմատ նվազել է 8%-ով: Նվազումը նկատվել է սպառման բոլոր քվինտիլներում, բացի ամենահարուստ 5-րդ քվինտիլի, որտեղ արձանագրվել է սպառման աճ:

Հարկ է նշել, որ զգալի փոփոխության են ենթարկվել բնակչության ապրելակերպի որոշակի սովորույթայինները: Մասնավորապես, պակասեցրել են սննդի սպառումը (31.5%), թանկարժեք սննդամթերքը փոխարինել են էժանով (59.2%), դադարեցվել կամ նվազեցվել են ոչ պարենային ապրանքների ձեռք բերելը (48.3%), ավելի քիչ են օգտվում զվարճանքներից (66.1%) ու ընկերային հանդիպումներից (64.6%) և այլն:

2010թ.-ին աղքատության հաղթահարման համար, ըստ հաշվարկների, Հայաստանին անհրաժեշտ է 105.9 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 3 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 2.7 մլրդ.դրամ կամ ՀՆԱ-ի 0.1 %-ը, ի հավելումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն: Միջազգային փորձը վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են: Բարձր հասցեականություն ապահովելու նպատակով պահանջվող ռեսուրսների համեմատ, ազատական տնտեսակարգով երկրներում, աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները հարկ է առնվազն կրկնապատկել:

Աղքատության պատկերի ամբողջականացման համար դիտարկենք նաև **ոչ նյութական աղքատության** (վատ առողջությունը, կրթության ցածր մակարդակը կամ անգրագիտությունը, սոցիալական անտեսվածությունը և այլն) փոփոխության միտումները: Բերենք դրանց հակիրճ նկարագիրն ըստ ՀՀ ԱՎԾ *ՏՏԿԱՀ ամփոփ արդյունքների* (առավել մանրամասն դիտարկված են սույն զեկույցի հետագա բաժիններում):

Հայաստանը նախկին համակարգից՝ ԽՍՀՄ-ից ժառանգություն էր ստացել **առողջապահության** լավ համակարգ և ներկայումս կարողացել է ապահովել առողջապահության լավ ցուցանիշներ:

Սակայն դեռևս առողջապահության ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավական ցածր է, հատկապես գյուղական բնակավայրերում և աղքատ բնակչության շրջանում: Համաձայն 2010թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների, առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ՝ նորմալ, լավ և շատ լավ գնահատականը ստացվել է 88.4% բնակչության կողմից, իսկ վատ և շատ վատ գնահատականը՝ 11.6%-ի կողմից: Վատառողջ են ոչ աղքատների 12.3%-ը, աղքատների՝ 10.1% և ծայրահեղ աղքատների՝ 11.6%-ը: Հիվանդացության ժամանակ մոտավորապես ամեն հինգից երկուսը (37.9%) դիմել են բժշկական խորհրդատվության կամ բուժման համար:

Աղյուսակ 1.4. Հայաստանի առողջապահական համակարգի հիմնական ցուցանիշները

	2005	2006	2007	2008	2009	2010
Բոլոր մասնագիտությունների բժիշկները 10000 բնակչի հաշվով	38.2	38.4	37.9	39.9	40.6	41.7
Միջին բժշկական անձնակազմը 10000 բնակչի հաշվով	57	57.6	57.6	57.4	57	57.2
Հիվանդանոցային հիմնարկների քանակը, միավոր	145	140	135	130	127	130
Հիվանդանոցային մահճակալների քանակը, 10000 բնակչի հաշվով	44.6	44.3	40.6	38.2	37.1	37.3
Բժիշկների թվաքանակը ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, 10000 բնակչի հաշվով	14.4	14.4	14.4	15	15	15.2
Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների հզորությունը (հաճախումների քանակը մեկ հերթափոխում) 10000 բնակչի հաշվով	121.9	122.9	117.7	120.4	119.6	120.6
Կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների, ինքնուրույն բուժարանների, կանանց կոնսուլտացիաների և մանկական բաժանմունքներ ունեցող հիմնարկների քանակը, միավոր	246	237	301	329	359	363
Հղի կանանց և ծննդկանների համար նախատեսված մահճակալները ֆերտիլային տարիքի (15-49 տարեկան) 10000 կնոջ հաշվով	18.1	17.7	14.4	12.9	12.7	13.1
Հիվանդ երեխաների համար նախատեսված մահճակալների քանակը, միավոր 10000 երեխայի հաշվով	25.3	26	23.8	21.4	20.8	20.2

Նախորդ տարվա համեմատ հիվանդներն ավելի հաճախ են դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման համար, հատկապես գյուղական բնակավայրերում: Եթե հիվանդության դեպքում ոչ աղքատների 41.6%-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների՝ 30.0 և ծայրահեղ աղքատների՝ 24.1%-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման: Հարկ է նշել, որ բնակչության համարյա մեկ երրորդը (32%) հիվանդանալու դեպքում խորհրդատվության համար դիմել է թերապևտին, ամեն չորրորդը՝ (23.6%) նեղ մասնագետին, 22%-ն էլ՝ ընտանեկան բժշկին, այն դեպքում, երբ մասնավոր բժիշկներին է դիմել՝ միայն 4%-ը: Նեղ մասնագետին վճարել է բուժօգնության համար դիմած հիվանդների 35.6%-ը, թերապևտին՝ 21.4%-ը (ՀՀ ԱՎԾ. ՏՏԿԱՀ, 2010):

Պոլիկլինիկական բուժհիմնարկներ, ինչպես նաև շտապ օգնություն չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 52% և ֆինանսական վատ վիճակը՝ 24%: Հիվանդների ծախսերը հիվանդանոցներում բավականին բարձր են՝ միջինում 67863 դրամ մեկ հիվանդի հաշվով: Յուրաքանչյուր հիվանդ հիվանդանոցի գանձապահին վճարել է միջինում 43113 դրամ, իսկ այդ գումարի մոտ մեկ երրորդ մասը՝ (15395 դրամ) անմիջապես բուժ. անձնակազմին, բացի այդ, նվերների տեսքով վճարվել է 927 դրամ, այլ վճարումների տեսքով՝ 8428 դրամ:

Ամենաբարձր վճարումները կատարվել են վիրաբույժներին և ուռուցքաբաններին: Ամենամեծ նվերները արվել են ռեանիմատոլոգներին և մանկաբարձ-գինեկոլոգներին: Հետագուտված տնային տնտեսությունների ծախսերի մեջ դեղորայքի ձեռք բերման համար կատարված ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի մոտ 4%:

Ըստ ՀՀ մարդահամարների ամփոփ արդյունքների, Հայաստանում գրեթե ողջ բնակչությունը՝ 99.9% **գրագետ է: Հանրակրթությունը** մատչելի է բոլորի համար: Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում, ավագ դպրոցում և մասնագիտական կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը բավական նկատելի: **Բարձրագույն կրթության** հետ կապված բարձր ծախսերը և հատկապես դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո համապա-

տասխան աշխատանք գտնելը, բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

2010/2011 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 44 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 28-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 16-ը՝ միջին մասնագիտական: Ուսանողների 25.1%-ը կանայք են: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 90.8%-ը: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա:

Հանրապետության 101 միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈւՀ) 2010/2011 ուսումնական տարում ընդունվել է 11666 (կանայք՝ 57.2%), սովորել՝ 29575 (կանայք՝ 60.8%), ավարտել՝ 8382 (կանայք՝ 71.1%) մարդ: Ուսումնառությունը գերազանցապես իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա:

Հանրապետության 74 բարձրագույն պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ԲՈւՀ) և 12 մասնաճյուղում 2010/2011 ուսումնական տարում ընդունվել է 26443 (կանայք՝ 47.6%), սովորել՝ 111003 (կանայք՝ 52.8%), ավարտել՝ 23935 (կանայք՝ 56.2%) մարդ:

Երեխաների ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում կազմել է 25.3%, քաղաքային համայնքներում՝ 32.7%, գյուղական համայնքներում՝ 12.4%:

Դպրոցներում աշակերտների ընդգրկվածությունը կազմել է 90.1%, ընդ որում, տարրական դպրոցում այն կազմել է 96.8%, հիմնական դպրոցում՝ 91.6%, ավագ դպրոցում՝ 84.4%:

Աղյուսակ 1.5. Աշակերտների և ուսանողների (պետական և ոչ պետական հանրակրթական նախամասնագիտական, միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների) ընդգրկվածությունը, %-ով համապատասխան տարիքի բնակչության թվաքանակից

2001	69.1
2002	68.8
2003	71.7
2004	69.0
2005	70.9
2006	72.0
2007	72.1
2008	73.0
2009	72.8
2010	72.0

Ըստ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների, 2010թ.-ին, ընդհանուր առմամբ, մինչև 6 տարեկան 10 երեխայից մոտավորապես 8-ը չի հաճախել նախադպրոցական հաստատություն: Պատասխաններից երևում է, որ որպես հիմնական պատճառներ նշել են, որ երեխայի մայրը չի աշխատում՝ 62%, մանկապարտեզ չկա՝ 19%, դրանից օգտվելը թանկ է՝ 6% կամ նախադպրոցական հաստատությունը փակվել է՝ 4%:

2010թ.-ի ընթացքում 15-16 տարեկան երեխաների 11.5%-ը որևէ ուսումնական հաստատություն չի հաճախել: Նրանց գերակշիռ մասը՝ 74.9%-ը, պատճառաբանել է, որ ավարտել է դպրոցը, 2.4%-ը նշել է, որ ավարտել է կրթությունը, 9.4%-ը չի ցանկացել այլևս սովորել, 3.5%-ը դպրոց չի հաճախել առողջական խնդիրների պատճառով, իսկ 1.3%-ի համար կրթական ծառայությունները շատ թանկ են և դրանով պայմանավորված՝ նրանք թողել են դպրոցը: Մնացածը չեն հաճախել դպրոց այլ պատճառներով:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների տեսակարար կշիռը կտրուկ տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 20.3%, աղքատ տնային տնտեսություններում՝ 8.7%, ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում՝ 4.5%:

Բնակչության բնակարանային պայմանները: Հայաստանում 2010թ. տնային տնտեսությունների գերակշիռ մասը (90.2%-ը) հանդիսանում է իր կացարանի սեփականատերը: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունները գլխավորապես բնակվում են բազմաբնակարան շենքերում՝ 69.4%, իսկ գյու-

ղական բնակավայրերում գերակշռում են առանձնատները՝ 90.1%: 2010թ.-ին հանրակացարաններում ապրող տնային տնտեսությունների մեծ մասը բնակվում է Երևան քաղաքում: Հանրակացարաններում, ժամանակավոր և այլ տեսակի կացարաններում բնակվող ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության համամասնությունը կազմում է մոտ 4%:

Դեռևս զգալի թիվ կազմող բնակարանի (կացարանի) կարիք ունեցողներ դեռևս ունեն լուրջ դժվարություններ դրա ձեռք բերման համար: Մասնավորապես, բարձր գներ, հիփոթեքային ծառայությունների անհասանելի պայմաններ, բնագավառի պետական կարգավորման անբավարար վիճակ:

1.1.3. Սոցիալական պաշտպանության ոլորտ


ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականությունը սոցիալական պաշտպանության ոլորտում ուղղվեց սոցիալական ծախսերի առնվազն նույն մակարդակով պահպանելուն:

Թեև սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեց տարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (2010թ. 7.0%)

Այդուհանդերձ, սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը: Ամբողջ բնակչության հաշվով, եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ տնային տնտեսությունները՝ բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը զգալիորեն կաճի. Աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 18.4 տոկոսային կետով կամ 51%-ով (35.8%-ից՝ 54.2%), աղքատությունը նաև էապես կխորանա և կսրվի: Իրավիճակն ավելի կսրվի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության համար:

ՀՀ կառավարությունն այդ ժամանակաշրջանում կարողացավ ավելի շատ միջոցներ ուղղել սոցիալական ոլորտներ՝ աղքատության կրճատման ռազմավարության գերակայություններին: Արդյունքում, համախմբված բյուջետային ծախսերում սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը 2008թ.-ին կազմել է 47.9%: Տնտեսական ճգնաժամի ազդեցությամբ պայմանավորված, 2009թ. նշված ծախսերը նվազել են և տեսակարար կշիռը համախմբված բյուջետային ծախսերում կազմել է 46.9%:

Գծապատկեր 1.6. Համախմբված բյուջեի սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը 2006-2010թթ.



ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականությունը սոցիալական պաշտպանության ոլորտում ուղղվեց սոցիալական ծախսերի առնվազն նույն մակարդակով պահպանելուն:

Զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունը միտված է արժանապատիվ, լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը, աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համարմանը, երիտասարդների, այդ թվում՝ գյուղական երիտասարդության, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն աջակցելուն: Զբաղվածության պետական քաղաքականության 2000-2011թթ. ընկած ժամանակաշրջանը բնութագրվում է որպես զբաղվածության ոլորտի օրենսդրական

բարեփոխումների, զբաղվածության պետական ծառայության համակարգի ինստիտուցիոնալ կարգավորման ժամանակաշրջան: 2006-2011թթ. և հետագա տարիների զբաղվածության բնագավառի գերակա ուղղությունները երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելու, գյուղական բնակավայրերի անձանց զբաղվածությունը խթանող ծրագրերի մշակումն ու ներդրումն էր:

ՀՀ աշխատաշուկայի զարգացման միտումները վերջին տասնամյակում (2002-2011թթ.), դժվար է այն միարժեքորեն որակել որպես տնտեսության զարգացող կամ անկում արձանագրող սեզոն: Վերջինիս զարգացման վրա իրենց ազդեցությունն են ունեցել ինչպես երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակը, այնպես էլ արտաքին աշխարհի տնտեսական-քաղաքական մարտահրավերները:

Աղյուսակ 1.6. ՀՀ աշխատանքի շուկայի հիմնական ցուցանիշները 2002-2011թթ.

	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Զբաղվածներ, հազ. մարդ	1106.4	1107.6	1081.7	1097.8	1092.4	1101.5	1117.6	1089.4	1104.8	1120.8
որից՝ մասնավոր հատվածում, %	74.2	76.7	78.9	80.2	80.4	80.7	81.1	80.9	81.1	82.1
Գործազուրկներ*, հազ. մարդ	133.7	124.8	114.8	98	88.9	82.8	74.9	81.4	83.3	73.9
Գործազրկության մակարդակը, %	10.8	10.1	9.6	8.2	7.5	7.0	6.3	7.0	7.0	6.2
Միջին ամսական անվանական աշխատավարձ, դրամ	27324	34783	43445	52060	62293	74227	87406	96019	102652	1154511

* **Աղբյուրը՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն:

Տասնամյակի առաջին 5 տարիների (2002-2006թթ.) ընթացքում տնտեսության մեջ զբաղված են եղել միջին հաշվով 1097.2 հազ. մարդ: Այդ ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, արձանագրվել է 1.3%-ով զբաղվածության ցուցանիշի անկում կամ 14 հազ. մարդ տարբեր պատճառներով կորցրել են աշխատանքը: Երկրորդ հնգամյակում (2007-2011թթ.) տնտեսության մեջ զբաղված են եղել միջին հաշվով 1106.8 հազ. մարդ կամ 0.9%-ով ավելի, քան 2002-2006թթ.: Երկրորդ 5 տարիների ընթացքում գրանցվել է զբաղվածության 1.8% աճ, այսինքն՝ 19 հազ. մարդ տնտեսության այս կամ այն ոլորտում գտել են աշխատանք կամ ինքնուրույնաբար ստեղծել են աշխատատեղեր:

<p>Աշխատաշուկայի ներկա վիճակի ընդհանուր բնութագրման նպատակով բերենք դրա մի շարք բնութագրիչներ.</p> <ul style="list-style-type: none"> ▪ 2010թ. աշխատանքային ռեսուրսները կազմել են 2.4 մլն. մարդ կամ երկրի առկա բնակչության 76%-ը՝ 2009թ. համեմատ նվազելով 2%-ային կետով: ▪ Աշխատանքային ռեսուրսներից 1.4 մլն. մարդ եղել են տնտեսապես ակտիվ՝ ձևավորելով երկրի աշխատանքի շուկան, իսկ 1.0 մլն. տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը աշխատանքի շուկայում որևէ մասնակցություն չի ունեցել: ▪ 1.4 մլն. աշխատուժից 1.12 մլն-ը եղել են զբաղված, որոնց 81%-ն ունեցել են մշտական աշխատանք՝ 6%-ի աճ արձանագրելով նախորդ տարվա համեմատ: ▪ 278 հազ. մարդ եղել են գործազուրկ, որոնց 62%-ը տարբեր պատճառներով կորցրել են նախկին աշխատանքը, իսկ 38%-ը երբևէ չեն ունեցել աշխատանք: ▪ Եթե զբաղվածների 54%-ը եղել են տղամարդիկ, ապա գործազուրկների շրջանում գերակշռել են կանայք՝ կազմելով 52%: ▪ Գյուղատնտեսությունը շարունակում է մնալ զբաղվածություն ապահովող գերակա ոլորտը (39% կամ 457.4 հազ. մարդ), որտեղ աշխատատեղերի 31%-ը եղել են ժամանակավոր: ▪ Զբաղվածների մոտ 5%-ն ունեցել են երկրորդ աշխատանք, որոնց 91%-ը՝ գյուղատնտեսության ոլորտում:
<ul style="list-style-type: none"> ▪ Զբաղվածների կազմում ըստ տարիքի գերակշռել են 45-54 տարեկանները (27%), իսկ գործազուրկների կազմում՝ 20-29 տարեկանները (36%): Զբաղվածների միջին տարիքը կազմել է 43.2 տարեկան, գործազուրկներինը՝ 36.3:

- Զբաղվածների և գործազուրկների գերակշիռ մասի՝ 42%-ի, կրթական մակարդակը եղել է միջնակարգ ընդհանուր:
- Երիտասարդները (15-29 տարեկան) կազմել են զբաղվածների 21%-ը և գործազուրկների՝ 42%-ը:
- Աշխատուժի գերակշիռ մասը եղել են երևանաբնակները՝ կազմելով զբաղվածների 29%-ը և գործազուրկների 52%-ը:
- Առկա աշխատատեղերի **50.4%-ը գնահատվել են ոչ ֆորմալ**՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.3%-ով: Ոչ ֆորմալ աշխատատեղերի 79%-ը բաժին է ընկել գյուղատնտեսական և 21%-ը՝ ոչ գյուղատնտեսական ոլորտին:
- Ծայրահեղ **աղքատ են գնահատվել զբաղվածների 1.5%-ը, գործազուրկների՝ 5.3%-ը**: Աղքատ են գնահատվել զբաղվածների 29.6%-ը, գործազուրկների՝ 43.3%-ը:
- Զբաղվածների 37%-ի աշխատաժամանակի միջին շաբաթական տևողությունը գերազանցել է օրենքով սահմանված 40 ժամը, իսկ 23%-ն ունեցել են թերզբաղվածություն: Արդյունքում՝ մեկ զբաղվածի հաշվով **միջին շաբաթական փաստացի ծախսված աշխատաժամանակը կազմել է 36 ժամ**:
- Աշխատանքի շուկան բնութագրվել է երկարատև գործազրկությամբ. գործազուրկների 51%-ի աշխատանք փնտրելու տևողությունը գերազանցել է 1 տարին: Արդյունքում՝ աշխատանք փնտրելու միջին տևողությունը կազմել է 23.5 ամիս:
- Թեև 2010թ. **միջին ամսական զուտ եկամուտը կազմել է 72425 դրամ**՝ 2009թ. համեմատ աճելով 7.6%-ով, սակայն 55%-ի եկամուտը կազմել է մինչև 60.000 դրամ: Տղամարդկանց և կանանց միջին ամսական եկամտի հարաբերակցությունը կազմել է 1.7:
- 2007-2010թթ. միգրացիայի գործընթացում ներգրավված անձանց **60%-ը եղել են աշխատանքային միգրանտներ**, որոնց 89%-ն աշխատել և (կամ) աշխատանք են փնտրել երկրի սահմաններից դուրս, իսկ 11%-ը՝ եղել են ներքին միգրանտներ:
- Աշխատանքային միգրանտների միջին տարիքը կազմել է 37.4 տարեկան:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ, 2011

Ավելի փոքր մասշտաբներով, բայց շարունակվել է նախորդ տասնամյակում սկիզբ առած մասնավորեցման գործընթացը, որի արդյունքում այսօր զբաղվածության ավելի քան 82%-ը բաժին է ընկնում տնտեսության մասնավոր հատվածին:

Առավել դինամիկ է եղել **միջին աշխատավարձերի** աճը տասնամյակի ընթացքում: Այսպես, 2006թ. միջին ամսական անվանական աշխատավարձը 2002թ. ցուցանիշին գերազանցել է 2.3 անգամ, իսկ 2011թ.-ը՝ 2007թ.-ի համեմատ՝ 1.6 անգամ: Ընդհանուր առմամբ, 2002թ. (բազային տարվա) համեմատ 2011թ. արձանագրվել է միջին աշխատավարձի 4.4 անգամ աճ:

Հակառակ միտումներն են արձանագրվել գործազրկության ցուցանիշներում: Թեև՝ աշխատատեղերի սակավությամբ պայմանավորված, անցումային երկրների շարքում Հայաստանը 2002-2011թթ. զբաղվել է գործազրկության ամենաբարձր մակարդակներից մեկը՝ միջինը 8.0%, սակայն 2002-2006թթ. արձանագրված 9.2%-ի փոխարեն 2007-2011թթ. այն նվազել է 2.5%-ով և կազմել 6.7%:

Հաշվի առնելով նաև այն փաստը, որ ՀՀ աշխատաշուկան անմասն չմնաց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացրած ցնցումներից, այնուհանդերձ, տվյալները փաստում են աշխատանքի շուկայի դինամիկայի որոշակի կայունության, առաջընթացի մասին:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրագրերը հնարավորություն ընձեռեցին ավելացնելու ոչ միայն ծախսային քաղաքականության առաջնահերթություն հանդիսացող դրամական վճարների, նաև սոցիալական ծառայությունների տրամադրման ծավալների աճին: Չնայած այն հանգամանքին, որ կառավարությունը պարբերաբար ավելացնում է կենսաթոշակներին ուղղված միջոցները՝ կենսաթոշակները, դրանք ոչ միայն չեն կատարում կորցրած եկամտի փոխհատուցման իրենց գործառնությունը և չեն ապահովում կենսաթոշակառուի համար բավարար կենսամակարդակ, այլև առանձին դեպքերում բավարար չեն կենսաթոշակառուի կենսական նվազագույն պահանջմունքները բավարարելուն: Այսպես, կենսաթոշակային համակարգի միջին փոխհատուցման գործակիցը (աշխատանքային կենսաթոշակի միջին չափի հարաբերակցությունը միջին ամսական աշխատավարձին) 2008 թվականին կազմել է շուրջ 25%, 2009 թվականին՝ 26.8%, իսկ 2010 թվականին՝ 26.3%: Ընդ որում, հաշվի առնելով կենսաթոշակի հաշվարկման կարգը՝ կենսաթոշակային համակարգի անհատական փոխհատուցման գործակիցը (անձի աշխատանքային կենսաթոշակի չափի հարաբերակցությունը անձի ամսական աշխատավարձին) ավելի ցածր է բարձր եկամուտներ ունեցող անձանց համար, իսկ նվազագույն աշխատավարձ ստացող անձանց պարագայում՝ այն կարող է հասնել և գերազանցել 100 %-ի շեմը:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների՝ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ: Ժամանակավոր անաշխատունակության նպաստների շարքին են դասվել նաև հղիության ու ծննդաբերության նպաստը, որը տրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդի ամբողջ ժամանակահատվածի համար (140 օր, բարդ ծննդաբերության դեպքում՝ 155 օր, երկու և ավելի երեխա ծնվելու դեպքում՝ 180 օր):

Պետական նպաստները «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված դրամական օգնության առանձին ձև է: Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Պետական նպաստներն ամբողջությամբ ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Պետական նպաստներից ամենամեծ և սոցիալական հնչեղություն ունեցող ծրագիրն ընտանեկան նպաստի ծրագիրն է, քանի որ այն ուղղված է աղքատության մեղմմանը: Ընտանեկան նպաստի իրավունք ունեն այն աղքատ ընտանիքները, որոնց անապահովության մակարդակը բարձր է ՀՀ կառավարության կողմից սահմանված անապահովության սահմանային մակարդակից: Ընտանիքների անապահովությունը որոշվում է աղքատության գնահատման անուղղակի մեթոդի միջոցով, հաշվի առնելով ընտանիքի (տնային տնտեսության) սոցիալ-տնտեսական՝ ընտանիքի անապահովությունը (աղքատությունը) բնութագրող անուղղակի ցուցանիշները՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակության վայրը և բնակության պայմանները, եկամուտը, ընտանիքի անձնական օգտագործման ավտոմեքենա ունենալու, ընտանիքի անդամներից որևէ մեկի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, մաքսատուրք վճարելու հանգամանքը, ամատային ամիսներին սպառած էլեկտրաէներգիայի, հեռախոսավարձի միջին ամսական քանակը և սոցիալական աշխատողի եզրակացությունը՝ տվյալ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Մինչև 2003 թվականը ներառյալ, ընտանեկան նպաստի չափը որևէ կապ չուներ ընտանիքի անապահովության աստիճանի հետ: Իրականացրած աշխատանքները՝ համակարգի հասցեականության մեծացման ուղղությամբ, հնարավորություն տվեցին տարբերակել նպաստի չափը՝ ելնելով տվյալ ընտանիքի անապահովության աստիճանից: Ընդ որում, նպաստի չափի տարբերակումը կատարվում է երեխաներին տրվող հավելման չափի տարբերակմամբ: 2005 թվականից ընտանեկան նպաստի տարբերակման հարցում որդեգրվեց առ այսօր գործող կարգը, այն է՝ նպաստի չափը տարբերակվում է՝ ելնելով ընտանիքի անապահովության միավորից, բնակության վայրից (սահմանամերձ կամ բարձր լեռնային), ընտանիքում երեխաների թվից (4 և ավելի):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման հետ կապված հարաբերությունների օրենսդրային կարգավորումը, ի թիվս այլ հանգամանքների, նպաստեց 2009-2010թթ. Հայաստանում ծնունդների թվի աճին: Ընդ որում, այն՝ ի թիվս մի շարք այլ հանգամանքների, պայմանավորված է եղել նաև մեծաթիվ երիտասարդների վերարտադրողական տարիք մուտք գործելու հանգամանքով: Սակայն, սկսած 2011 թվականից նորից նկատվում է ծնունդների թվի անկում:

Որպես օժանդակող հանգամանք կարելի է առանձնացնել ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ երեխայի համար տարբերակմամբ նպաստների համակարգի ներդրումը:

Հարկ է նշել, որ **մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի** իրավունք ունեցող ծնողների թվի աճը կարելի է ինչ որ տեղ բացատրել նաև տնտեսական ճգնաժամով պայմանավորված, մասնավորապես՝ հնարավորություն է տալիս խուսափելու աշխատանքից կրճատումներից (խնամքի արձակուրդում գտնվելն առնվազն երեք տարով կրճատումից ազատում է):

Սոցիալական պաշտպանությունը հիմնականում ուղղված է բնակչության խոցելի խմբերի կենսական պահանջումներին բավարարմանը: Նպատակային սոցիալական ծրագրերի շարքում կարևորվում են մասնավորապես միայնակ տարեցների, հաշմանդամների, անօթևան մարդկանց, հատուկ կարիքներով երեխաների և այլ սոցիալական խմբերի սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված տարբեր ծրագրերը: Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների աջակցության քաղաքականությունն ուղղված է երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի հզորացմանը, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների դեինստիտուցիոնալիզացիային, երեխաների հոսքն այդ հաստատություններ կանխարգելելուն, խնամվող երեխաների հասարակությանը ինտեգրմանը, խնամքի այլընտրանքային ծառայությունների ներդրմանը:

Սկսած 2007թ.-ից, ՀՀ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել առանձին հասարակական և բարեգործական կազմակերպություններին **մանկատների և երեխաների խնամքի** ու պաշտպանության

գիշերօթիկ հաստատությունների բեռնաթափման ծրագրերի իրականացման համար: Դրա շրջանակներում կանխարգելվել է տասնյակ երեխայի մուտքը երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, յուրաքանչյուր տարի մի քանի տասնյակ երեխա այդ տեղերից վերադարձել է կենսաբանական ընտանիք: Մանկատան շրջանավարտներին պետական աջակցության ծրագրով նախատեսված է նաև բնակարանների տրամադրում, սակայն 2009-2011թթ. համապատասխան ֆինանսական միջոցների բացակայության պատճառով այդ գործընթացը սառեցվել է:

Վերջին տասը տարիները կարելի է համարել **տարեցների և հաշմանդամների սոցիալական աջակցության** ոլորտի զարգացման ժամանակաշրջան: Սկսեցին ավելի մեծ ուշադրություն դարձնել թե ծերացման, թե հաշմանդամության հիմնահարցերին, ինչպես նաև տարեցների ու հաշմանդամների՝ որպես հասարակության ամենախոցելի խմբերի, սոցիալական և իրավական պաշտպանությանը: Էապես բարելավվել է տարեցների սոցիալական սպասարկման որակը, ընդլայնվել ծառայությունների տեսականին:

Առավել ուշադրություն էր դարձվում **Հայրենական մեծ պատերազմի վետերանների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ հաշմանդամ** դարձած, ինչպես նաև զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական հիմնահարցերին: Մասնավորապես, որոշ արտոնությունների դիմաց տրամադրվող ամենամսյա դրամական օգնության չափերը վերջին 10 տարվա ընթացքում բարձրացվել է շուրջ 14 անգամ:

Հաշմանդամների և հաշմանդամության ոլորտում տարվող սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղված է հաշմանդամների սոցիալական պաշտպանությանը բոլոր բնագավառներում (իրավական, տնտեսական, շրջապատող միջավայր և այլն), հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելուն, նրանց համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանը: Հաշմանդամների սոցիալական աջակցության ծրագրերի շարքում կարևորվում է սոցիալական ձեռնարկությունների հիմնումը, որն ուղղված է, մի կողմից, հաշմանդամ անձանց սոցիալական խնդիրների լուծմանն ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից՝ նրանց աշխատանքային ներուժը հասարակությանը ի շահ ներդնելուն:

Մեծածավալ աշխատանքներ են իրականացվում **հատուկ կրթության կարիք ունեցող** անձանց համար նախատեսված միջոցառումների և ներառական կրթության ընդլայնման և բարելավման ուղղությամբ: 2002թ-ից ներդրվել է հաշմանդամների վերականգնման անհատական ծրագրեր, որն առավել հասցեական և արդյունավետ է դարձնում հաշմանդամի վերականգնման գործընթացը:

Մեծ աշխատանքներ են կատարվել **հաշմանդամների հաղորդակցման խոչընդոտները** հաղթահարելու նպատակով: Լսողական խանգարումներ ունեցող հաշմանդամները ստանում են լսողական սարքեր, իսկ տեսողության խանգարումներ ունեցող հաշմանդամների համար տպագրվել են Բրայլյան տետրեր, Բրայլյան գեղարվեստական գիրք, Խոսող գրքեր, «Բյուլետեն» ամսագիր:

Աշխատանքի և զբաղվածության ոլորտում պետական քաղաքականությունը մշակելիս հաշվի են առնվել ԵՄ-ի կողմից ներկայացվող սոցիալական ոլորտի օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված պահանջները, ինչպես նաև աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված և Հայաստանի կողմից վավերացված մի շարք Կոնվենցիաների դրույթներ:

2010թ.-ին ստեղծվել են **երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և հաշմանդամների աշխատանքային վերականգնման** կենտրոններ, որտեղ իրականացվում են աշխատանք փնտրողների վերաորակավորման, մասնագիտական վերապատրաստման, խորհրդատվության և հասարակությանն ինտեգրմանն ուղղված աշխատանքներ:

Դանդաղ, բայց շարունակվում են **միջին խավի ձևավորման** աշխատանքները:

1.1.4. Ժողովրդագրական իրավիճակ և միգրացիոն գործընթացները

Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներից հետո տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական իրողությունները հանգեցրին ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխության, այն է բնակչության թվաքանակի և սեռատարիքային կազմի վրա ազդող ժողովրդագրական հիմնական գործոնների՝ ծնելիության, մահացության, արտաքին միգրացիայի ցուցանիշների վատացում: Ժողովրդագրական առաջին մարտահրավերը՝ ծնելիության մակարդակի անկումն է, թեև վերջին տարիներին արձանագրված որոշակի աճին, ծնունդների մակարդակը բավարար չէ: Ընդ որում, 1990թ. տարեկան ունենալով շուրջ 80.000 ծնունդ, այդ թիվը շուրջ 2 անգամ նվազել է 2001թ.՝ արձանագրելով՝ 32.065 ծնունդ /տես՝ աղյուսակ 1/, ինչի հետևանքով **ծնելիության գումարային գործակիցը՝** /երեխաների թիվը, որ կձնի կինը ծնունակ՝ 15-49, տարիքում/, կազմում է 1.6 երեխա, այն դեպքում, երբ

պարզ վերարտադրության համար անհրաժեշտ է, որ ցուցանիշը կազմի 2.1 երեխա:

Աղյուսակ 1.7. Ծնունդների բաշխումն ըստ ծնունդների հաջորդականության (մարդ)

	1990	1995	2000	2001	2002	2005	2006	2007	2008	2009	2010	2011
Ծնունդներ	79882	48960	34276	32065	32229	37499	37639	40105	41185	44413	44825	4330
Որից առաջին	29996	19408	15637	15660	16638	19286	19601	20525	21292	22472	21954	...
Երկրորդ	25660	18058	11115	10325	10370	12953	13271	14277	14270	15431	15881	...
Երրորդ	18005	8058	5085	4210	3665	4014	3758	4263	4520	5289	5683	...
չորրորդ	4641	2465	1637	1220	1027	858	705	708	761	849	929	...
հինգերորդ և բարձր կարգի	1540	971	762	650	529	388	304	332	342	372	378	...

Ժողովրդագրական մյուս մարտահրավերը մահացության, ոչ այնքան ընդգծված աճի միտումն է՝ 1990թ., երբ երկրի բնակչության ընդհանուր թվաքանակն ավելի քան 3,5 մլն էր, արձանագրվել է 22,0 հազար մահ (1000 բնակչի հաշվով՝ 6,2 մահ), 2011 թ. գրանցվել է 28,030 մահ (1000 բնակչի հաշվով՝ 8,6 մահ): Մահացության պատճառական կառուցվածքում շարունակում են գերակշռել արյան շրջանառության համակարգի (47.9%), նորագոյացություններից (20%), մարսողական օրգանների (6.2%), շնչառական օրգանների հիվանդություններից (6.1%) և դժբախտ պատահարների, թունավորումների և վնասվածքների (4.8%) պատճառով գրանցված մահվան դեպքերը:

Աղյուսակ 1.8. Մշտական բնակչության թվաքանակի և բաղադրիչների փոփոխության դինամիկան (հազ. մարդ)

Տարի	Բնակչության թվաքանակը (տարեսկզբին)	Ընդհանուր հավելված/ նվազում (+, -)	Բնական հավելված	Միգրացիայի մնացորդը	Բնակչության թվաքանակը (տարեվերջին)	Տարեկան հավելված/ նվազում, %
1990	3514.9	59.6	57.9	1.7	3574.5	1.70
1991	3574.5	58.8	54.4	4.4	3633.3	1.64
1992	3633.3	-169.6	44.7	-214.3	3463.7	-4.67
1993	3463.7	-107.0	31.6	-138.6	3356.7	-3.09
1994	3356.7	-96.4	26.5	-122.9	3260.3	-2.87
1995	3260.3	-11.5	24.1	-35.6	3248.8	-0.35
1996	3248.8	-2.8	23.2	-26.0	3246.0	-0.09
1997	3246.0	-7.8	20.0	-27.8	3238.2	-0.24
1998	3238.2	-6.1	16.2	-22.3	3232.1	-0.19
1999	3232.1	-5.2	12.4	-17.6	3226.9	-0.16
2000	3226.9	-11.6	10.3	-21.9	3215.3	-0.36
2001	3215.3	-2.4	8.1	-10.5	3212.9	-0.07
2002	3212.9	-2.6	6.6	-9.2	3210.3	-0.08
2003	3210.3	1.9	9.8	-7.9	3212.2	0.06
2004	3212.2	3.6	11.8	-8.2	3215.8	0.11
2005	3215.8	3.4	11.1	-7.7	3219.2	0.11
2006	3219.2	3.7	10.4	-6.7	3222.9	0.12
2007	3222.9	7.2	13.3	-6.1	3230.1	0.22
2008	3230.1	7.9	13.8	-5.9	3238.0	0.26
2009	3238.0	11.5	16.8	-5.3	3249.5	0.36
2010	3249.5	13.1	16.9	-3.8	3262.6	0.40
2011*	3262.6	11.7	15.4	-3.7	3274.3	0.36

* - Տվյալները դեռևս հաշվարկվում են 2001թ-ի մարդահամարի հիմքով: 2011թ-ի մարդահամարի նախնական ամփոփ տվյալներով ՀՀ առկա բնակչության օպերատիվ ցուցանիշը կազմել է 2,871,509 մարդ: Մնացած ցուցանիշները հաշվարկման փուլում են:

Անկախացումից հետո ՀՀ ժողովրդագրական լրջագույն մարտահրավերներից է մնում միգրացիան: 2010թ. տնային տնտեսությունների շրջանում ՏՏԿԱՀ անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 2007թ-ի հունվարի 1-ից սկսած տնային տնտեսությունների 15 և բարձր տա-


րիքի տ/տ անդամներից 10.9% ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում, իսկ միգրացիայի հիմնական պատճառ են հանդիսացել աշխատելը, աշխատանքի բացակայությունը, ընտանեկան պատճառները և այլն:

Աղյուսակ 1.9. 2007թ. հունվարի 1-ից միգրացիոն գործընթացներում ներգրավված 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամներն ըստ մեկնելու պատճառի և գտնվելու վայրի, 2010թ. (%)

Մեկնելու հիմնական պատճառը	Գտնվելու վայրը							
	Երևան	ՀՀ մարզեր	ՌԴ	ԱՊՀ այլ երկիր	Եվրոպական երկիր	ԱՄՆ և Կանադա	Այլ	Ընդամենը
1. Աշխատելը	0.0	0.3	90.1	2.9	1.4	1.5	3.8	100
2. Աշխատանք փնտրելը	1.9	1.0	86.2	4.0	6.9	0.0	0.0	100
3. Աշխատանքի բացակայությունը	0.0	1.6	89.9	2.7	3.5	1.8	0.5	100
4. Ներկա տնտեսական ճգնաժամը	0.0	1.9	92.4	0.0	0.9	0.0	4.8	100
5. Մեզոնային աշխատող	0.0	0.0	98.2	1.8	0.0	0.0	0.0	100
6. Մնալու իմաստ չկար	0.0	0.0	96.6	2.6	0.0	0.8	0.0	100
7. Ընտանեկան պատճառներ	3.3	5.3	76.3	7.5	6.1	1.3	0.2	100
8. Այցելություն ընկերներին/ բարեկամներին	1.7	0.8	59.0	8.5	6.5	6.3	17.2	100
9. Արձակուրդ	0.0	0.0	6.4	35.4	35.6	0.0	22.6	100
10. Այլ	4.8	11.6	18.6	2.6	6.5	2.7	53.2	100
Ընդամենը	1.3	2.7	74.1	4.1	3.9	1.8	12.1	100

Հարկ է նշել, որ դեռևս մտահոգիչ է աշխատանքային միգրացիայի գերակա ցուցանիշները ընդհանուր միգրանտների շրջանում:

Գծապատկեր 1.7. Աշխատանքային միգրանտներն ըստ սեռի և բնակավայրի տեսակի, 2010թ. %-ով համապատասխան խմբի ընդամենի նկատմամբ



Աղբյուրը՝ ՀՀ ՄՎԾ, ՏՏԿԱՀ 2010թ.

1.1 Շրջակա միջավայրի պահպանություն

Բնապահպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է բնապահպանական անվտանգության ապահովումը՝ այդ թվում երկրի կայուն զարգացման նպատակով շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների հետ կապված վտանգների գնահատումը, կանխատեսումն ու կանխարգելումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը:

2002 թ. կայացած Համաշխարհային գազաթաժողովից անցած 10 տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում առաջընթաց է տեղի ունեցել: Բնապահպանական ոլորտում՝ կայուն զարգացման սկզբունքներին համահունչ, կատարելագործվում է ազգային բնապահպանական օրենսդրությունը, ընդլայնվում են Հայաստանի բնապահպանական համագործակցության աշխարհագրական սահմանները, մշակվել ու ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել բնապահպանության ոլորտի մի շարք ռազմավարություններ, ծրագրեր, որոնց թվում հարկ է նշել շրջակա միջավայրի պահպանության գործողությունների ազգային ծրագրերը /ներկայումս իրականացվում է 2008-2012 թթ. ՇՄԳԱԾ-2 ծրագիրը/, բնապահպանական կոնվենցիաների իրականացման 5-ամյա ծրագրեր /ներկայումս իրականացվում է 3-րդ 5-ամյա ծրագիրը/: 2012թ. դրությամբ Հայաստանը ստորագրել ու վավերացրել է 22 միջազգային բնապահպանական կոնվենցիաներ ու դրանց արձանագրություններ (որոնցից 14-ը՝ վերջին տասնամյակում) /Հավելված 4/, որոնք անհրաժեշտ նախապայման են հանդիսանում կայուն զարգացման մոտեցումներին համապատասխանող ազգային բնապահպանական քաղաքականության, ռազմավարությունների, հայեցակարգերի մշակման համար: Երկիրը ընդգրկված է և ակտիվ մասնակցում է միջազգային բնապահպանական գործընթացներին ու համագործակցում է միջազգային բնապահպանական կառույցների, այդ թվում՝ դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների ու առանձին պետությունների հետ: Վերջիններիս հետ համագործակցության շնորհիվ երկրում իրականացվել ու իրականացվում են բազմաթիվ բնապահպանական ծրագրեր, որոնք ուղղված են թե՛ ազգային, թե՛ տարածաշրջանային բնապահպանական խնդիրների լուծմանը:

Մեծ նշանակություն է տրվում հասարակության իրազեկությանը բնապահպանական խնդիրների ու գործունեության վերաբերյալ, ինչպես նաև հասարակության ընդգրկմանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացներին:

1.2.1. Ջրային ռեսուրսներ

❖ Գետեր ու լճեր

Հայաստանի Հանրապետության տարածքն աչքի է ընկնում զարգացած, բայց անհամասեռ ջրագրական ցանցով, որը բնորոշ է լեռնային երկրներին: Այստեղ հաշվվում են 9480 փոքր և միջին գետեր՝ 23000 կմ երկարությամբ, նրանցից 379-ը ունեն 10 կմ և ավելի երկարություն: Գետային ցանցի խտությունը հանրապետության տարածքում փոփոխվում է մեծ միջակայքում՝ 0-ից մինչև 2.5 կմ/կմ², միջինը կազմում է մոտ 0.8 կմ/կմ²:

Հայաստանի Հանրապետության ընդհանուր միջին տարեկան հոսքը կազմում է 7190 մլն մ³՝ հաշվի առնելով Արաքս և Ախուրյան անդրասահմանային գետերը: Հայաստանի Հանրապետությունն Արաքս և Ախուրյան անդրասահմանային գետերից տարեկան օգտագործում է 940 մլն մ³ ջուր:

Հանրապետության տարածքում մեծությամբ և ժողովրդատնտեսական օգտագործման տեսակետից առավել մեծ նշանակություն ունեն Սևանա և Արփի լճերը: Բացի այդ, երկրում կան հարյուրից ավել փոքր լճեր, որոնց մի մասը տարվա չոր սեզոնին պարբերաբար ցամաքում է:


❖ Սևանա լճի հիմնախնդիրները

Հայաստանի գլխավոր բնապահպանական խնդիրը Սևանա լճի վիճակն է, որը Կովկասի ամենամեծ ալպիական լիճն է: Լճի ջրերը և ավազանի բնական պաշարները համարվում են Հայաստանի տնտեսության զարգացման անկյունաքարերից մեկը: Լճի ջրհավաք ավազանը կազմում է հանրապետության ընդհանուր տարածքի վեցերորդ մասը և այն իր մեջ է պարփակում երկրի հիմնական ջրային պաշարները, որը լճին տալիս է ինչպես աշխարհագրական, այնպես էլ տնտեսական ռազմավարական նշանակություն:

Սևանա լճի էկոհամակարգերն ու ռեսուրսները տասնամյակներ շարունակ էկոլոգիապես անընդունելի մեծածավալ օգտագործման պատճառով գտնվել են անմխիթար վիճակում: Ջրային ռեսուրսների կառավարումը ջրաէկոհամակարգային մոտեցմամբ իր զգալի և դրական արդյունքն է տվել Սևանա լճի էկոհամակարգի հնարավորինս վերականգնման խնդրում:

Սևանա լճի ջրերի օգտագործման և մակարդակի տատանման գրաֆիկն (նկար 1) ամբողջովին արտացոլում է վերը նշվածը:

Գծապատկեր 1.8. Սևանա լճից ջրի բացթողումների և ջրի մակարդակի 1933-2011թթ.



Հաշվի առնելով Սևանա լճի անգնահատելի դերը երկրի ազգային անվտանգության ապահովման գործում, 2008թ. դեկտեմբերին ՀՀ Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը, որի աշխատանքային գործունեության հիմքում դրվել է Սևանա լճի էկոհամակարգի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացման համակարգումը:

Տարբեր նախարարությունների և գերատեսչությունների ակտիվ աշխատանքի շնորհիվ հանձնաժողովի ղեկավարությամբ կատարվել են բազմաբնույթ աշխատանքներ ինչպես օրենսդրական դաշտի կատարելագործման, այդպես էլ Սևանա լճի և դրա ջրհավաք ավազանի հիմնախնդիրների գործառնական լուծման ուղղությամբ:

Կառավարությունը հետևողականորեն շարունակել է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների իրականացումը:

ՀՀ կառավարության կողմից 2010թ. հաստատվել է «ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009թ. աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 876-Ն որոշումը, ըստ որի նախատեսվում է առաջիկա տարիներին ֆինանսավորման տարբեր աղբյուրներից հատկացնել ավելի քան 44 մլրդ դրամ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման խնդիրների լուծման ընդհանուր թվով 43 միջոցառումների իրականացման համար:

2011թ. ապրիլի 28-ին ՀՀ Կառավարությունն ընդունել է «Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամ ստեղծելու մասին» որոշումը:

Աշխատանքներ են կատարվել լճի կենսապաշարների պահպանության և վերականգնման ուղղությամբ: Մշակվել է «Սևանի արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների վերականգնման համալիր ծրագիրը», որը 2010թ. հաստատվել է ՀՀ կառավարություն կողմից: Ծրագրում ներառված են արդյունագործական և էնդեմիկ ձկնատեսակների պահպանման, ինչպես նաև բնական ու արհեստական վերարտադրության կազմակերպման գործնական միջոցառումներ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում Սևանա լճում արդյունագործական ձկնորսության նոր կարգի մշակման ուղղությամբ: Նախատեսվում է նաև հիմնել Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտեր:

Սևանա լճի առափնյա տարածքների քաղաքաշինական կանոնակարգմանն ուղղված միջոցառումների իրականացման շրջանակներում հաստատվել են.

- «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման լրամշակված նախագիծ» (ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N 143-Ն որոշում),

- «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծ» (ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N 177-Ն որոշում),

- «Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագիծ» (հավանության արժանացած ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի նիստի N22 արձանագրային որոշում):

Սևանա լճի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ հիմնական դժվարություններ են բնակչության ծանր սոցիալական վիճակը և դրա պատճառով կենսառեսուրսների գերօգտագործումը, կենսաբազմազանության պետական հաշվառման, պետական կադաստրի, մոնիթորինգի համակարգի և տվյալների բազայի ըստ էության բացակայությունը, բնապահպանական միջոցառումների կատարման համար ֆինանսական ռեսուրսների սակավությունը, տնտեսական տարբեր ճյուղերի միջև ցածր համագործակցությունը, գործողությունների արդյունավետ կոորդինացման բացակայությունը և այլն:

Սևանա լճի հիմնախնդիրների լուծման հիմնական ջանքերը կենտրոնանում են Սևանա լճի մակարդակի շարունակական բարձրացման, լճի ջրհավաք ավազանի ջրային ռեսուրսների անարդյունավետ օգտագործման կանխարգելման, փաստացի ջրօգտագործման պայմանների նկատմամբ վերահսկողության համակարգի կատարելագործման, լճի ջրհավաք ավազանի ջրի որակի բարելավման, կենսաբանական ռեսուրսների պահպանման և վերականգնման, Սևանա լճի ափամերձ տարածքների ջրածածկման հետ կապված խնդիրների լուծման, թափոնների կառավարման կատարելագործման ուղղությամբ:

• Սևանա լճի մակարդակ

Վերջին տարիներին գրանցվել են Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևյալ ցուցանիշները՝ 2007թ.՝ 55 սմ, 2008թ.՝ 6 սմ, 2009թ.՝ 38 սմ, 2010թ.՝ 47 սմ, 2011թ.՝ 23սմ: Լճի մակարդակը 31.12.2011թ. դրությամբ կազմում է 1900.13 մետր: **Աննախադեպ է այն փաստը, որ առաջին անգամ Սևանա լճի ջրի մակարդակը տարվա վերջի դրությամբ հասել է 1900 մետր նիշը**, հավասարվելով 1963թ. լճի մակարդակի ցուցանիշին:

Ընդհանուր առմամբ, 2001թ.-ից Սևանա լճի մակարդակը բարձրացել է ավելի քան 3.6 մետրով:

• Սևանա լճի ջրի որակ

Շարունակվել են Սևանա լճի ջրի կազմի - կենսածին նյութերի ջրաքիմիական վարքի փոփոխության մշտադիտարկումները, որոնց արդյունքներով արձանագրվել է, որ նախորդ տարիների համեմատությամբ մեծացել է լճի թափանցելիությունը՝ կազմելով 6-11մ, էական փոփոխության չի ենթարկվել ծանր մետաղների պարունակությունը, որը դրական միտում է:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվում են մաքրման կայաններ: Այդ աշխատանքները նախատեսվում է ավարտել 2012թ.:

Շարունակվել են բյուջետային հատկացումների հաշվին Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները: Ընդհանուր առմամբ 2007-2011թթ. ժամանակահատվածում մաքրվել է ավելի քան 1231 հա ջրածածկ անտառային տարածք:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լճի առափնյա տարածքներում ապամոնտաժվել է 1900.25 մ նիշից ցածր մակարդակի վրա գտնվող 528 օբյեկտներից 345 շենք և շինություններ:

• Սևանա լճի ձկան պաշարների համալրում

2007-2011թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին ձկան պաշարների համալրման գործընթացի շրջանակներում իրականացվել է Սևանա լճի ձկնային պաշարների համալրում, որի արդյունքում լիճ է բաց թողնվել ավելի քան 1290.0 հազ. հատ ամառային իշխանի և գեղարքունի ձկնատեսակների մանրածուկ:

Իշխանի մանրածուկը, ըստ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տվյալների, գտնվում է բավականին լավ վիճակում: Այդ մասին են վկայում ինչպես աճի տեմպերի, այնպես էլ նրանց հազեցվածության ցուցանիշները:


• Հանրային լողափեր

Ի կատարումն ՀՀ Նախագահի հանձնարարականի՝ Սևանա լճի ռեկրեացիոն ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով Սևանա լճի առափնյա գոտում ստեղծվել է հանրային 5 լողափ: 2012թ. հանրային նոր լողափերի ստեղծումը շարունակվելու է:

❖ Ջրօգտագործում

Հանրապետության ջրօգտագործման համար իրականացված ջրառի տարեկան ծավալները (մլն մ³) բերված են գծապատկեր 1.9.-ում:

Գծապատկեր 1.9. Ջրառի ծավալները, 2000-2010 թթ.



Ինչպես երևում է գրաֆիկից, 2004թ. ջրառի ծավալը 2002թ. համեմատ կտրուկ աճել է, ինչը պայմանավորված է ՀՀ ջրային օրենսգրքի պահանջների համաձայն ջրօգտագործման իրավունքի ձևակերպմամբ, որի գործընթացը սկսվել է 2003թ.-ից: Սկսած 2004թ. ջրառի ծավալները զգալի փոփոխության չեն ենթարկվել, ինչն էլ վկայում է այն մասին, որ այդ ցուցանիշները բնորոշիչ են հանրապետության տնտեսության աճի համար՝ այդ ժամանակահատվածում:

Պայմանավորված հանրապետության գետերի նշանակալից հիդրոպոտենցիալով, վերջին տասը տարիներին ջրառի զգալի աճ է արձանագրվել հիդրոէներգետիկ նպատակով ջրօգտագործման բնագավառում: Ներկայումս այն կազմում է 3.3 մլդ մ³ /տարի, որը կազմում է հանրապետության մակերևութային ջրահոսքի շուրջ 50%-ը, որն էլ պայմանավորված է հիմնականում այդ ռեսուրսների ջրահոսքերի հաջորդական և բազմակի օգտագործմամբ:

• Խմելու ջրի մատակարարում

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ տարեցտարի աճում է խմելու ջրի հասանելիության ցուցանիշը: 2011 թ.-ին խմելու ջրամատակարարման միջին տևողությունը հանրապետության համար կազմել է 15 ժամ, 2010թ.-ի նկատմամբ աճելով 1 ժամով: Համեմատության համար հարկ է նշել, որ այդ ցուցանիշը 2004թ.-ին կազմել է 6 ժամ:

• Ջրահեռացում

Հանրապետության քաղաքների կենցաղային և արտադրական կեղտաջրերը (միջինում՝ 1.8-2.0 մլդ մ³ /տարի) հավաքվում են (հեռացվում են) կոյուղու կոլեկտորների և ցանցերի միջոցով: Գոյություն ունեցող ջրահեռացման համակարգերով իրականացվում է քաղաքների տարածքի մոտ 70-80% կեղտաջրերի հավաքումը (հեռացումը), իսկ գյուղական բնակավայրերը ջրահեռացման համակարգեր, հիմնականում, չունեն:

Դեռևս 30-40 տարի առաջ հանրապետության բնակավայրերում կառուցվել են շուրջ 20 կեղտաջրերի մաքրման կայաններ (ԿՄԿ), որոնք ներդրումների և շահագործման համար պահանջվող միջոցների բացակայության պատճառով շարքից դուրս են եկել և գտնվում են քայքայված վիճակում: Մասնակիորեն գործում է միայն Երևանի «Աէրացիա» մաքրման կայանը, որտեղ կատարվում է կեղտաջրերի ոչ լրիվ մեխանիկական մաքրում:

Վերջին 3-4 տարիներին իրականացված միջոցառումների արդյունքում, Ֆրանսիայի կառավարության կողմից հատկացվել են միջոցներ Երևանի «Աէրացիա» ԿՄԿ-ի վերականգնման և մի շարք կոյուղագծերի վերանորոգման համար: Այդ աշխատանքները նախատեսվում է ավարտել 2015թ., իսկ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի բնապահպանական ծրագրի» շրջանակներում Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցելու են մաքրման կայաններ:

Հայաստանում ընդունվել են ջրի որակի նոր նորմեր: Հայաստանից հարևան պետություններ հոսող ջրերի որակը համապատասխանում է ընդունված ստանդարտներին:

❖ **Օրենսդրական բարեփոխումներ**

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում արձանագրվել են էական նվաճումներ օրենսդրության բարեփոխումների առումով: Բարեփոխումների հիմնական ուղղվածությունը երկրում ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքների ներդրումն ու կիրառումն է:

Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության հարցերը կարգավորող հիմնական փաստաթուղթ է հանդիսանում 2002թ. ընդունված Ջրային օրենսգիրքը, որը պարունակում է համապարփակ ավագանային կառավարման գաղափարը, խթանում է առաջարկի, այլ ոչ թե պահանջարկի վրա հիմնված ջրերի բաշխման հետ կապված որոշումները, հիմք է հանդիսանում ջրային պետական կադաստրի ինստիտուտի կայացման համար, պարտադրում է տեղեկատվության վրա հիմնված ջրօգտագործման թույլտվությունների տրամադրում, հնարավորություն է ընձեռում ջրային ռեսուրսների կառավարման և ծախսածածկման ընթացքում տնտեսական լծակների օգտագործման համար:

Ներկայումս ջրային ոլորտի բարեփոխումները գտնվում են անցումային ամենակարևոր փուլում, ինչը կապված է ջրային ռեսուրսների կառավարման գործառույթների ապակենտրոնացման հետ (կենտրոնից դեպի ջրավազանային կառավարման բաժիններ):

Այս առումով հարկ է նշել ՀՀ կառավարության մի շարք որոշումներ, այդ թվում՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին», «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին», «ՀՀ ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացման և ջրավազանային կառավարման պլանների մշակման մասին», «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի մասին», ինչպես նաև «Բնապահպանական թողքերի գնահատումները սահմանելու մասին» որոշումները, որոնց կիրարկումը կնպաստի ազգային ջրային պաշարի պահպանությանը. ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության ջրի պահանջարկի բավարարմանը, շրջակա միջավայրի բնապահպանական կայունության ապահովմանը, ինչպես նաև կաջակցի ջրավազանային կառավարման պլանների մշակմանը:

Բարեփոխումների հաջողությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությամբ, որը համահունչ է տարբեր միջազգային և դոնոր կազմակերպությունների (ՀԲ, ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ, ԳԷՀ, ԵՄ ջրային նախաձեռնություն (ԵՄՁՆ), ՄԱԿ-ի ԵՏՀ, ՏԶՀԿ և այլ կազմակերպություններ) առաքելության հետ:

Ուշադրության է արժանի ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի ջրային ոլորտի ինստիտուցիոնալ և օրենսդրական հզորացման ծրագրի շրջանակներում 2006-2008թթ. մշակված գետավազանային կառավարման պլանների մոդելային ուղեցույցը Մեդրի գետի գետավազանի օրինակով:

Եվրամիության Ջրային Նախաձեռնության Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ) բաղադրիչի շրջանակներում 2008թ.-ից սկսած Հայաստանի Հանրապետությունում Մարմարիկ պիլոտային գետավազանի օրինակով ՄԱԿ-ի ԵՏՀ և ՄԱԶԾ, ՏԶՀԿ աջակցությամբ՝ ՀՀ ջրային օրենսդրության ու ԵՄ Ջրի Շրջանակային Դիրեկտիվի համաձայն մշակվել է ջրավազանային կառավարման մոդելային պլան, որը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011թ. փետրվարի 3-ին: Մոդելային պլանում ներառված են ջրավազանի հիմնական նկարագիրը, ջրային ռեսուրսների վրա բնածին և մարդածին (այդ թվում՝ կլիմայի փոփոխության) ազդեցությունները և դրանց գնահատականները, ջրօգտագործման ներկա և հեռանկարային ցանկալի սցենարները, դրանց իրականացման ֆինանսական գնահատումները և այլ ասպեկտներ:

Ի լրումն վերը նշված աշխատանքների՝ ջրավազանային կառավարման մոդելային պլանում ներառելու նպատակով, ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ՝ Եվրամիության Ջրային Նախաձեռնության ԱԵԿԿԱ բաղադրիչի շրջանակներում 2011թ.-ից սկսած, միջազգային խորհրդատվությամբ, մշակվում է Մարմարիկ գետի օրինակով էկոհամակարգերի ծառայությունների վճարի, ջրային ռեսուրսի բաղադրիչի պիլոտային ուսումնասիրություն/ծրագիր:

ՀՀ բնապահպանության նախարարությունը նախատեսում է ուսումնասիրությունների արդյունքում ստացված եզրահանգումները օգտագործել որպես ի լրումն ՀՀ կառավարության կողմից հաստատված

ջրավազանային կառավարման մոդելային պլանի, որն էլ հետագայում կձառայի որպես ուղեցույցային փաստաթուղթ հանրապետության 6 ջրավազանային կառավարման պլանների մշակման համար:

Այսօրվա դրությամբ հանրապետության ջրային ոլորտում իրականացված օրենսդրական և այլ առաջադեմ փոփոխությունները ընդունելի են ոչ միայն տարածաշրջանային, այլև միջազգային հեղինակություն վայելող փորձագետների և կազմակերպությունների կողմից:

❖ Ջրավազանային կառավարում

Վերջին տարիներին հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման հետ կապված օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները ընթանում են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման սկզբունքներին համահունչ: Այդ բարեփոխումների կարևորագույն քայլերից են հանդիսանում ջրավազանային տարածքային կառավարման մարմինների ստեղծումն ու հզորացումը և ջրավազանային կառավարման պլանների մշակման ու իրականացման գործընթացը՝ որպես ջրային ռեսուրսների կառավարման ապակենտրոնացման և ողջամիտ կառավարման կարևորագույն քայլ:

Սկսած 2005թ. Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ջրավազանային կառավարման համակարգը և ջրային ռեսուրսների կառավարումը, որը ներկայումս իրականացվում է 6 ջրավազանային (Հյուսիսային, Ախուրյան, Արարատյան, Սևան, Հրազդան և Հարավային) տարածքների (տես Հավելված 5) միջոցով, որոնք համընկնում են բնական հիդրոլոգիական գետավազանների հետ:

ՀՀ ջրի ազգային ծրագիրը, ինչպես նաև ՀՀ ջրային օրենսգիրքը Ջրավազանային տարածքային կառավարման բաժինները դարձնում են ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման առանցքային դերակատարներ: Ըստ այդմ, դրանք ունեն լիազորություն «պլանավորելու», «մոնիտորինգ իրականացնելու», «վերլուծելու» և «հսկելու» առումներով, իսկ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը իրականացնում է համընդհանուր կառավարում:

Ուստի ջրավազանային տարածքային կառավարման բաժինները պատասխանատու են ավազանային մակարդակով ջրային ռեսուրսների պահպանության ապահովման, ջրառի հաշվառման իրականացման և վերահսկման, ջրառի ռեժիմի և չափաքանակների սահմանման, ջրօգտագործման թույլտվություններով ամրագրված պայմանների իրավակիրարկման համար, ինչպես նաև մշակում են ավազանի ջրային ռեսուրսների կառավարման, օգտագործման և պահպանության հեռանկարային ծրագրերի նախագծերը:

Ջրային ռեսուրսների կառավարման գործառնությունների ապակենտրոնացման նախապայմաններից մեկը ջրավազանային կառավարման պլանների մշակումն է, ինչը պետք է դառնա ջրավազանային տարածքային կառավարման բաժինների հիմնական փաստաթուղթը:

Զնայած կատարվածին, այնուամենայնիվ, Հայաստանում ջրային ռեսուրսների ապակենտրոնացված կառավարման իրականացման համար դեռևս երկար ճանապարհ կա անցնելու ջրավազաններում ինստիտուցիոնալ հզորացման, ջրօգտագործման թույլտվությունների և իրավակիրարկման ընթացակարգերի բարելավման, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի ծրագրերի վերափոխման, ջրային ռեսուրսների համընդհանուր կառավարման, ինչպես նաև վստահելի տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացման առումներով:

❖ Արդի հիմնախնդիրները

Ջրային ռեսուրսների պատշաճ կառավարման համար ամենակարևոր նախապայմաններից է հանրապետության ջրային ռեսուրսների և ջրային պաշարների գնահատումը և դասակարգումը, ինչն իր հերթին հնարավորություն կտա կայացնել որոշումներ՝ կապված ջրերի ռազմավարական պաշարների ավելացման և գետային հոսքի կարգավորման ուղղությամբ: Ամենակարևոր ուղղություններից է նաև ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակումը, ինչի համար անհրաժեշտ կլինի մշակել մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիտորինգի նոր ծրագրեր՝ հիմնված գետավազանային կառավարման մոտեցման վրա:

Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարմանն առնչվող առանցքային հիմնախնդիրներ են Սևանա լճի գործողությունների պլանի իրականացումն, ինչպես նաև Արարատյան դաշտավայրի ստորերկրյա ջրային ռեսուրսների հիդրոերկրաբանական ուսումնասիրությունները: Եվ վերջապես, ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման կարևոր հիմնախնդիրներից է ջրակոհամակարգերի պահպանման գոտիների սահմանումը (սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան գոտիների, էկոտոնի և այլն) և պահպանումը:

Ոչ պակաս կարևոր ռազմավարական խնդիր է ջրային համակարգերի կառավարման բարելավումը: Այս առումով ամենահրատապ հարցերից է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավումը (խմելու ջրամատակարարման և ռոտզման համակարգերից հոսակորուստների կրճատում,

ջուր խնայող տեխնոլոգիաների ներդրում, ջրամատակարարման ծառայությունների բարելավում, կեղտաջրերի մաքրման կայանների վերականգնում և նորերի կառուցում, ոռոգման համակարգերի զարգացում և ոռոգման մշակույթի բարելավում՝ գյուղատնտեսության մեջ առաջավոր ազդեցություն ունեցող միջոցառումների և ոռոգման եղանակների կիրառմամբ և այլն): Հատուկ ուշադրության է արժանի հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման խնդիրը:

1.2.2. Կենսաբազմազանություն

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունը ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այն անհրաժեշտ գործոն է երկրի կլիմայի ձևավորման, ջերմային և ջրային ռեժիմների կարգավորման, օդը վտանգավոր գազերից և այլ նյութերից մաքրման, հողը էրոզիոն գործընթացներից պահպանման, շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ բարվոք վիճակի ապահովման համար:

Կենսառեսուրսները հանդիսանում են երկրի տնտեսությանն աջակցող առանցքային գործոն, հատկապես գյուղատնտեսության, սննդային և այլ ոլորտներին հումքի տրամադրման և ռեկրեացիայի զարգացման առումով:

Չնայած իր փոքր տարածքին, հանրապետությունում հայտնաբերված են մոտ 3600 տեսակի բարձրակարգ ծաղկավոր բույսեր, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից 536-ը՝ ողնաշարավորներ: Այս հարուստ բազմազանության ձևավորման համար կարևոր նախադրյալներն են հանդիսացել այն, որ.

- Հայաստանը, որպես Հայկական լեռնաշխարհի մի մաս, գտնվում է տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհների ձևավորման կարևոր մարզերի հանգուցակետում:

- Միգրացվող կենդանիների և չվող թռչունների համար հանդիսանում է տարանցիկ ճանապարհների խաչմերուկ:

- Տարածքի բարձրունքագոտիական մեծ տատանումների շնորհիվ (375մ-ից մինչև 4095մ ծովի մակարդակից) համեմատաբար փոքր տարածության վրա ձևավորվել են 7 լանդշաֆտակլիմայական գոտիներ՝ իրենց յուրահատուկ բուսական ծածկույթով և կենդանական աշխարհով:

Հայաստանի կենսաբազմազանությունը հարուստ է տնտեսապես արժեքավոր, հազվագյուտ և էնդեմիկ տեսակներով: Օգտակար բույսերից առանձնակի նշանակություն ունեն ազրոկենսաբազմազանության խմբին պատկանող վայրի բույսերը, որոնց կարևոր բաղադրիչն են կազմում մշակովի բույսերի ցեղակիցները: Հայաստանը համարվում է վայրի ցորենի, աշորայի, գարու և այծակնի տեսակների համար գլոբալ կենտրոն, որտեղից շատ տեսակներ հետագայում տարածվել են ամբողջ աշխարհում: Հայաստանի Հանրապետության տարածքում դեռևս պահպանվել են նաև մի շարք ընտանի կենդանիների վայրի ցեղակիցները:

Կենսաբազմազանության պահպանությունը Հայաստանում հիմնականում իրականացվում է բնության հատուկ պահպանվող տարածքներում /ԲՀՊՏ/, որտեղ պահպանվում են հանրապետության ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի 60-70%-ը, այդ թվում՝ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, վտանգված և էնդեմիկ տեսակների գերակշռող մասը, ինչպես նաև վայրի գենետիկ ռեսուրսները:

Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը մոտ 360 հազ.հա է, որը կազմում է հանրապետության տարածքի մոտ 12%-ը /առանց Սևանա լճի մակերեսի այն կազմում է հանրապետության տարածքի մոտ 7%-ը/: Այս տարածքների 54%-ը /առանց Սևանա լճի մակերեսի 91%-ը/ զբաղեցնում են անտառային էկոհամակարգերը:

Հայաստանի առավել արժեքավոր տարածքների գույքագրման և ուսումնասիրության արդյունքում 2009թ. ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով ստեղծվել են «Արփի լիճ», «Արևիկ» ազգային պարկերը և «Զանգեզուր» պետական արգելավայրը, իսկ 2010թ.-ին՝ «Զիկատար» պետական արգելավայրը: 2011թ. ՀՀ կառավարության որոշմամբ ընդլայնվել է «Խոսրով» պետական արգելոցի տարածքը՝ «Գիլան» պետական արգելավայրում արգելոցային ռեժիմ սահմանելու միջոցով:

2009թ. հաստատվել է Հայաստանի բնության հուշարձանների ցանկը, որը ներառում է 230 բնության օբյեկտ:

2007թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել են «Սևան» և «Դիլիջան» ազգային պարկերի, 2009թ.՝ «Խոսրովի անտառ» պետարգելոցի, իսկ 2011թ.՝ «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլանները:

2007-2010թթ. կատարվել է Հայաստանի բուսակենդանական աշխարհի համալիր ուսումնասիրություն, միջազգային չափանիշներին համապատասխան տեսակների վիճակի գնահատում և ՀՀ Կարմիր գրքի վերահրատարակում: ՀՀ Կարմիր գրքում ընդգրկվել է 452 բուսական տեսակ (ընդհանուր ֆլորայի 12,5%-ը) և 308 կենդանական տեսակ (ֆաունայի մոտ 2%), որոնց վիճակն առավել տագնապալի է:

Որպես հիմնական նվաճումներ կարելի է նշել ոլորտի օրենսդրական դաշտի և ինստիտուցիոնալ կառույցների կատարելագործումը, առկա և նախատեսվող ԲՀՊՏ-ների տարածքներում կենսաբազմազանության գույքագրումը, պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակումը, մոնիթորինգի համակարգի ներդրման նախաձեռնումը, նոր պահպանվող տարածքների ստեղծումը, կրիտիկական վիճակում գտնվող կենսաբազմազանության որոշ բաղադրիչների պոպուլյացիաների վիճակի բարելավումը /ընձառյուծ, բեգոարյան այծ, հայկական մուֆլոն, գիշատիչ թռչուններ և այլն/, կարմիր գրքի երկրորդ հրատարակությունը:

Հարկ է նշել, որ բնապահպանական օրենսդրության կիրարկումը վերահսկողական համակարգում ունի թերություններ և բացթողումներ, որը հիմնականում կապված է աշխատակազմի թվաքանակի և ֆինանսական միջոցների բացակայության հետ:

Կենսաբազմազանությանը սպառնացող հիմնական վտանգները ուղղակիորեն կամ միջնորդված կապված են մարդածին ազդեցությունների հետ: Հիմնական սպառնալիքներն են՝ բնակմիջավայրերի կորուստը և փոփոխությունը, կենսառեսուրսների գերօգտագործումը, միջավայրի աղտոտումը, ներթափանցված/ինտրոդուցված/ օտարածին տեսակների ազդեցությունը, կլիմայի փոփոխությունը և այլ գործոններ:

Մարդածին ազդեցության հետևանքները առավել զգալի են անտառային, կիսաանապատային, տափաստանային էկոհամակարգերի, ինչպես նաև Սևանա լճի ջրային էկոհամակարգի վրա: ԲՀՊՏ-ներում լիարժեք չի իրականացվում պահպանության ռեժիմը:

1.2.3. Անտառների պահպանություն

• Ներկա վիճակը

Հայաստանի Հանրապետության անտառային հողերը 1993թ. հաշվառման արդյունքներով կազմում են 459.9 հազ. հա, որից 334.1 հազ. հա անտառածածկ տարածքներ են (հանրապետության տարածքի 11.2%-ը), այդ թվում՝ 283.6 հազ. հեկտարը բնական անտառներն են, իսկ 50.5 հազ. հեկտարը՝ արհեստական: Մակայն վերջին քսանամյակում կատարված մեծածավալ ծառահատումների հետևանքով անտառներում տեղի են ունենում որակական լուրջ փոփոխություններ բացասական առումով, մասնավորապես՝ ընկել է անտառների լրիվությունը, կատարվում են տեսակային կազմի անցանկալի փոփոխություններ:

1993թ. հաշվառման տվյալների համաձայն հանրապետության անտառների արտադրողականության միջին ցուցանիշը (բոնիտետ) III-6 է, միջին լրիվությունը՝ 0.55, բնափայտի միջին պաշարը կազմում է 125 խմ/հա, տարեկան միջին աճը՝ 1.3 խմ/հա: Ամբողջ անտառների բնափայտի ընդհանուր պաշարը կազմում է 41.740 հազ. խմ:

Հայաստանի հարավ-արևելյան շրջանների անտառապատվածությունը կազմում է 13%, կենտրոնական Հայաստանում՝ 2%, իսկ հյուսիս-արևելյանում՝ 29%:

Հանրապետության անտառներն աչքի են ընկնում բնական ռեսուրսների հարստությամբ և կենսաբազմազանության առատությամբ: Այստեղ հանդիպում են 274 տեսակի արբրիզեն ծառեր ու թփեր, որոնցից էնդեմ ծառերն ու թփերը կազմում են 25 տեսակ, իսկ ռելիկտային տեսակները՝ 31: Անտառկազմող հիմնական տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին, սոճին: Այս չորս տեսակները զբաղեցնում են հանրապետության անտառածածկ տարածության 89.1%-ը և անտառների պաշարների 97.2%-ը:

Հայաստանի անտառներում ստորադաս կամ երկրորդական տեսակները ներկայացված են դաժու, թխկու, լորենու, կեչու, թեղու, հացենու և այլ ծառատեսակներով: Գլխավոր անտառկազմող ծառատեսակների համեմատությամբ, սրանց արտադրողականությունը պակաս է շուրջ 36%-ով: «Լուսավոր» անտառները հիմնականում արտահայտված են գիհու նոսրանտառներով, որոնց լրիվությունը կազմում է 0.3-0.4, այսինքն՝ ազատ մակերեսներն ավելի շատ են (այս տվյալները չեն ընդգրկում հետագա տարիներին անտառային ֆոնդում տեղի ունեցած փոփոխությունները):

Համաձայն անտառակառավարման պլանների, «Հայանտառ» ՊՈԱԿ-ին ամրացված անտառային ֆոնդի հողերը կազմում են 344167 հա, որից անտառածածկ՝ 277134 հա:


Թե մարդածին, թե բնական պայմանների ազդեցության արդյունքում երկրում դիտվում է անտառների որակական կազմի վատացում:

2011թ. Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) ուսումնասիրություններ է իրականացրել Հայաստանի Հանրապետության անտառածածկ մակերեսի ճշգրտման ուղղությամբ: Հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալներով ՀՀ անտառածածկի մակերեսը կազմում է 332.333 հա կամ ՀՀ ընդհանուր տարածքի մոտ 11.17%-ը:

• Անտառվերականգնում

Վերջին 10 տարիների ընթացքում հանրապետությունում կատարվել են անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ 32065 հա տարածքում, որից ցանքս և տնկում՝ 3667 հա և անտառի բնական վերաճի օժանդակում՝ 28398 հա:

Գծապատկեր 1.10. 2002-2011 թթ. իրականացված անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալները




Ներկայումս անտառապատում և անտառվերականգնում ծրագրի շրջանակներում կառուցվում է ժամանակակից տնկարանային տնտեսությունն փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցման համար:

• Անտառապաշտպանություն

2003-2009 թթ. անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ կատարվել են ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքներ 58916 հա անտառային տարածքում: Ավիացիոն քիմիական պայքարի միջոցառումները կատարվել են բարձր արդյունավետությամբ և տվել են լավ արդյունք:

Գծապատկեր 1.11. 2003-2009 թթ. Բրականացված ավիացիոն պայքարի աշխատանքները




2012 թ. անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ նախատեսվում է իրականացնել ավիոքիմիական պայքարի աշխատանքներ 9000 հեկտարի վրա: Բացի այդ, «Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի լեռնանտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում» ծրագրի շրջանակներում անտառային վնասատուների դեմ նախատեսվում է փորձնական իրականացնել կենսաբանական պայքարի աշխատանքներ:

• Անտառայահպանություն


Վերջին տարիներին նվազել են ապօրինի հատումների ծավալները: Եթե 2002թ. հայտնաբերվել է ապօրինի հատված 102451 ծառ, ապա 2011թ. այդ թիվը հասել է 2488-ի:

Գծապատկեր 1.12. 2002-2011թթ. ապօրինի հատումների դինամիկան



Վերջին տարիներին ավելացել է անտառային հրդեհների քանակը: Եթե 2002թ. հրդեհներ է գրանցվել 5.6 հա անտառային հողերում, ապա 2010 և 2011 թթ. հրդեհներ են գրանցվել համապատասխանաբար 810.58 և 472.371 հա անտառային հողերում: Հրդեհների ավելացումը հիմնականում պայմանավորված է կլիմայի փոփոխության գործոններով, ինչպես նաև բնակչության կողմից աշնանը խոտհարքների և արտատվայրերի այրման արատավոր փորձով:


Գծապատկեր 1.13. 2002-2011 թթ. տեղի ունեցած անտառային հրդեհները



• Անտառակառավարման պլաններ (անտառաշինություն)

2004-2010թթ. մշակվել և հաստատվել են «Հայաստան» ՊՈԱԿ-ի Իջևանի, Սևքարի, Նոյեմբերյանի, Արծվաբերդի, Սյունիքի, Կապանի, Սիսիանի, Ճամբարակի, Գուգարքի, Դսեղի, Լավարի, Ջիլիգայի, Ստեփանավանի, Տաշիրի, Վայոց ձորի «Անտառտնտեսություն» մասնաձյուղերի անտառաշինական նախագծերը (անտառակառավարման պլանները), իսկ Երևանի, Արագածոտնի, Հրազդանի և Գյումրիի «Անտառտնտեսություն» մասնաձյուղերի անտառաշինական նախագծերը գտնվում են մշակման փուլում:


Գծապատկեր 1.14. Անտառակառավարման պլանների շարժը



• Անտառտնտեսվարման ներկա առանձնահատկությունները

Խորհրդային ժամանակահատվածում անտառտնտեսությունները պահվում էին առավելագույն (97-98%) չափով պետական բյուջեի միջոցների հաշվին: Անկախության տարիներին, հանրապետության պետական բյուջեի սահմանափակ հնարավորությունների պայմաններում, էականորեն փոխվեց համակարգի ֆինանսավորման սկզբունքները և այն հիմնականում կատարվում էր «Հայանտառ» ՊՈԱԿ-ի սեփական եկամուտների հաշվին: 2004-2005թթ.-ից Հայաստանի Հանրապետության անտառի ազգային քաղաքականության և ռազմավարության, ինչպես նաև անտառի ազգային ծրագրի ընդունման արդյունքում անտառային ոլորտի նկատմամբ քաղաքականությունը փոխվեց, և ֆինանսավորումը պետական բյուջեից սկսեց աճել: Սակայն վերջին տարիներին, կապված համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետ, պետական բյուջեից ֆինանսավորումը կրկին նվազել է, որի արդյունքում նվազել են նաև անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների ծավալները:

Գծապատկեր 1.15. 2002-2011թթ. «Հայանտառ» ՊՈԱԿ ֆինանսավորումը



• Օժանդակ տնտեսություններ

Ներկայումս անտառտնտեսվարումն իրականացնող պետական համակարգում օժանդակ տնտեսությունները գրեթե վերացել են և անտառի կողմնակի օգտագործումը հիմնականում իրականացվում է անտառամերձ բնակչության կողմից սեփական կարիքները հոգալու նպատակով:

• Օրենսդրություն

Անտառային ոլորտի բարելավման նպատակով ՀՀ կառավարության 2004թ. սեպտեմբերի 30-ի թիվ 38 արձանագրային որոշմամբ հաստատվել են Ապօրինի անտառահատումների հետ կապված խնդիրների լուծմանն աջակցող միջոցառումների գործողությունների ծրագիրը և ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը և ռազմավարությունը, բացի այդ ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 21-ի 1232-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագիրը: Վերը նշված փաստաթղթերի ընդունման հիմնական նպատակն է ապօրինի հատումների նվազեցումը, անտառային էկոհամա-

կարգերի պահպանությունը, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնումը, անտառային պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործումը և անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը:

2005թ. հոկտեմբերի 24-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության անտառային նոր օրենսգիրքը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության անտառները, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նշանակության դասակարգվում են.

ա/ պաշտպանական նշանակության.

բ/ հատուկ նշանակության.

գ/ արտադրական նշանակության:

Համաձայն նշված օրենսգրքի, պաշտպանական նշանակության անտառների խմբում ներառված է նաև անտառի վերին և ստորին սահմանների 200մ լայնությամբ տարածքը, կիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային գոտիներում աճող անտառները, որոնք առավելապես խոցելի են անթրոպոգեն (մարդածին), բիոտիկ (վնասատուներ, հիվանդություններ) և կլիմայական (ջերմաստիճան, տեղումներ, խոնավություն և այլն) գործոնների բացասական ազդեցությունից:

2006-2010թթ. մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են անտառային օրենսգրքից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր /Հավելված 3/:

1.2.4. Հողային ռեսուրսներ

Հայաստանի Հանրապետությունը պատկանում է սակավահող երկրների թվին և բնութագրվում է համեմատաբար երիտասարդ՝ պլիոցենյան հասակի հողային ծածկույթի առկայությամբ: Հանրապետության հողային ֆոնդը կազմում է ընդամենը 2.974.259 հա, որից միայն 0.15%-ն է առավել նպատակահարմար գյուղատնտեսության համար: Հողային ծածկույթի գրեթե 47% զբաղեցնում են թեք և գառիթափ լեռնալանջերը: Լեռնային հողագոյացման տարաբնույթ պայմանները նպաստել են հողային ծածկույթի բարդ կառուցվածքի և տրոհվածության ուժեղ արտահայտությանը: Հողային ծածկույթը չափազանց խայտաբղետ է՝ առանձնացվում են 7 ծագումնաբանական տիպեր, 27 ենթատիպ, որոնք ընդգրկված են 8 հողային բարձունքային գոտիների մեջ (Հավելված 5):

Անապատացման երևույթների զարգացման առումով Հայաստանը համարվում է առանձնապես խոցելի երկիր, ինչը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով և դրան գումարած երկրի տնտեսության անցումային փուլում գտնվելը: Անապատացման ենթարկված տարածքները կազմում են երկրի ընդհանուր տարածքի 53.2%, իսկ անապատացման վտանգի տակ գտնվող տարածքները՝ 28,7%: Այդ իսկ պատճառով հանրապետության համար անապատացման դեմ պայքարը դարձել է ռազմավարական նշանակության հիմնախնդիր, որի մեղմացումն ու կանխարգելումը երկրի կայուն զարգացման երաշխիքներից մեկն է:

2002թ. ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանությանն է արժանացել Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը:

Անապատացման դեմ պայքարի ուղղությամբ Հայաստանում իրականացվել են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում.

- «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում իրականացվել են ոռոգելի տարածքների ընդլայնման, ինչպես նաև դրենաժային համակարգերի վերականգնման աշխատանքներ: Ոռոգելի հողատարածքները՝ 2007թ. համեմատ, ավելացել են շուրջ 1300 հա: Իրականացվել են բնական կերհանդակների բարելավման և ջրարբիացման աշխատանքներ, որի շրջանակներում վերականգնվել են շուրջ 12 կմ ջրարբիացման համակարգեր, ինչի շնորհիվ օգտագործելի են դարձել ավելի քան 18000 հա հեռազնա բնական արոտներ:

- «Իրիզացիոն համակարգի վերականգնում» ծրագրի շրջանակներում վերականգնվել է 260 կմ ջրագիծ և մի շարք պոմպակայաններ, ջրավազաններ, վերականգնվել և կառուցվել են 238 խորքային հոր, մաքրվել և անցկացվել է գործող 310 կմ դրենաժային ցանց:

- 2010թ.-ից ընթացքի մեջ է «Հողային ռեսուրսների կայուն կառավարում՝ ի նպաստ Հարավային Կովկասի տարածաշրջանում հողերի դեգրադացիայի նվազեցում և աղքատության դեմ պայքարի» ծրագիրը:

2006թ.-ին մշակվել են նաև հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը, որով սահմանվել են խախտված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջները, խախտված հողերի դասակարգումն ըստ ռեկուլտիվացման ուղղությունների ու հետագա օգտագործման տեսակների՝ ելնելով դրանց պիտանիությունից:

Առանձնահատուկ տեղ է գրավում հանքարդյունաբերության գործունեության հետ կապված հողերի ծանր մետաղներով և քիմիական միացություններով աղտոտվածության մոնիթորինգը: Ներկայումս դիտարկումներն իրականացվում են սահմանափակ քանակությամբ և կրում են անկանոն բնույթ: Բացակայում է հողերի գեոքիմիական և ֆոնային աղտոտվածության վերաբերյալ տվյալների բազան և քարտեզագրումը: Հանքարդյունաբերության գործունեության հետ կապված հանրապետության ոռոգման ջրերի աղտոտման, ինչպես նաև աղտոտված հողերից բուսականության մեջ ծանր մետաղների, քիմիական միացությունների միգրացիայի, մարդու կողմից սննդային շղթայով օգտագործվող բուսական և կենդանական մթերքների աղտոտման վերաբերյալ դիտարկումները նույնպես ոչ պարբերական բնույթի են:

Տվյալ բնագավառը կանոնակարգելու նպատակով 2011թ.-ին մշակվել է տեխնաձին աղտոտված հողերի հետազոտման, բացահայտման և դրանց տարածքում մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը, որն ընդունվել է ՀՀ կառավարության 18.08.2011թ.-ին թիվ 1192-Ն որոշմամբ: Այն կիրառելի է հողատարման ենթարկված, աղակալված, ճահճացված, անապատացված, օգտակար հանածոների արդյունահանման կամ այլ մարդածին ներգործության հետևանքով խախտված հողերի, մարդու տնտեսական գործունեության արդյունքում պեստիցիդների մնացորդներով, ծանր մետաղներով, նավթամթերքներով և այլ օրգանական ու ոչ օրգանական աղտոտիչներով աղտոտված հողերի տարածքներում: Օրենսդրորեն սահմանվել է նաև «հողերի դեգրադացիա» հասկացությունը և դեգրադացիան բնութագրող դիագնոստիկ ցուցանիշները:

Մինչև 2013թ. ավարտը նախատեսվում է Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրերը վերանայել և համապատասխանեցնել այն ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» Կոնվենցիայի 10-ամյա ռազմավարության ծրագրի պահանջներին:

1.2.5. Ընդերքօգտագործման բնագավառ

Հանրապետության տարածքում հայտնաբերված են ավելի քան 100 տեսակ օգտակար հանածոներ, այդ թվում՝ մետաղային օգտակար հանածոներից՝ երկաթի, պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի, ոսկու, արծաթի, ծարիրի, այլումինի հուսքի և նրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղների զգալի պաշարներ: Հարուստ մետաղային հենքի վրա ստեղծվել են բազմաթիվ մետալուրգիական վերամշակող ձեռնարկություններ և կոմբինատներ, ինչպիսիք են օրինակ՝ Քաջարանի, Կապանի, Ալավերդու, Ախթալայի, Արարատի և այլն: Հայաստանի Հանրապետության տարածքում առկա են 19 պոչամբարներ: Լեռնահանքային ձեռնարկությունների հանձնված հողերի ընդհանուր տարածությունը կազմում է 9700հա, որից պոչամբարների տակ գտնվող հողեր՝ 1400հա: Էքստենսիվ զարգացող լեռնահանքային արդյունաբերությունը զգալի վնաս է հասցնում շրջակա միջավայրին: Բնապահպանական տեսակետից առավել վտանգավոր են համարվում պոչամբարային տնտեսությունները: Պոչամբարներում կուտակվող աղտոտիչների երկարատև և ինտենսիվ ազդեցությունը լանդշաֆտի բնական հողա-բուսական բաղադրիչների վրա հանգեցնում է դրանց ամբողջական դեստրուկցիային և հետագա էոզոիկոն գործընթացների ակտիվացմանը, կենսածին արտադրողականության կորստին: Վերափոխվում է մթնոլորտային օդի հասկությունները և գազային կազմը, տեղի է ունենում աղտոտում արդյունաբերական ծագման թունավոր նյութերով: Կտրտված ռելիեֆի պարագայում վթարային իրավիճակներում կարող են ձևավորել մի քանի կիլոմետր երկարությամբ աղտոտող արտահոսքեր:

Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգրքի ընդունմամբ 2012թ.-ին սկիզբ է դրվել մի շարք նոր հայեցակարգային մոտեցումների՝ օգտակար հանածոների հետախուզման և հանքավայրերի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի, բնակչության առողջության պահպանության և կենսամակարդակի բարելավման բնագավառներում:

Մասնավորապես, պահանջվում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացնել նաև հանքի փակման ծրագիրը, որը պետք է անդրադառնա ենթակառուցվածքների ապամոնտաժմանը, խախտված հողատարածքների վերականգնմանը, արտադրական լցակայանների տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացմանը, ինչպես նաև աշխատուժի սոցիալական մեղմացման հիմնահարցերին:

Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծում որպես բաղկացուցիչ մաս ներառվելու են բնության և շրջակա միջավայրի ազդեցության գնահատականը (այդ թվում՝ բնապահպանական կառավարման պլանը և մշտադիտարկումների ծրագրերը), սոցիալական ազդեցության գնահատականը, հեռացվող հողաշերտի և գույքնթաց արդյունահանվող աղքատ հանքաքարի պահեստավորումը և պահպանությունը:

Նոր Օրենսգրքով նախատեսված է ընդերքի առանձին տեղամասերի օգտագործման արգելումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ազգային անվտանգության ապահովման, մարդկանց կյանքի և առողջության, պատմամշակութային արժեքների կամ բնության և շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից, եթե հայցվող տեղամասի վրա գտնվող հողամասում կան գերեզմաններ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ, Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված բույսեր կամ կենդանիների բնակատեղիներ, ինչպես նաև, եթե տվյալ տարածքով անցնում են կենդանիների միգրացիոն ուղիներ:

Նախատեսվում է ընդերքօգտագործման վճարների նոր տեսակներ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման նպատակով:

Օրենսգրքով սահմանվել է նաև նոր հասկացություն՝ «տեխնածին հանքավայր»: Տեխնածին հանքավայրերը օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում ձևավորված, երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում կամ պոչամբարներում օգտակար հանածոյի կուտակումներ են, որոնք սահմանված կարգով ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական: Տեխնածին հանքավայրերը Հայաստանի Հանրապետության բացառիկ սեփականությունն են և կարող են օրենսգրքով սահմանված կարգով տրամադրվել շահագործման՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով:

Տեխնածին հանքավայրերի շահագործման համար վճարվում են ընդերքօգտագործման վճարներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեխնածին հանքավայրերի շահագործումը կնպաստի մի շարք բնապահպանական խնդիրների լուծմանը, այդ թվում նաև՝ պոչամբարներում կուտակված թափոնների կրճատմանը, ինչն արդիական է Հայաստանի նման սակավահող երկրի համար:

Պոչանքային տնտեսությունների անվտանգ շահագործման հիմնադրույթները ամրագրվել են 2011թ.-ին մշակված «ՀՀ տարածքի պոչամբարների անվտանգ կառավարում» ձեռնարկում, որն ամփոփում է պոչամբարների շահագործման նվազագույն պահանջները և կիրառելի է դրանց շահագործման հետ կապված բոլոր կառույցներին՝ պոչամբարներ, ամբարտակներ, պատվարներ, նստեցման և պարզեցման հորեր, ջրահեռացման համակարգեր, խողովակաշարեր և այլն:

Հանքարդյունաբերության գործունեությամբ պայմանավորված, շրջակա միջավայրի աղտոտվածության ուսումնասիրության խնդիրը սերտորեն կապված է մոնիթորինգային դիտարկումների իրականացման հետ: Մակայն, ինչպես արդեն նշվել է, ՀՀ տարածքում տեխնածին աղտոտված տարածքներում մշտադիտարկումների իրականացումը գտնվում է սաղմնային վիճակում: Մոնիթորինգային տվյալների բացակայությունը բացասաբար է անդրադառնում ՀՀ օրենսդիր, գործադիր իշխանության կողմից համապատասխան որոշումների /պոչամբարների վթարային արտահոսքերի վերացում, հողօգտագործման սահմանափակում, հողի ռեկուլտիվացիա և այլն/ կայացմանը:

Բացակայում է Հայաստանի Հանրապետության ընդերքի ոլորտի միասնական ազգային քաղաքականության և զարգացման ռազմավարությունը, որը հիմնաքար կծառայեր հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ճկուն ու արդյունավետ գործողությունների ծրագրի մշակման համար:

1.2.6. Մթնոլորտային օդի պահպանություն

Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 1994թ. ընդունված «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի և օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով:

Օրենքն արդիականացնելու և մթնոլորտային օդի վրա որոշ բացասական ազդեցությունների կանխարգելման նպատակով վերջին տարիներին օրենքում կատարվել են փոփոխություններ, վերջինը՝ 2011թ.: Այդ փոփոխությունների արդյունքում, մասնավորապես, արգելվել է համապատասխան բեռների տեղափոխումը փոշու համար անթափանց ծածկոցներ չունեցող մեքենաներով, սահմանվել են միջոցառումներ շինարարականներից, վերակառուցվող և նոր կառուցվող շենքերից փոշու արտանետումները կանխարգելելու համար, արգելվել է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում, վարչարարությունը պակասեցնելու և կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով 10 անգամ բարձրացվել է նորմավորման ենթակա լինելու շեմը:

Ներկայումս արտանետումների պետական հաշվառման և նորմավորման ոլորտում ընդգրկված են 1301 կազմակերպություն՝ իրենց մթնոլորտի արտանետման ավելի քան 3850 աղբյուրներով: Դրանք ընդգրկում են հանրապետությունում անշարժ աղբյուրներից կատարվող արտանետումների շուրջ 96%-ը, և դրանց նկատմամբ իրականացվում է պետական վերահսկողություն:

Ավտոտրանսպորտից արտանետումների կրճատման նպատակով կառավարության կողմից ընդունվել է հայեցակարգ և միջոցառումների ծրագիր, արգելվել է կապարացված բենզինի օգտագործումը և արտանետումների չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծումը: Վերջին տարիների ընթացքում մոտ 10 անգամ նվազեցվել է բենզինում և դիզելային վառելիքում ծծմբի պարունակության թույլատրելի քանակությունը: Տարեցտարի ավելացել է սեղմված բնական գազի կիրառումը՝ ի հաշիվ բենզինի: Այս ամենի արդյունքում զգալիորեն զսպվել է վնասակար արտանետումների աճը ավտոտրանսպորտից:

2004թ.-ից սկսած աշխատանքներ էր իրականացվում վնասակար նյութերի արտանետումների տարածքային և տեխնոլոգիական նորմավորման սկզբունքի ներդրման ուղղությամբ: Մշակվել են բնակավայրերում մթնոլորտի ֆոնային աղտոտվածության մեջ ավտոտրանսպորտի արտանետումների բաժնեմասը որոշելու սկզբունքները և աշխատանքներ են իրականացվում լավագույն տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմի մշակման ուղղությամբ:

Մշակվել է «Մթնոլորտ» ինտերնետային կայքը, որի շնորհիվ 2008թ.-ից գործում է մթնոլորտի պահպանության, մասնավորապես, արտանետումների նորմավորման էլեկտրոնային համակարգը:

2007- 2010թթ. ընթացքում ընդունվել են կառավարության մի շարք որոշումներ, որոնք հստակեցրել և ավելի թափանցիկ են դարձրել մթնոլորտային օդի պահպանության կառավարումը: Մասնավորապես, հաստատվել են աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների ու մթնոլորտային օդի պահպանության բնագավառում լիազոր պետական մարմնի հարաբերությունները՝ տնտեսվարող սուբյեկտներին պետական հաշվառման վերցնելու գործընթացում, հստակեցվել է հաշվառման ենթակա լինելու ստորին շեմը: Հաստատվել է նաև կազմակերպությունների սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նորմատիվների նախագծերի քննության և արտանետումներ կատարելու թույլտվություններ տալու կարգը, ըստ որի՝ ՄԹԱ նախագծերը տնտեսվարող սուբյեկտները կարող են ներկայացնել նախարարություն էլեկտրոնային տարբերակով՝ նախագիծը նախարարության էլեկտրոնային կայքում տեղադրելով: Այդ կարգի ներդրումը հնարավորություն տվեց մի կողմից պարզեցնել նախագծերի ներկայացման և արտանետումների թույլտվություններ ստանալու ընթացակարգը, պակասեցրեց վարչարարությունը և նվազեցրեց կոռուպցիոն ռիսկերը, մյուս կողմից թափանցիկ դարձրեց ինչպես տնտեսվարող սուբյեկտների բնապահպանական գործունեությունը, այնպես էլ պետական վերահսկողությունը այդ գործունեության նկատմամբ:

Ընդունվել է մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության, կլիմայի փոփոխության և օզոնային շերտի վիճակի հետ կապված վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման, ազդարարման և արձագանքման կարգը:

Սահմանվել են բնական գազով աշխատող ջերմային էլեկտրակայաններից մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդները:

1.2.7. Վտանգավոր նյութեր և թափոններ

Հաշվի առնելով կայուն զարգացման գործընթացում և մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության գործում քիմիական նյութերի և թափոնների անվտանգ կառավարման ապահովման կարևոր դերը՝ Հայաստանի Հանրապետությունում շարունակվում է քիմիական նյութերի և թափոնների կառավարման հարցերի օրենսդրաիրավական հենքի ակտիվ ձևավորումը, սահմանվել են հիմնական ուղղություններն ու ռազմավարական մոտեցումները, ի հայտ են բերվել տվյալ ոլորտում ազգային գերակայությունները:

Թափոնների կառավարման հարցերի կարգավորման նպատակով ստեղծվել է նորմատիվ-օրենսդրական հենք, ներառյալ՝ «Թափոնների մասին» ՀՀ օրենքը և նրանից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր /ՀՀ կառավարության որոշումներ, գերատեսչական հրամաններ/: Այդ իրավական ակտերի պահանջների կատարման և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է՝

- թափոնների պետական հաշվառում,
- վտանգավոր թափոնների անձնագրավորում,
- թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և թափոնների հեռացման վայրերի գրանցում,

- թափոնների պետական կադաստրի ստեղծման աշխատանքներ:

Մինևույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության համար շարունակում են արդիական մնալ վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության հիմնախնդիրները, քանի որ դեռևս լուծված չեն այդ թափոնների էկոլոգիապես անվտանգ եղանակով հեռացման, վնասագերծման և ոչնչացման հարցերը:

Հանրապետությունում բացակայում են թափոնների վերամշակման ձեռնարկությունները, ինչպես նաև դրանց վնասագերծման և թաղման մասնագիտացված պոլիգոնները:

Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ներդնել մաքուր տեխնոլոգիաներ, որոնք քիչ աղտոտող են, թույլ են տալիս առավել արդյունավետ օգտագործել բոլոր պաշարները, վերաշրջանառել հնարավորինս շատ թափոններ և արտադրանք:

Հայաստանի Հանրապետությունում առաջացող թափոնները հիմնականում կուտակվում են կազմակերպություններում կամ տեղափոխվում են աղբավայրեր, որտեղ կուտակվելով՝ թափոնները հանդիսանում են շրջակա միջավայրի աղտոտման աղբյուր:

Մինևույն ժամանակ, թափոններում պարունակվում են արժեքավոր բաղադրիչներ, որոնց կորզումն ու օգտահանումը թույլ են տալիս ոչ միայն վնասագերծել թափոններն, այլև ապահովել առաջնային հումքի տնտեսում և արտադրություն:

Նշված հիմնախնդիրների լուծման նպատակով, ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Մաքուր արտադրության» հայեցակարգը, որը կնպաստի քիմիական նյութերի և թափոնների անվտանգ կառավարմանը, էկոլոգիապես մաքուր արտադրության ներդրմանը, աղտոտումից շրջակա միջավայրի պահպանության խնդրի համալիր լուծմանը, ինչպես նաև արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացմանը:

Քիմիական նյութերի և թափոնների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ իրավական հենքը կատարելագործելու, ինչպես նաև ոլորտում առկա հիմնախնդիրներին լուծում տալու համար վերջին տարիների ընթացքում վերանայվել և նորացվել է «Քիմիական նյութերի և թափոնների կառավարման ազգային ակնարկը»/պրոֆիլ/:

Ներկայիս քիմիական նյութերի արտադրության և օգտագործման աճի և մարդու առողջության ու շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր բացասական ազդեցության առկայության պայմաններում առաջ է եկել քիմիական նյութերի գործածության արդյունավետ և էկոլոգիապես անվտանգ կառավարման ապահովման անհրաժեշտությունը: Այս նպատակով մշակվել է «Քիմիական նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և «Մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ներգործության ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությունը», որը ներառում է մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ներգործության ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումներն ու դրանց իրականացմանն ուղիները:


1.2.8. Բնապահպանության ոլորտի տնտեսական մեխանիզմներ

Հայաստանում շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ (կայուն) օգտագործումը ապահովելու (կարգավորիչ դեր), ինչպես նաև բնապահպանական ներդրումների և պետական բյուջեի համալրման համար ֆինանսական ռեսուրսների գեներացիա (դրամական հոսքերի ավելացում) ապահովելու (ֆիսկալ դեր) նպատակներով գործող «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի և այդ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի կիրարկման միջոցով շարունակել է գործել տնտեսական մեխանիզմների (լծակների) որոշակի համակարգ, որի շնորհիվ զգալի ավելացել են վերը նշված տնտեսական մեխանիզմների կիրառման արդյունքում հանրապետության պետական բյուջե մուտքագրվող եկամուտները, ինչպես նաև առանձին դեպքերում նվազել են շրջակա միջավայրի աղտոտման ծավալները:

Տեսչական վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացման և երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց զգալիորեն ավելացել և ավելանում են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ/հենք ստեղծելով հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար:


Վերջին 12 տարվա ընթացքում դրանց ծավալներն աճել են ավելի քան 15 անգամ՝ 1998թ. 608.0 մլն. դրամից 2011թ. հավասարվելով 12 171.4 մլն.դրամի:

Գծապատկեր 1.16. Բնապահպանական և բնօգտագործման վճարների ծավալների դինամիկան 2006-2011թթ. սյրդ.դրամներով



Բնօգտագործման և բնապահպանական վճարների տեսակարար կշիռը (%-ով) ՀՀ ՀՆԱ-ի նկատմամբ:

Գծապատկեր 1.17. Բնապահպանական և բնօգտագործման վճարների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ (%)



Սակայն պետք է արձանագրել նաև այն փաստը, որ բնօգտագործման և բնապահպանական վճարների տեսակարար կշիռը (%-ով) ՀՀ ՀՆԱ-ի նկատմամբ շարունակում է մնալ բավականին ցածր, հաշվի առնելով, որ այն բնորոշում է տնտեսության գործունեության արդյունքում շրջակա միջավայրի մաշվածության (վնասի) դիմաց գանձվող փոխհատուցման գումարների չափը: Ըստ փորձագետների գնահատականի, Հայաստանի նման զարգացման աստիճան ունեցող երկրներում տնտեսության գործունեության արդյունքում յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրին պատճառվում է 8,0-10,0 տոկոս ՀՆԱ-ին համապատասխանող վնաս կամ մաշվածություն, այսինքն, փոխհատուցման գումարները զիջում են փաստացի պատճառվող վնասն ավելի քան 32-40 անգամ:

❖ Աղտոտման կրճատմանը նպատակաուղղված տնտեսական գործիքներ (բնապահպանական վճարներ)

Բնապահպանական վճարների համակարգը Հայաստանում գործում է 1993թ.-ից: Վճարները գանձվում են շրջակա միջավայր վնասակար նյութերի արտանետման, շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրման, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և ներմուծման համար:

Բնապահպանական վճարների գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերի գանձման ծավալների 2008-2010թթ. ժամանակահատվածում տատանումները պայմանավորված են եղել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը ազդեցություն չի ունեցել ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման և թափոնների տեղադրման բնապահպանական վճարների գանձումների ծավալի վրա, այդ պարագայում, ի տարբերություն մյուս վճարատեսակների, դիտվել է գանձման ծավալների աճ, պայմանավորված այն հանգամանքով, որ դրանց ծավալների մակարդակը հիմնականում պայմանավորված է բնակչությանը մատուցվող կոմունալ ծառայությունների ծավալով: Մյուս կողմից, «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ նոր օրենքի կիրարկման արդյունքում բարձրացել է այդ վճարատեսակների վճարման օբյեկտ հանդիսացող փաստացի ծավալների հաշվառման մակարդակը:

Չնայած ձեռք բերված որոշակի առաջընթացի, խնդրո առարկա համակարգի գծով առկա են նաև հիմնախնդիրներ: Բնապահպանական վճարների արդիականացման գործընթացին Հայաստանում խանգարում են ներքոհիշյալ հիմնահարցերը՝

1. Համապատասխան ուսումնասիրությունների չկատարման և (կամ) բացակայության պայմաններում գնահատված չեն շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով պատճառված և պատճառվող վնասների իրական չափերը, որի արդյունքում բնապահպանական վճարների դրույքաչափերը չեն համապատասխանում/համարժեք չեն այդ չափերին:

Բնապահպանական վճարների գործող դրույքաչափերի հիմքում դրված են՝

ա/ կամ խորհրդային ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակված փոխհատուցման ցուցանիշները կամ չափորոշիչները, որոնք չեն համապատասխանում այսօրվա պահանջներին,

բ/ կամ չունեն անհրաժեշտ հիմնավորվածություն, քանի որ հիմնված են տեսական կամ համեմատական հաշվարկների վրա:

Շրջակա միջավայրի աղտոտման համար բնապահպանական վճարների դրույքաչափերի համադրումն այլ երկրներում գործող համապատասխան վճարների դրույքաչափերի հետ վկայում է այն մասին, որ Հայաստանում գործող դրույքաչափերը բավականին ցածր են, մասնավորապես, հիմնական աղտոտիչների գծով մի քանի օրինակներ՝

Աղյուսակ 1.10. Ծծմբային անհիդրիդի (SO₂) –ի գծով՝

Երկիրը	Օդային ավազան 1 տոննայի արտանետման համար բնապահպանական վճարի դրույքաչափը			
	չափաքանակի սահմաններում		չափաքանակից ավելի դեպքերում /Եվրո/	
	ՀՀ դրամով	Եվրո	մինչև 5 անգամ գերազանցող ծավալի համար	5-ից ավելի անգամ գերազանցող ծավալի համար
Հայաստան	1800	3.4	17	34
Կանադա		8.35		
Ավստրալիա		10.0		
Արևելյան Եվրոպայի երկրների (Չեխիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Սլովակիա) միջինը		33.75		
Սերբիա		57.5		
Լեհաստան		110.0		
Բելառուս		120.0		
Շվեդիա		1535.0		

Աղյուսակ 1.11. Ազոտի օքսիդների (NOx) –ի գծով՝

Երկիրը	Օդային ավազան 1 տոննայի արտանետման համար բնապահպանական վճարի դրույքաչափը			
	չափաքանակի սահմաններում		չափաքանակից ավելի դեպքերում /ԱՄՆ դոլարով/	
	ՀՀ դրամով	ԱՄՆ դոլարով	մինչև 5 անգամ գերազանցող ծավալի համար	5-ից ավելի անգամ գերազանցող ծավալի համար
Հայաստան	14800	39.4	196.8	394.0
Արևելյան Եվրոպայի երկրների (Չեխիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Սլովակիա) միջինը		55		
Բելառուս		480		
Շվեդիա		5900		

Անկախացման առաջին տարիներին տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանված բնապահպանական վճարների բավականին ցածր դրույքաչափերը չեն համապատասխանում ռեսուրսի/վնասի իրական տնտեսական արժեքին և այդ պատճառով բավարար չափով չեն ազդում տնտեսվարող սուբյեկտների բնապահպանական վարքագծի վրա:

Գործնականում բնապահպանական վճարների վճարումը տնտեսապես ավելի շահավետ է, քան ավելի մեծ ծախսեր պահանջող էկոլոգիապես անվտանգ նոր («կանաչ») տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերումը և ներդրումը:

Աղտոտման ծավալների հետագա ավելացումը հանգեցնում է անկանխատեսելի բնապահպանական հիմնախնդիրների, որոնց լուծումը տարեցտարի պահանջում և պահանջելու է ավելի մեծ ծավալի ֆինանսական ներդրումներ, որոնք չեն կարող ապահովել, նույնիսկ ներկայումս, որպես բնապահպանական ներդրումների և պետական բյուջեի համալրման համար ֆինանսական ռեսուրսների գեներացիա (դրամական հոսքերի ավելացում) ապահովող ֆիսկալ գործիք հանդիսացող, բնապահպանական վճարները:

Մյուս կողմից, անկախացման առաջին տարիներին տնտեսության զարգացման նպատակով որոշ ոլորտների համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով, սահմանված բնապահպանական վճարների վճարման գծով արտոնությունների հետագա կիրառումը խիստ ռիսկային է, քանի որ գործնականում դրանք առաջացնում են բնական ռեսուրսների ոչ բանական (ողջամիտ) օգտագործում: Մասնավորապես, նմանատիպ արտոնությունների շարքին կամ օրինակներին կարելի է դասել՝

ա) ջրամատակարար-ջրահեռացնող ընկերություններին բնապահպանական վճարների վճարման գծով արտոնություններ տրամադրելու պրակտիկան,

բ) հանքարդյունահանող ձեռնարկությունների կողմից թափոնակուտակիչներում տեղադրվող թափոնների համար բնապահպանական վճարների չվճարումը՝ պայմանավորված սահմանված 0-ական դրույքաչափով:

❖ Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը նպաստակառողիված վճարներ

Բնօգտագործման վճարների համակարգը Հայաստանում նույնպես գործում է 1993թ.-ից: Վճարները գանձվում են ջրօգտագործման, օգտակար հանածոների պաշարների արդյունահանման/մարման, կենսապաշարների օգտագործման համար:

2006-2010թթ. ժամանակահատվածում բնօգտագործման վճարների գանձման ծավալների էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ պայմանավորված 2009թ. դրանց ծավալների գանձման մակարդակի զգալի նվազումը 2010թ. գրեթե վերականգնվել է, և ինչպես վկայում են 2011թ. 1-ին կիսամյակի փաստացի ցուցանիշները, դրանք միտում ունեն գերազանցելու 2008թ. գրանցված գանձման ամենաբարձր մակարդակը:

Հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործման վճարների գանձման ծավալների տատանումները պայմանավորված են եղել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով լեռնահանքային արդյունաբերության և շինարարության ծավալների զգալի նվազման, ինչպես նաև ազնիվ և գունավոր մետաղների (հատկապես մոլիբդենի) միջազգային գների մակարդակի անկման հետ, որը հանգեցրել է դրանց հիման վրա հաշվարկվող բնօգտագործման վճարների ծավալների զգալի պակասեցման:

Քննարկվող ժամանակահատվածում ջրօգտագործման վճարների գանձման ծավալների ոչ էական տատանումները նույնպես պայմանավորված են եղել ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում կենսառեսուրսների օգտագործման վճարների գանձման ծավալները զգալի փոփոխությունների չեն ենթարկվել, նույնիսկ 2010թ.-ին 2007թ. համեմատ ձեռք է բերվել ավելի քան 33.0 տոկոսի աճ, որը հիմնականում պայմանավորված է եղել խեցգետնի արդյունագործական որսի ծավալների աճի հետ:

Խնդրո առարկա համակարգի գծով առկա հիմնախնդիրները գրեթե համընկնում են բնապահպանական վճարների մասով ներկայացվածների հետ: Առանձին (հատկապես ջրօգտագործման) դեպքերում ռեսուրսների օգտագործման համար սահմանված 0-ական կամ ցածր դրույքաչափերը չեն նպաստում բնական ռեսուրսների արդյունավետ և (կամ) բանական օգտագործմանը:

❖ Բնապահպանական վճարների հասցեական օգտագործում

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ/հենք են ստեղծում հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման ծավալների ավելացման համար:

Սակայն պետք է փաստել, որ պետության ընդհանուր ֆինանսական աղբյուրների միջոցների սահմանափակության պայմաններում բյուջետային ծախսային գերակայություններում բնապահպանական միջոցառումները շարունակում են պակաս գերակա համարվել, արդյունքում՝ շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների վրա կատարվող ծախսերի ՀՆԱ -ի նկատմամբ ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է ԱԵԿԿԱ երկրների մասով ամենավերջին տեղերից մեկը:

Աղյուսակ 1.12. ՀՀ պետական բյուջեից շրջակա միջավայրի պահպանության հատկացումները

	2008թ.	2009թ.	2010թ.
ՀՀ պետական բյուջեով Շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումներ (մլրդ.դրամ)	3.0	3.9	4.9
Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջե փաստացի մուտքագրված մուտքեր (մլրդ.դրամ) (աղբյուր-ՀՀ պետբյուջեի կատարման տարեկան հաշվետվություն)	6.12	9.97	9.10
Վճարների հասցեական օգտագործման ցուցանիշը (տոկոս)	49.0	39.1	53.8

Աղյուսակ 1.13. ՀՀ պետական բյուջեի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումների տեսակարար կշիռը (% -ով) ՀՀ ՀՆԱ-ի նկատմամբ

	2008թ.	2009թ.	2010թ.
ՀՀ ՀՆԱ /մլրդ դրամ/	3568.2	3102.8	3461.9
ՀՀ պետական բյուջեով շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումներ (մլրդ.դրամ)	3.0	3.9	4.9
ՀՀ պետական բյուջեի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումների տեսակարար կշիռը (%-ով) ՀՀ ՀՆԱ-ի նկատմամբ	0.08	0.12	0.14

Որպես դրական կարող է գնահատվել միայն այն փաստը, որ ՀՀ պետական բյուջեի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումների տեսակարար կշիռը՝ թեև աննշան, բայց աճի միտում ունի:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հասցեական օգտագործման առկա հիմնախնդիրների լուծումը Հայաստանում իրականացվում է մի քանի ուղղություններով՝

• Առաջին ուղղություն

1. Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով հավաքագրվող գումարների օգտագործումը հասցեական դարձնելու նպատակով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատար-

ված համապատասխան լրացումով ամրագրվել է, որ «Բնապահպանական ծրագրերի գծով յուրաքանչ-յուր տարվա պետական բյուջեով նախատեսվող ծախսերը չեն կարող պակաս լինել քան այդ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարվա բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով փաստացի մուտքերի հանրագումարը»: Օրենքն ուժի մեջ է մտել 2011թ.-ից:

• Երկրորդ ուղղություն

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի կիրարկման շրջանակների ընդլայնումն է: Օրենքի կիրարկման շրջանակներում խոշոր լեռնամետալուրգիական ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարները հատկացվում են ազդակիր համայնքներին՝ բնապահպանական և առողջապահական միջոցառումների ֆինանսավորման համար:

ՀՀ 2004-2010թթ. պետական բյուջեի կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար հատկացվող սուբվենցիաների գումարը 2004թ. 131.4 հազ. դրամից աճել է՝ 2012թ. հավասարվելով 277.1 մլն.դրամի, այդ թվում 2012թ.-ից բնապահպանական ծրագրեր իրականացնելու համար համապատասխան սուբվենցիաներ ստանալու իրավունքից օգտվում են 26 համայնքներ:

• Երրորդ ուղղություն

1. Հաշվի առնելով միջազգային փորձը, Հայաստանում բնապահպանական ներդրումային/նպատակային ծրագրերի /նախագծերի/ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ կուտակելու համար ստեղծվել և գործում է բնապահպանական ֆոնդերի համապատասխան համակարգ, մասնավորապես՝

• 2004թ. ՀՀ կառավարության 10.06.2004թ. N 891-Ն որոշմամբ ստեղծված Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամը, որի հիմնական նպատակն է աջակցել ՀՀ անտառների վերականգնման գործընթացին և բարենպաստ պայմաններ ստեղծել ՀՀ անտառների զարգացման համար:

• 2005թ.-ից գործում է Շրջակա միջավայրի պահպանության դրամազույգը, որտեղ իրականացվում է համապատասխան երաշխիքային գումարների կուտակումը՝ ընդերքի շահագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի, հարթեցման, կանաչապատման, ծառատնկման և կառուցապատման աշխատանքների իրականացման համար: 01.05.2010թ. դրությամբ արդեն իսկ հավաքագրվել է ավելի քան **350.0 մլն.դրամ**:

• 2005թ.-ից գործում է «Բնապահպանական նպատակային ֆոնդ» արտաբյուջետային հաշիվը: 2005-2010թթ. արդյունքներով Հայաստանի Հանրապետության իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից կամավոր մուծումների, նվիրատվությունների և հանգանակությունների տեսքով ֆոնդին է փոխանցվել ընդհանուր հանրագումարով ավելի քան **260.0 մլն.դրամ**, որոնց հաշվին իրականացվել են մի շարք կարևոր բնապահպանական ծրագրեր և միջոցառումներ:

• ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N 517 -Ն որոշմամբ ստեղծվել է Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամը, որի նպատակն է աջակցել Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի վերականգնմանը, վերարտադրությանը, պահպանմանը, բնականոն զարգացմանը և օգտագործմանը, ջրի մաքրության ապահովման համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերմանը:

Շրջակա միջավայրի վիճակի տվյալները ներկայացված են Հավելված 1-ում:

1.3 Զարգացման ազգային ծրագրեր

1.3.1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր /ԱՀՌԾ/ և Կայուն զարգացման ծրագիր /ԿԶԾ/

Տնտեսական քաղաքականության երկարաժամկետ ծրագրավորման առաջին ռազմավարական փաստաթուղթը Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրն էր (ԱՀՌԾ)՝ ընդունված ՀՀ կառավարության կողմից 2003թ.: ԱՀՌԾ մշակման մասնակցային գործընթացն ապահովվել է պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի, ինչպես նաև՝ միջազգային կազմակերպությունների ու դոնոր հանրության ներկայացուցիչների ներգրավմամբ:

ԱՀՌԾ նպատակադրում էր նշանակալիորեն նվազեցնել նյութական աղքատության մակարդակը՝ 2015թ. հասցնելով 19.7%՝ 2001թ.-ի 50.9% համեմատ, մինևույն ժամանակ թիրախ էր հանդիսանում եկամտային անհավասարության կրճատումը 2001թ.-ի 53.5%՝ մինչև 44.6%՝ 2015թ.: Մարդկային զարգացման առումով ԱՀՌԾ նպատակներն էին առկա մարդկային ներուժի պահպանումը և հետագա զարգացու-

մը, մարդկային աղքատության դրսևորումների կրճատումը, բնակչության առողջության վիճակի, վերարտադրական ներուժի և կենսապայմանների բարելավումը, ներառյալ՝ ընդհանուր կրթության և առողջապահության ծառայությունների որակի և աղքատների համար մատչելիության մակարդակի բարձրացումը, մանկական և մայրական մահացության մակարդակների կրճատումը, խմելու ջրի և այլ առաջնային ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը: Նշված թիրախների ու նպատակների սահմանման համար հիմք են հանդիսացել նաև 2000թ. ՄԱԿ Հագարամյակի զարգացման նպատակները: Ըստ էության, երկրում աղքատության կրճատմանն ու եկամուտների արդար բաշխման ապահովմանն ուղղված առաջին ռազմավարությամբ շեշտադրվում էր մարդկային կապիտալի պահպանությունն ու զարգացումը՝ որպես կայուն տնտեսական աճի առանցքային նախապայման:

2006թ. մեկնարկեց ԱՀՌԾ վերանայման գործընթացը: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ պլանավորման հիմնական փաստաթուղթը Կայուն զարգացման ծրագիրն է (ԿԶԾ), որը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2008թ. հոկտեմբերի 30-ին, և ըստ էության հանդիսանում է ԱՀՌԾ վերանայված տարբերակը: Այն համապարփակ և ամբողջական տեսքով ներկայացնում է երկրի զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները՝ նախանշելով թիրախային ցուցանիշները և դրանց հասնելու ուղենիշերը:

ԿԶԾ մշակման և իրականացման հիմքում դրվել է խոր մասնակցային գործընթացը, ինչն իր ինստիտուցիոնալ ձևակերպումն ստացել է 2009թ. փետրվարի 14-ին ստորագրված սոցիալական գործընկերության համաձայնագրով, որով ամրագրվեց ԿԶԾ մասնակցային իրականացման կառավարման երկմակարդակ համակարգը: Այն բաղկացած է ԿԶԾ համակարգող խորհրդից և ԿԶԾ աշխատանքային խմբից: Երկու միավորներն էլ ձևավորված են քաղաքացիական հասարակության ինստիտուտների գերակշիռ մասնակցության սկզբունքով: Միաժամանակ, քաղաքացիական հասարակության արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով ձևավորվել է Քաղաքացիական Համագործակցության Ցանցը՝ որպես կառավարման համակարգի ինստիտուցիոնալ ոչ ֆորմալ կառույց:

ԿԶԾ փաստաթղթով սահմանվել էին հետևյալ հիմնական նպատակները՝

- բնակչության բարեկեցության աճը և աղքատության հաղթահարումը, ներառյալ ծայրահեղ աղքատության վերացումը,
- մարդկային աղքատության հաղթահարումը և մարդկային զարգացման ապահովումը,
- տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա աճի զսպումը՝ ետ ընկնող տարածքների արագացված զարգացումն ապահովող նպատակային տարածքային քաղաքականության իրականացմամբ:

Այս նպատակներին հասնելու համար ԿԶԾ ռազմավարությունը բաղկացած է երեք հիմնական գերակա ուղղություններից՝ կայուն արագ տեմպերով տնտեսական աճի ապահովումը, ակտիվ և բնակչության խոցելի խմբերին ուղղված նպատակային սոցիալական և եկամտային քաղաքականության իրականացումը և երկրի կառավարման համակարգի արդիականացումը՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովումը: Նշված գերակայությունների իրացման գործընթացը նախատեսված է զուգակցել շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների կայուն կառավարման խնդիրների լուծմամբ:

ԿԶԾ իրականացման և արդյունքում երկրի սոցիալ-տնտեսական կառուցակարգը որակական նոր հարթություն տեղափոխելու համար 2008թ. կար կարևոր նախադրյալ՝ տնտեսական աճի բարձր տեմպ: Սակայն արձանագրվող աճը հիմնված էր առավելապես արտաքին ֆինանսավորման ծավալների պահպանվող աճով, արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճով, տնտեսության կառուցվածքում շինարարության և ծառայությունների ոլորտների բարձր տեսակարար կշռով: Այս հանգամանքը զարգացման գործող մոդելը դարձնում էր արտաքին տնտեսական շուկերի նկատմամբ զգայուն և, այդպիսով, ի վիճակի չէր երաշխավորել կայուն զարգացման հեռանկարի ձեռքբերումը: Ըստ էության, ԿԶԾ նպատակադրում էր անցում կատարել ապրանքների և ծառայությունների արտահանման առաջանցիկ աճի վրա հիմնված տնտեսական կառուցվածքին, որն անհրաժեշտ հիմքեր պետք է ապահովեր երկարաժամկետում երկիրը կայուն զարգացման հուն փոխանցելու համար: Սակայն 2008թ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամը, վերջին ժամանակաշրջանում համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող զարգացումներն ու այդ արտաքին տնտեսական բացասական շուկերի փոխանցումը ներքին տնտեսությունն վտանգեցին ԿԶԾ իրականացումն ըստ նախագծված սցենարի:

Նշված հիմնական գործոնների ազդեցությամբ և դեռևս պահպանվող անորոշության պայմաններում որդեգրվեց միջնաժամկետ պլանավորման մոտեցումը: Չնայած համաշխարհային ճգնաժամի ներգործու-

թյամբ երկրի տնտեսական իրողությունները որոշակիորեն սահմանափակեցին ամրագրված թիրախների և նպատակների ձեռքբերման հնարավորությունները, այդուհանդերձ, ՀՀ կառավարությունը հակաճգնաժամային քաղաքականության շրջանակներում հետևողական եղավ որդեգրված գերակայությունների պահպանման և դրանց ուղղված բարեփոխումների իրականացման հարցում:

2008թ. ապրիլի 28-ի N 380-Ս ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «ՀՀ կառավարության 2008-2012թթ. ծրագիրը», որով ամրագրված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միջնաժամկետ գերակայությունները.

- ազգային անվտանգության և ակտիվ տնտեսական քաղաքականության միջոցով կայուն զարգացման ապահովում,
- արդյունավետ պետական, տեղական ինքնակառավարման և մասնավոր հատվածի կառավարման համակարգի ձևավորումը և կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորում,
- կրթության և գիտության զարգացումը և այդ ուղղությամբ 21-րդ դարի մարտահրավերներին դիմակայել,
- տարածքային համաչափ զարգացում:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառ.

Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել տարածքային համաչափ զարգացման հայեցակարգը, ինչը հնարավոր է դարձնում առանձին համայնքների, տարածքների ու մարզերի գնահատումը ինչպես բնակչության կյանքի որակը, այնպես էլ տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող ագրեգացված ցուցանիշների միջոցով՝ արդյունքում հնարավոր դարձնելով յուրաքանչյուր նախատեսվող ծրագրի գնահատումը ըստ այդ ցուցանիշների վրա ազդեցության և համաչափ զարգացում ապահովելու տեսանկյունից: ՀՀ մարզերում իրականացվել են մարզային զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներ:

2009-2010թթ. իրականացվել է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական հատվածի հողերի՝ համայնքներին հանձնելու գործընթացը, ինչի արդյունքում ավելացել են համայնքների տնտեսական և ռեսուրսային հնարավորությունները:

Ընդունվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, որի համաձայն Երևանը ստացել է համայնքի կարգավիճակ, մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում տեղական հարկերի» հայեցակարգը, որով գույքահարկը ու հողի հարկը սահմանվել են որպես տեղական պարտադիր հարկատեսակներ, ամբողջությամբ նկարագրվել է տեղական հարկերի վարչարարությունը, սահմանվել են նոր հարկատեսակներ: 2011թ. համար դոտացիաների ծավալը կազմել է նախորդ տարվա համախմբված բյուջեի փաստացի եկամուտների մոտ 4,6%-ը: Համայնքների ֆինանսական միջոցներն առավել օպտիմալ և նպատակային օգտագործելու և դրա արդյունքում սեփական և պետության պատվիրակած լիազորությունների արդյունավետ իրականացման նպատակով մշակվել է համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգը:

1.3.2. Զբաղվածության պետական ծրագիր

Զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունը միտված է արժանապատիվ, լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը, աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրմանը, երիտասարդների, այդ թվում՝ գյուղական երիտասարդության, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն աջակցելուն: Զբաղվածության պետական քաղաքականության 2000-2011թթ. ընկած ժամանակաշրջանը բնութագրվում է որպես զբաղվածության ոլորտի օրենսդրական բարեփոխումների, զբաղվածության պետական ծառայության համակարգի ինստիտուցիոնալ կարգավորման ժամանակաշրջան:

Բարեփոխումների իրականացման ուղղություններն են եղել.

- օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործում,
- կառավարման համակարգի կատարելագործում,
- զբաղվածության պետական նոր ծրագրերի ներդրում,
- միջազգային փորձի տեղայնացում:

2006թ. հունվարի 1-ից գործողության մեջ է դրվել «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն աշխատանքի խրախուս-

ման, զբաղվածության ապահովման և գործազրկության դեպքում սոցիալական գործընկերության սկզբունքներով արդարացի սոցիալական քաղաքականության իրականացումն էր:

2006-2011թթ. և հետագա տարիների զբաղվածության բնագավառի գերակա ուղղությունները երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելու, գյուղական բնակավայրերի անձանց զբաղվածությունը խթանող ծրագրերի մշակումն ու ներդրումն էր:

Նշված ժամանակահատվածում հստակեցվել է բնակչության զբաղվածության ամենամյա պետական ծրագրի կառուցվածքը և ծրագրում ընդգրկվող միջոցառումների ցանկը:

Բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերն են՝

1. գործազրկության նպաստի վճարումը.
2. գործազուրկների մասնագիտական ուսուցումը.
3. աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցումը, աշխատանքային ունակությունների վերականգնումը.
4. գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր հանդիսացող աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցումը.
5. երկարամյա ծառայության, արտոնյալ պայմաններով և մասնակի կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց վերամասնագիտացումը.
6. այլ վայր աշխատանքի գործուղման կապակցությամբ գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների նյութական ծախսերի հատուցումը.
7. ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը.
8. աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցումը գործատուին.
9. վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպումը.
10. աշխատանքի տոնավաճառի կազմակերպումը.
11. մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող գործազուրկների և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների աշխատանքային պրակտիկայի կազմակերպումը գործատուի մոտ.
12. աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցումը գործատուի մոտ.
13. աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպումը.
14. թաղման նպաստի վճարումը:
15. Բնակչության զբաղվածության կարգավորումն իրականացվում է ինչպես պետական, այնպես էլ միջազգային և այլ կազմակերպությունների հետ իրականացվող ծրագրերի և միջոցառումների արդյունքում:

1.3.3. Բնապահպանություն

«Շրջակա միջավայրի պահպանության» գործողությունների ազգային ծրագիր

2008թ. ընդունվել է բնապահպանության ոլորտի կարևոր ռազմավարական փաստաթուղթ՝ «Շրջակա միջավայրի պահպանության գործողությունների 2-րդ ազգային ծրագիրը» /ՇՄՊԳԱԾ-2/, որն հանդիսանում է բնապահպանական քաղաքականության գործիքների համակարգված փաթեթ:

ՇՄՊԳԱԾ-2-ը մշակվել է՝ հիմք ընդունելով բնապահպանության ոլորտի կարևորագույն միջազգային հանդիպումների /1992թ. Ռիո-ի, 2002թ. Յոհաննեսբուրգի գագաթաժողովներ, ՄԱԿ-ի ՇՄՄ ղեկավար խորհրդի նստաշրջաններ/ որոշումները, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված բնապահպանական կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները:

ՇՄՊԳԱԾ-2-ի 120 միջոցառումները մշակված են հետևյալ բնապահպանական ուղղություններով՝

- Բնապահպանական քաղաքականություն, օրենսդրություն, ինստիտուցիոնալ հզորություններ
- Տնտեսական ու ֆինանսական մեխանիզմներ
- Ջրային ռեսուրսների կառավարում
- Ընդերքի կառավարում
- Մթնոլորտի պահպանություն ու կլիմայի փոփոխություն
- Բնապահպանական/շրջակա միջավայրի մոնիթորինգ
- Կենսաբազմազանության ու կենսառեսուրսների, այդ թվում՝ անտառային սեկտորի կառավարում

- Քիմիական նյութերի ու թափոնների կառավարում
- Հողերի կայուն օգտագործում/կառավարում
- Հանրության իրազեկում ու բնապահպանական դաստիարակություն, կրթություն ու տեղեկատվության մատչելիություն
- Միջազգային համագործակցություն բնապահպանության ոլորտում
- Նաև միջճյուղային համագործակցության հետևյալ ուղղություններով՝
- Բնապահպանություն և առողջություն
- Բնապահպանություն – էներգետիկա, արդյունաբերություն, գյուղատնտեսություն և կոմունալ սեկտոր:

«Մի շարք բնապահպանական կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոցառումների ցանկ». Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 22 միջազգային բնապահպանական կոնվենցիաներ և արձանագրություններ: Նշված պայմանագրերի իրականացումը պահանջում է համաձայնեցված և համակարգված մոտեցում՝ անհրաժեշտ քաղաքական, ռազմավարական և իրավական փաստաթղթերի մշակման, համապատասխան գործողությունների կատարման, ինչպես նաև ծրագրավորված գործողությունների կատարումն ապահովող ֆինանսավորման հարցերի լուծման ուղղությամբ:

«Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, հանդիսանալով բնապահպանական միջազգային կոնվենցիաների պահանջների իրագործման կարճաժամկետ /հնգամյա/ գործողությունների ցանկը հաստատող հերթական 3-րդ փաստաթուղթ /1–ն ընդունվել է ՀՀ կառավարության 25.02.1998թ. թիվ 115-Ն որոշմամբ, 2-ը՝ ՀՀ կառավարության 02.12.2004թ. N1840-Ն որոշմամբ/, նպատակ ունի հստակեցնել մի շարք բնապահպանական կոնվենցիաներից բխող Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունները և ապահովել համապատասխան աշխատանքների համակարգված իրականացումը:

2011թ. հաստատված ցանկում ընդգրկված են 67 միջոցառումներ, որոնց իրականացման համար ներառված են ՀՀ 17 գերատեսչություններ/պետական մարմիններ:

«Հայաստանի Հանրապետության Անտառի ազգային ծրագիր»-ը /ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 21-ի թիվ 1232-Ն որոշում/ նպատակ ունի անտառների կայուն կառավարմանը, ինչպես նաև անտառների տնտեսական, սոցիալական և բնապահպանական դերի բարձրացմանը:

Ազգային ծրագրի խնդիրներն են՝

- անտառային էկոհամակարգերի պահպանությունը, պաշտպանությունը,
- դեգրադացված անտառների վերականգնումը,
- անտառային պաշարների կայուն և շարունակական օգտագործումը,
- անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը:

«Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր» /ԱՌԳԾ/ /26.12.2002թ. թիվ 54 ՀՀ կառավարության արձանագրային որոշում/:

Ծրագրի նպատակը բնության հատուկ պահպանվող տարածքների կատարելագործված համակարգի ստեղծման միջոցով ապահովել.

- Հայաստանի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, պահպանության, վերականգնման և կայուն օգտագործման վիճակի բարելավումը,
- համակարգի ներդաշնակ ինտեգրացումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությանը,
- բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցի համապատասխանեցումը միջազգային համաձայնագրերին, ստանդարտներին և չափանիշներին:

Գործողությունների ծրագիրը ընդգրկում է 5 բաժին.

1. Իրավական դաշտի կատարելագործում,
2. ԲՀՊՏ կառավարման համակարգի բարելավում,
3. ԲՀՊՏ-ների ցանցի ընդլայնում,
4. Ֆինանսա-տեխնիկական մեխանիզմների բարելավում,
5. Կադրային ապահովության բարելավում:

«Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգից բխող խնդիրների իրականացման միջոցառումների 2007-2011թթ. ծրագիր»:

Ծրագիրը հաստատվել է 15.02.2007թ. ՀՀ կառավարության որոշմամբ և ուղղված է 2006թ. ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի հայեցակարգ»-ից բխող խնդիրների իրականացմանը, այն է՝ Հայաստանի Հանրապետության տարածքում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի վիճակի բարելավումը, ինչպես նաև երկրում բնապահպանական պետական քաղաքականության համատեքստում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի աշխատանքների իրականացման իրավական, տնտեսական, վարչական և մեթոդական հիմնադրույթների սահմանումները: Ծրագրով նախատեսված է նաև հասարակայնության իրազեկության բարձրացումը:

«Մաքուր Հայրենիք» ազգային ծրագիր

2010թ. օգոստոսի 19-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Մաքուր հայրենիք» ազգային ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում մաքրման և բնապահպանական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Ծրագրի անհրաժեշտությունը պայմանավորված է երկրում, հատկապես քաղաքային բնակավայրերում տիրող ոչ բարենպաստ էկոլոգիական/սանիտարական իրավիճակով, և նպատակ ունի կատարելագործել օրենսդրական դաշտը, առավել արդյունավետ օգտագործել շրջակա միջավայրի մաքրության և պահպանման միջոցները, փոփոխել հասարակության վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Ծրագրի իրականացումը նպատակ ունի նաև մեկ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբել մի շարք պետական մարմինների, կրթօջախների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների:

«Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման միջոցառումների ծրագիր»

ՀՀ կառավարության 2004թ. հոկտեմբերի 14-ի N 40 արձանագրային որոշմամբ հավանությանն է արժանացել «Ավտոտրանսպորտային միջոցներից վնասակար նյութերի արտանետումների նվազեցման» հայեցակարգը, որի նպատակն է ի հայտ բերել ավտոտրանսպորտի վնասակար արտանետումների նվազեցման ասպարեզի հիմնախնդիրները և հրավիրել համապատասխան մարմինների ուշադրությունը այդ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության վրա: Հայեցակարգով ամրագրված խնդիրները պետք է հաշվի առնվեն համապատասխան ոլորտներում ռազմավարությունների և գործողությունների ծրագրերի մշակման ժամանակ:

Հայեցակարգում նախանշված քայլերի իրականացման ուղղությամբ մշակվել է միջոցառումների ծրագիրը, որում ներառված են արտանետումների հաշվառման բարելավմանը, արտանետումների կրճատմանը, շրջակա միջավայրի վիճակի մոնիթորինգի բարելավմանը և մարդկանց իրազեկության բարձրացմանը միտված միջոցառումներ:

Տեղական օրակարգ 21 դար և Շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագիր /ՇՄՂՏԳԾ/.

Լիարժեք Տեղական Օրակարգ -21 դեռ չի մշակվել Հայաստանի որևէ բնակավայրի համար, սակայն այդ ուղղությամբ որոշակի քայլեր են իրականացվել:

Մասնավորապես, միջազգային դոնոր կազմակերպությունների (UNDP, UNEP, OSCE, USAID/Counterpart, GIZ, EU/REC Caucasus, SIDA) և սփյուռքի կազմակերպությունների աջակցությամբ.

- 2003 թ. պատրաստել ու հրատարակել է «Դեպի կայուն քաղաքներ. 21-րդ դարի տեղական օրակարգերի ուղեցույց անցումային տնտեսությամբ երկրների քաղաքների համար» գիրքը: 2006թ. պատրաստել ու հրատարակել է «Կայուն զարգացման գործընթացը տեղական մակարդակում՝ միջազգային փորձը, հիմնախնդիրները և հեռանկարները» գիրքը:

- Հրագրան քաղաքը ձևավորել է Կայուն զարգացման տեղական խորհուրդ, քաղաքապետարանը ստորագրել է «Եվրոպայի քաղաքները կայուն զարգացման ճանապարհին» հրովարտակը /Օլբորգյան խարտիա/, անդամակցել է ICLEI /Տեղական իշխանությունները հանուն կայունության/ միջազգային ցանցին:

- Գործիս քաղաքում քաղաքապետարանին առնթեր ձևավորվել և գործում է համայնքային խորհուրդ:

- 4 քաղաքների համար մշակվել են Շրջակա միջավայրի տեղական գործողությունների պլաններ: Դրանք են՝ Արարատը, Քաջարանը, Վարդենիսն ու Կապանը: Ծրագրերը իրականացվել են ԿՏԿ-ի,

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի և ԵԱՀԿ-ի աջակցությամբ: Ծրագրերը համակարգվել են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Ծրագրերի իրականացմանը ակտիվ մասնակցել են նշված քաղաքների իշխանությունները, որոնք պատասխանատու էին ծրագրերի բազմաթիվ բաղադրիչների համար: Հիմնական նվաճումները կապված են օդի ավազանի, ռոտոման համակարգի վիճակի բարելավման, կանաչ տարածքների ընդլայնման հետ: Ապահովվել է ավելի արդյունավետ կառավարում ջրամատակարարման ու ջրահեռացման, կենցաղային կոշտ թափոնների բնագավառներում:

Արարատ ու Քաջարան քաղաքների Շրջակա միջավայրի տեղական գործողությունների պլաններն արդեն իսկ 90% իրականացվել են: Նախապատրաստվել է Շրջակա միջավայրի տեղական գործողությունների պլան Գյումրի քաղաքի համար, որը տպագրման փուլում է:

• Մի շարք մարզերի գյուղական համայնքների համար մշակվել և իրականացվել են համալիր բնապահպանական ու զարգացման ծրագրեր:

• Վաղարշապատ քաղաքի քաղաքապետարանը, Հայ առաքելական եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի «Կլոր սեղանի» հետ համատեղ մշակել են Հոչակագիր, ըստ որի պետք է իրականացվի քաղաքը «կանաչ ուխտատեղի» դարձնելու ծրագիր:

• *Հրազդան, Քաջարան, Կապան, Ջերմուկ քաղաքների համայնքները խիստ մտահոգված են արվարձանում իրականացվող ընդերքօգտագործման աշխատանքներով, ինչը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի աղտոտմանը տոքսիկ նյութերով: Առկա է նաև բնակչության որոշ մասի տեղահանման հիմնախնդիր:*

• *Մայրաքաղաք Երևանի հիմնախնդիրները հիմնականում կապված են իրականացվող քաղաքաշինության հետ:*

1997-98թթ.-ից Երևան քաղաքում սկսել է իրականացվել «կետային կառուցապատում» բարձրահարկ շենքերով, հաճախ կանաչ գոտիների և մանկական խաղահրապարակների և այլ հանրային հողատարածքների հաշվին: Նշված գործունեությունը հանգեցրել է քաղաքի, հատկապես կենտրոնի, աննախադեպ խտացմանը, կանաչապատ տարածքների կրճատմանը, կլիմայի փոփոխության, սեյսմիկ ռիսկերի աճին: Այն հակասում է թե՛ «կանաչ քաղաքաշինության», թե՛ Լանդշաֆտային Եվրոպական կոնվենցիայի սկզբունքներին ու գաղափարախոսությանը:

Էկոլոգիական հանրության երկամյա բանակցությունները քաղաքապետարանի հետ, հավանաբար, կհանգեցնեն վերջապես քաղաքի էկոլոգիական խորհրդի ստեղծմանը, որի գործունեությունը ուղղված կլինի վերոհիշյալ ռիսկերի հնարավորինս մեղմելու գործին:

1.3.4. Կրթություն

Հայաստանի կրթության համակարգն իր մեջ ներառում է նախադպրոցական, միջնակարգ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության աստիճանների համալիրը:

Կարևորելով նախադպրոցական կրթության դերը, երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով, ՀՀ կառավարությունը 2008թ. հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. Ռազմավարական ծրագիրը», որով նպատակադրվում է մինչև 2015թ. ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքների երեխաներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հիմնարկներ չեն գործում:

Կրթության բնագավառում գերակա հանդիսանում է **հանրակրթությունը**՝ որպես երեխաներին ինքնուրույն կյանքի և հետագա մասնագիտական կրթության նախապատրաստման հիմք:

1998թ. հանրակրթության ոլորտում իրականացվում են բարեփոխումներ՝ ներառելով օրենսդրությունը, կառուցվածքը, բովանդակությունը և ֆինանսավորումը: Հանրակրթության կառուցվածքային բարեփոխումների արդյունքում հանրապետության բոլոր դպրոցները վերակազմավորվել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների և ներդրվել է դպրոցի խորհրդի միջոցով կառավարման նոր համակարգը: Կիրառվում է դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմ, համաձայն որի անցում է կատարվել ամբողջական գումարով ֆինանսավորման՝ հաշվարկված ըստ դպրոցի աշակերտների թվի: Այն մեծացնում է դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ինքնուրույնությունը: Աշակերտական ինքնավարության զարգացման նպատակով դպրոցներում ձևավորվել են աշակերտական խորհուրդներ:

2001թ. օրենքի ուժ է ստացել «Կրթության զարգացման 2001-2005թթ. պետական ծրագիրը», որի հիմնական նպատակն էր ապահովել կրթության համակարգի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման և հասարակության սոցիալ-տնտեսական առաջընթացի գործոն:

Այդ ծրագրի նպատակներին համապատասխան ոլորտում սկսվել են լայնածավալ բարեփոխումներ՝ ուղղված միջնակարգ կրթության արդիականացմանը, որակի բարելավմանը, մատչելիության մեծացմանը, կառավարման ապակենտրոնացմանը և արդյունավետության բարձրացմանը: Դրանց իրականացմանը էականորեն նպաստել են «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» և «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի որակյալ **մասնագիտական** կրթությունը: Դրա ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է:

Մասնագիտական կրթության բարեփոխումներն նպատակաուղղված են եվրոպական միասնական կրթական տարածքին Հայաստանի ինտեգրմանը և ուղղորդվում են Բոլոնիայի և Թուրինի գործընթացներով: Այդ գործընթացների սկզբունքներին համապատասխան իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական ստանդարտներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը և այլն:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում աշխատանքներն իրականացվել են «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման» հայեցակարգի և Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011 թթ. միջոցառումների ծրագրի և Ժամանակացույցի համաձայն: ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», որով սահմանվել են այս համակարգի հիմնական նպատակներն ու խնդիրները և դրանց լուծման ուղիները: Նախնական և միջին մասնագիտական կրթական ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին աջակցում են մի շարք միջազգային կազմակերպություններ, այդ թվում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, Բրիտանական խորհուրդը և այլն:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ներկայումս գործում են կոլեգիալ կառավարման մարմիններ՝ խորհուրդներ, սոցիալական գործընկերների (գործատուների և արհմիությունների) պատշաճ ներգրավմամբ: Ստեղծվել է Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) զարգացման ազգային խորհուրդը (ՄԿՈԻԶԱԽ)՝ եռակողմ մարմին, որը բաղկացած է գործատուների, արհմիությունների և պետական մարմինների (գերատեսչությունների) ներկայացուցիչներից:

2010 թ-ից Հայաստանը ներգրավվել է «Թուրինի գործընթաց»-ում, որն իրականացվում է Եվրոպական Կրթական Հիմնադրամի աջակցությամբ և որի նպատակն է կատարել երկրի ՄԿՈԻ բարեփոխումների համառոտ փաստաթղթավորված վերլուծություն՝ ներառյալ քաղաքականության առանցքային միտումների, մարտահրավերների, խոչընդոտների, ինչպես նաև հաջողված փորձերի ու հնարավորությունների որոշարկումը:

Միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում հաստատվել է միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկը, հաստատվել են նոր կրթական չափորոշիչներ, որոնց հիման վրա վերանայվում են ուսումնական ծրագրերը և պլանները:

Վերջին տարիներին այս ոլորտի կարևոր ձեռքբերումներից է արհեստագործական ուսումնարանների վերաբացումը:

Լրացուցիչ և շարունակական կրթության, մեծահասակների կրթության ոլորտում բարեփոխումները մեկնարկեցին, երբ ՀՀ կառավարությունը 2005 թ. հավանության արժանացրեց Մեծահասակների կրթության հայեցակարգը և ռազմավարությունը, իսկ 2006թ.՝ նաև ՀՀ ոչ ֆորմալ կրթության հայեցակարգը, որը սահմանում է ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության իրավական և կազմակերպական հիմնական դրույթներն ու ուղղությունները:

2009թ. ՀՀ կառավարության կողմից հավանությանն են արժանացել «Սոցիալական գործընկերությունը ՄԿՈԻ ոլորտում հայեցակարգը», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության հայեցակարգը», որում ներառված են ոլորտի հիմնական գործառույթները, առկա խնդիրները, ինչպես նաև դրանց հնարավոր լուծումները:

2010թ. տվյալներով ոչ ֆորմալ դասընթացների է մասնակցել է շուրջ 11.000 մարդ, որից 3.150-ը՝ Երևանում, իսկ 7.850-ը՝ մարզերում: Կանանց թիվը կազմել է, համապատասխանաբար՝ 1.953 (62%) և 4.757 (60,6%) մարդ: Բոլոր տեսակի կրկնուսույցներն իրար հետ Հայաստանում տարեկան «վարժեցնում են» նվազագույնը 140.000 մարդ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումներն իրականացվում են Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխան: 2005թ. Հայաստանը պաշտոնապես միացել է Բոլոնիայի գործընթացին, ստանձնելով պատասխանատվություն՝ ապահովել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումն ըստ գործողությունների առանձին ուղղությունների և միանալ կազմավորվող Եվրոպական կրթական տարածքին:

Ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ) ենթադրում է ՀՀ բարձրագույն կրթական համակարգում խորքային փոփոխությունների իրականացում, մասնավորապես՝ համընթեռնելի և համեմատելի որակավորումների եռաստիճան համակարգի ներմուծում, անցում ուսուցման կազմակերպման կրեդիտային եղանակին, ուսանողների ու դասախոսների անարգել շարժունության խթանում, որակի ապահովման Եվրոպական չափանիշների արմատավորում, հարատև կրթության համակարգի ձևավորում, ուսանողության դերի և ներգրավվածության բարձրացում, բուհերում կրթական և գիտական գործընթացների միահյուսում և այլն:

Իրականացված բարեփոխումների շրջանակում հաստատվել է բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկը, ինչպես նաև բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմ) հավելվածը: Ներդրվել է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգը, վերանայվել են բարձրագույն կրթության չափորոշիչները, մի շարք մասնագիտությունների համար ուսումնական պլանները վերակազմվել են մոդուլային սկզբունքով: Հաստատվել է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՈԱՇ), որը կապահովի ազգային որակավորումների համադրելիությունը եվրոպական որակավորումների հետ: Հաստատվել է բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարությունը և դրա կատարումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը: Բարձրագույն ուսումնական հաստատությունների նկատմամբ միասնական պահանջներ սահմանելու նպատակով մշակվել են «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» և «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»: Ստեղծվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, ներդրման փուլում են որակի ներքին և արտաքին ապահովման ու հավատարմագրման նոր ընթացակարգերը:

2010թ. ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը», որը հիմք ընդունելով կրթության համակարգի արդեն իսկ իրականացված բարեփոխումները և արձանագրված ձեռքբերումները, ուղղված է դրանց հետագա զարգացմանը՝ նախանշելով ոլորտի զարգացման ներկա փուլի գերակա ուղղությունները:

Հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության իրականացման, կրթության որակի ապահովման և կրթության օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով ընդունվել են մի շարք օրենքներ /Հավելված 3/:

Կայուն զարգացման և բնապահպանական կրթությանն ուղղված ծրագրեր

Հանուն կայուն զարգացման կրթության նպատակն է զարգացնել անհատի գիտելիքները, հմտությունները, աշխարհայացքը և արժեքային դաշտը, որպեսզի նա կայացնի տեղեկացված որոշումներ և թե ներկայումս, թե ապագայում գործի հանուն իր և այլ մարդկանց բարօրության:

Հայաստանը ի դեմս այլ երկրների միացել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» տասնամյակի շրջանակներում իրականացվող գործընթացին:

Ներկայումս Հայաստանում կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը որպես հիմք ընդունում է ՄԱԿ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարությունը:

Համաձայն «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության, նոր չափորոշիչներում սահմանվել են սովորողի կրթության վերջնարդյունքները՝ նրանց կողմից ձեռք բերվող գիտելիքները, հմտությունները և ձևավորվող արժեքային համակարգն ըստ կրթական մակարդակների: Ներդրվել են անձի համակողմանի զարգացում և կրթությամբ ձեռք բերվող կիրառական որակներ ապահովող դասընթացներ՝ քաղաքացիական կրթություն, տնտեսագիտության հիմունքներ, մարդու իրավունքներ, կյանքի հմտություններ, էկոլոգիական կրթություն և այլն:

Վերջին տասնամյակներին ինչպես ամբողջ աշխարհում ու տարածաշրջանում, այնպես էլ մեր հանրապետությունում, սրվել են էկոլոգիական և տնտեսության անհամաչափ զարգացման հիմնախնդիրները, սոցիալական բևեռացումն ու անհավասարությունը, որոնք վտանգի տակ են դրել ինչպես բնության ամբողջականությունը և կայունությունը, այնպես էլ մարդկային հասարակության և Երկիր մոլորակի գոյությունը: Այս տեսանկյունից առավել կարևորում է կրթության դերը՝ սովորողների մոտ նոր մարտահրա-

վերներին դիմակայելու գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ ձևավորելու, ինչպես նաև հասարակության լայն շրջանում այդ հիմնախնդիրների շուրջ տեղեկատվություն ապահովելու հարցերում:

Անընդմեջ էկոլոգիական կրթությունը ՀՀ կրթական համակարգի անբաժան մասն է, որը, համաձայն «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի, ընդգրկված է կրթության բոլոր մակարդակներում, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթության մեջ:

Հայաստանում էկոլոգիական կրթության իրականացման անհրաժեշտությունը բխում է երկրի գերակայություններից, ինչպես նաև մի շարք միջազգային կրթական և բնապահպանական կոնվենցիաների շրջանակներում ՀՀ կողմից ստանձնած պարտավորություններից: Այդ հարցում Հայաստանը ղեկավարվում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2002թ. կայացած ՄԱԿ-ի Կայուն զարգացման գազաթափոցի որոշումներով և ՄԱԿ-ի ԵՏՀ-ի կողմից 2005թ. ընդունված «Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման» ռազմավարության դրույթներով: Ընդ որում Հայաստանը ՄԱԿ-ի ԵՏՀ տարածաշրջանի երկրներից մեկն է, որը պատրաստակամություն է հայտնել ինտեգրվելու եվրոպական կրթական գործընթացներին, և Հարավային Կովկասի միակ պետությունն է, որտեղ 2001թ.-ից գործում է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը:

2009թ. հաստատվել է «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը», որի նպատակն է ստեղծել նախադրյալներ բնապահպանական կրթության և դաստիարակության որակի բարելավման, հասարակության էկոլոգիական գիտակցության և մտածելակերպի կայացման և էկոլոգիական խնդիրների մասին իրազեկության մակարդակի բարձրացման համար:

Վերոնշյալ հայեցակարգի իրականացման նպատակով հաստատվել է 2011-2015թթ. միջոցառումների ծրագիրը, որի նպատակն է նպաստել բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական և միասնական ազգային համակարգի կայացմանը:

Բնապահպանական կրթության ուղղությամբ կրթության տարբեր աստիճաններում իրականացվել են հետևյալ քայլերը՝

- «Նախադպրոցական համալիր ծրագրում» առանձին բաժին հատկացվել է էկոլոգիական կրթությանը՝ ըստ տարիքային խմբերի: Երևանում և մարզերում ստեղծվել են մոդելային կենտրոններ, որտեղ պարբերաբար անց են կացվում սեմինարներ և գործնական պարապմունքներ, այդ թվում՝ էկոլոգիական կրթության ուղղությամբ,

- հանրակրթության համակարգի բոլոր մակարդակներում բնագիտական և հասարակագիտական առարկաների շրջանակներում ներառված են ՄԱԿ-ի «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության հիմնական թեմաները՝ ինտեգրված դասընթացների միջոցով: «Էներգետիկա և ռեսուրսների օգտագործում» դասընթացը ընդգրկվել է 2010-2011 ուստարվա առարկաների ցանկում: Սովորողները պարբերաբար մասնակցում են էկոլոգիական թեմաներով էքսկուրսիաների և ճամբարների, բնապահպանական միջոցառումների,

- բուհերում հաստատվել են բոլոր մասնագիտությունների գծով չափորոշիչները, որոնցում ներառվել են «էկոլոգիա» և «էկոլոգիայի հիմունքներ» դասընթացները: Բացի դրանից, որոշ բուհերում դասավանդվում են «Սոցիալական էկոլոգիա», «Մարդու էկոլոգիա», «Արդյունաբերական էկոլոգիա», «Ռադիացիոն էկոլոգիա» և այլն (մոտավորապես 24 էկոլոգիական ուղղվածության) դասընթացներ:

Ներկայումս մասնագիտական կրթության ոլորտում իր ուրույն տեղն ունի կայուն զարգացման թեմաների ուսուցումը: Որոշ բուհեր՝ Երևանի պետական համալսարանը, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանը, Երևանի էկոլոգիայի, տնտեսագիտության, իրավունքի հայկական ինստիտուտը իրենց ուսումնական պլաններում ընդգրկվել են նաև «Մարդկային հասարակության կայուն զարգացում», «Կայուն զարգացում և գլոբալ անվտանգություն», «Հազարամյակի զարգացման նպատակները՝ որպես կայուն զարգացման կարևոր հենակետ» «Կայուն զարգացման համաշխարհային ծրագիր», «Գեոէկոլոգիան կայուն զարգացման համատեքստում» դասընթացները:

2008թ. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես բուհական դասագիրք հաստատվել է «Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան. Համաշխարհային գործընթացը և Հայաստանը» ձեռնարկը, որը մշակվել է ԵՊՀ-ում ՄԱԶԾ-ի աջակցությամբ:

Պետական պատվերի շրջանակներում մագիստրոսական և ասպիրանտական տեղեր են հատկացվում կայուն զարգացման առանցքային թեմաների հետ առնչվող մասնագիտությունների ուղղությամբ:

2011թ. ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնում հիմնադրվել է «Կրթություն հանուն կայուն զարգացման» UNESCO-ի ամբիոն, որի գլխավոր նպատակն է Հայաստանում աջակցել

կրթություն կայուն զարգացման գործընթացին: Ամբիոնի խնդիրներն են՝ նպաստել կրթության և գիտական հետազոտության ինտեգրմանը, կայուն զարգացման ոլորտում մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը, ուսումնական նյութերի մշակմանը, տարբեր նախաձեռնությունների միջոցառումների իրականացմանը, ինչպես նաև միջազգային համագործակցության ապահովմանը:

2012թ. Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում բացվել է «Էկոլոգիա կայուն զարգացում» ամբիոնը, իսկ ԵԱՀԿ-ի աջակցությամբ Երևանի պետական համալսարանում՝ կայուն զարգացման կենտրոն:

2001 թ.-ից Հայաստանում իրականացվում է 17 երկրներում գործող SPARE-ԷՌՕԴՄ /Էներգիայի և ռեսուրսների օգտագործման դպրոցական ծրագիր/ միջազգային կրթական նախագիծը: Նախագծի առարկան մտել է դպրոցական առարկաների ցանկ և դասավանդվում է որպես առարկայական բաղադրիչ 2010թ.-ից: Նախագծի իրականացման շրջանակներում իրականացվել են նաև էներգոխնայողական միջոցառումներ:

1.3.5. Գիտություն

Ներկայումս Հայաստանում գիտության ոլորտում իրականացվող փոփոխություններն ընթանում են ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման, գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման, ենթակառուցվածքների արդիականացման, գիտական կադրերի նպատակային վերարտադրման ապահովման, գիտական հետազոտությունների գործունեության արդյունավետության բարձրացման, գիտական արդյունքների ներդրման, ինչպես նաև միջազգային համագործակցության ընդլայնման ուղղություններով:

Գիտության ոլորտում հատուկ տեղ է գրավում բնապահպանական ուղղվածության ուսումնասիրությունները: Դրանք իրականացվում են միջազգային բնապահպանական կոնվենցիաների պահանջներին համապատասխան:

2007թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները»:

2007թ. ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվել է Գիտության պետական կոմիտեն, որը ստանձնել է գիտության ոլորտի բարեփոխումների հետագա ընթացքն ապահովելու պատասխանատվությունը:

2010թ. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Գիտության ոլորտի զարգացման 2011-2020թթ. Ռազմավարությունը», իսկ 2011թ.՝ «Գիտության ոլորտի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը»: Ռազմավարությամբ նախատեսվում է «Բնապահպանական անվտանգության բարձրացմանը, հատկապես Սևանա լճի պահպանմանն ու դրա պաշարների օպտիմալ օգտագործմանն ուղղված հետազոտություններին աջակցություն» միջոցառումը, ինչպես նաև Սևանա լճի համալիր ուսումնասիրման համար նպատակային ծրագրի իրականացում: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2010-2014թթ. գերակայությունների շարքում թվարկվել է նաև խնայողական բնօգտագործումը:

Ներկայումս հանրապետության գիտության ոլորտում գործում է գիտական հետազոտությունների և մշակումների համաֆինանսավորման սկզբունքը, որը ժամանակակից բարձր մակարդակն ապահովող լրացուցիչ խթան է հանդիսանում:

Եվրոպական կառույցներին ինտեգրման քաղաքականությունն այն անկյունաքարն է, որը հնարավորություն է տալիս իրականացնել համատեղ գիտական ծրագրեր և արտահանել Հայաստանի գիտական արտադրանքը եվրոպական շուկա՝ նպաստելով գիտական ոլորտի զարգացմանը: Ներկայումս այդ խնդիրները մասամբ լուծվում են Եվրոմիության մի շարք ծրագրերի միջոցով, ինչպիսիք են՝ FP-7-ի, INTAS-ի, SCOPES-ի և այլն: ԻՆՏԱՍ-ի և Հայաստանի 2006թ. համագործակցության շրջանակներում «Հարավային Կովկասի տարածաշրջանային ծրագրի» իրականացման նպատակով հաստատվել են 9 համատեղ ենթածրագրեր: 9 ենթածրագրերից 1-ը՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի կողմից իրականացվող «Արեգակնային և գալակտիկական տիեզերական ճառագայթների արագացումը և մոդուլյացիան» առնչվում է «Կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիային:

1.3.6. Մշակույթ

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի գնահատման և արժևորման ուղղությամբ զգալի քայլեր են կատարվում: Մասնավորապես ուսումնասիրվում է նրա դերն ազգային ինքնության, քաղաքացիական հասարակության և երկրում սոցիալական կապիտալի ձևավորման, խաղաղության, մշակութային բազմազանության պահպանության

գործում: Պետական մշակութային քաղաքականությունն իրականացվում է ազգային ավանդական արժե-
համակարգի, մշակութային միջավայրի, ժառանգված տարածքի բնության, պատմամշակութային արժեք-
ների պահպանման սկզբունքներին համապատասխան: Ներդրված մեխանիզմները հնարավորություն են
տալիս ապահովելու կայուն զարգացման գաղափարախոսության հետ ազգային մշակութային առաջնայ-
նությունների արդյունավետ գույակցումը:

Անցած տասնամյակում զգալիորեն կարգավորվել են մշակութային ժառանգության պահպանության
ինստիտուցիոնալ կառավարման հարցերը, սահմանվել են ոլորտում գործող հաստատությունների ըստ
ճյուղերի գործառնությունները, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում մշա-
կույթի բոլոր բնագավառների կայուն և համաչափ զարգացման, մշակույթին հասարակության հաղոր-
դակցման մատչելիության ապահովման համար:

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ոլորտ

2002-2007 թթ. ՀՀ կառավարությունը հաստատել է ՀՀ 10 մարզերի և Երևան քաղաքի պատմության և
մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակները, որտեղ ընդգրկված է 24152 հուշարձան:
Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Անշարժ հուշարձանների պահպանության, հաշվառման, ուսումնասիրման /ներառյալ՝ պեղման/, վե-
րականգնման, նպատակային օգտագործման, հանրահռչակման ուղղություններով աշխատանքներն
իրականացնում են մի շարք պետական և հասարակական կազմակերպություններ:

2005թ.-ից սկսած՝ պետությունը միջոցներ է հատկացնում պատմական հուշարձանների վերա-
կանգնման համար, ինչի շնորհիվ իրականացվում է շուրջ 39 հուշարձանների վերականգնման գործըն-
թաց: Միջազգային համագործակցության ընդլայնման, պետական-մասնավոր հատվածների համագոր-
ծակցության նոր գործելակերպի ներդրման արդյունքում 2011-2012 թթ. աշխատանքներ կատարվեցին 3
հուշարձանների վերականգնման և 2 հուշարձանների նախագծման ուղղությամբ:

Անշարժ հուշարձանների պահպանության, հաշվառման գործառնություններն իրականացնում է Պատմու-
թյան և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը՝ իր 5 տարածքային բաժիններով,
իսկ պահպանության, նպատակային օգտագործման, հանրահռչակման՝ գործառնությունները՝ «Պատմամշա-
կութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն»
ՊՈԱԿ-ը՝ իր 11 պատմական միջավայրի պահպանության մարզային ծառայություններով և թվով 9 պատ-
մահնագիտական, պատմամշակութային, պատմաճարտարապետական, բնապատմական արգելոցներ և
արգելոց-թանգարաններով, որոնցից 2-ը ստեղծվել են 2007-2012թթ.:

Ներկայում մեկնարկել են «Գորիս քաղաքում զբոսաշրջության զարգացման», «Խոսրովի անտառ» պե-
տական արգելոցի պատմաճարտարապետական հուշարձանների վերականգնման և օգտագործման»
ծրագրերը, որոնց իրականացումը հնարավորություն կստեղծի ներդաշնակ պահպանելու և արժևորելու
տարածքի բնական միջավայրն ու մշակութային ժառանգությունը: Ծրագիրը նպատակ ունի նորովի կազ-
մակերպելու բնության և պատմամշակութային օբյեկտների կառավարումը և պահպանությունը՝ դրանք
դիտելով որպես մեկ ամբողջական բնապատմական լանդշաֆտ: 2009թ.-ից բնագավառում մեկնարկեց պե-
տություն-մասնավոր հատվածների համագործակցության գործընթացը, ինչի արգասիքն է նույն թվա-
կանին մեկնարկած «Տաթևի վերածնունդ» ծրագիրը, որն ըստ էության պատմամշակութային տարածքի,
դրանում առկա հուշարձանների օգտագործման, հանրահռչակման փայլուն օրինակ է: Ծրագրի նախա-
ձեռնությունը պատկանում է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամին: Ծրագիրն ունի
շարունակական բնույթ: Այն ներառում է ՀՀ Սյունիքի մարզի Տաթև և Լս 7 համայնքները, որտեղ գյու-
ղական զբոսաշրջությունն ունի բոլոր հեռանկարները դառնալու շարունակական տնտեսական զարգաց-
ման աղբյուր: Պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունքում 2011թ. Վերա-
կանգնման գործընթաց է սկսվել 2 հուշարձաններում, իսկ 2012թ.՝ 4, այդ թվում՝ Հովհաննես Իմաստասեր
Կաթողիկոս Օձնեցու սրբավայրի:

Թանգարանների ոլորտ

Հանրապետությունում գործում է 100 թանգարան՝ 2012թ. հունվարի 1-ի դրությամբ շուրջ 1779930
միավոր թանգարանային ֆոնդով:

Նախարարության համակարգի բոլոր թանգարանները հանրությանը ներկայանում են իրենց վեր-կայ-
քերով, որոնք պարունակում են թանգարանի, ցուցադրությունների և միջոցառումների մասին տեղեկույթ:
Ցուցադրության ընդլայնման հնարավորություն է տալիս նաև ժամանակակից տեխնոլոգիաների ներդրու-
մը՝ սենսորային կրպակները, որոնք լրացուցիչ տեղեկատվություն են տրամադրում այցելուներին թան-
գարանի ֆոնդերում պահվող և չցուցադրվող մշակութային արժեքների վերաբերյալ:

2005 թ. ՀՀ մշակույթի նախարարությունը միացավ համելթոպական «Թանգարանների գիշեր» ակցիային: Եթե 2005 թ. այս ակցիային մասնակցել է միայն Երևանի 5 թանգարան, ապա 2011 թ. ակցիային միացել են հանրապետության 69 թանգարաններ (անկախ ենթակայությունից):

Քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացմանը զուգընթաց վերանայվել է թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների գնային քաղաքականությունը: ՀՀ մշակույթի նախարարի 2009թ. օգոստոսի 3-ի «Թանգարանի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը և սակագինը հաստատելու մասին» N 458-Ս հրամանի համաձայն՝ գիտական, ուսումնական, պատմամշակութային ոլորտի մասնագետներն ու ուսանողները թանգարանի վճարովի ծառայությունից օգտվում են անվճար: Միաժամանակ, ՀՀ մշակույթի նախարարի նույն թվականի «Թանգարանների մշտական ցուցադրության այցելության և արտոնությունների մասին» հրամանով սահմանվել է խոցելի խմբերի համար արտոնություն՝ յուրաքանչյուր ամսվա մեջ երկու օր թանգարանների մուտքն անվճար է: Բացի այդ, գիտական, ուսումնական, պատմամշակութային ոլորտի մասնագետների ու ուսանողների համար գործում է թանգարանի վճարովի ծառայությունից 50% զեղչի օգտվելու արտոնությունը:

2011թ. Հայաստանի պատմության թանգարանի և Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտության ինստիտուտի համագործակցության շնորհիվ կազմակերպվում են մետաղի, գործվածքի վերականգնման դասընթացներ:

Թանգարանային գործում հատուկ ուշադրություն է դարձվում կրթական ծրագրերին, որոնք ոչ միայն բազմազան են իրենց կազմակերպման ձևերով, այլև բազմաբովանդակ (թեմատիկ էքսկուրսիաներ, խաղ-մրցույթներ, փառատոներ, երաժշտական ունկնդրումներ և այլն):

Գրադարանների ոլորտ

Հանրապետության գրադարանային ցանցը բաղկացած է 3 հանրապետական և 957 համայնքային գրադարաններից: Հանրապետության գրադարաններում հաշվառված գրքային ֆոնդը կազմում է 19 297 015 միավոր, որից շուրջ 7000-ը հնատիպ գրքեր են:

2001 թ.-ից մեկնարկել է «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» (ALEPH) ծրագիրը, որի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել մատենագիտական գրառումներ:

2007-2011 թթ. պետական աջակցությամբ ՀՀ գրադարաններում ներդրվեցին և կիրառվեցին մեջ դրվեցին գրադարանների գործունեության զարգացումն ապահովող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչի արդյունքում իրականացվեցին գրադարանների նյութատեխնիկական բազայի վերազինման, մշակութային ժառանգության թվանշանացման, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված ցանցի շարունակական զարգացմանն ուղղված գործընթացները, որոնք նպաստեցին գրադարանների կողմից մատուցվող գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների ընդլայնմանը, որակի բարձրացմանը, գրականության սպասարկված միավորների, ընթերցողների թվաքանակի աճին և տեղեկույթի մատչելիության ապահովմանը:

2008թ.-ից Հայաստանի ազգային գրադարանը ՀՀ մարզերի տարածաշրջանների սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում տեղեկույթի տրամադրման մատչելիությունն ապահովելու նպատակով՝ իրականացնում է «Շարժական գրադարան (Բիբլիոբուս)» ծրագիրը:

2009 թ. մարզային 2 գրադարաններում տեղակայվել է «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը, որը նախատեսված է սակավ շարժունակ անձանց համար՝ տանը գրադարանային սպասարկում իրականացնելու նպատակով:

2009-2011թթ. գրադարաններում տեղակայված «Արև» ծրագրի շրջանակներում կույր և թույլ տեսող անձանց հնարավորություն տրվեց համակարգչի միջոցով տառերն ու թվերը «կարդալ» լսողական խորհրդանշանների միջոցով: Ծրագիրը տեղակայվել է ՀՀ մշակույթի նախարարության համակարգի 11 գրադարաններում:

Հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու նպատակով մշակվել և ներդրվել է զեղչերի համակարգ: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ՝ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները («EBSKO» և ՌԴ-ի խոշորագույն էլեկտրոնային ռուսալեզու հավաքածուների՝ «Integrum World» տեղեկատվության տվյալների փաթեթները):

Գրադարանային գործի ոլորտում միջազգային համագործակցության, նորարարության ապահովման, ՀՀ գրադարանների աշխատանքները համադրելու և լավագույն փորձի փոխանակման նպատակով հիմնադրվել է «Հայկական գրադարանների միությունը», որին անդամակցում են հանրապետության 25

գրադարաններ: Միությունը 2006թ.-ից անդամակցում է Գրադարանային ասոցիացիաների միջազգային ֆեդերացիային (IFLA)-ին:

Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտ

Պահպանական միջոցների սակավությունը, հանրության և համապատասխան գիտամշակութային կազմակերպությունների անուշադրությունն ու հոգածության աստիճանական նվազումը, ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակությանն ու զարգացման պաշտպանությանն ուղղված ծրագրերի սակավությունը, իսկ երբեմն էլ ուղղակի բացակայությունը հանգեցրին այն բանին, որ ոչ նյութական մշակութային ժառանգությունը մի դեպքում համալրվեց գաղափարախոսությանը ծառայող արժեքներով, այլ դեպքում ձևափոխվեց, ընդ որում, ձևափոխությունն ընթացավ երկու ուղիով՝ ժողովրդական մշակույթի զարգացման օրինաչափություններով և քաղաքական գաղափարախոսությունը հաստատող նորմերով:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գործում առաջընթացը գրանցվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» 2003 թ. Կոնվենցիային Հայաստանի Հանրապետության անդամակցմամբ (2006 թ. մարտի 20): Դրանով իսկ ՀՀ-ն հավաստեց իր պատրաստակամությունը ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ ազգային մշակութային ծրագրերի մշակմանը և միջազգային մշակութային կառույցների հետ համագործակցությանը:

2006թ. նոյեմբերին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգին», իսկ 2007 թ. մայիսին հաստատեց նաև «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության մասին հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցը»: Այն ըստ էության դարձավ ոլորտում հետևողական գործընթացների կազմակերպման հիմնական փաստաթուղթը, որի համաձայն էլ կազմակերպվել են ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, կենսունակության պաշտպանության և հանրահոշակման 2008-2010 թթ. միջոցառումները:

2008թ. ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքը, այնուհետև՝ ՀՀ կառավարությունը հաստատեց օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր, որոնցով էլ կարգավորում են ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության գործընթացների ընթացքում ծագող իրավահարաբերությունները (տե՛ս հավելվածը):

2008թ. ստեղծվեց և համացանցում տեղակայվեցին «Հայաստանի ոչ նյութական մշակութային ժառանգություն» և «Հայկական դուդուկի երաժշտություն» կայքէջերը:

2009-2010թթ. մեկնարկեց Հայաստանի Հանրապետության տարածքում առկա ոչ նյութական մշակութային ժառանգության գույքագրման գործընթացը, ինչի արդյունքում ՀՀ կառավարությունը հաստատեց ակտիվ կենսունակ 19 և անհապաղ պաշտպանության կարիք ունեցող 7 տարրերի ցանկերը:

Զգալի քայլեր են կատարվել ոլորտում մշակութային և կրթական քաղաքականությունների ինտեգրման ուղղությամբ:

2008-2010թթ. նպաստավոր պայմաններ են ստեղծվել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական ծրագրերով ոչ նյութական մշակութային ժառանգության ուսուցման, կրողներից սերունդներին փոխանցման համար: Ընդհանուր առմամբ կազմակերպվեցին թվով 18 կրթական ծրագրեր: Ազգային ավանդական արհեստների, տնայնագործության, խոհանոցի, տարեպտույտ տոների ու ծեսերի, ազգային երգարվեստի ու պարարվեստի ուսուցման բնագավառում նոր երևույթ էր 2009-2011 թթ. ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ «Տոնացույց. Ավանդական տոների վերածնունդ» ՀԿ-ի միջոցով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ և Օշական բնակավայրերում ստեղծված «Ժառանգության դպրոցը», որի դասընթացներում ներգրավվեցին ինչպես ազգագրագետներ, այնպես էլ տվյալ բնակավայրերում ապրող ոչ նյութական մշակութային ժառանգության կրողներ: Դասընթացներին մասնակցեցին շուրջ 100 երեխաներ: Ձևավորվեց նաև պատանի ազգագրագետների ակումբ:

Գրականության և գրահրատարակչական գործի ոլորտ

Գրականության ասպարեզում պետական ֆինանսավորմամբ 2002-2011 թթ. հրատարակվել է տարեկան 150-160 անվանում գրականություն, և եթե նախորդ տարիներին պետությունը ֆինանսավորում էր միայն հանրագիտարանային, գիտահանրամատչելի, մանկական և գեղարվեստական գրականության հրատարակումը, ապա վերջին տասնամյակում զգալիորոն ընդլայնվեց պետության ֆինանսավորմամբ հրատարակվող գրականության թեմատիկան՝ ներառելով «Մշակութային ժառանգությանը նվիրված գրականություն», «Գրական ժառանգություն», «Ազգային փոքրամասնությունների լեզվով հրատարակվող գրականություն», «Սփյուռքահայ գրականություն», «Թարգմանական գրականություն» և այլ ենթաճրագրային ոլորտներ:

գրեր: Կարևորվեց նաև հայրենի բնությանը, ազգային ավանդույթներին ու սովորույթներին նվիրված գրականության հրատարակումը, CD-ների, DVD-ների և մուլտիմեդիաների թողարկումը: Գրքարվեստի զարգացման բնագավառում խնդիր դրվեց առաջնային դարձնել ազգային և համաշխարհային դասականների այնպիսի ստեղծագործությունների հրատարակումն ու տարածումը, որոնք նոր սերնդի մեջ դաստիարակում են սեր շրջակա բնության և մարդու հանդեպ, սրտացավ մոտեցում ինչպես ազգային, այնպես էլ այլ ժողովուրդների ստեղծած հոգևոր ժառանգության, մարդու ստեղծած ձեռակերտ և բնական, անձեռակերտ հուշարձանների հանդեպ: Այսպես, վերջին տասնամյակի ընթացում պետական ֆինանսավորմամբ հրատարակվել են «Հայաստանի բնաշխարհը» հիմնարար հանրագիտարանը, «Հայաստանի հրաշալիքները», «Հայաստանի սրբազան լեռներն ու քարանձավները» գիրք-ալբոմները, մանկական բազմաժանր գրականություն, ինչը, բնականաբար, իր որոշակի դրական ազդեցությունն է թողել ազգաբնակչության շրջանում ազգային արժեքների հանդեպ հետաքրքրության աճի, նրա քաղաքացիական ակտիվացման և դիրքորոշման դրսևորման վրա:

Հայաստանում զարգացման նոր ազդակ/մղում են ստացել պարարվեստի, թատերարվեստի, երաժշտարվեստի, կինոարտադրության ու կերպարվեստի ոլորտները:

Մշակութային կրթության ոլորտ

Մշակութային հասարակության ձևավորման համար առանցքային նշանակություն ունի մշակութային կրթական ծրագրերի ապահովումն ու հասանելիությունը:

Նախկինում գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունները պետական կրթական համակարգում էին, և իրականացվում էր միասնական պետական քաղաքականություն: 1993թ. ստեղծվել է մի իրավիճակ, երբ մշակութային ուսումնական հաստատությունները, զսնվելով տարբեր ենթակայությունների ներքո (պետական, համայնքային), չունեն ընդհանուր նպատակներ, խնդիրներ և ծրագրեր: Մասնագիտական կրթության, լրացուցիչ կրթության նորմատիվային ակտերի, գեղագիտական դաստիարակության հայեցակարգի բացակայությունը չեն նպաստում առկա իրավիճակի բարելավմանը: Վտանգված է շատ մասնագիտությունների դասավանդումը /ժողովրդական, փողային, լարային գործիքներ և այլն/: Գեղարվեստական կրթության մատչելիությունը, որակը ապահովելու և բարելավելու նպատակով 2008 թ. ստեղծվեց «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը՝ Երևանի 1 և մարզային 10 ներկայացուցչություններով: Երեխաների համար ուսուցման մատչելի պայմանների ստեղծման նպատակով ՀՀ Կառավարությունը հաստատել է «ՀՀ երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների ուսուցման վարձավճարների փոխհատուցման մասին» ծրագիրը: 2011 թ. տվյալներով ծրագրում ընդգրկված են 144 դպրոցների ազգային /2004/, լարային /164/, փողային /275/ նվագարանների բաժինների 2443 սովորողներ:

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակույթ

Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գործընթացներում ընդգրկված են նաև հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունները, որոնք ունեն սեփական ավանդույթները, լեզուն և մշակույթը, կրոնական ազատությունները պահպանելու ու զարգացնելու սահմանադրական իրավունք:

ՀՀ Նախագահի աշխատակազմին կից գործում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունները համակարգող խորհուրդը, ՀՀ Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը, ՀՀ մշակույթի նախարարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում ֆինանսական միջոցներ է սահմանում ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանման, մշակութային գործընթացներում նրանց ներգրավման նպատակով:

Վերջին մարդահամարի տվյալներով՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունները կազմում են երկրի բնակչության 2.2%-ը: Հայաստանը միացել է բազմամշակութային միջավայր ապահովող և պաշտպանող մի շարք միջազգային և միջպետական պայմանագրեր, ինչպես նաև Ազգային և լեզվական փոքրամասնությունների «Ազգային փոքրամասնությունների իրավունքների շրջանակային կոնվենցիային» և «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական Խարտիային»:

Մշակութային ժառանգության միջազգային հանրահռչակման գործընթաց

Ներկայումս ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության ցանկերում» հանրապետությունից ընդգրկվել են Հաղպատի և Մանահինի վանական համալիրները, Գեղարդի վանքը և Ազատ գետի հովիտը, Էջմիածնի եկեղեցիներն ու «Զվարթնոց» հնագիտական վայրը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003թ. «Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի վավերացումն ու վերջինիս անդամակցումը հնարավորություն տվեց անդամ պետություններին, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությանը, իրենց տարածքներում առկա ազգային տեսանկյունից առավել բնորոշ բնութագրական հատկանիշներ ունեցող ոչ նյութական մշակութային տարրերը ներկայացնելու ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկերում ընդգրկման նպատակով:

2005թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության բանավոր և ոչ նյութական մշակութային ժառանգության գլոխգործոցների ցանկում ներառվեց հայ ժողովրդի մշակութային ժառանգության ամենաինքնատիպ տարրերից մեկը՝ «Դուդուկն ու նրա երաժշտությունը», իսկ 2010 թ. Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ցանկում ներառվեց «Խաչքարի արվեստ. խորհուրդն ու խաչքարագործությունը» արժեքը:

2010թ. ՅՈՒՆԵՍԿՕ-Հունաստան «Մելինա Մերկուրի» հիմնադրամը «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանն արժանացրեց «Մշակութային լանդշաֆտների պահպանություն և կառավարում» միջազգային մրցանակին:

Միջազգային համագործակցության ոլորտ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայուն զարգացման հիմնական նախապայմաններից է նաև միջմշակութային երկխոսության զարգացումն ու համաշխարհային մշակութային բազմազանության պահպանությունը՝ անկախացումից հետո ՀՀ արտաքին քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը դարձավ մշակույթի բնագավառում նոր հարաբերությունների ձևավորումը՝ միտված արտասահմանյան երկրների հետ համագործակցության և փոխըմբռնման ամրապնդմանը, հավասար և փոխշահավետ գործընկերային կապերի հաստատմանն ու զարգացմանը: Անկախ Հայաստանը կարճ ժամանակում կարողացել է մշակույթի բնագավառում համագործակցություն հաստատել միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ, ՅՈՒՆԵՍԿՕ, Եվրամիություն, Եվրախորհուրդ, ՄՕՏՀ, ԱՊՀ, Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպություն և կառույցների՝ ICOM, ICCROM, IFACCA, IFLA հետ:

Այս երկխոսությունը զարգացնելու և ամրապնդելու նպատակով վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանը միացել է մշակույթի ոլորտին առնչվող 12 միջազգային Կոնվենցիայի և դրանցից բխող 2 արձանագրության: Որպես վերոնշյալ կոնվենցիաներին միանալու գործընթացների տրամաբանական շարունակություն, Հայաստանը իր մասնակցությունն է բերում միջազգային մակարդակի մշակութային համաշխարհային այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք են՝ «Եվրոպական ժառանգության օրեր», «Թանգարանների գիշեր», «Ֆրանկոֆոնիայի օրեր», «Երաժշտության օր», «Գրքի և հեղինակային իրավունքի օր» ամենամյա միջոցառումներին: Հայաստանը մասնակցել և մասնակցում է Եվրախորհրդի շրջանակներում իրականացվող ծրագրերին՝ մասնավորապես «STAGE», իսկ 2005 թ. սկսած մասնակցում է «Կիևյան նախաձեռնություն» ծրագրին, որի «Պատմական քաղաքների վերականգնում» պիլոտային ենթածրագիրը մեկնարկել է 2009թ. և նպատակ ունի խթանելու մշակութային քաղաքականությունների և ռազմավարությունների զարգացումը՝ ի շահ տարածաշրջանում ժողովրդավարության ամրապնդման, միջմշակութային երկխոսության և մշակութային բազմազանության:

2009 թ. Հայաստանը ներգրավված է ԵՄ «Արևելյան գործընկերության» «Մարդկանց միջև շփումներ» 4-րդ պլատֆորմի և Հայաստան-ԵՄ գործողությունների ծրագրերում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունը մշակութային համագործակցություն է իրականացնում ավելի քան 35 երկրների հետ: Այդ համագործակցությունը իրականացվում է երկկողմ փոխանակումների և փոխադարձ մշակույթի տարիների, սեզոնների և օրերի ձևաչափով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից 2012թ. Երևանը հայտարարվել է համաշխարհային գրքի մայրաքաղաք: Երևանը մեկ տարով կդառնա աշխարհի մշակութային կենտրոններից մեկը՝ ընդլայնելով հայ մշակույթի հանրահռչակման հնարավորությունները: Ծրագրի իրականացումը խթան կհանդիսանա հրատարակչական, թարգմանական, քարոզչական ասպարեզներում նոր գաղափարների և մտահղացումների իրականացման համար, հնարավորություն կստեղծի գրատպության ասպարեզում ավանդույթներ ունեցող երկրներին միմյանց ներկայացնելու իրենց փորձն ու ձեռքբերումները, համախմբվելու գրքի և գիտելիքի շուրջը, բացահայտելու միմյանց գիտական և ստեղծագործական ներուժը, ինչպես նաև համատեղ քննարկելու այս ասպարեզում գոյություն ունեցող հավերժական պրոբլեմները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կենտրոնակայանում 2011թ. հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 10-ը կայացած ՅՈՒՆԵՍԿՕ-ի 36-րդ Գլխավոր կոնֆերանսի ընթացքում հաստատվել են 2012 թ. հոբելյանական տարեդարձների և իրադարձությունների ցանկում Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացված՝

- հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի (362-440 թթ.) ծննդյան 1650,

- բանաստեղծ, երաժիշտ Մայաթ-Նովայի (1712-1795 թթ.) ծննդյան 300,

- հայկական առաջին տպագիր գրքի 500 (1512 թ.),

- գիտնական Անանիա Շիրակացու (612-685 թթ.) ծննդյան 1400-ամյակները:

2004-2011 թթ. մշակույթի ոլորտում Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է թվով 7 միջազգային պայմանագրեր (տե՛ս հավելվածը):

Մշակույթի ոլորտի իրավական դաշտ

Երկրի մշակութային քաղաքականության հիմքում ընկած է ոլորտի իրավական դաշտի մշտական կատարելագործման սկզբունքը: Վերջին տասը տարիների ընթացքում զգալի աշխատանքներ են տարվել մշակույթի ոլորտի իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ: Ընդունվել են մի շարք օրենքներ և հաստատվել ՀՀ կառավարության որոշումներ (տե՛ս հավելված 1):

1.3.7. Առողջապահություն

Առողջապահական քաղաքականության հիմնարար սկզբունքներ

Առողջապահության ոլորտում վարվող քաղաքականության մշակումն ու իրականացումը հաշվի է առնում երկրում ձևավորված ժողովրդագրական իրավիճակն ու առկա միտումները՝ մասնավորապես ուշադրություն դարձնելով երեխաներին, մայրերին և տարեց բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների կազմակերպման և մատչելիության բարձրացման խնդիրներին: Առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների գործընթացում խնդիր է դրվում առկա միջոցների ու ներուժի պայմաններում ապահովել բնակչության առողջության պահպանման սահմանադրական իրավունքը, բարձրացնել բնակչության համար երաշխավորված անվճար բժշկական օգնության հասանելիությունը:

Առողջապահության ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները բխում են ՀՀ կառավարության գործունեության ծրագրից և համապատասխանում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական տարածաշրջանի երկրների կողմից մշակման և հաստատման գործընթացում գտնվող «Առողջություն 2020» քաղաքական փաստաթղթի դրույթներին:

Բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովման ուղղությամբ իրականացվող աշխատանքները նպատակ են հետապնդում հզորացնել երկրում առկա կառույցների հնարավորությունները՝ ապահովելով համապատասխան կարգավորող օրենսդրական միջավայրի ստեղծումը, որը նպատակաուղղված կլինի ժամանակակից հանրային առողջության համակարգի ձևավորմանը, բնակչության առողջության պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը և ոլորտի հետագա զարգացման ապահովմանը:

Բժշկական օգնության կազմակերպման ոլորտում շարունակվում է առաջնային օղակի դերի ընդլայնումը: Առաջնային բուժօգնության կարևորագույն օղակը ներկայացնող ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի զարգացման հիմնական ուղղություններն են՝ վարկային և ուղղակի բյուջետային միջոցների օգտագործմամբ ընտանեկան բժշկության համակարգի զարգացումը, անվճար ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության միջոցով բնակչությանը մատչելի, բավարար ծավալով ու որակյալ բժշկական օգնության ու ծառայությունների ապահովումը:

Հայաստանում իրականացված առողջապահական համակարգի բարեփոխումների հիմնական նպատակը եղել է շարունակում է մնալ իրականացվող բժշկական օգնության և մատուցվող ծառայությունների՝ բնակչության լայն խավերի համար մատչելիության ապահովումը և որակի շարունակական բարելավումը, հիվանդացության, հաշմանդամության և մահացության մակարդակների նվազեցումը՝ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցով:

Մոր և մանկան առողջության պահպանումը և վերարտադրողական առողջության բարելավումը շարունակում են մնալ պետական առողջապահական քաղաքականության ուշադրության կենտրոնում:

Չեռբերումներ են արձանագրվել վարակիչ հիվանդությունների կանխարգելման ոլորտում: Մալարիայի դեմ բազմուղորտ և համակարգված աշխատանքի արդյունքում 2006թ.-ից երկրում մալարիայի տեղական դեպքեր չեն գրանցվել: Հայաստանին հաջողվել է վերացնել տեղական մալարիան երկրի տարածքում: 2010-2011 թթ. ընթացքում, համաձայն միջազգայնորեն ընդունված ընթացակարգի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունը ճանաչվել է որպես մալարիայից ազատ գոտի: Ներկայում երկրում իրականացվում է մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու պետական ծրագիր:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի առումով Հայաստանում իրավիճակն անհամեմատ բարվոք է եվրոպական տարածաշրջանի մի շարք երկրների համեմատ, այդուհանդերձ, ինչպես վկայում է միջազգային փորձը, հասկապես արդի գլոբալացման և բնակչության բարձր մոբիլության պայմաններում, համապատասխան կանխարգելիչ գործողությունների իրականացման հապաղումը կարող է փոխել իրավիճակը: Այս ոլորտում հիմնական ուշադրությունը սևեռվել է բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը, վարակի տարածման կանխարգելմանն ու առկա դեպքերի բուժման արդյունավետության բարձրացմանը: Կարևոր ձեռքբերումներից է այն, որ 2007թ. ի վեր ՄԻԱՎ վարակ ունեցող մայրերից ծնված երեխաների շրջանում ՄԻԱՎ վարակի, ինչպես նաև դոնորական արյան միջոցով ՄԻԱՎ վարակի փոխանցման որևէ դեպք չի արձանագրվել:

ՀՀ կառավարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի 2007-2015թթ. ազգային ծրագրի» շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքում վերջին տարիներին Հայաստանում արձանագրվել է տուբերկուլոզի համաճարակաբանական իրավիճակի բարելավման միտում: Վերջին տարիներին գրանցվել են ինչպես տուբերկուլոզի նոր դեպքերի, այնպես էլ տուբերկուլոզի հետևանքով գրանցված մահվան դեպքերի նվազող ցուցանիշներ: Այսպես, 2007-2011թթ. գրանցվել է տուբերկուլոզով հիվանդացության ցուցանիշը նվազում 20%-ով, իսկ մահացության ցուցանիշը նույն ժամանակահատվածում նվազել է 74%-ով:

ՀՀ կառավարության որոշմամբ 2011թ. հաստատվել է «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և բուժման հայեցակարգը և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը»: Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով մշակվել և ներդրվել են առողջության առաջնային պահպանման բժշկի կողմից այդ հիվանդությունների կանխարգելման, ախտորոշման, բուժման և վարման ուղեցույցները:

Հատուկ շեշտադրվել են հանրային առողջության պահպանման խնդիրները՝ համահունչ լինելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության մոտեցումներին և նպատակ հետապնդելով բարելավել հանրության առողջությունը: Հանրության առողջության ապահովմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների և ծառայությունների համախումբը մասնավորապես ներառելու է վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և հսկողությունը, կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը, հանրության առողջության պաշտպանությունը տարբեր ռիսկերից և վտանգավոր գործոնների բացասական ազդեցությունից, ինչպես նաև դրանց վերաբերյալ հանրության իրազեկումը, բնակչության շրջանում առողջ վարքագծի և ապրելակերպի քարոզությունը: Ոչ վարակիչ հիվանդությունների առաջացմանը նպաստող ռիսկի գործոնների կանխարգելման նպատակով հաստատվել է «Ծխելու դեմ պայքարի 2010-2015թթ. պետական ծրագիրը» և «Ծխելու դեմ պայքարի բնագավառում առաջնահերթ միջոցառումների ցանկը», որի հիմնական խնդիրն է շարունակաբար նվազեցնել ծխախոտի օգտագործման տարածվածությունը (տարեկան 1,5-2 տոկոս)՝ ծխելու դադարեցման ցուցանիշների և չծխող անձանց թվաքանակի մեծացմանն ուղղված նպատակային քաղաքականության իրականացման ճանապարհով:

Շտապ բժշկական օգնության արդիականացման ծրագրի շրջանակներում մշակվել և համակարգում ներդրվում են նախահիվանդանոցային և հետհիվանդանոցային մակարդակներում կյանքին վտանգ սպառնացող իրավիճակներում շտապ բժշկական և անհետաձգելի օգնության իրականացման ժամանակակից միջազգային տեխնոլոգիաներ, զգալիորեն բարելավվել են ծառայության ենթակառուցվածքները և հազեցվածությունը: Ընթանում են մարզային նեոնատալ վերակենդանացման երեք կենտրոնների ստեղծման աշխատանքները: Իրականացված բարեփոխումների արդյունքում շտապ բժշկական օգնության ծառայության ցուցանիշները զգալիորեն բարելավվել են:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականության հիմնական ուղղվածությունը դրանց մատչելիության, անվտանգության ու կիրառման արդյունավետության բարձրացումն է: Իրականացվում են դեղերի որակի ապահովման պետական համակարգի կատարելագործման աշխատանքներ: Դեղատոմսերի ներդրմանը և պետության կողմից դեղերի գների կանոնակարգմանն ուղղված բարեփոխումները նպաստելու են բնակչության առավել կարիքավոր շերտերի համար դրանց մատչելիության մեծացմանը:

ՀՀ Նախագահի կողմից հայտարարված մարզերի համաչափ զարգացման ծրագրի շրջանակներում մեծածավալ ներդրումներ են իրականացվել մարզային առողջապահական համակարգերի արդիականացման ուղղությամբ: Մարզային կենտրոնական թվով 8 հիվանդանոցներ են վերանորոգվել, հազեցվել են նորագույն սարքավորումներով, պարագաներով: Հիվանդանոցների անձնակազմի համար իրակա-

նացվել են մի շարք կրթական ծրագրեր: Նշված հիվանդանոցներում ներդրվել են նոր կառավարման մեխանիզմներ:

Էլեկտրոնային առողջապահությունն առողջապահական համակարգի հեռանկարային զարգացման հիմնական ուղղություններից մեկն է: ՀՀ առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգն իրենից ներկայացնում է ծրագրային և ապարատային ապահովման, ինչպես նաև մեթոդաբանական, կազմակերպչական, նորմատիվային և իրավական դաշտն ապահովող գործառույթների ամբողջություն, որի միջոցով իրականացվում է առողջապահական համակարգի մասնակիցներից բժշկական և այլ տեղեկատվության հավաքագրումը՝ տվյալների փոխանցման, մշակման և պահպանման միասնական չափանիշներին համապատասխան: Բազմաթիվ բժշկական հաստատություններում հեռաբժշկության համակարգերի ներդրման աշխատանքներ են իրականացվում, հաստատվում են հորիզոնական և ուղղահայաց երկուստեք կապեր մարզերի և մայրաքաղաքի առաջատար կլինիկաների, ինչպես նաև ուղղակի կապեր են հաստատվում եվրոպայի առաջատար կլինիկաների միջև: Միևնույն ժամանակ մշակվել և առաջիկայում մեկնարկելու են էլեկտրոնային անհատական քարտերի ներդրման աշխատանքները:

Պատմականորեն, առողջապահական համակարգի ֆինանսավորման առաջնային աղբյուր է հանդիսացել պետական բյուջեն: Ներկայումս համակարգը ֆինանսավորվում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային աղբյուրներից: Տեղական ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են պետական բյուջեն և բնակչության կողմից կատարվող վճարումները: Ֆինանսավորման միջազգային աղբյուրները հիմնականում հանդես են գալիս մարդասիրական օգնությունների և միջազգային ծրագրերի իրականացմանն ուղղված հատուկ դրամաշնորհների տեսքով: Պետական բյուջեն շարունակում է մնալ որպես ֆինանսավորման գլխավոր աղբյուր: Առողջապահական համակարգին ուղղված պետական ծախսերը բավարար չեն առողջապահական համակարգի և բնակչության առողջապահական կարիքները հոգալու համար: 2000թ. առողջապահության համակարգին ուղղված ծախսերը կազմել են պետական բյուջեի միայն 4.4%, իսկ ՀՆԱ-ի՝ 1%: Այնուամենայնիվ, այս ցուցանիշներն աճել են տարեց տարի՝ կազմելով 2007թ. պետական բյուջեի 11.6%, իսկ ՀՆԱ-ի՝ 2.1%: Այս աճը պայմանավորված է կառավարության նպատակամղված բյուջետային քաղաքականությամբ, ինչպես նաև աղքատության նվազեցման և այդ նպատակին ուղղված այլ ծրագրերի իրականացմամբ, որոնք նպատակ են հետապնդում բարելավել բնակչության առողջությունը՝ այն համարելով ազգային կարևորության խնդիր: Հաջորդող տարիների ֆինանսական միջազգային ճգնաժամը հնարավորություն չտվեց ապահովել հետագա շարունակական զարգացում այս ոլորտում և իրականացնել երկրի հիմնական ռազմավարական փաստաթղթով՝ Կայուն զարգացման ծրագրով նախատեսված աճը՝ առողջապահական բյուջետային հատկացումների մասով: Չնայած դրան, առողջապահության համակարգին ուղղված բյուջետային ծախսերը 2010թ. կազմել են պետական բյուջեի ծախսերի 6.0%, 2000թ. 4.4%-ի փոխարեն, իսկ ՀՆԱ-ի մեջ՝ 1.54%՝ 2000թ. 1%-ի փոխարեն: 2011թ. առողջապահության համակարգի ֆինանսավորմանը հատկացվել է 62,5 մլրդ. դրամ՝ 2010թ. 55,3 մլրդ. դրամի դիմաց՝ ապահովելով 13% աճ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ թեև առողջապահության ոլորտում պետական ծախսերը (ՀՆԱ նկատմամբ հարաբերակցության տեսքով) ունեցել են աճի միտում, սակայն դրանց մակարդակը շարունակում է շատ ցածր մնալ (շուրջ 1.5%): Միջազգային համեմատականները վկայում են, որ ցուցանիշի նման մակարդակը ամենացածրերից մեկն է աշխարհում՝ շուրջ չորս անգամ զիջելով ԵՄ և ՏՀԶԿ անդամ երկրների համապատասխան ցուցանիշների միջին մակարդակը և կազմելով ԱՊՀ անդամ երկրների միջինի շուրջ կեսը: Այդուհանդերձ, հաշվի առնելով առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի հետ կապված խնդիրները, ինչպես նաև ոչ ֆորմալ մասնավոր վճարումների տարածվածության բարձր աստիճանը՝ միջնաժամկետ ու երկարաժամկետ հատվածում առողջապահության ոլորտում պետական ծախսերի մակարդակի ավելացումը լինելու է պետական քաղաքականության առաջնահերթ խնդիրների շարքում:

Լուրջ աշխատանքներ են տարվել ոլորտում ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրման և ծառայությունների գնի փոխհատուցումը իրական մակարդակին մոտեցնելու ուղղությամբ: Ներդրվել է բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմը, որին զուգահեռ կանոնակարգվում են նաև վճարովի ծառայությունների գները: Օննոգնության հավաստագրի ներդրման ծրագրի շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորմամբ շուրջ 2 անգամ բարձրացել են ծննդօգնության ծառայությունների մատուցման համար նախատեսվող փոխհատուցման հետ կապված գները և արդյունքում մի քանի անգամ անգամ բարձրացել է բուժաշխատողների աշխատավարձը, ընդ որում, այն ներկայումս ուղղակի կապվում է բժշկի աշխատանքային ծանրաբեռնվածության հետ:

2011թ. ներդրվեց նաև մինչև 7 տարեկան երեխաների պետական հավաստագրի համակարգը, որը նպաստեց 0-7 տարեկան երեխաների համար բժշկական հիվանդանոցային ծառայությունների մատչելիության կտրուկ աճի և բուժաշխատողների աշխատավարձի բարձրացմանը՝ կապված բժշկի աշխատանքային ծանրաբեռնվածության հետ:

Առաջնային օղակում ներդրվել է նաև մատուցված ծառայությունների գնահատման նոր համակարգ՝ ըստ նախապես հաստատված ցուցանիշների ցանկի, որին ուղղակի կապվել է ըստ կատարողականի/խրախուսական/ ֆինանսավորման ծրագիրը:

Առողջապահության համակարգի ֆինանսավորման մեխանիզմների առկա և հետագա բարեփոխումներն ուղղվել են ստվերային շրջանառության կրճատմանը, համավճարների, կլինիկո-տնտեսագիտական ստանդարտների և ծառայությունների դիմաց փոխհատուցման օբյեկտիվ չափանիշների ներդրմանը: Հիվանդանոցային բուժօգնության համակարգի զարգացումն ընթանալու է ֆինանսավորման հստակ մեխանիզմների ներդրման, միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման, ավելորդ հզորությունների կրճատման և բժշկական օգնության որակի ապահովմանն ուղղված կարճաժամկետ ու երկարաժամկետ ծրագրային մոտեցումներով:

Բժշկական ապահովագրության հիմնահարցն առողջապահության համակարգի բարեփոխումների կարևորագույն տարրերից է, ընդ որում այն դիտարկվում է ոչ միայն որպես առողջապահության ոլորտ լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ ներգրավելու միջոց, այլև բնակչության համար բժշկական օգնությունն առավել մատչելի դարձնելու, սոցիալական արդարության սկզբունքներ սերմանելու և ռեսուրսների նպատակային օգտագործումն ու բժշկական ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու միջոց:

Վերջին տասնամյակում Հայաստանն իր մասնակցությունն է ունեցել մի շարք միջազգային երկխոսություններին: 1992թ. անդամակցելով Առողջապահության համաշխարհային կազմակերպությանը՝ մեր երկիրն ակտիվորեն ընդգրկվել է 2005թ. ընդունված Միջազգային առողջապահական կանոնների ներդրման գործընթացում: Ներկայումս Հայաստանը քայլեր է ձեռնարկում այդ կանոնները ներդնելու ուղղությամբ՝ համաձայն հաստատված ժամանակացույցի: 2004թ. Հայաստանը վավերացրել է ՄԱԿ-ի ԱՀԿ-ի «Ծխախոտի դեմ պայքարի մասին» միջազգային շրջանակային կոնվենցիան և ներկայում շարունակում է իր ակտիվ մասնակցությունն ունենալ կոնվենցիայի շրջանակներում իրականացվող արձանագրությունների և ուղեցույցների մշակմանն ուղղված բանակցություններում, ինչպես նաև իրականացնում է կոնվենցիայի կատարումը ապահովող պարտավորությունները:

Վերջին տարիներին երկրում իրականացվում են լուրջ աշխատանքներ ազգային առողջապահական օրենսդրությունը եվրոպական օրենսդրությանը, մասնավորապես՝ եվրոպական դիրեկտիվների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Մշակվել են մի շարք հիմնարար օրենքների նախագծեր՝ «Առողջապահության մասին», «Հանրային առողջության ապահովման մասին», «Դեղերի մասին» և այլն: Ուշադրության կենտրոնում է ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի պետությունների կողմից մշակվող «Առողջություն 2020» ռազմավարական փաստաթուղթը:

Դեռևս սահմանափակ են ուսումնասիրությունները «Շրջակա միջավայր և առողջապահություն» բնագավառում, ինչպես նաև լիարժեք հստակեցված չէ աղքատ բնակչության համար առողջապահական ծառայությունների մատչելիության պատկերը, այնինչ նշված հիմնախնդիրները կարող են հիմնական դերակատարություն ունենալ բնակչության որոշ հիվանդացության աճի, որը արտացոլված է Հավելված 1-ում ներկայացված համապատասխան աղյուսակում:

1.3.8. Գյուղատնտեսություն

Անցած տասնամյակում գյուղատնտեսության ոլորտում քաղաքականությունն իրականացվել է պետության աջակցությամբ իրականացվող մի շարք ծրագրերի միջոցով: Այդ ծրագրերն ուղղվել են առաջնային սերմնաբուծությանն ու տոհմային գործի զարգացմանը, բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարին, գյուղատնտեսական կենդանիների առողջության պահպանմանը, սննդամթերքի անվտանգության ապահովմանը, հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանը, ռոտաման համակարգերի պահպանմանն ու զարգացմանը, վարկավորման մատչելիությանը, ենթակառուցվածքների զարգացմանը, առավել անբարենպաստ գոտիներում գյուղատնտեսությունում տնտեսվարողների սուբսիդավորմանը, ոլորտում խորհրդատվության տրամադրմանն ու առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլն:

Գյուղատնտեսության ոլորտում համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով ՀՀ կառավարության կողմից 2010թ. նոյեմբերին ընդունվել է «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-

2020թթ. Կայուն զարգացման ռազմավարությունը»: Ռազմավարությունը առաջիկա տասնամյակի կտրվածքով ամրագրում է գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Ռազմավարությունով սահմանված է խնդիրների լայն շրջանակ, ընդհանուր առմամբ ընդգրկում է խնդիրների 17 խումբ, որոնց լուծմանն են ուղղվում համապատասխան ծրագրեր: Ռազմավարությունում սահմանվում է գյուղի և գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած խնդիրների լուծման հետևյալ ուղղությունները՝

1. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարում և հակաճգնաժամային մեխանիզմների ներդրում,

2. ագրարային բարեփոխումների խորացում, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացում,

3. պարենային ապահովության մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում,

4. տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքների փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում,

5. գոտիական մասնագիտացում և արտադրության ռացիոնալ տեղաբաշխում,

6. սննդամթերքի անվտանգության ապահովում,

7. հողօգտագործման արդյունավետության բարձրացում,

8. օրգանական գյուղատնտեսության զարգացում,

9. բուսաբուծության զարգացում (ազրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնում, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացում, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառում, բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների իրականացում, մշակաբույսերի գենետիկական բազմազանության, ներառյալ մշակաբույսերի վայրի ցեղակիցների պահպանության ապահովում),

10. անասնաբուծության զարգացում (անասնաբուծության ճյուղերի արդյունավետ զուգակցման և ռացիոնալ տեղաբաշխման աջակցություն, տոհմային գործի զարգացման համալիր միջոցառումների իրականացում, անասնաբուծության համակարգի բարելավում և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անասնաբուծության կերի բազայի զարգացում, անասնաբուծական առևտրային կազմակերպությունների զարգացմանն աջակցություն, գյուղատնտեսական կենդանիների ցեղերի գենետիկական բազմազանության պահպանության ապահովում),

11. գյուղատնտեսական հումքի վերամշակում (ոլորտի զարգացում և վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխում: Առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և արտադրանքի մրցունակության բարձրացում: Մարքեթինգային աջակցություն և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացում),

12. գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացում և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացում,

13. գյուղական համայնքներում ենթակառուցվածքների զարգացում,

14. գյուղատնտեսական ռիսկերի մեղմացում,

15. ագրարային ոլորտի վարկավորման բարելավում,

16. ագրարային ոլորտի գիտակրթական, խորհրդատվական համակարգի բարելավում,

17. գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավում:

2011թ. մայիսի 18-ին ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատվել է «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը»: Հայեցակարգը հանդիսանում է ուղենիշային փաստաթուղթ առաջիկա տասնամյակում երկրի պարենային անվտանգության բնագավառում համակարգված քաղաքականություն իրականացնելու համար: Հայեցակարգի դրույթների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի իրականացումն ապահովող 2012-2014թթ. միջոցառումների ծրագիրը» (ՀՀ կառավարության 2011 թ. հոկտեմբերի 13-ի N 1522-Ն որոշում), որտեղ սահմանվել է պարենային անվտանգության բնագավառում քաղաքականության հիմնական ուղղությունները, դրանց իրականացմանն ուղղվող միջոցառումները՝ ըստ պատասխանատու պետական կառավարման մարմինների:

Առաջիկայում գյուղական համայնքների զարգացմանը կարող են նպաստել հետևյալ քայլերի ձեռնարկումը՝

1. իրականացնել նպատակային և հետևողական ներդրումներ ճանապարհային շինարարության մեջ (հատկապես սահմանամերձ գյուղերը մարզկենտրոնների հետ կապելու համար)։

2. տեղերում ստեղծել բնական գազի և վառելիքի այլ տեսակների պահեստարաններ.

3. լուծել համեմատաբար էժան գներով էլեկտրաէներգիայի կանոնավոր մատակարարման խնդիրն՝ արևի, հողմի, երկրի ընդերքի, ջրի էներգիան լավագույն ձևով օգտագործելով լեռնային և սահմանամերձ գյուղերում.

4. ձեռք բերել լեռնային տեղանքին համապատասխան հատուկ գյուղատնտեսական մեքենաներ, ինչպես նաև խթանել դրանց արտադրության կազմակերպումը Հայաստանում.

5. հիմնել գյուղատնտեսական մթերքներ վերամշակող և էկոլոգիապես մաքուր արդյունաբերական փոքր ձեռնարկություններ (օրինակ՝ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող կամ դրանից ստացվող սննդամթերքի փաթեթավորման, սառեցման և պահեստավորման փոքր արտադրություններ, ինչպես նաև գորգագործության, կարպետագործության, ասեղնագործության, բրուտագործության, փայտամշակման, խեցեգործության արհեստանոցներ):

1.3.9. Էներգետիկա

Էներգետիկայի ոլորտում առանձնահատուկ կարևորվում է էներգետիկ անվտանգության ապահովումը, որի ուղիներն են՝

1) վերականգնվող էներգառեսուրսների արդյունավետ օգտագործման և էներգախնայողության ապահովումը,

2) ատոմային էներգետիկայի զարգացումը,

3) էներգառեսուրսների մատակարարման տարատեսականագումն ու էլեկտրաէներգետիկական համակարգի տարածաշրջանային ինտեգրումը,

4) էներգետիկայի բնագավառի ֆինանսական կայունության և տնտեսական արդյունավետության սահմանված մակարդակի ապահովումը:

Ոլորտի զարգացմանն ուղղված ընդունվել են կարգավորող հիմնական փաստաթղթերը /Հավելված 3/:

ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հիմքում դրված են՝ 1992 թ. Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման ու 2002 թ. Յոհաննեսբուրգի Կայուն Ջարգացման գազաթաժողովների նախանշած սկզբունքները, Եվրահանձնաժողովի Կանաչ Գրքում արտացոլված «Էներգամատակարարման անվտանգության, մրցունակության և կայունության ապահովման Եվրոպական ռազմավարությունը», Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված բնապահպանական կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները:

Ոլորտում իրականացված մի շարք ուսումնասիրությունների շնորհիվ, որոնք նպատակաուղղված էին էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման կանխատեսումներին, գազամատակարարման համակարգի, նվազագույն ծախսերով արտադրական հզորությունների, էլեկտրաէներգիայի հաղորդող ցանցի, վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության զարգացմանը, օրենսդրական դաշտի զարգացմանը, ինչպես նաև՝ Հայկական ատոմային էլեկտրակայանը շահագործումից հանելու նպատակով ռազմավարության մշակմանը, հնարավոր եղավ՝

1. գնահատել Հայկական ԱԷԿ-ի հնարավոր փակման հետ կապված հետևանքները և փոխարինող հզորությունների անհրաժեշտ ծավալների հիմնավորումները՝ ուղղված հանրապետության էներգետիկ անկախության և անվտանգության ապահովմանը,

2. գնահատել Հայաստանի Հանրապետության էներգիայի պահանջարկի բավարարման տարբերակները՝ Հայկական ԱԷԿ-ի շահագործումից դուրս բերելու պարագայում,

3. ապահովել բնական գազի պահանջարկի ապահովման գործում Հայաստան ներկրվող գազի ծավալների ավելացման հարցը՝ Իրան–Հայաստան գազամուղի միջոցով,

4. մշակել էներգահամակարգի զարգացման տնտեսապես օպտիմալ պլանն ու սահմանել ատոմային էներգետիկայի և վերականգնվող էներգետիկայի դերը տնտեսական զարգացման գործում:

Արդյունքում ոլորտում գործնականում իրականացվել է հետևյալը՝

1. գործում է Իրան–Հայաստան գազամուղը,

2. ավարտին են մոտենում ՀՀ էներգահամակարգի 220 կՎ ենթակայանների արդիականացման աշխատանքները,

3. ավարտվել են էլեկտրաէներգիա բաշխող ցանցի 110 կՎ լարման թվով՝ 17 ենթակայանների արդիականացման աշխատանքները,

4. ներդրվել են էլեկտրաէներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգը և էլեկտրաէներգետիկական համակարգի ավտոմատ կառավարման (SCADA) համակարգը,

5. արտադրող կայանների ռեժիմների օպտիմալացման արդյունքում հաջողվել է պահպանել էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր նվազագույն սակագինը,

6. շահագործման է հանձնվել Իրան–Հայաստան էլեկտրահաղորդման երկրորդ գիծը և մեկնարկել է էլեկտրահաղորդման երրորդ գծի շինարարությունը,

7. մասնավոր ներդրումների հաշվին 2004–2011թթ. ընթացքում կառուցվել և շահագործման են հանձնվել շուրջ 160 ՄՎտ տեղակայված հզորությամբ թվով՝ 111 փոքր ՀԷԿ-եր /ընդհանուր առմամբ ՀՀ-ում հիդրոէլեկտրակայանների արտադրած հոսանքը կազմում է հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի շուրջ 34%-ը, որի մեջ փոքր ՀԷԿ-երի մասնաբաժինը կազմում է շուրջ 7%/,

8. շահագործման է հանձնվել տարածաշրջանում առաջին ցանցային հողմաէլեկտրակայանը՝ 2,6 ՄՎտ հզորությամբ,

9. շարունակվում են աշխատանքները Հայաստանի երկրաշերմային էներգիայի ներուժի բացահայտման և գնահատման ուղղությամբ,

10. շահագործման է հանձնվել Երևանի ՋԷԿ-ի նոր շոգեգազային համակցված ցիկլով էներգաբլոկը՝ 240 ՄՎտ տեղակայված էլեկտրական հզորությամբ,

11. շահագործման է հանձնվել 440 ՄՎտ հզորությամբ գազային կցատուրբինով Հրազդանի 5-րդ ջերմային էներգաբլոկը,

Տեղայնացվել և ներդաշնակեցվել են Եվրոպական տեխնիկական հանձնաժողովի կողմից սահմանված բնակելի և հասարակական շենքերի էներգատարության և էներգաարդյունավետության թվով 7 ստանդարտներ:

Հաշվի առնելով երկրի կուտակված զգալի գիտատեխնիկական ներուժն ու նպաստող բնակլիմայական պայմանները, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել արեգակնային էներգետիկայի զարգացման ծրագրերին:

1.3.10. Քաղաքաշինություն

Քաղաքաշինության ոլորտում կարևորվում է կայուն տարածական զարգացման ու տարածական պլանավորման գործընթացի բարելավումը, կառուցապատման ընթացակարգերի պարզեցումը և կանոնակարգումը, բնակարանային ապահովման խնդիրների լուծումը, անվտանգ և բարեկեցիկ կենսամիջավայրի ապահովումը:

ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 3-ի նիստի N36 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման և հաստատման գործընթացի բարեփոխման հայեցակարգի իրագործման շրջանակներում կատարվել են փոփոխություններ մի շարք օրենքներում և ենթօրենսդրական ակտերում: 2011թ. ընդունվել են «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-226, ՀՕ-227, ՀՕ-228, ՀՕ-229, ՀՕ-230, ՀՕ-231 օրենքները:

Մասնավորապես, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով կանոնակարգվել են համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի հաստատման և հողերի նպատակային նշանակության փոփոխման ընթացակարգերը, սահմանվել են նաև կառուցապատման ընթացակարգերը սահմանող մի շարք դրույթներ, ուղղված նախագծման և շինարարության թույլտվությունների օպտիմալացմանը:

Վերանայվել են նաև քաղաքաշինական ընթացակարգերը մանրամասնեցնող գրեթե բոլոր օրենսդրական ակտերը: Մասնավորապես, տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացը կանոնակարգվել է Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման նոր կարգով /հաստատված՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ/: Տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը խթանելու նպատակով գյուղական համայնքների համար ներդրվել է «պարզեցված գլխավոր հատակագիծ» հասկացությունը, որի մշակման պարագայում էականորեն խնայվում են համայնքային բյուջեի միջոցները: Ստեղծվել է քաղաքաշինական ծրագրային փաս-

տաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով, որի աշխատանքը օժանդակում է նախագծերի համաձայնեցման և հաստատման գործընթացին /ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշում/:

Քաղաքաշինության ոլորտում իրականացվող քաղաքականության կարևոր բաղադրիչներից է Հայաստանում գործարար միջավայրի բարելավման խնդիրները, շինարարության ոլորտում կառուցապատման ընթացակարգերի հետևողական կանոնակարգումը, թույլտվությունների ստացման համար անհրաժեշտ քայլերի, ժամկետների և ծախսերի կրճատումը: Նշված խնդիրների կանոնակարգման նպատակով ՀՀ կառավարության կողմից 2011թ. մարտի 3-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերը կանոնակարգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 257-Ն որոշումը: Նույն որոշումը վերանայվել են ՀՀ կառավարության 29.08.2002թ. N 1473-Ն, 21.12.1998թ. N 812, 06.05.2010թ. N 711-Ն, 28.10.98թ. N 660, 02.02.2002թ. N 91, 08.05.03թ. N 626-Ն որոշումներով սահմանված նորմերը, ինչի շնորհիվ էապես նվազեցվել է կառուցապատման ընթացակարգերի թիվը, տևողությունն ու արժեքը: Շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ռիսկայնության աստիճանից դասակարգվել են կատեգորիաների, որոնց համապատասխան կանոնակարգվել են կառուցապատման ընթացակարգերը՝ պարզից բարդ:

Բարեփոխումների վերաբերյալ իրազեկելու նպատակով մշակվել է «Կառուցապատողի ուղեցույց» ձեռնարկը, հրատարակվել են ուղեցույցի համառոտ տարբերակը և տրամադրվել շահագրգիռ անձանց: Ապահովվել է նաև ինտերնետային ցանցում վերջիններիս տեղադրումը: Անհատ կառուցապատողներին աջակցելու նպատակով մշակվել են բազմակի օգտագործման անհատական բնակելի տների նախագծեր, տպագրվել այդ նախագծերի կատալոգները, ապահովվել է on-line ռեժիմով դրանց նախագծերի հասանելիությունը:

2011թ. նախարարությունը նախաձեռնել է շինարարության ոլորտում Էլեկտրոնային թույլտվությունների համակարգի ներդրման գործընթացը: Գործողության մեջ է դրվել լիցենզավորման նպատակով հայտերի ներկայացման էլեկտրոնային եղանակը:

1988թ. դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքով աղետի գոտու բնակավայրերում անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցության ծրագրերի շրջանակներում իրականացվել մեծ ծավալի աշխատանքներ: Իրականացված ծրագրերի շրջանակներում մինչև 2008 թվականը լուծվել են մոտ 46000 ընտանիքների բնակարանային խնդիրները:

2008թ. սկիզբ առավ երկրաշարժից 20 տարի անց դեռևս անօթևանի կարգավիճակում գտնվող, սահմանված կարգով հաշվառված մոտ 7000 անձանց բնակարանային ապահովման լուծմանն ուղղված մեծածավալ ծրագիրը, որի շրջանակներում 84011.2 մլն.դրամ միջոցների հաշվին նախատեսվում է լուծել ծրագրի շահառու հանդիսացող ընտանիքների բնակարանային խնդիրները:

Բացի այդ, անցած ժամանակահատվածում լուծվել են նաև փախստական ընտանիքների, սողանքային գոտիներում գտնվող բնակելի տների, ռմբակոծության հետևանքով անօթևան մնացած, Նոյեմբերյանի երկրաշարժի հետևանքով, վթարային բնակելի տների և այլ պատճաններով անօթևան մնացած մոտ 9000 ընտանիքի բնակարանային խնդիրները:

ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվիրատվությամբ 2003-2012թթ. ընթացքում իրականացվել և հանձնվել են շահագործման թվով 405 շինարարական օբյեկտ, այդ թվում՝ 11 վարչական, 271 կրթական, 63 մշակութային, 28 մարզական, 19 առողջապահական և 12 բնակարանային: Առկա անավարտ բնակելի շենքերից՝ Մարալիկ քաղաքում 3-ը և Ստեփանավան քաղաքում 4-ը վերակառուցվել են որպես սոցիալական տներ և 2009 – 2011թթ. ընթացքում հանձնվել շահագործման: Պետական ֆինանսավորմամբ իրականացված շինարարությունն ուղղված է ՀՀ համայնքներում բնակչության բարեկեցության բարձրացմանը, սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքի վերականգնմանը և հասարակական ու մշակութային կյանքի բարելավմանը:

Հուսալի և անվտանգ շինարարության ապահովման ուղղությամբ կարևորվում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի եվրոպական ստանդարտներին համապատասխանեցման գործընթացի կանոնակարգումը, որի շրջանակներում մշակվել, միջազգային փորձագետի փորձաքննություն է անցել «Քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի հայեցակարգը», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 6-ի N 17 արձանագրային որոշմամբ: Հայեցակարգին հաջորդել է «Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի՝ եվրոպական նորմերին համապատասխանեցման առաջնահերթ միջոցառումների

ծրագրի» համահունչ մշակումը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել 2010թ. դեկտեմբերի 30-ի N 51 արձանագրային որոշմամբ:

Քաղաքաշինության քաղաքականության կարևոր ուղղություն է երկրի լանդշաֆտային բնութագրերի բարելավումը: Լանդշաֆտի ազգային քաղաքականությունն իրականացվում է Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի (վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004թ. մարտի 9-ին) գաղափարախոսությանը համահունչ և նպատակաուղղված է հասարակության կարիքների, տնտեսական գործունեության և շրջակա միջավայրի միջև համաչափ և ներդաշնակ փոխազդեցությունների վրա հիմնված կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. հուլիսի 31-ի N650-Ա որոշմամբ ստեղծվել է Հայաստանում Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի իրագործման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են բնապահպանության, մշակույթի, տարածքային կառավարման, գյուղատնտեսության, տրանսպորտի, էներգետիկայի և ընդերքօգտագործման, էկոնոմիկայի, կրթության, արտակարգ իրավիճակների պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գիտական և կրթական համակարգերի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Հանձնաժողովի այս ընդարձակ կազմը թույլ է տալիս ստեղծել համագործակցության ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղաձիգ կապեր:

2011թ. մարտի 24-ին ընդունվել է «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայից բխող Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N308-Ն որոշումը, որով նախատեսված միջոցառումների իրականացման շրջանակներում մշակվել է ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 17-ի նիստի N45 արձանագրային որոշման 16-րդ կետով հավանության են արժանացել «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթները»: Ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման և մասնագիտական որակի բարձրացման նպատակով լանդշաֆտային հիմնախնդիրների վերաբերյալ դրույթներով լրացվել են քաղաքացիական ծառայության վերապատրաստման դասընթացների ծրագրերը: Առաջարկվել է նաև համապատասխան քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում լրացնել Կոնվենցիայի իմացության վերաբերյալ պահանջը: Լանդշաֆտային ծրագրերի իրականացման խրախուսման նպատակով ՀՀ կառավարության կողմից սահմանվել է Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ: Մշակման փուլում է Լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարության և դրանից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումների նախագիծը, որը կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը սույն թվականի մայիսին:

1.3.11. Ծրագրերի հետ կապված մի շարք հիմնախնդիրներ ու մտահոգություններ

• Թեկուզ և առկա է որոշակի առաջընթաց ԿԶԾ առանձին ենթածրագրերի իրականացման մասով, վերոհիշյալ խնդիրների հետևանքով, ստացված արդյունքները բավարար չեն, քանի որ աղքատության մակարդակը, գործազրկությունը և միգրացիան աճել են: Ըստ ծրագրի՝ նպատակ էր հետապնդում կրճատել նաև Հայաստանում շատ բարձր մակարդակի հասած եկամտային անհավասարությունը: Օրենսդրական փոփոխությունները իրական կյանքում դեռևս չեն բերել ցանկալի արդյունքներ և հասարակության բնեռացումը գնալով խորանում է: Հանրության դժգոհությունն է առաջացնում և այն փաստը, որ արդեն երկրորդ տարին է, ինչ ձգձգվում է ԿԶԾ վերանայման գործընթացը:

• Դեռևս հաղթահարված չէ «շոկային թերապիայի» խիստ բացասական ազդեցությունը երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի վրա, որի արդյունքում ՀՀ-ն ինդուստրիալ/հետինդուստրիալ կարգավիճակից «իջավ» նախաինդուստրիալ երկրի կարգավիճակի: Տնտեսական աճը դեռ չի վերածվում մարդկային զարգացման, ինչն արդյունք է նաև ինստիտուցիոնալ պոտենցիալի ոչ լիարժեք բացահայտման և իրացման: Ծրագրերի համեստ արդյունքները չեն կրում համակարգային բնույթ և հիմնականում չեն ապահովում կայուն շարունակականություն:

• Վատթարացել է գյուղական բնակավայրերի բնակչության կյանքի որակը, սակահավոյող Հայաստանի մշակովի հողատարածքների 40% չի մշակվում, քանզի համապատասխան խթանող հարկա-վարկային քաղաքականության և գյուղտեխնիկայի բացակայության պայմաններում հաճախ գյուղատնտեսական գործունեությունը դառնում է անարդյունավետ:

• Փոքր ՀԷԿ-երի ցանցի զարգացումը արդարացիորեն դիտարկվում է որպես այնտրանքային էներգետիկայի դրական դրսևորում: Սակայն, ՀՀ-ում փոքր ՀԷԿ-երի կառուցումն ու գործարկումը հաճախ իրականացվում է առանց բնապահպանական նորմերի պահպանման, որի արդյունքում խիստ տուժում են բնական, հատկապես ջրային, էկոհամակարգերը: Հաճախ փոքր ՀԷԿ-երը կառուցվում են խոցելի էկո-

համակարգերի տարածքներում (մերձգետային անտառներ, գլխուտային նոսրանտառներ, հարավային լայնատերև անտառներ), որը տարիներ անց կարող է հանգեցնել անտառների դեգրադացմանը, հետևաբար կենսաբազմազանության վերացմանը, տեղի բնակիչների ապրելամիջոցների նվազեցմանը և բնական աղետներին (սողանքներ, ջրային ռեժիմի խախտում): Չեն ապահովվում նաև իրական էկոլոգիական թողքերը և թույլատրելի ջրօգտագործման ծավալներն ու պահանջները: Փոքր ՀԷԿ-երի կառուցապատման բարձր խտությունը /կասկադային/ ազդում է տեղական բնակչության կողմից ռոտման ջրերի և այլ բնական ռեսուրսների կայուն օգտագործման հնարավորությունների վրա: Այս ամենը կարող է հանգեցնել սոցիալական և տնտեսական լարվածության:

2. Պետական կառույցների և քաղաքացիական հասարակության համագործակցություն

2.1. Պետություն և գործարար/մասնավոր հատված

Պետություն-մասնավոր գործընկերությունը (ՊՄԳ) նոր մոտեցում է, որը նպաստում է կառավարության, մասնավոր հատվածի և հանրային ողջ ռեսուրսների ու կարողությունների միավորմանը: Հանրությանը ծառայությունների մատուցումը (ջրամատակարարում, ջրահեռացում, աղբահանություն, էներգամատակարարում և այլ) ավանդաբար եղել է պետական իշխանությունների բացառիկ պարտավորությունը, մինչդեռ պետական բյուջեի միջոցները չեն կարող բավարարել ծառայությունների նկատմամբ շարունակաբար աճող պահանջարկը, զարգացնելու այդ ծառայություններն, այդ թվում նաև՝ կապված նոր, էկոլոգիական տեսանկյունից մաքուր տեխնոլոգիաների բացահայտման և շահագործման հետ:

Ծառայությունների մասնավորեցումն անշուշտ ունի իր սահմանափակումները: Գործադիր իշխանությունները պետք է ներգրավված մնան այդ կենսական ծառայությունների մատուցման գործընթացում, և նրանց ներգրավումը պետք է երաշխավորի հասարակության առջև պատասխանատվության ապահովումը, հասարակության բոլոր խմբերի պաշտպանությունը, սոցիալական, բնապահպանական, ինչպես նաև տնտեսական օգուտների բաշխումը, այսինքն՝ այն ուղղված լինի կայուն զարգացմանը, չբացառելով ֆինանսական նպատակները:

Հայաստանի տնտեսության մեջ համագործակցության մոդելի լայն կիրառումն ապահովելու նպատակով 2009թ. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ Պետական-մասնավոր համագործակցության զարգացման հայեցակարգը: Երջանառության մեջ է նաև «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Եվրամիության SIGMA ծրագրի շրջանակներում համագործակցություն է իրականացվում ինչպես օրենսդրական դաշտի, այնպես էլ ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորման և կարողությունների զարգացման ուղղություններով:

Միջազգային զարգացման աջակցության ծրագրերը կարևոր դեր են խաղում այդ հնարավորությունների զարգացման գործում, որպեսզի վերջիններս հասցեագրեն մունիցիպալ և բնապահպանական ոլորտների խնդիրները: Պաշտոնական զարգացման աջակցության (ODA) միջոցներին զուգահեռ խիստ անհրաժեշտ է գտնել նոր ֆինանսական աղբյուրներ, ինչպես նաև տեխնոլոգիաներ և կառավարման նոր միջոցներ:

Հայաստանում առկա են հանրային-մասնավոր համագործակցության նախաձեռնությունների հաջողված օրինակներ, որոնք՝ լուծելով բնապահպանական և սոցիալական խնդիրներ, ապահովել են մասնավոր սեկտորի ներդրումներ և նախագծերի իրականացման արդյունավետ շրջանակներ: Որպես հաջողված օրինակներ կարելի է դիտարկել հետևյալները.

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի վերակառուցման նախագիծը էներգաարդյունավետ կոգեներացիոն տեխնոլոգիաների հիման վրա.

Ավան բնակելի թաղամասի կենտրոնացված ջերմամատակարարման (ԿՁ) համակարգի վերականգնումը նախատեսված էր Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծով: ՀՀ բնապահպանության նախարարության ներքո իրականացվող ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում մշակվել էին հիմնավորումներ ժամանակակից էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառման համար պետության կողմից նպաստավոր կարգավորման շրջանակների ապահովման պայմաններում մասնավոր ներդրումների ներգրավման հնարավորություն մասին:

Ավան թաղամասի ԿՁ համակարգն ընդգրկում է 218 բազմաբնակարան բնակելի (305 հազ.մ² բնակելի մակերեսով) շենք՝ մոտ 32 հազ. բնակչությամբ: Տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ կիրառված գնագոյացման մոտեցումները հնարավորություն են տալիս ապահովել արտադրված ջերմային էներգիայի մրցունակությունն ու մատչելիությունը, նպաստելով ջերմամատակարարման շուկայի ընդլայնմանը և սոցիալական ու քաղաքաշինական կարևոր նշանակություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը: Այդ հաշվարկները հիմք ծառայեցին ՀՀ կառավարության 2006թ. ապրիլի 13-ի թիվ 509-Ն որոշման համար, որով Ավան և Դավթաշեն շրջանների առաջնեկային ծրագրերի իրականացման համար արտոնություններ սահմանվեցին: Փաստորեն այս որոշումը կոգեներացիոն էներգակայանքների հիման վրա կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման պետական խրախուսման առաջին նախադեպն է: 2006թ. ապրիլին «ԵվրոՄիքեներգո-ինժինիիրինգ» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև «ԵվրոՄիքեներգո-ինժինիիրինգ»-ի ու ՀՀ ՀՕԿՀ-ի միջև ստորագրվեց «Մտադրությունների մասին հուշագիր», որտեղ ուր-

վագծվում էին կողմերի համագործակցության շրջանակները, ինչպես նաև նշվում էին Երևանի Ավան բնակելի զանգվածի ԿՁ վերականգնման նախագծի իրականացման կոնկրետ քայլերը:

Ավանում ԿՁ վերականգնման ներդրումային ծրագրի իրականացման նպատակով 2006թ. ստեղծվեց «ՀայՌուսկոգեներացիա» ՀՀ ՓԲԸ-ն և Երևանի քաղաքապետի 08.09.2006թ. թիվ 1454-Ա որոշմամբ ջերմամատակարարման գույքը անհատույց օգտագործման իրավունքով հանձնվեց հիմնադրված առևտրային ընկերությանը:

Ներկայումս մասնավոր ներդրողի կողմից իրացվել են մոտ 9 միլիոն ԱՄՆ դոլարի ընդհանուր ներդրումներ էներգակենտրոնի և ջերմային ցանցերի կառուցման համար, ապահովելով 76 շենքի ջեռուցում և տաք ջրամատակարարում: Ներկայումս Հովհաննիսյան, Իսահակյան և Վարուժան թաղամասերի 30 բնակելի շենք օգտվում են այդ ծառայություններից:

Համակարգը ապահովում է բնական գազի առավել արդյունավետ օգտագործում կոգեներացիոն տեխնոլոգիայի կիրառման շնորհիվ, ինչը սպառման հաշվառման վրա հիմնված վճարման համակարգի կիրառման հետ համատեղ նպաստում է սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծմանը և ապահովում է ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը, որի գնահատված ներուժը կազմում է տարեկան մոտ 7300 տոնա:

«Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում կենսագազի օգտահանում և էլեկտրականության արտադրություն» ՄՁՄ նախագիծ.

Այս նախագծում ներկայացված է ՀՀ բնապահպանության նախարարությունը, որպես Կիոտոյի արձանագրության իրականացման համար պետական լիազորված մարմին և Երևանի քաղաքապետարանը, որը պատասխանատու է Նուբարաշենի աղբավայրի շահագործման համար: Որպես մասնավոր ներդրող հանդես է եկել Ճապոնական «Շիմիզու» կորպորացիան: Ըստ նախագծային փաստաթղթի ու համագործակցության պայմանագրի, Քաղաքապետարանը տրամադրել է Նուբարաշենի քաղաքային աղբավայրը, «Շիմիզու» կորպորացիան, իսկ վերջինս իր միջոցներով ներդրել է աղբավայրից կենսագազի ստացման ու այրման տեխնոլոգիան, որի արդյունքում ձևավորվում է արտանետումների սերտիֆիկացված կրճատում, որը փոխանցվում է «Շիմիզու» կորպորացիային:

Ներկայումս նախագիծը ընթացքի մեջ է ու ջերմոցային գազերի արտանետումների կրճատման մոնիթորինգի ու հավաստագրման փուլում է: Սկսած 2009թ.-ից մինչև 2011թ. օգոստոսը, տեղի է ունեցել ջերմոցային գազերի 40419 տոննա կրճատում՝ հաշվարկված ածխաթթու գազի համարժեքով:

Հանրային հատվածի օգուտն այն է, որ նախագծի իրականացման արդյունքում կրճատվում են ջերմոցային գազերի ու վնասակար նյութերի արտանետումները մթնոլորտ, աղբավայրում և նրա շրջակայքում բարելավվել է սանիտարական իրավիճակը, ստեղծվել են աշխատատեղեր, փոխանցվել ու ներդրվել է աղբավայրից կենսագազի օգտահանման լավագույն ժամանակակից տեխնոլոգիա, ձեռք է բերվել մասնագիտական ու կազմակերպչական փորձ այլ աղբավայրերում նման նախագծերի իրականացման համար:

Ճապոնական կողմի օգուտն այն է, որ համեմատաբար ցածր ներդրումներով տեղի է ունենում ջերմոցային գազերի արտանետումների կրճատում, որը վերագրվում է Ճապոնական կողմին՝ որպես Կիոտոյի արձանագրությամբ այդ երկրի համար սահմանված պարտավորությունների կատարման մաս:

Գործարար միջավայրի բարելավման բարեփոխումները

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գործարար միջավայրի բարելավումը դիտարկում է որպես իր տնտեսական զարգացման ուղու կարևորագույն ուղղություններից մեկը և նպատակ ունի Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորումների, ծառայությունների և ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանը օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև պարզեցնել վարչարարական ընթացակարգերը, իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն:

Վերջին տարիների ընթացքում ՀՀ կառավարության կողմից ոլորտում իրականացված բարեփոխումներն իրենց արտացոլումն են գտել նաև Համաշխարհային բանկի «Գործարարություն 2012. գործարարությունն ավելի թափանցիկ աշխարհում» զեկույցում, որի տվյալներով 2010թ. հունիսից մինչև 2011թ. մայիսն ընկած ժամանակահատվածում 183 երկրների շարքում Հայաստանը իրականացրել է կանոնակարգման և ինստիտուցիոնալ դաշտի թվով 5 բարեփոխում՝ ամենաշատը տարածաշրջանում և աշխարհում և 6 կետով բարելավել է դիրքը՝ զբաղեցնելով 55-րդ հորիզոնականը:

Վերոնշյալ բարեփոխումները, որոնք ուղղված են եղել Հայաստանի գործարար միջավայրի բարելավմանը, մասնավորապես ներառում են՝

- Ապրիլից Եվրոպական չափանիշներին համապատասխան և տեխնիկապես հագեցած տարածքում

գործում է ընկերությունների գրանցման «Մեկ պատուհանի կանգառ» սկզբունքով ծառայությունների մատուցման կենտրոնը, որտեղ, ի թիվս այլ ծառայությունների՝ ֆիրմային անվանումների փորձաքննությունը, ՀՎՀՀ-ի տրամադրումը և սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարի (ապահովադիր) տրամադրումը նույնպես իրականացվում է Ռեգիստրի կողմից, ինչի արդյունքում էականորեն կրճատվում է պետական գրանցման (հաշվառման) համար անհրաժեշտ ժամանակը և գործընթացը: Ներդրվել է իրավաբանական անձանց պետական գրանցման և անհատ ձեռնարկատերերի հաշվառման էլեկտրոնային համակարգ:

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարվել են փոփոխություններ, որոնց արդյունքում կազմակերպությունների պետական գրանցումը կլինի անվճար, արդյունքում՝ չի գանձվի ներկայումս գրանցման համար անհրաժեշտ 17000 դրամ պետական տուրքը:

- Թվով 39 օրենքներում վերացվել է տնտեսվարողների կողմից ներկայացվող փաստաթղթերի կնքված լինելու պահանջը:

- Ներդրվել է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային TWM համակարգը:

- Շահութահարկի կանխավճարները և շահութահարկի նվազագույն վճարումները կրճատվել են 8-ով: Այդ վճարումները կատարվում են եռամսյակային կտրվածքով (տարեկան 4 վճարում)՝ նախկին ամսականի փոխարեն (տարեկան 12 վճարում): Գույքահարկի և հողի հարկի վճարումները կրճատվել են 2-ով: Այդ վճարումները կատարվում են կիսամսյակային կտրվածքով (տարեկան 2 վճարում), նախկին եռամսյակայինի փոխարեն (տարեկան 4 վճարում):

- Գործատուների կողմից հարկային մարմին ներկայացվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվետվությունները կրճատվել են 8-ով: Այդ հաշվետվությունները ներկայացվում են եռամսյակային կտրվածքով՝ նախկին ամսականի փոխարեն:

- Երևանի քաղաքապետարանում ներդրվել է գույքի և հողի հարկերի վճարման առցանց համակարգ: Առցանց վճարումները կատարվում են Երևանի քաղաքապետարանի կայքի միջոցով: Հարկային մարմիններում ներդրվել է էլեկտրոնային համակարգ, որի արդյունքում՝ տնտեսվարողները հնարավորություն ունեն հարկային հաշվետվությունները ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով, ստեղծվել է էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրսգրման հնարավորություն:

- 2011թ. նոյեմբերի 10-ին հաստատվել է հարկային մարմնի գործունեության շրջանակներում ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը: Որոշմամբ կանոնակարգվում են հարկային մարմնի կողմից՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կիրառման հետ կապված ընդհանուր հարցերը: Ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրությունը կատարվում է ռիսկային չափանիշների հիման վրա՝ ըստ հարկ վճարողների առանձին, միատարր խմբերի:

- ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 2-ին ընդունվել է N 100-Ն որոշումը, համաձայն որի՝ Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի ընկերությունների համար շահութահարկը կիջեցվի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման համար ծախսվող միջոցների չափով գույքահարկի և հողահարկի գծով մինչև 2008թ. հունվարի 1-ն առաջացած ապառքները (չվճարված հարկերը) մի շարք օրենքներում փոփոխություն կատարելու մասին նախագծերով չեղյալ են հայտարարվելու: Ապառքների ընդհանուր գումարը մոտ 43 մլրդ դրամ է, որից՝ 16.4 մլրդ դրամ հողահարկ և 9.8 մլրդ դրամ հողահարկի տույժ ու տուգանք, ինչպես նաև՝ 11.6 մլրդ դրամ գույքահարկ և 6 մլրդ. դրամ գույքահարկի տույժ ու տուգանք:

- Կրճատվել են լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները՝ 169-ից դառնալով 96, որոնցից 12-ը պարզ, իսկ 84-ը՝ բարդ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են, ինչպես նաև ստեղծվել է լիցենզիաների ձեռքբերման էլեկտրոնային հնարավորություն:

- Համապատասխանության պարտադիր հավաստման գործընթացն իրականացվում է ոչ թե սահմանի վրա, այլ մաքսազերծումից հետո՝ մինչև իրացնելը: Չափման միջոցների տեսակի հաստատումն իրականացվում է մաքսազերծումից հետո մինչև իրացում կամ շահագործում: Կրճատվել են տնտեսվարողների կողմից ծագման երկրի սերտիֆիկատի ստացման գործընթացի համար ծախսվող ժամանակը և ծախսերը, մասնավորապես՝ սերիական արտադրության ապրանքների համար պարբերաբար ծագման երկրի սերտիֆիկատը կտրամադրվի միայն առաջին անգամ փորձաքննություն իրականացնելով: Ներդրվում է նաև ծագման երկրի սերտիֆիկատի ստացման համար փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային համակարգ: Ներդրվել է մաքսային հայտարարագրման էլեկտրոնային համակարգ և մաքսային հսկողության իրականացման ռիսկերի կառավարման համակարգ: Մաքսային վարչարարության պրակտիկայում վերացվել է նախկինում ներկայացվող ընդհանուր թվով 21 տեսակի դիմումների, տեղե-

կանքների, թույլտվությունների և համաձայնությունների կիրառությունը:

- Էլեկտրոնային եղանակով վճարված մաքսային հայտարարագրերի բացթողումն իրականացվում է նաև TWM համակարգում բացթողնման վերաբերյալ նշումով, որով հնարավոր է դառնում մոնիթորինգի ենթարկել մաքսային ձևակերպումների ժամանակահատվածը: Միաժամանակ, TWM համակարգում ստեղծվել է հաշվետվության ձև, որով հնարավոր կլինի հետբացթողումային հսկողության նպատակով ուսումնասիրության ենթակա գործարքների տեսակարար կշռի և «Կանաչ ուղի» ընթացակարգով բաց թողնված ապրանքների վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթացներն ավտոմատացնել:

- Պարզեցվել է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի Հայաստանի Հանրապետության մաքսատներում՝ որպես արտաքին տնտեսական գործունեության մասնակից գրանցվելու ընթացակարգը, մասնավորապես՝ վերացվել են մի շարք փաստաթղթերի ներկայացման պահանջը:

- Շինարարական օբյեկտները դասակարգվել են ըստ ռիսկայնության աստիճանի, դրան համապատասխան կանոնակարգվել են կառուցապատման ընթացակարգերը: Ցածր ռիսկայնության օբյեկտների համար էականորեն կրճատվել կամ միավորվել են պարտադիր քայլերը, ծախսերը և ժամկետները:

- Ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից տրվող օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները կառուցապատողին են տրամադրվում ճարտարապետահատակագծային առաջադրանքի հետ համատեղ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվողի կողմից:

- Ընդլայնվել է այն օբյեկտների ցանկը, որոնց համար քաղաքաշինական փորձաքննությունը կարող է փոխարինվել հեղինակի կողմից տրվող երաշխավորագրով:

- Օրենսդրորեն սահմանվել է տեխնիկապես ոչ բարդ օբյեկտների շինարարական աշխատանքների ինքնահավաստման մեխանիզմի ներդրումը՝ օրենսդրության, հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը կապալառուի երաշխավորագրով հավաստելու միջոցով:

- 2011 թվականին կատարված բարեփոխումների արդյունքում, շինարարական թույլտվություններ բաղադրիչով՝ 2012 թվականի «Գործարարությանը զբաղվելը» գնահատման սանդղակում Հայաստանը բարելավել է իր վարկանիշային ցուցանիշը 38 տեղով, 183 երկրների շարքում զբաղեցնելով 57-րդ հորիզոնականը:

- ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում ներդրվել է պարտապանի գույքի հարկադիր իրացման աճուրդների իրականացման էլեկտրոնային համակարգ:

- Նախկինում չափագրված գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը կատարվում է առանց հողամասի չափագրման աշխատանքներ կատարելու և դրա դիմաց վճար գանձելու: Գույքի գրանցման էլեկտրոնային համակարգի ներդրումը գտնվում է ավարտական փուլում: ՀՀ կառավարության կողմից ընդունվել են նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևեր, որոնց միջոցով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը իրականացվում է առանց պայմանագրերի նոտարական վավերացման՝ Ռեգիստրի կողմից: 2012թ. հունվարի 1-ից կադաստրի աշխատակիցները անշարժ գույքի չափագրման աշխատանքներ չեն իրականացնում, այս գործառնությունը մասնավորեցվել է, և աշխատանքները իրականացնում են համապատասխան որակավորման վկայականներ ստացած՝ մասնավոր հատվածի ներկայացուցիչները, իսկ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման համար դիմումները կարող են ներկայացվել քաղաքացիներից դիմումների ընդունման և ավարտական փաստաթղթերի (վկայականներ, տեղեկանքներ) տրամադրումը իրականացնող սպասարկման ցանկացած գրասենյակ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից:

- Դատախրավական բարեփոխումների ծրագրի շրջանակներում ստեղծվել է «ԴատաԼեքս» հանրային տեղեկատվական համակարգը, որը նախատեսված է դատական բնագավառի մի շարք ծառայությունների առցանց տրամադրման համար:

- ՀՀ Կենտրոնական բանկն ընդունել է մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության գաղտնիության ապահովմանը, վարկային բյուրոների լիցենզավորմանը, բարձրացվել է վարկային տեղեկատվության հասանելիությունը:

- ՀՀ բոլոր առևտրային բանկերի կողմից տրամադրվում են ընդհանուր նկարագրով գրավներ:

- Ընդունվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով կատարելագործվում են շահագրգռվածության առկայությամբ իրականացված գործարքների բացահայտման մեխանիզմները, և ընդլայնվում տնօրենների պատասխա-

նատվությունը: ՀՀ կառավարության կողմից հաստատվեց 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերություններում Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրման ժամանակացույցը: Տպագրվում է կանոնագրքի ներդրման ուղեցույցը և տարեկան հայտարարագրի նմուշօրինակը:

Ներկայումս ՀՀ կառավարությունը շարունակում է բարեփոխումների իրականացումը, մասնավորապես, հարկային հավասարակշռված քաղաքականության իրականացման նպատակով 2011թ. դեկտեմբերին ընդունվել են հարկային և հարակից մի շարք օրենքներ, մասնավորապես՝ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով մի շարք տնտեսական գործունեության տեսակներ 2012թ. ապրիլի մեկից համարվելու են արտոնագրային վճար վճարողներ, մասնավորապես՝ հյուրանոցային տնտեսությունները, հասարակական սննդի օբյեկտները և ծառայությունների մատուցման ոլորտի մի շարք գործունեության տեսակներ:

Համայնքային բնապահպանական ծրագրեր

Բնապահպանական հիմնախնդիրների լուծմանն ուղղված պետության և գործարար/մասնավոր հատվածի համագործակցության դրսևորման նոր հնարավորություններ է ընձեռում ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2001թ. մայիսի 15-ին ընդունված «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքը, որի կիրարկման շրջանակներում խոշոր լեռնամետալուրգիական ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարները հատկացվում են ազդակիր համայնքներին՝ բնապահպանական և առողջապահական միջոցառումների ֆինանսավորման համար:

Ներկայումս «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն, բնապահպանական ծրագրերի իրականացման համար մասհանումներ ստանալու իրավունք ունեն Լոռու (6 համայնք), Սյունիքի (13 համայնք), Արարատի (1 համայնք), Կոտայքի (4 համայնք), Գեղարքունիքի (1 համայնք) և Արմավիրի (1 համայնք) մարզերի ընդհանուր թվով 26 համայնքներ և Երևան քաղաքը:

ՀՀ 2007-2011թթ. պետական բյուջեների կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար համայնքներին տրամադրված սուբվենցիաների ընդհանուր ծավալը կազմել է **733.7** մլն.դրամ, այդ թվում՝

Աղյուսակ 2.1. Համայնքներին տրամադրված սուբվենցիաները, 2007-2011 թթ.

Ցուցանիշներ	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
Համայնքներին տրամադրված սուբվենցիայի գումարների ծավալը (հազ.դրամ)	49 144,7	114 318,8	205 646,0	213 548,6	151 226,5
Սուբվենցիայի գումարներ ստացած համայնքների թվաքանակը (համայնք)	7	5	7	11	11

Գործող համակարգի արդյունավետության մասին է վկայում նաև այն փաստը, որ համայնքներին տրամադրվող սուբվենցիաների ծավալը շարունակական աճի միտում ունի, դրա մասին է վկայում ՀՀ 2012թ. պետական բյուջեով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար նախատեսված մասհանումների 277.0 մլն.դրամ ծավալը:

ՀՀ 2007-2011թթ. պետական բյուջեների կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար համայնքներին տրամադրված սուբվենցիաների հաշվին կատարված կարևոր և խոշոր բնապահպանական ծրագրերի շարքում արժանի են հիշատակման՝

- Կանաչապատման աշխատանքները Երևանի Էրեբունի և Կենտրոն վարչական շրջաններում (2011թ.)
- Ալավերդու համայնքի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցում (2011թ.)
- Հաղպատ գյուղի գազաֆիկացման ներքին ցանցի բարելավում (2009-2011թթ.)
- Օձուն համայնքում անտառային տարածքների վերականգնման և խնամքի աշխատանքներ, «Ձաղաց» թաղամասի հեղեղատարների մաքրում, կոյուղագծի կառուցում և նորոգում, նախակրթարաններում ջեռուցման լոկալ համակարգերի տեղադրում (2010-2011թթ.)

- Ախթալա համայնքի կանաչապատ տարածքների վերականգնում 2010-2011թթ.)
- Մեծամոր քաղաքի սանիտարական վիճակի բարելավում /աղբահանման մեքենայի ձեռքբերում (2011թ.)
- Քաջարան համայնքում արևային ջրատաքացուցիչ համակարգի ձեռքբերում և տեղադրում համայնքի մանկապարտեզում (2010թ.)
- Կապան քաղաքում սեպտիկ թափոնների և սրածայրերի թաղման փոսի կառուցում (2010թ.)
- Կանաչ տարածքների ընդլայնում Ագարակ համայնքում (2010թ.):

2.2 Պետական կառույցներ և հասարակայնություն.

Կայուն զարգացման սկզբունքները որպես հանրային կառավարման հիմք

Կայուն զարգացման սկզբունքների որդեգրումից հետո ՀՀ կառավարությունը հետևողական քաղաքականություն է իրականացրել հանրային կառավարման և որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցության ապահովման համար: Կայուն քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնական ուղիներից մեկը երկխոսության միջոցով հասարակության տարբեր հատվածների շահերի կոնսենսուսի նվաճումն է զանազան հասարակայնորեն կարևոր հիմնախնդիրների շուրջ: Հասարակություն-իշխանություններ փոխհարաբերությունների կառուցումն առավել ուշադրություն է պահանջում քաղաքական կայունությունն ու հասարակական զարգացումները խաթարող տնտեսական ճգնաժամի դեպքում: Այս խնդրի գիտակցումը խթանել է այդ ուղղությամբ ֆորմալ առումով բավական լուրջ հնարավորությունների և համարժեք իրավական հիմքերի ու ինստիտուցիոնալ մարմինների ստեղծմանը: Այսպես օրինակ.

ՀՀ Նախագահի 2008թ. հունիսի 12-ի հրամանագրով՝ հասարակական-քաղաքական երկխոսությունը խթանելու նպատակով ստեղծվել է **Հանրային խորհուրդը:**

ՀՀ Ազգային Ժողովում հանրային լսումների և քննարկումների ինստիտուտը: ՀՀ Ազգային Ժողովի կանոնակարգ օրենքով սահմանված կարգով ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի ղեկավարի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների /ՔՀԿ/ ոչ ֆորմալ միավորում հանդիսացող «Հանրային ցանցի» միջև 2010թ. ստորագրվել է համագործակցության հուշագիրը, որի հիման վրա ՔՀԿ հնարավորություն ունեն ներգրավվել ԱԺ-ում օրենքների ընդունման գործընթացին:

ՀՀ վարչապետին առընթեր գործում են՝

Գործարարության աջակցման խորհուրդ: Ստեղծվել է գործարարության աջակցման, ներդրումների խթանման և վարչարարական խոչընդոտների վերացման նպատակով: Խորհուրդը նախագահում է ՀՀ վարչապետը:

ԱՀՌԾ-ԿԶԾ կառավարման խորհուրդ

2000թ.-ից՝ «Աղքատության կրճատման ռազմավարական ծրագիրը, իսկ 2009թ.-ից՝ «Կայուն զարգացման ծրագիրը» համակարգող խորհուրդ: Երկուսն էլ ռազմավարական որոշումներ կայացնող մարմիններ էին, որոնցում ընդգրկված են թե՛ պետական, թե՛ քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներ՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ:

Կայուն զարգացման խորհուրդ/ԿԶԱԽ/

Ստեղծվել է 2002թ. ՀՀ Կառավարության որոշմամբ: ՀՀ վարչապետի նախագահությամբ ԿԶԱԽ-ի գործունեությունը ակտիվացել է 2007 թ.-ից: 2008թ. հունիսի 18-ի թիվ 68-124 արձանագրությամբ հաստատվել են Խորհրդի կանոնադրությունն ու կազմը: ԿԶԱԽ-ում ընդգրկված են պետական մարմինների ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մինչ այսօր կայացել են ԿԶԱԽ-ի 8 նիստ, որտեղ հասարակական կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ ներկայացվել ու քննարկվել են կայուն զարգացման առնչվող կարևոր հարցեր, նաև «Ռիո+20» գագաթաժողովին ազգային մակարդակով նախապատրաստական գործընթացը:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ

Ստեղծվել է 2004թ.-ին ՀՀ Նախագահի հրամանագրով՝ ելնելով Հայաստանի Հանրապետությունում հակակոռուպցիոն քաղաքականության ամբողջական և արդյունավետ իրականացման համար պետական լիազորված մարմինների գործունեության համադրման անհրաժեշտությունից և կոռուպցիայի առաջացման ու տարածման պատճառները վերացնելու, դրանց կանխարգելման ուղղությամբ տարվող պետական

քաղաքականությունը կատարելագործելու նպատակով: Խորհրդի կանոնակարգի համաձայն՝ ստեղծվել է նաև Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողով՝ ՀՀ Նախագահի օգնականի նախագահությամբ:

Ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդ

Ստեղծվել է 2009թ.-ին ՀՀ վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ազգային երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման, երիտասարդների մասնակցության խթանման նպատակով:

Խորհրդի կազմի մեջ հավասար թվով ընդգրկվում են երիտասարդության խնդիրներին առնչվող պետական մարմինների և ազգային երիտասարդական քաղաքականության ոչ պետական հատվածի ներկայացուցիչներ:

Կանանց հարցերով խորհուրդ

Ստեղծվել է 2000թ.-ին ՀՀ վարչապետի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում կանանց հիմնահարցերի լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքները համակարգելու նպատակով: Խորհրդի կազմում ընդգրկվել են գործադիր և օրենսդիր իշխանության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների և մշակույթի բնագավառի առավել աչքի ընկնող կին գործիչներ:

ՀՀ Գլխավոր դատախազություն

2010թ. հունիսի 10-ին Դատախազության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ոչ ֆորմալ միավորում հանդիսացող «Հանրային ցանցի» միջև ստորագրված համագործակցության հուշագիր՝ ոլորտի քաղաքականությունների, օրենսդրական բարեփոխումների, դրանց իրականացման մշտադիտարկման մասնակցության և հանրային իրազեկման շուրջ:

2011թ. հուլիսի 20-ին Դատախազության և Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների ազգային զարգացման ցանցի միջև ստորագրված համագործակցության հուշագիր՝ կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում:

Դատական համակարգի բարեփոխումներ

Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են աշխատանքներ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի վրա, որի հայեցակարգն արդեն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից: Մշակման փուլում են ՀՀ վարչական դատավարության, և ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքերի նախագծերը, Միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ ավարտին են հասցվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի աշխատանքները: Այն ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 2011թ. դեկտեմբերի 8-ին: Լրամշակվում է նաև «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը:

Ներդրվել և գործում է Ինքնասպասարկման կիսակների ծրագրային համակարգը (Դատալեքս), որը նախատեսված է առցանց հանրությանը մի շարք ծառայություններ մատուցելու համար, որոնք են՝ դատական գործերի որոնում, պետական տուրքերի վճարում, անհրաժեշտ տեղեկատվություն, ՀՀ Սահմանադրություն և Օրենքներ:

Աջակցություն Հայաստանում արդարադատության մատչելիությանը Եվրոպայի Խորհրդի և Եվրոպական հանձնաժողովի համատեղ ծրագրի աջակցությամբ այժմ խորը ուսումնասիրություններ են կատարվում կոլեկտիվ հայցերի ինստիտուտի ներդրման ուղղությամբ, պատրաստվել է համապատասխան օրենքի նախագիծ, որը փորձաքննություն է անցել ԵԽ փորձագետների կողմից: Նույն ծրագրի շրջանակներում ուսումնասիրություններ են կատարվում նաև դատարաններում գործերի պատահական ընտրության մեխանիզմների ներդրման ուղղությամբ: Վերը նշված ծրագրի շահառուներն են ՀՀ արդարադատության նախարարությունը (հիմնական շահառու), Փաստաբանների պալատը և ՀՀ դատական դեպարտամենտը:

Տեղական մակարդակի մասնակցային ինստիտուտներ են.

- «Ուսանողական, ծնողական և աջակերտական խորհուրդները», որոնք ստեղծվում և գործում են «Կրթության մասին» ՀՀ օրենքով և համապատասխան կրթական կառույցի ներքին կանոնակարգերով:

- Տեղական ինքնակառավարման մակարդակում

Տեղական ինքնակառավարման մակարդակում հանրային մասնակցության իրավական հիմքերն ամրագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև սահմանվում են առան-

ձին համայնքների կանոնակարգերով: Ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակում հանրային մասնակցությունը զարգացման փուլում է և ունի նույն առաջընթացն ու մարտահրավերները:

Հանրային մասնակցությունն ապահովվում է պետական կառավարման տեղական կառույցների միջոցով, ազգային մակարդակում գործող իրավական ակտերի շրջանակում համայնքային քաղաքականության մշակման և իրականացման, համայնքային խնդիրների բարձրացմանը և լուծմանն ուղղված ժողովրդավարական սկզբունքով: Տեղական մակարդակում ուղղակի ժողովրդավարության ձևերից են նաև՝

- տեղական հանրաքվեն,
- հանրային նախաձեռնությունը,
- քաղաքացիների հանձնաժողովը,
- համայնքային ժողովը,
- հանրային լսումները,
- խնդրագիր/պահանջագիրը,
- համացանցային (ինտերնետային) հաղորդակցությունը,
- շուկայական կառուցակարգերը/Մասնավոր հատվածի ներգրավումը տեղական մակարդակում հանրային ծառայությունների մատուցման ոլորտ զգալիորեն բարձրացնում է դրանց արդյունավետությունը,
- հանրային իրազեկումը և այլն:

Մարդու իրավունքների իրականացումը՝ կայուն զարգացման տեսակետից

Մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքներն ամրագրված են ՀՀ Մահմանադրությամբ, իսկ դրանց կիրառման իրավական երաշխիքները՝ համապատասխան օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով: Վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը իրավական դաշտի բարեփոխումներն իրականացնելու նպատակով ընդունել է մի շարք կարևոր փաստաթղթեր, այդ թվում՝ ՔՀԿ համայնքի զարգացմանն ուղղված քաղաքականությունը, մասնավորապես, ազգային և տեղական կառավարման մակարդակում հանրային մասնակցության ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովումը բարելավելու նպատակով ընդունվել են՝ նոր ՀՀ քրեական օրենսգիրքը /2003թ./, նոր ՀՀ աշխատանքային օրենսգիրքը /2004թ./, ՀՀ դատական օրենսգիրքը /2007թ./, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» /2003թ./, «Տեղեկատվության ազատության մասին» /2003թ./ ՀՀ օրենքներ և բազմաթիվ այլ իրավական ակտեր:

Ներկայումս մշակման փուլում է գտնվում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը:

Աշխատանքի և զբաղվածության իրավունք

ա) 2009թ. կնքվել է Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր, որը ստորագրել են՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահը և Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահը: Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կնքումն առաջին քայլն է աշխատանքի ոլորտում Հայաստանի Հանրապետությունում սոցիալական գործընկերության և սոցիալական երկխոսության ինստիտուտների ներդրման գործում:

բ) Աշխատանքի միջազգային կազմակերպության «Արժանապատիվ աշխատանք» ծրագրի շրջանակներում ընդունվել է 2007-2011թթ. համապատասխան ծրագիրը, որի գերակայություններն են՝

- զբաղվածության քաղաքականության կատարելագործում,
- սոցիալական գործընկերության ամրապնդում,
- սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործում:

2005թ. ընդունվել է «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության զբաղվածության իրավական հիմքերը, բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության սկզբունքները, աշխատանքի և զբաղվածության ազատ ընտրության և գործազուրկների սոցիալական պաշտպանության պետական երաշխիքները: Զբաղվածության բնագավառում պետական աջակցման ակտիվ քաղաքականությունը միտված է լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը:

Աշխատանքային իրավունքի առնչությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները բխում են վավերացված միջազգային պայմանագրերից /Հավելված 4/:

Առողջապահության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունք

Ընդունվել է ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2008-2013թթ. Ռազմավարությունը, որով ամրագրվում է ՀՀ կառավարության քաղաքականությունը այս ոլորտում: ՀՀ կառավարության ԿԶՕ-ի համաձայն պետական գերակայությունն են շարունակելու մնալ առողջապահական ծառայությունների հասանելիության և մատչելիության աստիճանի բարձրացումն ու որակի շարունակական բարելավումը՝ հատուկ շեշտադրելով տարածքային կտրվածքով առանցքային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումն ու բնակչության ըստ կենսամակարդակի տարբեր խմբերի կողմից առողջապահական ծառայությունների օգտագործման հաճախականությունների միջև առկա տարբերությունները:

Բավարար կենսամակարդակի իրավունք

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: 2005թ. ընդունվեց «ՀՀ պարենային ապահովության քաղաքականությունը», 2006թ.-ին՝ «ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը»:

Հայաստանը 2003թ. փետրվարից Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) լիիրավ անդամ է: Անդամակցության շրջանակներում ստանձնած պարտավորությունների համաձայն իրականացվել է հարկային օրենսդրության, ներքին շուկայի մատչելիության բարձրացման, միջպետական առևտրում խտրականության բացառման, ներքին համախառն աջակցության (սուբսիդավորման) ուղղությունների հստակեցումը, հարցին առնչվող միջազգային համաձայնագրերի դրույթների կատարմանն ուղղված ՀՀ օրենսդրության կատարելագործումը:

Որոշումների ընդունման գործընթացում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների, մասնակցության և հնարավորությունների ապահովման ուղղությամբ՝

- վավերացվել են «Կանանց քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, Եվրոպայի Խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիան,

- կազմակերպվել են կանանց լիդերության և սեփական իրավունքների պաշտպանության տեխնոլոգիաների ուսուցման դասընթացներ,

- 2005թ.-ի մայիսի 19-ի «ՀՀ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի ընտրություններում կուսակցությունների առաջադրած թեկնածուների ցուցակներում կանանց նվազագույն քվոտան 5%-ից բարձրացվել է մինչև 15%,

- մշակվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Կանանց նկատմամբ բռնության երևույթի վերացման ուղղությամբ՝

- կազմակերպվել են բռնության ենթարկված կանանց հետ աշխատող սոցիալական աշխատողների, առողջապահական, կրթական համակարգի մասնագետների և իրավապահ մարմինների վերապատրաստման և ուսուցման համալիր դասընթացներ,

- մշակվել է «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,

- ամեն տարի ՄԱԿ-ի կառույցների, միջազգային այլ կազմակերպությունների աջակցությամբ, ՀԿ-ների և պետական կառույցների մասնակցությամբ կազմակերպվել է «Ակտիվության 16-օրյակ ընդդեմ գենդերային բռնության» քարոզարշավը, իսկ 2008թ. ՀՀ Կառավարության նախաձեռնությամբ կազմակերպվել է «Վերջ բռնությանը կանանց նկատմամբ» կարգախոսով քարոզարշավը:

Ազգային փոքրամասնությունների իրավունքներ

2000թ.-ից գործում է ՀՀ Նախագահի կարգադրությամբ Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհուրդը, որի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում՝

- ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը,

- ազգային փոքրամասնությունների իրավունքներին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,

- ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների առնչությամբ իրավական ակտերի նախագծերի քննարկումը, վերլուծությունը և առաջարկությունների պատրաստումը,

- ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային ծրագրերին առնչվող հարցերի քննարկումը:

Հանրային խորհրդի 12 հանձնաժողովներից մեկն է Ազգային փոքրամասնությունների հարցերի հանձնաժողովը, որում ընդգրկված են ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: 2003թ. ՀՀ կառավարության աշխատակազմում ստեղծվել է ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը:

- ՀՀ կառավարության 22 ապրիլի 2004թ. թիվ 565-Ա որոշմամբ տարածք է հատկացվել ազգային փոքրամասնությունների մշակութային կենտրոնի ստեղծման համար: Այժմ միջոցներ են փնտրվում այդ տարածքը իր գործառույթներին համապատասխան տեսքի բերելու համար:

- Զգալիորեն ընդլայնվել է ազգային փոքրամասնությունների իրավունքների իրազեկման շրջանակը (ուսուցում, ձեռնարկների հրատարակում, պարբերական խորհրդակցություններ ազգային փոքրամասնությունների շահերը ներկայացնող ՀԿ-ների և լիդերների հետ, այցելություններ ազգային փոքրամասնությունների համայնքներ):

- Ազգային փոքրամասնությունների իրավունքները արտացոլված են ՀՀ մի շարք օրենքներում, մասնավորապես, «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված է, որ ազգային փոքրամասնությունների համայնքներում ընդհանուր կրթությունը և դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով պետական ծրագրերով և պետության հովանավորությամբ հայերենի պարտադիր ուսուցմամբ: Իսկ այդ օրենքի հոդված առաջինը հռչակում է, որ «Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է իր տարածքում ազգային փոքրամասնությունների կողմից իրենց լեզվով ազատ օգտագործումը»:

Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Անկախությունից հետո անցած տարիներին Հայաստանը լուրջ քայլեր է ձեռնարկել երկրում կրոնական բազմազանությունն ապահովելու ուղղությամբ: Եթե 1997թ. երկրի պետական ռեգիստրում գրանցված էին 14 կրոնական կազմակերպություններ, ապա ներկայումս դրանց թիվը հասել է 70-ի:

Հայաստանում պետական պաշտպանության տակ են առնված Հայաստանի Հանրապետության տարածքի բոլոր պատմաճարտարապետական, մշակութային և կրոնական կառույցները, անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից:

Լրատվամիջոցների ոլորտ

2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ հոդվածում ամրագրված տեղեկատվության ազատության ապահովման հիմնական սկզբունքները կարևոր երաշխիք են հանդիսանում տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացման գործում:

Խոսքի ազատության երաշխիքները ՀՀ օրենսդրության մեջ հնարավորինս լայն արտացոլում ստացան 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, ՀՀ Մահմանադրությունը լրացվեց 83.2 հոդվածով, որը սահմանեց, որ հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը ընտրվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով:

Երիտասարդական քաղաքականության ներկայիս ինստիտուցիոնալ վիճակը, զարգացման հեռանկարները

ՀՀ-ում պետական երիտասարդական քաղաքականությանը, որպես համակարգված քաղաքականություն, իրականացվում է 1995թ.-ից: Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման պետական լիազոր մարմինը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է, որի կազմում գործում է երիտասարդական քաղաքականության վարչությունը:

ՀՀ վարչապետի 2009թ. սեպտեմբերի 17-ի N 785-Ա որոշմամբ ստեղծվել է ՀՀ վարչապետին առընթեր ազգային երիտասարդական քաղաքականության խորհուրդը, որի նպատակն է ՀՀ-ում ազգային երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանն աջակցելը, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելը և երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելը:

Հաշմանդամների իրավունքներ

Հաշմանդամների և հաշմանդամության ոլորտում տարվող սոցիալական քաղաքականությունը նպատակաուղղված է հաշմանդամների սոցիալական պաշտպանությանը բոլոր բնագավառներում, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելուն, նրանց համար կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ստեղծմանն ու հավասար հնարավորությունների ապահովմանը:

Հայաստանը 2010թ. միացել է ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիային:

Հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացվող զբաղվածության ապահովման ծրագրերից: Երկրում գործում է Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը:

Հաշմանդամների սոցիալական աջակցության ծրագրերի շարքում կարևորվում է սոցիալական ձեռնարկությունների հիմնումը, որն ուղղված է մի կողմից հաշմանդամ անձանց սոցիալական խնդիրների լուծմանն ու նրանց համար հնարավորինս հավասար պայմանների ապահովմանը, մյուս կողմից՝ նրանց աշխատանքային ներուժը հասարակությանը ի շահ ներդնելուն:

Իրականացվում են աշխատանքներ հատուկ կրթության կարիք ունեցող անձանց համար նախատեսված միջոցառումների և ներառական կրթության ընդլայնման և բարելավման ուղղությամբ:

2003թ.-ից սկսած հանրապետությունում ներդրվել է ներառական կրթության գաղափարը:

2012թ. դրությամբ հանրապետության 60 հանրակրթական դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպում իրականացվում է 24 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Տարեցտարի բարելավվում է հաշմանդամներին մատուցվող պրոթեզաօրթոպեդիկ օգնության և վերականգնողական պարագաների տրամադրման ծառայությունների որակը, ընդլայնվում դրանց տեսականին:

Հաշմանդամներին մատուցվում են անվճար բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ: Հաշմանդամների սոցիալական պաշտպանության բնագավառում կարևոր տեղ ու դեր ունի հաշմանդամներին խնամքի և սոցիալական սպասարկման տրամադրման ծառայությունների համակարգը:

Աշխատանքներ են կատարվել հաշմանդամների հաղորդակցման խոչընդոտները հաղթահարելու նպատակով: Լսողական խանգարումներ ունեցող հաշմանդամները ստանում են լսողական սարքեր: Սկսած 2006թ.-ից տեսողության խանգարումներ ունեցող հաշմանդամների համար տպագրվել են Բրայլյան տետրեր, Բրայլյան գեղարվեստական գիրք, Խոսող գրքեր, «Բյուլետեն» ամսագիր:

2002թ.-ից ներդրվել է հաշմանդամների վերականգնման անհատական ծրագրի գաղափարը, որն առավել հասցեական և արդյունավետ է դարձնում հաշմանդամի վերականգնման գործընթացը:

Վերջին տարիներին ակտիվացել են հաշմանդամների հարցերով հասարակական կազմակերպությունները, որոնց հետ հաջողությամբ համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: 2002-2003թթ. նախարարության և հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների նախաձեռնությամբ Երևան քաղաքի փողոցների և մայրերի վերակառուցման ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացվել են հաշմանդամների համար մատչելիությունը ապահովող միջոցառումներ (կենտրոնական փողոցներում, խաչմերուկներում, սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների մոտակայքում կառուցվել են թեքահարթակներ):

Կոռուպցիա և անօրինական գործունեության այլ ձևեր

Կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի Հանրապետությունն ունի սերտ համագործակցություն միջազգային իրավական հարթության վրա: Հայաստանի Հանրապետությունը միացել է անդամակցում է այս բնագավառում գործող կարևորագույն միջազգային իրավական փաստաթղթերին /Հավելված 4/:

Սերտ համագործակցություն կա ԵՄ GRECO-ի խմբի հետ, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքում կոռուպցիոն հանցագործությունների առավել ընդգրկուն ամրագրման հետ: ՀՀ արդարադատության նախարարությունում մշակվել է ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2009թ. հոկտեմբերի 8-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի՝ կոռուպցիայի դեմ պայքարի քրեականացման միջոցները բաժնի, 98-րդ կետի պահանջներով: Մասնավորապես՝ հիշյալ որոշմամբ հաստատված «Ծրագրի» 98-րդ կետի համաձայն, որպես հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման միջոցառում, նախատեսվում է ամբողջականացնել և որոշակիացնել կոռուպցիոն հանցա-

գործությունների շրջանակը: Արդեն իսկ գործում է իրավական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման ինստիտուտը, որը՝ ի թիվս այլ բնագավառների, նախատեսում է նաև իրավական ակտերի նախագծերի կոռուպցիան ռիսկերի գնահատում:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը

2004թ. Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի /ՄԻՊ/ ինստիտուտի հիմնադրումը նշանակալից քայլ էր՝ ուղղված երկրում մարդու իրավունքների կանոնակարգված իրականացման և պաշտպանության գործին: «Մարդու իրավունքների պաշտպանի» մասին ՀՀ օրենքը սահմանել է Պաշտպանին՝ որպես անվտանգ և անկախ պաշտոնատար անձ, ով պաշտպանում է մարդկանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, որոնք խախտվել են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից: 2005թ. Սահմանադրական փոփոխությունները ընձեռեցին ՄԻՊ ինստիտուտին սահմանադրական կարգավիճակ:

Կառավարական մարմինների կապը հասարակության հետ

Երկրում շարունակվում է քաղաքացիական հասարակայնության կայացման գործընթացը, որն ըստ էության, երկարաժամկետ բնույթի է և որի ձևավորմանը մեծապես նպաստում է Հայաստանի կողմից 2001թ. վավերացված «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ-ի Օրհուսի կոնվենցիան:

Վերջին տասնամյակում զգալիորեն ակտիվացել են հասարակական կազմակերպությունները, որոնք իրազեկ են Օրհուսի կոնվենցիայի, դրանով կարգավորվող հասարակության իրավունքների, մասնավորապես որոշումների կայացման գործում հասարակայնության մասնակցության վերաբերյալ: Օգտվելով Օրհուսի կոնվենցիայով իրենց վերապահված իրավունքներից, հասարակական կազմակերպությունները մտահոգված լինելով բնապահպանական խնդիրներով ու դրանց անբավարար լուծումներով, հրապարակայնորեն ներկայացնում են իրենց մտահոգությունը, ընդհուպ մինչև Օրհուսի կոնվենցիայի քարտուղարություն դիմելով:

Թեև Օրհուսի կոնվենցիայի իրականացման ուղղությամբ երկրում կատարված է զգալի աշխատանք, առկա են դեպքեր, որոնք անհանգստություն են առաջացնում հասարակության մոտ: Օգտվելով իրենց վերապահված իրավունքից, Հայաստանի ՀԿ-ների կողմից Կոնվենցիայի քարտուղարություն ուղարկվել էր 2 բողոք՝ կապված Երևանի Դավմայի այգիների կառուցապատման (2002թ.) և Թեղուտի հանքավայրի շահագործման հետ (2009թ.), որոնց հիման վրա Կոնվենցիայի Կողմերի կոնֆերանսները ընդունել են համապատասխան որոշումներ/առաջարկություններ:

2011թ. կայացած Օրհուսի կոնվենցիայի Կողմերի 4-րդ կոնֆերանսը բարձր գնահատեց 2008-2010թթ. ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացված միջոցառումները և հաստատեց Օրհուսի կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երրորդ Ազգային զեկույցը: Դրական գնահատվեց նաև Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը շարունակելու քայլեր ձեռնարկել ՀՀ օրենսդրությունը Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Դրա հետ մեկտեղ, կապված ՀԿ-ների 2009թ. բողոքի հետ, Կողմերի Կոնֆերանսը Հայաստանի վերաբերյալ ընդունված որոշմամբ առաջարկություններ ներկայացրեց երկրին՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել կոնվենցիայի պատշաճ կատարումն ապահովելու համար: Կողմերի կոնֆերանսի առաջարկությունների կատարման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

1. ՀՀ վարչապետի որոշմամբ 2011թ. ստեղծվել է «Օրհուսի կոնվենցիայից բխող ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի մշակման, դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողությունների համակարգման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով»: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են ՀԿ-ների կողմից առաջարկված ներկայացուցիչներ: ՀՀ վարչապետի կողմից հաստատվել է Հանձնաժողովի Կանոնակարգը,

2. Հանձնաժողովը հաստատել է Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպման առաջարկությունների իրականացման գործողությունների 10 կետից բաղկացած ծրագիրը, որում, մասնավորապես, ընդգրկված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ Նախագահի կողմից վերադարձվել է ՀՀ Ազգային Ժողով՝ լրավճակման համար: Ներկա դրությամբ գործողությունների ծրագրի որոշ կետերն արդեն իսկ կատարվել են՝

- վերափոխվել է ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը,

- ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է «Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող ՀՀ պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկ»-ը, որտեղ ընդգրկված են նաև Օրհուսի կոնվենցիայի կատարման միջոցառումները:

Ի լրումն.

- 2002թ.-ից ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի օժանդակությամբ Հայաստանում ստեղծվել են 15 Բնապահպանական հասարակական տեղեկատվական կենտրոններ (Օրհուս-կենտրոններ): Կենտրոնների առաքելությունն է պետական մարմինների ու հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի (տեղական ինքնակառավարման մարմիններ, բիզնես սեկտոր, գիտնականներ, ՋԼՄ-ներ) միջև կապի և անհրաժեշտ մեխանիզմների ստեղծումը՝ էկոլոգիական տեղեկատվության տարածման, ինչպես նաև բնապահպանական խնդիրների շուրջ քննարկումներին հասարակայնության մասնակցությունն ապահովելու համար:

- Համաձայնեցման փուլում է «Հայաստանի Օրհուս-կենտրոններ» հիմնադրամ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Փաստաթղթի հաստատման արդյունքում կհստակեցվեն Օրհուս-կենտրոնների իրավական կարգավիճակը, դրանց իրավունքներն ու պարտականությունները՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխան:

- Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ և ԵԱՀԿ-ի գրասենյակի աջակցությամբ 2008թ.-ից իրավագիտության ֆակուլտետի բազայի հիման վրա գործում է «Էկոլոգիական իրավունքի գիտակրթական կենտրոն»-ը: Նշված կենտրոնը ապահովում է համալսարանի, այլ բուհերի, ՀԿ-ների, լրագրողների, բնապահպանական տեսչության, դատավորների համար ուսուցման դասընթացների կազմակերպումը՝ կապված ազգային էկոլոգիական իրավունքի և Օրհուսի կոնվենցիայի դրույթների հետ:

- ՀՀ նախարարությունների կազմում գործում են հասարակայնության հետ կապերի բաժինները, որոնց հիմնական խնդիրն է նախարարությունների՝ հասարակության հետ կապերի ամրապնդումը, տեղեկատվական քաղաքականության ձևավորումն ու իրականացումը:

Տեղեկատվության և իրազեկման որոշակի միջոցներ են նաև հանրային լսումները: Շահագրգիռ հասարակական կազմակերպությունները, քաղաքացիները ակտիվորեն մասնակցում են հանրային լսումներին, որոնց արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով, Օրհուս-կենտրոնների էլեկտրոնային կայքերում և այլն:

Ոլորտի հետ կապված հիմնախնդիրներն ու մտահոգությունները

• *Անբավարար է իրականացվում Օրհուսի կոնվենցիայի արդարադատության մատչելիության սկզբունքը: Առկա են բազմաթիվ օրինակներ, երբ էկոլոգիական ՀԿ-ները չեն կարողանում պաշտպանել բնության և/կամ բնակչության էկոլոգիական իրավունքները դատարանում, քանզի ճանաչվում են «ոչ պատշաճ հայցվոր»:*

• *Երբեմն լիարժեք մշակված չեն նաև համապատասխան օրենսդրության և միջազգային կոնվենցիաների կիրարկման/իրականացման մեխանիզմները: Ուստի, հաճախ էկոլոգիական հանրությունը ստիպված է պայքար ծավալել վերոհիշյալ էկոլոգիական օրենսդրության և կոնվենցիաների պահանջներն ու մշակված ծրագրերը պրակտիկայում իրականացնելու համար:*

• *Առկա է քաղաքական հասարակության կազմակերպությունների /ՔՀԿ/ համայնքի գործունեությունը կանոնակարգող օրենսդրության անկատարություն, մասնավորապես, կամավորության ինստիտուտի և ֆինանսական այլընտրանքային աղբյուրների ձևավորման ու զարգացման համատեքստում, ինչպես նաև բացակայում է ՔՀԿ համայնքի զարգացման պետական ռազմավարությունը,*

• *Բացակայում են մասնակցային կառույցների ձևավորման հստակ ընթացակարգերը, առկա են գործառույթների որոշ կրկնություններ:*

3. Դեպի «Կանաչ տնտեսություն»

3.1. Ներառական տնտեսական աճ և եկամուտների արդար բաշխում

Անցած ժամանակահատվածում Հայաստանում իրականացված բարեփոխումների առաջին փուլով, որն ընդունվում է որպես առաջին սերնդի բարեփոխումներ, հարկ էր ներմուծել հիմնական շուկայական ինստիտուտները: Լայնամասշտաբ մասնավորեցման, գների, առևտրի և ազգային արժույթի փոխանակման կուրսի ազատականացման շնորհիվ երկրում ձևավորվեց շուկայական օրենքներով գործող մասնավոր հատված: Ներկայումս այն արդեն ապահովում է երկրում ստեղծված ՀՆԱ-ի առավել քան 80 տոկոսը: Հաղթահարելով էներգետիկ ճգնաժամը՝ 90-ականների երկրորդ կեսից սկսած երկրում հաջողվեց հասնել մակրոտնտեսական կայունության: Նվազագույն ինֆլյացիայի պայմաններում, այն, ի դեպ, ամենացածրն էր նախկին խորհրդային պետությունների շրջանում, հնարավոր դարձավ տնտեսական արձանագրել երկնիչ մեծությամբ տնտեսական աճ: Ընդ որում, եթե 2000-2003թթ. տնտեսական աճը հիմնականում պայմանավորված էր ներմուծման փոխարինմամբ և արտահանման առաջանցիկ աճով, ապա 2003-2007թթ. այն բնութագրվեց որպես պահանջարկի վրա հիմնված: Հիմնական շարժիչ ուժեր հանդիսացան շինարարության և ծառայությունների ոլորտները, իսկ արդյունաբերությունն ու արտահանումը հետզհետե ավելի նվազ ավանդ ունեցան տնտեսական աճի մեջ:

Սա էքստենսիվ աճող տնտեսության հետագիծ էր, երբ անդառնալի շուկայական պայմաններում արձանագրվում էր երկնիչ տնտեսական աճ՝ միաժամանակ գիտակցվելով ինտենսիվ աճի գործոններ ձևավորելու խնդիրները: Անհրաժեշտ էր բարեփոխումների նոր փուլ իրականացնել, որոնք նպատակաուղղված կլինեին ներմուծված շուկայական ինստիտուտների արդյունավետության բարձրացմանը, կատարյալ շուկայական տնտեսության բնորոշ նոր ինստիտուտների ձևավորմանը, տնտեսության կառուցվածքային տեղաշարժեր ապահովելուն: Այս պայմաններում Հայաստանում 2008թ.-ից մեկնարկեցին երկրորդ սերնդի բարեփոխումները: Հասարակությունն իր վստահության քվեն տվեց Կառավարության հավակնությունների առնչությամբ, որոնք Հայաստանը տեսնում էին որպես տարածաշրջանային կենտրոն կրթության և գիտության բնագավառում, առողջապահական ծառայությունների մատուցման ոլորտում, ֆինանսական ծառայություններ մատուցելու մեջ, լավագույն գործարար պայմաններ ապահովելու գործում, զբոսաշրջության համար:

Հավակնությունների փաթեթի առանցքը մարդկային կապիտալն է, որը հիմնական և անուրանալի համեմատական առավելությունն է Հայաստանի համար բոլոր ժամանակաշրջաններում: Հռչակված նպատակներն իրականություն դարձնելու համար կառավարության գործունեության հիմքում դրվեցին հետևյալ առաջնահերթությունները. կառավարման արդյունավետության բարձրացում, տարածքային տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցում, գիտելիքահենք տնտեսության ենթակառուցվածքների ձևավորում, մրցունակ գործարար միջավայրի ապահովում:

Այնուամենայնիվ, լավագույն կառավարման պայմաններում նույնիսկ հնարավոր չէ խուսափել գլոբալ փոփոխությունների ազդեցություններից: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում, ստիպեց արագ և ադեկվատ ճշգրտումներ մտցնել վարվող քաղաքականության մեջ: Արտաքին տրանսֆերտներից կախվածությունն ու միջազգային շուկայում կոնյուկտուրային փոփոխությունները լուրջ մարտահրավերներ ձևավորեցին Հայաստանում իրական հատվածի համար: Մեծ էր նաև սոցիալական լարվածության կտրուկ աճի սպառնալիքը: Տնտեսության մեջ պետության միջամտության ձևերի և ծավալների վերանայման ակնհայտ անհրաժեշտություն առաջացավ:

Մի կողմից մեկնարկած բարեփոխումների հետաձգման սպառնալիքը, մյուս կողմից առաջնահերթ ուղղությունների արագացման հրատապությունը ձևավորեցին կառավարության հակաճգնաժամային քաղաքականությունը: Այսպես, ճգնաժամի դիմակայման և միաժամանակ հեռանկարային զարգացման նպատակով ողջ ռեսուրսը ուղղորդվեց մակրոտնտեսական կայունության վերականգնմանը, իրական հատվածի աջակցությանը, խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի մեկնարկին, սոցիալական նպատակային ծրագրերի իրականացմանը:

Տնտեսական աճից անցումը կայուն զարգացման արահետին այսօր պահանջում է քաղաքականության մոտեցումների վերագնահատում ու գործիքակազմի վերանայում այն գիտակցումով, որ համաշխարհային տնտեսության ներկա իրողությունների համատեքստում աղքատության հաղթահարման թիրախավորման գերակայությունը չի կարող լինել տնտեսական քաղաքականության բավարար մեկնակետ: Երկարաժամկետ հեռանկարում զարգացման լուրջ հիմքերի երաշխավորման տեսակետից անհրաժեշտ է ձեռնամուխ լինել ներառական աճի հայեցակարգի գործնական տեղայնացմանը՝ այդպիսով իրապես ընդլայնելով տնտեսական աճի ձևավորման գործընթացին հասարակության ընդգրկումն մասնակցության

հնարավորությունները մի քանի ասպեկտներով՝

- այսուհետ կարևոր է ոչ միայն տնտեսական աճի բարձր և կայուն տեմպը՝ որպես աղքատության հաղթահարման հնարավորություն, այլև՝ այդ աճի բնույթը. կայուն զարգացման ռազմավարության շրջանակներում այն առավելագույնս ընդգրկուն է ինչպես տնտեսության հատվածների, այնպես էլ երկրի աշխատանքային ռեսուրսների առումով:

- Ներառական աճի առանցքը ոչ թե ինքին աղքատներն են, այլև աշխատանքային ռեսուրսների այն մասը, որոնք օտարված են աճի գործընթացից: Ավելին, նպատակը ոչ թե զբաղվածությունն է կամ եկամուտների վերաբաշխումը, այլ՝ արտադրողական զբաղվածությունը: Այսինքն, տնտեսական քաղաքականությունը շեշտադրում է ոչ միայն և ոչ այնքան նոր աշխատատեղերի կամ եկամուտների ստեղծումը, այլև՝ արտադրողականության աճը, ինչը՝ ի լրումն վերջինիս, ստեղծում է իրական հնարավորություններ զբաղվածների եկամուտների աճի ու ինքնազբաղվածության համար:

- Կարևոր է պետության կողմից որպես աղքատության հաղթահարման և եկամուտների անհավասարության մեղմման միջոց տնտեսական աճի վերաբաշխման ու տրանսֆերտային լուծումներից անցումը երկարաժամկետ նպատակադրման սխեմաների՝ երաշխավորելու աճին մասնակցության հավասար հնարավորություններ անհատների ու ֆիրմաների համար: Այստեղ կրթության ու գիտելիքի տարածումն ու զարգացումն այն կամուրջն է, որով աշխատանքի ու եկամտի պասիվ ակնկալիքը հատկապես նվազ կարողություններ ու հմտություններ ունեցողների դեպքում կփոխակերպվի նախաձեռնողականության վարքագծի ու ինքնազբաղվածության:

Ներառական աճի հայեցակարգի ամրագրումը որպես երկարաժամկետ կայուն զարգացման գործառնական միջոց պահանջում է նաև նոր իրողություններում երկրի հնարավորությունների ու սահմանափակումների իրատեսական գնահատում ու ռեսուրսների նպատակային ուղղորդում:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունից քաղված դասերը և համադրելի երկրների կայուն զարգացման արդի մարտահրավերները պահանջում են տնտեսության բազմազանեցման (դիվերսիֆիկացման) միջոցով կայուն զարգացման ապահովումը դիտարկել որպես հիմնական գերակայություն: Տնտեսության վերականգնման միտումն ամրապնդելու և հետագա զարգացումն ապահովելու համար գերխնդիրը տնտեսության դիվերսիֆիկացիայի մակարդակի բարձրացումն է և տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնումը:

Արդյունաբերական քաղաքականության իրականացում

Հաղթահարելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները՝ հանրապետության արդյունաբերական ոլորտը ցուցաբերում է կայուն աճի միտումներ, սակայն արտահանման մեջ գերակշիռ մաս են հանքահումքային և սննդարդյունաբերության (մասնավորապես՝ կոնյակի) արտադրատեսակները: Այն դեպքում, երբ հանրապետության մշակող արդյունաբերությունը մեծ ներուժ ունի արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացման հարցում: Նշվածը առաջնահերթ վերաբերում է ներքին տնտեսության ներուժի գնահատմանն ու ճիշտ ուղղորդման քաղաքականության իրականացմանը: Այս իմաստով այժմ գերակա նպատակներ են տնտեսության դիֆերսիֆիկացումն ու արտահանման կողմնորոշումը, ներքին մրցակցային միջավայրի կատարելագործումն ու գործարար կլիմայի շարունակական բարելավումը, երկրի արդիականացումն ու առաջադեմ երկրների չափանիշների որդեգրումն ու ներդրումը, նորարարական տնտեսության ենթակառուցվածքի ձևավորումը և այս ամենով հանդերձ՝ համաշխարհային տնտեսական գործընթացներում Հայաստանի ինտեգրվածության խորացումը: Հայաստանի տնտեսության զարգացումն ու կայուն աճը մեծապես պայմանավորվում է արտադրողականության աճի և միավոր աշխատանքի արժեքի մրցունակ մակարդակի ապահովմամբ, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի առկայությամբ:

Այս իրողությունների հրամայականով ՀՀ կառավարության որոշմամբ 2011թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարությունը, որի գլխավոր նպատակն է երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ուղորդների ձևավորումը՝ ձեռնարկությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի շարունակական արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման միջոցով: Ընդ որում, արդյունաբերական քաղաքականությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝

- ընդհանրական միջոցառումների իրականացում՝ ուղղված բարենպաստ միջավայրի ստեղծմանը և արտադրողականության բարձրացմանը.

- հատուկ գործիքակազմի կիրառում՝ ոլորտային ռազմավարությունների հիման վրա:

Ռազմավարությամբ նախանշված արդյունաբերական 11 ոլորտներից 3-ում արդեն կատարվել են միկ-

րոմակարգակով ուսումնասիրություններ և վերլուծություններ, դրանց հիման վրա ձևավորվել ոլորտային ռազմավարությունները: Մասնավորապես, մեկնարկային փուլի ռազմավարության շրջանակներում նախատեսվում է ապահովել կոնյակագործության, դեղագործության և բիոտեխնոլոգիաների, ճշգրիտ ճարտարագիտության ոլորտային ռազմավարությունների իրականացումը: Այս նպատակով կձևավորվի հստակ միջոցառումների ցանկը և դրա իրականացումն ապահովող համապատասխան ենթակառուցվածքը:

Ռազմավարության ոլորտային հերթականությունների սահմանման համար առանցքային նշանակություն ունեն չէ կառավարության կողմից գերակա սահմանված հետևյալ ոլորտները, որոնց առնչությամբ սահմանվել են ոլորտային զարգացման ռազմավարություններ կամ իրականացվում են առանցքային նախագծեր. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, Զբոսաշրջություն, Առողջապահություն, Կրթություն, Գյուղատնտեսություն:

Գյուղի և գյուղատնտեսական կայուն զարգացում

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման քաղաքականության վեկտորը ուղղված է առկա ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմանը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը, գյուղական բնակավայրերում աղքատության էական կրճատմանը, շրջակա միջավայրի պահպանությանը, գյուղական համայնքների զարգացմանը:

Անցած տասնամյակում գյուղատնտեսության ոլորտում քաղաքականությունն իրականացվել է պետության աջակցությամբ իրականացվող մի շարք ծրագրերի միջոցով: Այդ ծրագրերն ուղղվել են առաջնային սերմնաբուծությանն ու տոհմային գործի զարգացմանը, բույսերի առավել վտանգավոր և կարանտին հիվանդությունների դեմ պայքարին, գյուղատնտեսական կենդանիների առողջության պահպանմանը, սննդամթերքի անվտանգության ապահովմանը, հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանը, ոռոգման համակարգերի պահպանմանն ու զարգացմանը, վարկավորման մատչելիությանը, ենթակառուցվածքների զարգացմանը, առավել անբարենպաստ գոտիներում գյուղատնտեսությունում տնտեսվարողների սուբսիդավորմանը, ոլորտում խորհրդատվության տրամադրմանն ու առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլն:

Գյուղատնտեսությունում տնտեսվարողների ջանքերով և իրականացվող քաղաքականության արդյունքում էական դրական տեղաշարժեր են գրանցվել կարտոֆիլի, բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, մսի, կաթի արտադրության բնագավառում, որոնք որոշակիորեն բարձրացրել են հիմնական պարենամթերքների ինքնաբավության մակարդակը:

Հայաստանի գյուղատնտեսության կարևոր ձեռքբերումներից մեկը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության զարգացումն է: Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը (ՊԳԿ), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին (ԳԶՄՀ) և այլ միջազգային կազմակերպություններին անդամակցությունը կարևոր ազդակ է համաշխարհային զարգացումների տիրույթում գտնվելու, ինչպես նաև համընդհանուր պահանջներին համահունչ ոլորտի իրավական ու տեխնոլոգիական կարգավորման համար, ինչն էլ կարևոր նախադրյալ է հանդիսանում արտաքին ներդրումների ներգրավման և արտաքին առևտրի զարգացման գործում:

Նշվածի հետ մեկտեղ ագրարային ոլորտում ծառայել են բազմաթիվ խնդիրներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- գյուղատնտեսական արտադրության արդյունավետ զարգացմանը դեռևս լրջորեն խոչընդոտում են գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը: Ներկայումս մեկ գյուղացիական տնտեսությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.4 հա գյուղատնտեսական հողատեսքեր, այդ թվում՝ 1.1 հա վարելահող.

- գերակա խնդիր է հողային ռեսուրսների լիարժեք և արդյունավետ օգտագործումը: Մակայն տարբեր գործոնների հետևանքով գյուղատնտեսական հողատեսքերի, հատկապես վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը չափազանց ցածր է, այսպես՝ 2010թ. տվյալներով վարելահողերի շուրջ 37.0 տոկոսը կամ 165.0 հազ. հեկտարը տարբեր պատճառներով նպատակային նշանակությամբ չի օգտագործվել: 2011թ. աշնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները վկայում են, որ 2012թ. վարելահողերի նպատակային օգտագործման առումով էական դրական տեղաշարժեր են սկսվել:

- գյուղատնտեսության ոլորտի առջև ծառայած հաջորդ խնդիրը կապված է սերմնաբուծության համակարգի դեռևս ոչ լիարժեքության, պարարտանյութերի ու թունաքիմիկատների անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրոտեխնիկական կանոնների խախտման հետ, որոնց հետևանքով դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, հետևաբար՝ արտադրության արդյունա-

վետությունը.

- լուծում պահանջող խնդիրներ են առկա նաև անասնապահության ճյուղում: Կերային մշակաբույսերի կտրուկ կրճատման հետ մեկտեղ անբավարար են օգտագործվում բնական կերհանդակները: Մասնավորապես, նկատելի է գյուղամերձ արոտավայրերի գերբեռնվածությունը և հեռագնա արոտների սահմանափակ օգտագործումը: Վերջիններս հանգեցնում են լուրջ տնտեսական կորուստների և արոտավայրերի դեգրադացմանը: Ցածր է գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը.

- լուրջ խնդիրներ են ծառացել գյուղատնտեսության տեխնիկական ապահովման և սպասարկման ծառայությունների բնագավառում: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95% շահագործման ժամկետը լրացել է.

- վերը նշված հիմնախնդիրներին ավելանում են նաև գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման դժվարությունները, որոնք պայմանավորված են տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների սակավությամբ, դրանց ձևավորման դանդաղ ընթացքով և արտահանման դժվարություններով.

- ներմուծվող գյուղատնտեսական ծագման արտադրանքների արժեքն արտահանմանը գերազանցում է 4 անգամ, ուստի գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների ավելացումը, առևտրային հաշվեկշիռի և կառուցվածքի բարելավումը նույնպես դիտվում է որպես կարևորություն ներկայացնող հիմնախնդիր.

- գյուղատնտեսությունը որպես ռիսկային ոլորտ՝ յուրաքանչյուր տարի զգալի կորուստներ է կրում տարբեր բնական աղետներից, ուստի կարևոր խնդիր է ռիսկերի մեղմման միջոցառումների իրականացումը և ապահովագրական համակարգի ներդրումը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

2000թ.-ից սկսած փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացումը ՀՀ-ում համարվում է պետության կայուն զարգացման հիմնական գրավականներից մեկը: ՀՀ կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ՝ կարևորելով ՓՄՁ-ի դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում:

ՓՄՁ-ն նշանակալի դեր է խաղում ՀՆԱ ձևավորման գործում: 2010թ. ՓՄՁ-ի մասնաբաժինը երկրի ՀՆԱ-ում կազմել է արդեն 43.0 տոկոս, երկրի արտահանման ծավալում՝ 17.9 տոկոս, իսկ ներմուծման ծավալում՝ 26.4 տոկոս: Հայաստանում ՓՄՁ-ի զարգացման ինդեքսը, որպես ընդհանրական (ազրեգացված) տնտեսական ցուցանիշ, 2010թ. կազմել է 441.8, ինչը 2002թ. համեմատությամբ ավելացել է շուրջ 7.6 անգամ:

ՓՄՁ պետական աջակցման գործիքների կիրառման և համակարգման համար 2000թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են ՓՄՁ սուբյեկտների չափորոշիչները (Համաձայն օրենքում կատարված նոր փոփոխությունների՝ 2011 թ. հունվարի 1-ից ՀՀ-ում կիրառվում են ՓՄՁ սուբյեկտների նոր չափորոշիչները), պետական աջակցության հիմնական ուղղությունները և այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները:

ՓՄՁ-ին պետական աջակցության ծրագրերը հիմնված են ՀՀ որդեգրած տնտեսական քաղաքականության հիմնարար սկզբունքների վրա և նպաստում են երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամամասնությունների հաղթահարմանը: Այդ ծրագրերով նախատեսված միջոցառումների գերակշիռ մասը (շուրջ 90 տոկոսը) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության մարզերում՝ առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում, սկսնակ ու գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը և, ընդհանուր առմամբ, Հայաստանի մարզերում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

Հայաստանում ՓՄՁ զարգացման պետական ծրագրերի հիմնախնդիրները համընկնում են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանված պետական ուղղությունների հետ, սակայն ծրագրերը չունեն հիմնական ձևաչափ (տարբերվում են բաժիններ և այլն), որը դժվարացնում է ծրագրերի վերլուծությունը: 2001-2004թթ. ՀՀ ՓՄՁ պետական աջակցության ծրագրերում ներառված չեն ծրագրերից բխող արդյունքներն ու ֆինանսական ապահովումը: 2005թ.-ից սկսած բոլոր ծրագրերում առկա են այդ ծրագրերի նպատակները, ակնկալվող արդյունքները, ֆինանսական ապահովումը և միջոցառումների ժամանակացույցը, սակայն արդյունքների որոշ մասը չափելի

չէ, ինչը բերում է ակնկալվող արդյունքների արդյունավետության գնահատման դժվարացմանը:

Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերը փոփոխական արդյունավետություն են ունեցել: Դրանց որոշ բաղադրիչներ համակարգը վերափոխելու լավագույն օրինակ են, որոշները համակարգում նոր խոչընդոտներ են առաջացնում:

Չնայած վերջին տասնամյակում ՀՀ կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ՀՀ-ում ՓՄՁ վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթացին, այնուամենայնիվ այսօր լիարժեք չէ իրական ու մանրամասն վիճակագրությունը, որը թույլ կտա պատկերացում կազմել ՀՀ-ում ՓՄՁ դաշտի ընդհանուր վիճակի մասին: Հայաստանում ՓՄՁ վիճակագրական տվյալների երկրորդ հիմնական աղբյուրը ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից հրապարակվող վիճակագրական թողարկումներն են, որոնք, սակայն, էականորեն տարբերվում են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներից (1%-25% տարբերություն):

ՀՆԱ ձևավորման մեջ ՓՄՁ-ների մասնաբաժնի փոփոխության վրա ազդում են մի շարք գործոններ, որոնց մի մասը համընդհանուր ազդեցություն է ունենում բոլոր ոլորտներում աշխատող ՓՄՁ -ների վրա, իսկ մյուս մասի ազդեցությունը առավելապես երևում է մեկ կամ մի քանի ոլորտներում կամ տարբեր խմբերում (գերփոքր, փոքր և միջին): Համընդհանուր ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Լինելով տնտեսական դաշտի համեմատաբար թույլ խաղացող՝ այս տարբերն առավել խոցելի են ճգնաժամային երևույթների նկատմամբ:

Ջրաղվածություն և եկամուտների բաշխում

Աշխատանքի և զբաղվածության ոլորտում պետական քաղաքականությունը մշակելիս հաշվի են առնվում ԵԼՄ-ի կողմից ներկայացվող սոցիալական ոլորտի օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված պահանջները, ինչպես նաև աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից ընդունված և Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք Կոնվենցիաների դրույթները, հիմք ընդունելով սոցիալական գործընկերության սկզբունքները: Այդ սկզբունքներից էլնելով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսվել է բնակչության զբաղվածության հանրապետական և տարածքային ծրագրերի մշակման և իրականացման հարցերում համաձայնեցված որոշումներ կայացնելու նպատակով զբաղվածության պետական ծառայության նախաձեռնությամբ ձևավորել հանրապետական և տարածքային համաձայնեցման կոմիտեներ: Աշխատաշուկայում վարվող քաղաքականությունն այս իրավական ակտերով դարձավ առավել ճկուն և ակտիվ: Արդյունքում առանձնացվեց աշխատաշուկայում անմրցունակ, լրացուցիչ աջակցության կարիք ունեցող անձանց 7 խումբ, ավելացան բնակչության զբաղվածությունը կարգավորող մի շարք նոր ծրագրեր:

Ջրաղվածության բնագավառում պետական քաղաքականությունը միտված է արժանապատիվ, լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանը, աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրմանը, երիտասարդների, այդ թվում՝ գյուղական երիտասարդության, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն աջակցելուն: Ջրաղվածության պետական քաղաքականության 2000-2011թթ. ընկած ժամանակաշրջանը բնութագրվում է որպես զբաղվածության ոլորտի օրենսդրական բարեփոխումների, զբաղվածության պետական ծառայության համակարգի ինստիտուցիոնալ կարգավորման ժամանակաշրջան:

2006թ. հունվարի 1-ից գործողության մեջ է դրվել «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն աշխատանքի խրախուսման, զբաղվածության ապահովման և գործազրկության դեպքում սոցիալական գործընկերության սկզբունքներով արդարացի սոցիալական քաղաքականության իրականացումն էր: Օրենքի ընդունումը բխում էր բնակչության զբաղվածության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության կատարելագործման և հանրապետությունում գործազրկության դեպքերից պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգի ներդրման անհրաժեշտությունից:

2006-2011թթ. և հետագա տարիների զբաղվածության բնագավառի գերակա ուղղությունները երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատաշուկայում մրցունակությունը բարձրացնելու, գյուղական բնակավայրերի անձանց զբաղվածությունը խթանող ծրագրերի մշակումն ու ներդրումն էր: Նշված ժամանակահատվածում հստակեցվել է բնակչության զբաղվածության ամենամյա պետական ծրագրի կառուցվածքը և ծրագրում ընդգրկվող միջոցառումների ցանկը:

Հայաստանի սոցիալական պաշտպանության պետական քաղաքականությունը կարևորում է բնակ-

չության արդյունավետ զբաղվածության ապահովումը, կենսաթոշակային ոլորտի բարեփոխումները, այդ թվում՝ կենսաթոշակների չափերի աճը, պետական նպաստների հասցեականության մեծացումը, հաշմանդամների, տարեցների, կանանց, երեխաների և սոցիալական պաշտպանության կարիք ունեցող այլ սոցիալական խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը, սոցիալական պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման պայմանների ստեղծումը: Հայաստանը ստանձնել է Եվրոպական սոցիալական խարտիայի պահանջներին համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծման քաղաքական մի շարք պարտավորություններ:

Սոցիալական պաշտպանությունը հիմնականում ուղղված է բնակչության խոցելի խմբերի կենսական պահանջմունքների բավարարմանը: Սոցիալական պաշտպանության ձևերից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- օրենսդրությամբ սահմանված որոշակի սոցիալական երաշխիքների սահմանումը և դրանց բավարարումը բազային ստանդարտների և ծրագրերի հիման վրա,

- բնակչության եկամուտների և ծախսերի կարգավորումը,

- սոցիալական ծառայությունները

- նպատակային սոցիալական ծրագրերը:

Նպատակային սոցիալական ծրագրերի շարքում կարևորվում են մասնավորապես միայնակ տարեցների, հաշմանդամների, անօթևան մարդկանց, հատուկ կարիքներով երեխաների և այլ սոցիալական խմբերի սոցիալական կարիքների բավարարմանն ուղղված տարբեր ծրագրերը:

Պետական կենսաթոշակային ապահովության համակարգը բնակչությանն ապահովում է աշխատանքային՝ տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում, մասնակի, ինչպես նաև սոցիալական՝ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում: Բոլոր կենսաթոշակները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Ոլորտի հետ կապված հիմնախնդիրներն ու մտահոգությունները

Երկրում դեռ թույլ են ՓՄՁ-ն խրախուսող արդյունավետ և գործուն մեխանիզմները, ավելին՝ առկա են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնք հնարավորություն չեն ընձեռում ՓՄՁ զարգացմանը: Մասնավորապես, փոքր և միջին բիզնեսը խիստ անհավասար մրցակցային պայմաններում է գտնվում խոշոր բիզնեսի հետ ոչ միայն հարկային անհամաչափ բեռի և հարկային օրենսդրության անընդհատ փոփոխությունների, այլև փաստաթղթաշրջանառության կանոնակարգման բացակայության, խոշոր բիզնեսի ստվերային ապրանքա- և դրամաշրջանառության և բազմաթիվ բիզնես ռիսկերին դիմագրավելու պատրաստվածության պատճառով: Հատուկ պաշտպանվածության կարիք ունի միկրո բիզնեսը:

3.2. Ժամանակակից գիտատար, էներգախնայող և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների զարգացում

Կանաչ տնտեսության զարգացմանը նպատակաուղղված քաղաքականության հիմնադրույթային նպատակների որոշակի մասը ներառված է ԿԶԾ փաստաթղթով, որտեղ որպես գերակա նպատակներ են սահմանվել՝

- կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը,

- վերացնել մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածությունը,

- մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները,

- պահպանել կենսաբազմազանությունը,

- ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները,

- ապահովել չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործումը:

ԿԶԾ-ում ամրագրված երկրի զարգացման ներկա փուլի բնապահպանական խնդիրների հիմնական ուղղությունների թվում ամրագրվում է բնապահպանական քաղաքականության իրականացման գործիքների կատարելագործում: Մա ենթադրում է, որ տնտեսական աճին զուգընթաց անհրաժեշտ է բնապահպանական տնտեսական գործիքների կիրառման միջոցով խթանել լավագույն՝ բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը՝ հեռանկարում ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող հին տեխնոլոգիաների դուրսմղումը, բնապահպանական կառավարման բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար պարզեցնել, հստակեցնել և ներդնել էլ-

կառավարում: Վարչարարության կատարելագործմանը զուգընթաց, զարգացնել բնապահպանական գործունեության իրախուսման մեխանիզմները՝ ներդնելով հանրային մասնավոր գործընկերության սկզբունքները՝ ձեռնարկությունների բնապահպանական վարկանշման մեխանիզմներ, այդ թվում՝ միջազգային ISO ստանդարտների մշակույթը:

Տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ ներկա բնօգտագործման և բնապահպանական վճարները սահմանվել են բավականին ցածր, չեն համապատասխանում ռեսուրսի/վնասի իրական տնտեսական արժեքին և այդ պատճառով բավարար չափով չեն ազդում տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական և բնօգտագործման վարքագծի վրա:

Մեծ կարևորություն է ստանում ձեռնարկությունների բնապահպանական կառավարման պլանների մշակման և ինքնամոնիթորինգի/ինքնահսկման համակարգի ներդրումը:

Ցավոք, 2009-2011թթ. ժամանակահատվածում ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, խնդրառարկա նպատակներին հասնելու առումով նախօրոք ծրագրավորված ոչ բոլոր գործողություններն են իրականացվել կամ իրականացվում: Այնուամենայնիվ, ձեռքբերումներն ու իրականացված աշխատանքները նշանակալի են, որոնց շարքում կարելի է նշել՝

Կանաչ տեխնոլոգիաների ներդրում

- վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացում,
- էներգաարդյունավետություն և ռեսուրսախնայող տեխնոլոգիաներ (Երևանի ՋԷԿ-ի համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցում՝ կանաչ վարկ),
- Կիոտոյի արձանագրության մաքուր զարգացման մեխանիզմով իրականացվող նախագծեր՝ 5 գրանցված և ընթացքի մեջ, 8 հաստատված, մասնավորապես Նուբարաշենի և Լուսակերտի նախագծերը, որոնք տարածաշրջանում առաջինն են, երբ փորձ է արվել մասնավոր հանրային համագործակցության շրջանակներում լուծել շրջակա միջավայրի վրա թափոնների վնասակար ներգործության հարցը:

Բիզնեսում բնապահպանական կառավարման համապատասխան սխեմաների (ենթակառուցվածքների) ներդրում.

- մշակվել է «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս գտնվում է ՀՀ Ազգային Ժողովում՝ 3-րդ ընթերցման՝ ավարտական փուլում,
- ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Մաքուր արտադրության» հայեցակարգը,
- տեղայնացվել և հարմոնիզացվել են Եվրոպական տեխնիկական հանձնաժողովի կողմից սահմանված բնակելի և հասարակական շենքերի էներգատարության և էներգաարդյունավետության թվով 7 ստանդարտներ: Ստանդարտները անցել են մասնագիտական փորձաքննություն և գտնվում են համաձայնեցման փուլում:

Կենսաբազմազանության կայուն կառավարման ապահովում

Վերջին տարիները նշանակալի են եղել կենսաբազմազանության պահպանության և հատուկ պահպանվող տարածքների զարգացման տեսանկյունից: ՀՀ կառավարության որոշումներով ընդլայնվել են բնության հատուկ պահպանվող տարածքները, այդ թվում ստեղծվել են՝ «Արփի լիճ» և «Արևիկ» ազգային պարկերը, «Ջերմուկի ջրաբանական», «Հանքավանի ջրաբանական», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրերը: Ընդլայնվել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքը՝ «Գիլան» արգելավայրում արգելոցային ռեժիմ սահմանելու միջոցով: Արդյունքում, Հայաստանի պահպանվող տարածքների ընդհանուր մակերեսը ավելացել է 76.3 հազ. հա, որի արդյունքում ներկայումս Հայաստանի ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 380.0 հազ. հա, որը հանրապետության տարածքի շուրջ 12,8%-ն է, ինչը մոտ է միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

Աղտոտման կրճատմանը նպաստակաուղղված տնտեսական գործիքներ (բնապահպանական վճարներ)

Տեսչական վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացման և երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց զգալիորեն ավելացել և ավելանում են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ/հենք ստեղծելով հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպաստակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար: Վերջին 12 տարվա ընթացքում դրանց ծավալներն աճել են ավելի քան 15 անգամ՝ 1998թ. 608.0 մլն. դրամից 2011թ. հավասարվելով 12 171.4 մլն. դրամի: Մակայն պետք է արձանագրել նաև այն փաստը, որ բնօգտագործման և բնապահպանական վճարների տեսակարար կշիռը

(%-ով) ՀՀ ՀՆԱ-ի նկատմամբ շարունակում է մնալ բավականին ցածր, հաշվի առնելով, որ այն բնորոշում է տնտեսության գործունեության արդյունքում շրջակա միջավայրի մաշվածության (վնասի) դիմաց գանձվող փոխհատուցման գումարների չափը: Ըստ փորձագետների գնահատականի, Հայաստանի նման զարգացման աստիճան ունեցող երկրներում տնտեսության գործունեության արդյունքում յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրին պատճառվում է 8,0-10,0 տոկոս ՀՆԱ-ին համապատասխանող վնաս կամ մաշվածություն, այսինքն, փոխհատուցման գումարները զիջում են փաստացի պատճառվող վնասն ավելի քան 32-40 անգամ:

Բնապահպանական վճարների արդիականացման գործընթացին Հայաստանում խանգարում են ներքոհիշյալ հիմնահարցերը՝

1. Համապատասխան ուսումնասիրությունների չկատարման և (կամ) բացակայության պայմաններում գնահատված չեն շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով պատճառված և պատճառվող վնասների իրական չափերը, որի արդյունքում բնապահպանական վճարների դրույքաչափերը չեն համապատասխանում/համարժեք չեն այդ չափերին: Բնապահպանական վճարների գործող դրույքաչափերի հիմքում դրված են՝

- կամ խորհրդային ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների արդյունքում մշակված փոխհատուցման ցուցանիշները կամ չափորոշիչները, որոնք չեն համապատասխանում այսօրվա պահանջներին,

- կամ չունեն անհրաժեշտ հիմնավորվածություն, քանի որ հիմնված են տեսական կամ համեմատական հաշվարկների վրա:

2. Շրջակա միջավայրի աղտոտման համար բնապահպանական վճարների դրույքաչափերի համադրումն այլ երկրներում գործող համապատասխան վճարների դրույքաչափերի հետ վկայում է այն մասին, որ Հայաստանում գործող դրույքաչափերը բավականին ցածր են հատկապես հիմնական աղտոտիչների գծով:

Անկախացման առաջին տարիներին տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտությունից ելնելով՝ սահմանված բնապահպանական վճարների բավականին ցածր դրույքաչափերը չեն համապատասխանում ռեսուրսի/վնասի իրական տնտեսական արժեքին և այդ պատճառով բավարար չափով չեն ազդում տնտեսավարող սուբյեկտների բնապահպանական վարքագծի վրա: Բնապահպանական վճարների համեմատաբար ցածր դրույքաչափերը հնարավորություն չեն ընձեռում ավելի արդյունավետ օգտագործելու դրանք Հայաստանում որպես շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունները նվազեցնելու և բնական ռեսուրսների արդյունավետ (կայուն) օգտագործումն ապահովող կարգավորիչ գործիք: Ցածր դրույքաչափերը շրջակա միջավայրն աղտոտող ձեռնարկություններին չեն խթանում աղտոտման կրճատմանն ուղղված քայլեր ձեռնարկելու համար: Գործնականում բնապահպանական վճարների վճարումը տնտեսապես ավելի շահավետ է, քան ավելի մեծ ծախսեր պահանջող էկոլոգիապես անվտանգ նոր («կանաչ») տեխնոլոգիաների և սարքավորումների ձեռքբերումը և ներդրումը:

Բնապահպանական վճարների հասցեական օգտագործում: Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ/հենք են ստեղծում հանրապետությունում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման ծավալների ավելացման համար: Սակայն պետք է փաստել, որ պետության ընդհանուր ֆինանսական աղբյուրների միջոցների սահմանափակության պայմաններում բյուջետային ծախսային գերակայություններում բնապահպանական միջոցառումները շարունակում են պակաս գերակա համարվել, արդյունքում՝ շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների վրա կատարվող ծախսերի ՀՆԱ-ի նկատմամբ ցուցանիշով Հայաստանն զբաղեցնում է ԱԵԿԿԱ երկրների մասով ամենավերջին տեղերից մեկը:

Որպես դրական կարող է գնահատվել միայն այն փաստը, որ ՀՀ պետական բյուջեի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղվող հատկացումների տեսակարար կշիռը՝ թեև աննշան, բայց աճի միտում ունի:

Պետական կամ բյուջետային միջոցներով բնապահպանական ծախսերի տեսակարար կշիռը բարձրացնելու հնարավորությունները Հայաստանում դեռևս խիստ սահմանափակ են:

Բնագավառի ֆինանսավորման ծավալների ավելացման հարցում զգալի դեր կարող է խաղալ մասնավոր (ներառյալ՝ ֆինանսական) սեկտորը, որի մասնակցությունը բնապահպանական հիմնախնդիրների ֆինանսավորմանը ներկայումս խիստ անբավարար է կամ ոչ էական:

Մասնավոր սեկտորի մասնակցությունը բնապահպանական հիմնախնդիրների ֆինանսավորման

գործընթացին ներկայումս իրականացվում է երկու տարբերակով կամ խողովակներով՝

- պետական բյուջե վճարվող բնապահպանական և բնօգտագործման վճարների մասով (չնայած դրանց մի մասը, ցավոք, չի վերադառնում բնապահպանությանը),

- ներդրումներ ձեռնարկություններում կամ կազմակերպություններում աղտոտման ծավալների նվազման և բնապահպանական այլ նպատակներով:

Ֆինանսական սեկտորի մասնակցությունը խիստ սահմանափակ է, պայմանավորված՝

- առաջին հերթին, բնապահպանական ծրագրերի կամ նախագծերի ֆինանսական տեսանկյունից ոչ գրավիչ լինելու հետ,

- մյուս կողմից, չնայած գործող օրենսդրությունը պարունակում է բնապահպանական նպատակները խթանող դրույթներ, սակայն դրանք կամ չեն գործում կամ չունեն գործնականում կիրարկման համապատասխան մեխանիզմներ, հիմնականում դեկլարատիվ բնույթ ունեն:

Մասնակցությունը սահմանափակված է նաև համապատասխան (մասնավորապես, բնապահպանական ապահովագրական համակարգի ներդրման համար անհրաժեշտ) իրավական դաշտի բացակայության պատճառով:

Կանաչ արտադրության խթանում: Չնայած գործող օրենսդրությունը պարունակում է բնապահպանական նպատակները խթանող դրույթներ, սակայն դրանք չունեն գործնականում կիրարկման համապատասխան մեխանիզմներ և հիմնականում դեկլարատիվ բնույթ ունեն, և կարելի է փաստել, որ դրանք չեն գործում:

Հայաստանում կանաչ էկոնոմիկայի ներդրման օրենսդրական և մեթոդաբանական հիմքերի կատարելագործման շրջանակներում անհրաժեշտություն է՝

- բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների ներդրման համար պետության կողմից նպաստավոր միջավայրի ստեղծման քաղաքականության մշակումը,

- «Կանաչ» տեխնոլոգիաների ներդրման խթանմանը նպատակաուղղված համապատասխան տնտեսական և ֆինանսական մեխանիզմների սահմանումը:

Այս գործընթացում դեռևս բավարար կերպով չեն օգտագործվում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների աջակցության, ինչպես նաև հանրային և մասնավոր համագործակցության հնարավորությունները:

Օրգանական գյուղատնտեսություն

Կայուն զարգացման նպատակներին հասնելու տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է ստանում հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության զարգացման հնարավորությունների առավելագույնս բացահայտումն ու իրացումը: Ընդ որում, միջազգային շուկայում, հատկապես Եվրամիության երկրներում, տարեցտարի աճում է պահանջարկն ինչպես թարմ, այնպես էլ վերամշակված օրգանական պարենամթերքների նկատմամբ: Հայաստանում առկա են որոշակի պայմաններ առավել բարձր ավելացված արժեք ապահովող օրգանական սննդամթերքի արտադրության զարգացման համար: Կարևորագույն նախադրյալը Հայաստանում անասնաբուծական ծագման մթերքների և դրանց վերամշակումից ստացվող օրգանական սննդամթերքի արտադրության համար ալյաիական և ենթալյայան գոտու արոտավայրերի առկայությունն է:

2003թ. օրգանական պահանջներով մշակվող 110 հեկտարի համեմատությամբ 2011թ. արձանագրվել է մոտ 1250 հեկտար մշակովի և վայրի տեսակների հողատարածքներ: Նշված թվերը դեռևս բավարար չեն շուկայի կամ օրգանական արտադրությունը որպես տնտեսական կայացած երևույթ համարելու համար, սակայն հետաքրքրությունը և աճի անընդհատ միտումն ակնհայտ է: Միննույն ժամանակ, վերջին տարիներին ընդգծվում է նաև օրգանական արտադրության ոլորտների ընդարձակման միտումը: Օրգանական արտադրությունը սկսվել է այգիներից, սակայն ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում մեղվապահությանը և մեղվամթերքի արտադրությանը, վայրի բուսական տեսականու ընդարձակմանը, մեկ և երկամյա բարձրաժեք մշակաբույսերի աճեցմանը, քննարկվում է արոտավայրերի և անասնապահության, ինչպես նաև հետագայում կաթնամթերքի օրգանական արտադրությունը:

Առավել կարևոր և շարժիչ գործոն է ներկայումս հանդիսանում վերամշակող ընկերությունների կողմից օրգանական հումքի վերամշակումը, դրանք միջազգային տոնավաճառներին և ցուցահանդեսներին ներկայացնելը, արտահանումը ԵՄ և այլ շուկաներ: Արտահանումը տնտեսապես շահավետ դարձնելու նպատակով ներկայումս պահանջվում են հումքի տեսականու և ծավալների ավելացումներ: Այդ նպատակով վերամշակող ընկերություններն իրենց հերթին սկսել են ներդրումներ կատարել գյուղատնտեսական արտադրության մեջ, ուստի մոտակա տարիներին ակնկալվում է նաև հումքի ծավալների, ինչպես

նան պատրաստի մթերքի քանակների աճ: Հատկապես կարևոր է նաև օրգանական բաղադրամասերի բացակայությունը ՀՀ-ում՝ վերջնական արտադրանք պատրաստելու, դրա պահպանության ժամկետը երկարացնելու նպատակով:

2008թ. ընդունված «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է օրգանական գյուղատնտեսական մթերքի և հումքի արտադրության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում է օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները: Ընդունվել են նաև օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը (թվով 7), ինչը ամբողջականացնում է օրգանական գյուղատնտեսության հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը և համապատասխանության գնահատման կարգը, օրգանական արտադրության մակնշման և պիտակավորման մոտեցումները, տնտեսավարողների պարտականությունները, օրգանական գյուղատնտեսության մեջ թույլատրելի և սահմանափակ թույլատրելի նյութերի, այդ թվում՝ պարարտանյութերի, հողի կառուցվածքի բարելավման և բերրիության բարձրացման, բույսերի պաշտպանության միջոցների անվանացանկն ու կիրառման կարգը, օրգանական գյուղատնտեսության կազմակերպման, բույսերի ու բուսական ծագման մթերքի, գյուղատնտեսական կենդանիների և անասնապահական ծագման մթերքի արտադրության, օրգանական եղանակով վերամշակման, փաթեթավորման, պահպանման, փոխադրման, ինչպես նաև համապատասխանության սերտիֆիկատի տրման կարգերը և այլ հարաբերությունները:

Հայաստանում առկա է և գործում է տեղական մասնավոր անկախ օրգանական սերտիֆիկացման մարմին՝ «Էկոգլոբ» ընկերությունը, որը ստացել է միջազգային ճանաչման սերտիֆիկատը գերմանական ակրեդիտացնող կազմակերպության (DAP) կողմից, իսկ 2009թ. ընկերությանը շնորհվել է նաև ԱՄՆ գյուղ-դեպարտամենտի Ազգային Օրգանական Օրգանի (USDA NOP) ճանաչումը: Այդ երկու ճանաչումների շնորհիվ ընկերության սերտիֆիկացման ներքո արտադրողները կարող են միաժամանակ մուտք ունենալ ԵՄ և ԱՄՆ օրգանական թարմ ու վերամշակված արտադրանքի շուկաներ:

Կանաչ քաղաքաշինություն

Բնակավայրերի զարգացման ընդհանուր նպատակն է բնակչության համար սոցիալ-տնտեսական և էկոլոգիական պայմանների բարելավումը, ապրելու, աշխատելու և հանգստի համար բարենպաստ և անվտանգ միջավայրի ձևավորումը, ինչպես նաև նախորդ սերունդների կողմից ստեղծված ճարտարապետական արժեքների պահպանումը: Նշված նպատակին համահունչ՝ ԿԶԾ փաստաթղթում առանձնացված են քաղաքաշինական զարգացման գերակա ուղղությունները՝ տարածական զարգացում և պլանավորում, կառույցների սեյսմակայունության և հուսալիության ապահովում, վտանգավոր արտածին երկրաբանական պրոցեսների ազդեցության նվազեցում, բնակարանային պայմանների բարելավում, պատմամշակութային միջավայրի վերազարգացում:

Երկրի տարածական զարգացման կայունությունը ապահովելու առումով կարևորվում է տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը և դրանցով սահմանված դրույթներին համապատասխան բնակավայրերի հարատև զարգացումը: Այս իմաստով անցած տարիների ընթացքում իրականացվել են.

- արմատական բարեփոխումներ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ընթացակարգերի պարզեցման և կանոնակարգման ուղղությամբ,
- վերանայվել են տեղական մակարդակում պարտադիր մշակման ենթակա համայնքների գլխավոր հատակագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները,
- գյուղական համայնքների համար ներդրվել է «պարզեցված գլխավոր հատակագիծ» հասկացությունը,
- ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով,
- համայնքների գլխավոր հատակագծերի հաստատման իրավասությունը՝ ՀՀ կառավարությունից փոխանցվել է տեղական ինքնակառավարման իշխանություններին,
- կանոնակարգվել են հողերի նպատակային նշանակության փոփոխման ընթացակարգերը:
- օրենսդրորեն սահմանվել է նաև որոշակի ժամկետ, որից հետո հաստատված գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի բացակայության դեպքում կարգելվի համայնքների ղեկավարների կողմից կառուցապատման նպատակով հողերի օտարման գործընթացը:
- բարեփոխումների վերաբերյալ իրազեկման նպատակով կազմակերպվել են արտագնա սեմինար-

ներ ՀՀ մարզերում:

Արդյունքում էականորեն խթանվել է տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, ինչը հիմք է համայնքների կայուն տարածական զարգացման ապահովման համար: Եթե 2004-2007թթ. ընթացքում համայնքների գլխավոր հատակագծեր մշակվում էին առավելապես պետական նպատակային ծրագրերի շրջանակներում և պետական բյուջեի միջոցների հաշվին, ապա միայն 2010-2011թթ. ավելի քան 25 համայնքի ղեկավարներ նախաձեռնել են իրենց համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակումը: 2009-2011թթ. ընթացքում պետական միջոցների հաշվին մշակվել և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատվել են ռեզիդնալ մակարդակի թվով 3 տարածական պլանավորման փաստաթուղթ (Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագիծը, ՀՀ Վայոց Ձորի տարածքային հատակագծման նախագիծը, Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծը):

Պետության համար առանձնահատուկ նշանակություն ունեցող տարածքներում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգելու, այդ տարածքների որակական չափանիշները պահպանելու և բարելավելու նպատակով ՀՀ կառավարության մի շարք որոշումներով առանձնացվել են քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ՝ Սևանա լճի ջրհավաք ավազանում, միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում, Գյումրու, Վանաձորի, Դիլիջանի, Վաղարշապատի, Աշտարակի, Գորիսի քաղաքային և Տաթևի ու Հալիձորի գյուղական համայնքներում:

Հայաստանի համար նոր ուղղություն է շենքերի էներգաարդյունավետության բարձրացումը: Այդ ուղղությամբ 2010թ. մեկնարկվել է «Բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացում» ծրագիրը, որն իրականացվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և ԳԷՖ-ի աջակցությամբ: Ծրագրի առաջին փուլի շրջանակներում բնագավառի օրենսդրական և նորմատիվային դաշտի վերլուծություն արդյունքներով մշակվել է բնագավառը կանոնակարգող օրենսդրական և նորմատիվային դաշտի կատարելագործման ուղղությամբ առաջիկա երեք տարիներին կատարվելիք միջոցառումների ծրագիր: Դրա հետ մեկտեղ, 2011թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության, «Գլենդել Հիլզ» ՓԲԸ-ի և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի միջև ստորագրվել է համագործակցության նամակ հուշագիր՝ ծրագրի միջոցների ներգրավմամբ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով իրականացվող բնակարանաշինության ծրագրի շրջանակներում Ախուրյան համայնքում կառուցվելիք 3 բազմաբնակարան շենքերից մեկը էներգետիկ արդյունավետության բարձր ցուցանիշներով կառուցելու նպատակով: Օրինակելի շենքի շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2012թ. և ձեռք բերված արդյունքները հիմք կհանդիսանան կառուցվող բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառման համար:

Երևանի կայուն զարգացման և էկոլոգիական անվտանգության խնդիրները որքանով փոխկապակցված են հանրապետության տարաբնակեցման համակարգի կայուն զարգացման հետ, այնուհանդերձ, պայմանավորված են նաև մայրաքաղաքում իրականացվող առկա քաղաքաշինական գործընթացներով: Խնդիրը կայանում է նրանում, որ 1990–ականների կեսերից Երևանում իրականացված բարձրահարկ կետային և համալիր կառուցապատումները, տարածքային ոչ համաչափ զարգացման արդյունքում, բարձրացրել են քաղաքի կառուցապատման խտությունը հատկապես կենտրոնում: Քաղաքի փաստացի կառուցապատման համատեքստում իրականացված ուրբանիզացիան հատկապես մտահոգիչ է բակային և ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների պահպանման և բարեկարգման, սեյսմիկ և բնապահպանական ռիսկերի բարձրացման հարցերում: Երևանի քաղաքապետարանի կողմից այդ հարցերի լուծմանը նպատակաուղղված գործողությունները հիմնականում ներառվել են ՀՀ կառավարության 07.09.2006թ. թիվ 1402–Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի /2006–2020թթ./ իրականացման հիմնական միջոցառումների ծրագրում:

Երևանի քաղաքապետարանի կողմից այժմ քայլեր են ձեռնարկվում մայրաքաղաքի կառուցապատման գործընթացն ապակենտրոնացնելու նոր ռազմավարության ուղղությամբ: Նման սկզբունքի կենսագործումը ոչ միայն կզսպի կառուցապատման հետագա գործընթացը քաղաքի կենտրոնում, այլև կնպաստի քաղաքի վարչական մյուս շրջանների զարգացմանը, իր հերթին կարևորագույն միջոց հանդիսանալով մայրաքաղաքի ընդհանուր կայուն և համաչափ զարգացման համար: Համաձայն նոր ռազմավարության, մասնավորապես, նախատեսվում է՝

- քաղաքաշինական ներդրումային ծրագրերը ուղղորդել բացառապես քաղաքային կենսամիջավայրի բարեկեցության պայմանների և որակների բարձրացմանը՝ վերջիններս ներդաշնակելով «Կանաչ քաղաքաշինության» և «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» սկզբունքներին և զաղափարախոսու-

թյանը,

- քաղաքաշինական խոշոր ծրագրերն ու նախագծերը և այս ուղղությամբ կատարվող ներդրումները Կենտրոնից և փոքր Կենտրոնից տեղափոխել այլ վարչական շրջաններ:

ՀՀ կառավարության կողմից 2011թ. նոյեմբերին ընդունվել է «ՀՀ լանդշաֆտի ազգային քաղաքականության իրագործման հիմնադրույթներին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը, որի հիմնադրույթները, բացի Երևան քաղաքում լանդշաֆտային քաղաքականության իրագործման միջոց, հիմք պետք է հանդիսանան նաև ՀՀ կառավարության 2011թ. մարտի 24-ի «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայից բխող ՀՀ պարտավորությունների կատարման 2011–2012թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 308-Ն որոշման հավելվածի ցանկի 6-րդ կետի պահանջը կատարելու համար: Վերջինս ներառված է Կոնվենցիայի իրագործման կարճաժամկետ միջոցառումների մեջ և վերաբերում է մինչև տարեվերջ հաստատման ենթակա «Երևան քաղաքում լանդշաֆտի պահպանության, պլանավորման և զարգացման հայեցակարգին»:

Փաստաթղթի համաձայն Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար՝ Երևանի քաղաքապետարանը, ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, պարտավորություններ է ստանձնում ապահովելու քաղաքային և քաղաքամերձ ազդեցության տարածքներում լանդշաֆտների պահպանության, կառավարման և պլանավորման գործընթացների իրագործումը: Այդ գործընթացներում լանդշաֆտի բաղադրիչը պետք է կազմի տարածքային զարգացմանն առնչվող ոլորտային բոլոր կարգի ծրագրերի և նախագծերի բաղկացուցիչ մասը, հիմնավորվի Երևանին առնչվող տարածական պլանավորման փաստաթղթերով:

Այս համատեքստում՝ «Կանաչ քաղաքաշինության» և «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» դրույթներից բխող պահանջներն ամրագրվել են 2010թ.-ից մշակվող և այժմ համաձայնեցման փուլում գտնվող Երևանի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի առաջադրանքում: Նախագծում համակողմանի վերլուծության է ենթարկվել մայրաքաղաքի կանաչապատման ողջ համակարգը և կանաչապատման դինամիկան 2005–2009թթ. ընկած ժամանակահատվածում, տրվել վերջինիս զարգացման ուղղություններն ու միջոցառումները: Քաղաքի կանաչապատման համակարգի վերականգնման և ընդլայնման համար գլխավոր հատակագծի հիմնական դրույթներով նախատեսված է մշակել և իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ ներառում է ներքոհիշյալ հիմնադրույթները՝

- վերականգնման աշխատանքներ՝ նոր տարածքների կանաչապատման իրականացում նախագծերին, ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ռոտզումը, խնամքը և պահպանությունը,
- տնկարանային և ջերմատնային տնտեսությունների ստեղծում,
- անխափան ռոտզում երաշխավորող ռոտզման ցանցի կառուցում,
- ժամանակակից տեխնոլոգիաների և գիտության նվաճումների ներդրում,
- տնկանյութի տեսականիի հիմնավորված ընտրություն,
- 2020թ. կանաչ տնկարկների ընդհանուր մակերեսը հասցնել մինչև 9397.7 հա (78.3մ²/մարդ), այդ թվում՝ ընդհանուր օգտագործմանը՝ մինչև 2382.3 հա (19.85մ²/մարդ), սահմանափակ օգտագործմանը՝ մինչև 3245.3 հա (27.05մ²/մարդ), հատուկ նշանակությանը՝ մինչև 3770.1 (31.4մ²/մարդ):

Ըստ կատարված ուսումնասիրությունների, քաղաքի կանաչ տնկարկների ընդհանուր մակերեսը 2005-2009թթ. ընթացքում ավելացել է 1212.5 հա-ով, այդ թվում՝ ընդհանուր օգտագործմանը՝ 292 հա-ով, սահմանափակ օգտագործմանը՝ 78.4 հա-ով, հատուկ նշանակությանը՝ 674.8 հա-ով: Ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներով ապահովվածությունն ավելացել է 2.6 մ² -ով և 2009թ. այն կազմել է 7.6մ²/մարդ: Վերականգնված է տնկարանը (21 հա) և ստեղծված է ջերմոցային ծաղկային տնտեսություն (0.4 հա):

Գլխավոր հատակագծով քաղաքի կանաչապատման վերականգնման և զարգացման նախատեսված միջոցառումները ներկայումս իրականացվում են, սակայն նկատվում է, որ նախագծային ցուցանիշներից զգալիորեն հետ են մնում:

Գլխավոր հատակագծի նախագծի ճշգրտման ընթացքում զգալիորեն վերանայվել, ավելացվել և հստակեցվել են ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, ինչը հնարավոր դարձավ՝ մի կողմից գոտիավորման նախագծերում հատակագծային լուծումների մանրամասնեցման և կանաչապատման լրացուցիչ հնարավորությունների բացահայտման արդյունքում, մյուս կողմից՝ սանիտարական գոտիների ճշգրտման և բուֆերային տարածքների կանաչապատման հնարավորությունների օգտագործման և տարածական հստակեցման շնորհիվ:

Կանաչապատման համակարգի ճշգրտումների համար հիմք են ընդունվել.

- հատակագծային սահմանափակումների փոփոխությունները,

- Երևանի գլխավոր հատակագծում պահուստավորված սանիտարական գոտիների փոխարեն լիարժեք ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների կազմակերպումը,

- վարչական շրջանների հանգստի և հասարակական կենտրոնների տեղաբաշխմանը, գործառական ուղղվածությանը և երկարաժամկետ և օպերատիվ միջոցառումներին վերաբերող ծրագրային առաջարկները:

2006թ. մշակվել է Երևանի ազլոմերացիայի տարածքային հատակագծման նախագիծը, որտեղ հայեցակարգային մակարդակով մանրամասն քննարկվել են Երևան քաղաքի շուրջ Օղակաձև անտառի ստեղծման կանաչապատման և ծաղկապատման համալիր կազմակերպման հարցերը:

2007թ. մշակվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված կանաչապատման տարածքների էսքիզային նախագիծը, որտեղ ըստ տեղերում կատարված բնական հետազոտությունների և գնահատականների առանձնացվել են կանաչապատման ենթակա փաստացի ազատ տարածքները:

Քաղաքի որոշ վարչական շրջանների գոտիավորման 2007-2009թթ. նախագծերում, որտեղ ճշգրտվում էին գոյություն ունեցող կանաչապատ տարածքները և առանձին դեպքերում՝ նախագծային պահանջներից ելնելով, ավելացվում այդ տարածքների մակերեսները: Գործընթացը դեռ շարունակվում է, քանի որ մնացած վարչական շրջանների նախատեսվող նոր գոտեզման նախագծերում կանաչապատման գոտիների զգալի չափով ավելացման հնարավորություններ կան, մասնավորապես՝ գլխավոր հատակագծի նախագծում նախատեսված բուֆերային տարածքների հաշվին:

2010թ. «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի քննարկմանը և հաստատմանն է ներկայացվել «Երևան քաղաքի վարչական շրջանների հասարակական հանգստի կենտրոնների կազմավորման և զարգացման» ծրագիրը, որտեղ բերվում է հանգստի կենտրոնների տեղաբաշխման և գործառական ուղղվածության կազմակերպման նախնական առաջարկը: Առաջադրված հանգստի կենտրոնների համակարգը պետք է հիմք ընդունվի «Երևան քաղաքի և քաղաքամերձ գոտու կանաչապատման համալիր սխեմայի» մշակման և իրականացման համար՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի ճշգրտման ընթացիկ աշխատանքների ավարտից հետո: Որպես հանգստի կենտրոնների կանաչապատ տարածքների հատակագծակառուցվածքային կազմավորման հիմնական կառուցվածքային տարրեր առանձնացվել են զբոսայգիները, քաղաքային այգիները, բուլվարները /զբոսապուրակները/, պուրակները: Քաղաքային և շրջանային նշանակության զբոսայգիների հետ համատեղ առանձնացվել են նաև մասնագիտացված /թեմատիկ/ այգիներ, այն է՝ մանկական, սպորտային, ցուցադրական, կենդանաբանական, բուսաբանական, այլ տիպի այգիներ և պուրակներ՝ կապված տեղական առանձնահատկությունների հետ:

3.3. Հիմնական խնդիրները

- Հայաստանում աղքատության հաղթահարման ռազմավարության նպատակադրումներն ու իրագործումը 2003թ. ի վեր ընթացան տնտեսական առաջընթացի փուլերին համահունչ: «Տնտեսության կայունացումից տնտեսական աճ» և «քանակական աճից որակական զարգացման նախադրյալների ապահովում» անցումներին համընթաց Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրականացմամբ, հետագայում՝ դրա ձեռքբերումների հիման վրա ձևավորված Կայուն Զարգացման Ծրագրով (ԿԶԾ) փաստորեն որոշումների կայացման բոլոր մակարդակներում կողմերը համաձայնության եկան երկիրը կայուն զարգացման ուղի դուրս բերելու հարցում: Այնուամենայնիվ, որոշակի օրենսդրական և մեթոդաբանական հիմքերի բացակայությունը խոչընդոտում է Հայաստանում «Կանաչ տնտեսության» ներդրման գործընթացին: «Կանաչ տնտեսության» ներդրման գործընթացում առկա են դեռևս չլուծված խնդիրներ, որոնք աստիճանական լուծում և զարգացած երկրների կողմից զարգացող երկրներին ցուցաբերվող պարտադիր օժանդակություն են պահանջում՝ բոլոր հնարավոր կամ հասանելի ձևերով և մեխանիզմներով: Մասնավորապես.

- «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների մասով գիտական ուսումնասիրությունների սահմանափակ ծավալները, դրանց գծով առաջարկների սակավ թվաքանակը: Դեռևս բավարար արդյունավետ չեն օգտագործվում «կանաչ» նորամուծությունների խթանման գծով պետության միջամտության հիմնական՝ գիտական ուսումնասիրությունների ֆինանսավորման ապահովմանը և նորամուծությունների ներդրման նախնական փուլում խոչընդոտների վերացմանը նպատակաուղղված մեխանիզմները: Դեռևս ստեղծված չեն, հատկապես միջազգային բնապահպանական համաձայնագրերի (պայմանագրերի) շրջանակներում, բավարար մեխանիզմներ զարգացած երկրների կողմից զարգացող երկրներին «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների փոխանցման համար: «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների շրջակա միջավայրի վիճակի բարելավման և բնապահպանական ծառայությունների ֆի-

նանսավորման գործընթացում ֆինանսական/բանկային կապիտալի մասնակցության համար դեռևս ստեղծված չեն նպաստավոր պայմաններ:

- Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներում շրջակա միջավայրի աղտոտման և բնական ռեսուրսների գերշահագործման բաղադրիչի մասով համապատասխան ուսումնասիրությունների և գնահատումների բացակայությունը:

- Վերականգնվող էներգետիկայի զծով նոր տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների (հողմային ԷԿ, արևային կայանքներ) ներդրմանը խոչընդոտում են դրանց արտադրության կամ ձեռքբերման բարձր գները:

- Բնօգտագործման վճարների դրույքաչափերի ցածր մակարդակի պայմաններում ռեսուրսների (նյութերի) ցիկլային օգտագործումը դեռևս տնտեսապես շահավետ չի գնահատվում:

- Հարկային և թույլտվությունների (սահմանափակումների) գործող համակարգերը ձեռնարկությունների (հատկապես՝ բնօգտագործող կազմակերպությունների) մոտ դեռևս անհրաժեշտ խթաններ չեն ստեղծում «Կանաչ տնտեսության» անցմանը նպատակաուղղված վարքագծի փոփոխության համար, դրանց կարգավորիչ դերակատարումը զգալի կերպով զիջում է ֆինանսական դերակատարմանը:

- Գործող ստանդարտները և տեխնիկական կանոնակարգերը բավարար պահանջներ չեն սահմանում միաժամանակ բարձր արտադրողական և կանաչ (էներգաարդյունավետ, ռեսուրսխնայող և այլ) տեխնոլոգիաների ներդրման, էկոլոգիապես մաքուր և բարձր որակ ունեցող արտադրանքի արտադրության և (կամ) գնումների համար:

- Տրանսպորտային ոլորտում նույնպես գործող տնտեսական գործիքները դեռևս բավարար խթաններ չեն ստեղծում արտանետումների նվազման, չվերականգնվող էներգետիկ ռեսուրսների բնական օգտագործման համար: Տրանսպորտային հարկերից ստացվող ֆինանսական միջոցները չեն նպատակաուղղվում ավելի էներգաարդյունավետ և սակավ արտանետումներով («կանաչ») տրանսպորտային փոխադրումներ ապահովող հասարակական (հատկապես՝ վերգետնյա և ստորգետնյա) էլեկտրատրանսպորտի զարգացմանը:

- Դեռևս բավարար չափով ձևավորված չէ «Կանաչ տնտեսության» անցմանը նպատակաուղղված քաղաքական կամքը (ավելի ճիշտ, դեռևս բավարար չեն գնահատվում «Կանաչ տնտեսության» անցման տնտեսական և սոցիալական առավելությունները՝ էկոլոգիական արդյունավետության և սոցիալական արդարության ապահովման պայմաններում):

- Էկոլոգիական կրթության գործող համակարգը դեռևս բավարար չի օգտագործում մարդկային մտածելակերպի փոփոխման ներուժը, որպես «Կանաչ տնտեսության» անցման կարևոր գործոն՝ որոշումների ընդունման, վարքագծի փոփոխման, պահանջների (սահմանափակումների) սահմանման, կանաչ տեխնոլոգիաների, էկոլոգիապես մաքուր և բարձր որակ ունեցող արտադրանքի նկատմամբ պահանջարկի (հատկապես՝ էկոապրանքների պիտակավորման և հավաստագրման համակարգերի ներդրման ժամանակահատվածում) ձևավորման համար:

- *Դժվար է երկրի փոքր տարածքում համատեղել տնտեսական զարգացման որդեգրած առաջնայնությունները՝ հանքարդյունաբերությունը /հատկապես մետաղային հանքերի ակտիվ շահագործումը /մաքուր գյուղատնտեսության և տուրիզմի հետ:*

Ակնհայտ է, որ շրջակա միջավայրի աճող աղտոտվածությունը, հատկապես բաց հանքարդյունահանման ու պոչամբարների ցանցի ընդլայնման, ինչպես նաև թափոնների կառավարման խիստ անբավարար համակարգի հետևանքով, կարող է լուրջ խոչընդոտ լինել օրգանական գյուղատնտեսության զարգացման համար:

Անհրաժեշտություն կա նաև բարելավել գյուղատնտեսական թունաքիմիկատների կիրառման ոլորտը, լուծում տալ թունաքիմիկատների գերեզմանոցի, ժամկետանց և արգելված թունաքիմիկատների կուտակումների վերացման/վնասագրման խնդրին:

Էական խնդիր է նաև կասկածելի ծագման սերմնացուների ներկրումն ու օգտագործումը, դրանց պատշաճ ստուգման կազմակերպումը, անհրաժեշտ վայրի ցեղակիցների գենոֆոնդի պահպանությունը, ինչպես նաև նախկինում սելեկցիայի միջոցով ստացված բարձրորակ և բազմակողմանի անվտանգ տեսակների պահպանության ու զարգացման հարցը:

- *Նախաինդուստրիալ /հումքային/ տնտեսությունը կարիք չունի այլևս այն հզոր գիտական ներուժի, որը զարգացել և կուտակվել էր Հայաստանում նախկին տասնամյակներում: Ուստի, տեղի է ունեցել և շարունակվում է ուղեղների արտահոսք երկրից, ինչը, իհարկե, խոչընդոտում է գիտատար, մաքուր տեխնոլոգիաների զարգացմանը: Վերջերս կառավարության կողմից հաստատված «Հայաստանի արտահան-*

մանն ուղղված արդյունաբերական քաղաքականության հայեցակարգը», որը խրախուսում է տնտեսության ոչ տնտեսական ոլորտի զարգացումը, կարող է աջակցել վերոնշյալ հիմնախնդրի լուծմանը:

Ամփոփելով, «Կանաչ» (բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների) ներդրումների համար պետության կողմից նպաստավոր միջավայրի ստեղծման համապատասխան քաղաքականության, խրախուսման համապատասխան մեխանիզմների բացակայության պայմաններում դրանց ներդրումը մասնավոր հատվածի համար պահանջվող գրավչություն չի ներկայացնում, իսկ առանց մասնավոր հատվածի մասնակցության այդ գործընթացում առաջընթացն անհնար է: Այդ գործընթացում դեռևս բավարար կերպով չեն օգտագործվում քաղաքացիական հասարակության աջակցության, ինչպես նաև հանրային և մասնավոր հատվածների համագործակցության առկա բոլոր հնարավորությունները: Խնդրո առարկա գործընթացին խանգարում են բնապահպանական խնդիրների ոչ բավարար ինտեգրումը տնտեսության այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են՝ տրանսպորտը, էներգետիկան, բնակարանային տնտեսությունը և գյուղատնտեսությունը:

4. Զարգացման նախադրյալներ և առկա մարտահրավերներ

4.1. Ձեռքբերումներ

– Հետազննաժամային վերականգնման զարգացումները վկայում են այն մասին, որ Հայաստանի տնտեսական աճի մոդելը զարգացել է և առաջիկա տարիներին կշարունակի փոխվել: Տնտեսության այս ճյուղային կառուցվածքը կարելի է համարել առավել կայուն՝ համեմատած նախազննաժամային կառուցվածքի հետ:

– 2001-2011թթ. ժամանակաշրջանի միջին տնտեսական աճը կազմել է 8%:

– 2007-2011թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման շրջանակներում տրամադրվել է 1.5 անգամ ավելի (1723.5 մլրդ դրամ) հատկացումներ, քան 2002-2006 թթ. (1154 մլն դրամ): 2002թ. համեմատ տասննապատկվել է Հայաստանում ՓՄՁ զարգացման ինդեքսը:

– Առաջին անգամ ընդունվեց արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությունը, որի գլխավոր նպատակն է երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ուղրտների ձևավորումը:

– ԱԱՀ-ի վճարումը երեք տարի ժամկետով հետաձգման արդյունքում ՀՀ կառավարության կողմից թույլտվություն են ստացել 19 ընկերությունների 21 ներդրումային ծրագրեր և ստեղծվել են մոտ 1400 նոր աշխատատեղ:

– «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի արտոնություն է տրամադրվել 12 ընկերություններին՝ շուրջ 1.6 մլրդ ՀՀ դրամի ժամանակակից սարքավորումներ, որի արդյունքում հաջողվել է պահպանել շուրջ 2000 աշխատատեղ:

– 2007-11թթ. օտարերկրյա ներդրումների միջին տարեկան աճը կազմել է մոտ 11 տոկոս (ՕՈՒՆ՝ մոտ 15 տոկոս):

– 2011թ. ավարտվել է Հայաստանում ազատ տնտեսական գոտիներ ստեղծելու համար օրենսդրական դաշտի ձևավորումը՝ ապահովելով օտարերկրյա ներդրումների ներգրավման, արտահանման խթանման և գործարարության զարգացման համար նոր խթաններ:

– Բնակչության բնական հավելաճի գործակիցը 2002-2006թթ. աճել է 1.5 անգամ, իսկ 2007-2011թթ. ընթացքում պահպանվել է 1.5 անգամ աճը: Ընդ որում, 2011թ. հավելաճի գործակիցը 2002թ. նկատմամբ աճել է 2.2 անգամ:

– Վերջին շրջանում Հայաստանում իրականացվել է կանոնակարգման և ինստիտուցիոնալ դաշտի թվով 5 բարեփոխում՝ ամենաշատը տարածաշրջանում և աշխարհում, ինչի արդյունքում 16-ով հարկերի վճարման քանակը կրճատվել է, 2756 ժամով կրճատվել է բիզնեսի բնականոն վարման ժամանակ վարչական ընթացակարգերի վրա ծախսվող ժամանակը:

– Հաստատվել է ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնադրիքը, որը սահմանում է ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքների միջազգային լավագույն պրակտիկայից բխող չափանիշներ:

– Ապահովվել է հայկական ապրանքների համար օտարերկրյա շուկաների հասանելիության աճ: Մասնավորապես՝

– Պարզեցվել են արտահանման և ներմուծման ընթացակարգերը. կրճատվել է պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկը՝ այն նվազեցնելով 65-ից մինչև 16-ի, սերտիֆիկացման պարտադիր պահանջը մաքսային սահմանից տեղափոխվել է ներքին շուկա, պարզեցվել և մատչելի են

դարձվել ժամանակավոր ներմուծում/արտահանում վերամշակման նպատակով մաքսային ռեժիմների ընթացակարգերը և պահանջվող փաստաթղթերի քանակները:

– ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման շրջանակներում 2007-2011թթ. ընթացքում ՀՀ պետական բյուջեից հատկացված ավելի քան 1,7 մլրդ դրամի սահմաններում աջակցություն է ցուցաբերվել ավելի քան 21,000 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին:

– ՏՏ արտադրության ծավալը 2007թ.-ից 80 մլն ԱՄՆ դոլարից աճել է մինչև 205 մլն ԱՄՆ դոլար 2011թ.-ին (156.25%), ոլորտի ընկերությունների քանակն աճել է 82%-ով՝ 2007թ.-ի 165 ընկերությունից 2011թ.-ին հասնելով մոտ 300-ի: 2011թ.-ի դրությամբ ՏՏ ոլորտում ներգրավված է մոտ 5500 մասնագետ՝ 2007թ.-ին 4000 մասնագետի փոխարեն:

– Ներդրվել է էլեկտրոնային թվային ստորագրությունների համակարգը, որը լայնորեն կիրառվում է թե պետական փաստաթղթաշարժի իրականացման ընթացքում, թե հարկային մարմիններին հարկային հաշվետվություններ ներկայացնելուց:

– Ապահովվել է միջազգային շուկայում Հայաստանը որպես զբոսաշրջավայրի պահանջարկի աճ և մրցունակության էական բարելավում՝ ավելի քան կրկնապատկելով զբոսաշրջային այցելությունների թիվը. 2006թ. 381136-ի դիմաց 2011թ.՝ շուրջ 800000 այցելություն:

– 2000-ականների սկզբին տնտեսության կայուն զարգացումը բերեց աշխատավարձերի բարձրացման, զբաղվածության մակարդակի կայունացման և բյուջեից սոցիալական ոլորտներին ուղղվող ծախսերի ավելացմանը: Այդ ամենը, մասնավոր տրանսֆերտների աճող հոսքի հետ մեկտեղ, նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը (2008թ.-ին՝ 23.5%):

– Վերջին տասը տարիները կարելի է համարել տարեցների և հաշմանդամների սոցիալական աջակցության ոլորտի զարգացման ժամանակաշրջան: Բարելավվել է տարեցների ու հաշմանդամների սոցիալական սպասարկման որակը, ընդլայնվել ծառայությունների տեսականին, կազմակերպվել են նոր կառույցներ:

– Վերջին տասնամյակում էական դրական տեղաշարժեր են գրանցվել հիմնական պարենամթերքների ինքնաբավության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

– Անցած տարիների ընթացքում իրականացվել են արմատական բարեփոխումներ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ընթացակարգերի պարզեցման և կանոնակարգման ուղղությամբ:

– Էներգետիկայի ոլորտում իրականացված միջոցառումների շնորհիվ հնարավոր եղավ գնահատել Հայկական ԱԷԿ-ի հնարավոր փակման հետ կապված հետևանքները և փոխարինող հզորությունների անհրաժեշտ ծավալների հիմնավորումները՝ ուղղված հանրապետության էներգետիկ անկախության և անվտանգության ապահովմանը, գնահատել Հայաստանի էներգիայի պահանջարկի բավարարման տարբերակները:

– Ավարտվել են Իրան-Հայաստան գազամուղի շինարարությունը, ներդրվել է էլեկտրաէներգիայի հաշվառման և հսկման ավտոմատացված համակարգը արտադրող կայանների ռեժիմների օպտիմալացման արդյունքում հաջողվել է պահպանել էլեկտրաէներգիայի արտադրության հնարավոր նվազագույն սակագինը, կառուցվել է Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման երկրորդ գիծը:

– Տեղայնացվել և ներդաշնակեցվել են Եվրոպական տեխնիկական հանձնաժողովի կողմից սահմանված բնակելի և հասարակական շենքերի էներգատարության և էներգաարդյունավետության թվով 7 ստանդարտները:

– Ստեղծվել է Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

– Համաձայն CIVICUS Քաղաքացիական ինդեքս նախագծի իրականացման արդյունքների, իրենց սուբյեկտիվ փորձառությունից ՔՀԿ-ների մեծամասնությունը (65.6%) համարում է, որ քաղաքացիական հասարակության համար երկրի օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը կամ չափավոր, կամ լիովին նպաստավոր են: Հայաստանյան քաղաքացիական հասարակության գործունեությունը կանոնակարգող օրենսդրական դաշտին շնորհում է 3.9 ցուցանիշ: Սա նշանակում է, որ օրենսդրական դաշտը գտնվում է անցումային միջին շրջանում:

– Սևանա լճի մակարդակը 2001թ.-ից բարձրացել է ավելի քան 3.6 մ.-ով:

– 2005թ. ներդրվել է ջրային ռեսուրսների ջրավազանային կառավարման համակարգը:

– 2001թ.-ին խմելու ջրամատակարարման միջին տևողությունը հանրապետության համար կազմել է 15 ժամ, մինչդեռ 2004թ.-ին՝ 6 ժամ:

– Բնության հատուկ պահպանվող տարածքների ցանցի ընդլայնման շնորհիվ /2009թ. ընթացքում ստեղծվել են «Արփի լիճ», «Արևիկ» ազգային պարկերը և «Ջանգեգուր» պետական արգելավայրը, իսկ

2010թ.-ին՝ «Զիկատար» պետական արգելավայրը/ ԲՀՊՏ-ների ընդհանուր մակերեսը ներկայումս կազմում է հանրապետության տարածքի 12.8%:

– Կատարվել են անտառվերականգնման և անտառպահպանման աշխատանքներ 32065 հա տարածքում:

– Ներդրվել է մթնոլորտային արտանետումների նորմավորման էլեկտրոնային համակարգը:

– ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիայի Կիոտոյի արձանագրության մաքուր զարգացման մեխանիզմի շրջանակում (ՄՁՄ) Հայաստանի Հանրապետությունն ունի միջազգային ՄՁՄ գործադիր խորհրդի կողմից գրանցված և իրականացման կամ շահագործման մեջ գտնվող 5 նախագիծ:

– Ստեղծվել է թափոնների կառավարման իրավական հենքը:

– Բարելավվել է հասարակության իրազեկման գործընթացը, զարգանում է հասարակական լսումների համակարգը, ակտիվանում է հասարակության դերը որոշումների ընդունման գործընթացում:

– Ապահովվում են մշակութային ժառանգության պահպանությունն ու հանրահոշակման մեխանիզմները, արվեստի զարգացումը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացումը, մշակութային կրթության մատչելիությունն ու որակը:

– Վավերագրվել են արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանները, մեկնարկվել է արխիվների թվայնացման գործընթացը:

– Ընդլայնվել են միջպետական մշակութային կապերը և միջազգային մշակութային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

– Երեխաների և դեռահասների առողջության պահպանմանն ու զարգացմանն ուղղված ազգային ռազմավարության արդյունքում շարունակաբար նվազել է մանկական մահացության ընդհանուր գործակիցը՝ 2011թ. կազմելով 11.8 (2002թ. 14):

– Հայաստանին հաջողվել է վերացնել տեղական մալարիան երկրի տարածքում: 2006թ.-ից երկրում մալարիայի տեղական դեպքեր չեն գրանցվել: 2010-2011թթ. ընթացքում, համաձայն միջազգայնորեն ընդունված ընթացակարգի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունը ճանաչվել է որպես մալարիայից ազատ գոտի:

– Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների հաջող իրականացման արդյունքում 2002թ. Հայաստանը՝ ի թիվս եվրոպական տարածաշրջանի երկրների, հռչակվել է պոլիոմիելիտից ազատ երկիր և առ այսօր պահպանում է այդ կարգավիճակը:

4.2. Մարտահրավերներ գլոբալ և ազգային մակարդակներում

4.2.1. Գլոբալ մակարդակ

«Ռիո»-ից հետո ընկած ժամանակահատվածում միջազգային և տարածաշրջանային հարաբերություններում գերիշխող են դարձել գործընկերության, տարածաշրջանային անվտանգության և համագործակցության խնդիրները: Այնուամենայնիվ, դեռևս առկա են գլոբալ մարտահրավերներ, ինչպես նաև լուծումներ պահանջող հարցադրումներ և սահմանափակումներ, մասնավորապես.

– Կլիմայի գլոբալ փոփոխության և բնական աղետների քանակի և ուժգնության աճը,

– Գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հնարավոր նոր ալիքները,

– Սպառողական մտածելակերպի գերիշխումը էկոլոգիական մոտեցման հանդեպ,

– Համաշխարհային տնտեսության սկզբունքները «Վաշինգտոնյան կոնսենսուսից» դեպի «Կանաչ համաձայնագրի» վերափոխման համար անհրաժեշտ մեխանիզմների բացակայությունը,

– Զարգացման ռեսուրսների, դրանց օգտագործման և դրանցից բխող տնտեսական եկամուտների բաշխման, թե՛ միջազգային, և թե՛ տարածաշրջանային առումներով անհամաչափությունը:

4.2.2. Տարածաշրջանային մակարդակ

Մեր տարածաշրջանի պետությունները ներգրավված են բազմաթիվ գործընկերային կառույցներում և մակարդակներում: Այնուհանդերձ, տնտեսական համագործակցության տեսանկյունից մեր տարածաշրջանը մնում է մասնատված և զուրկ՝ կայունության ու անվտանգության ընդգրկուն և համապարփակ մեխանիզմներից: Տարածաշրջանում դեռևս առկա մարտահրավերներից են.

– Բաժանարար գծերը,

– Չկարգավորված հակամարտությունները,

– Սպառազինությունների մրցավազքը,

– Ժողովրդավարության և ժողովրդավարական ինստիտուտների անհամաչափ զարգացումը:

Կասայան էներգակիրների անշրջահայաց օգտագործումը, դրանցից ստացված եկամուտների ուղղումը սպառազինությունների մրցակազմին, էներգակիրներ արդյունահանողների, փոխադրողների և սպառողների միջև մրցակցությունն ու շահարկումները հավելյալ լարվածություն են ստեղծում տարածաշրջանում՝ իրենց մեջ պարունակելով բաժանարար գծերի խորացման և ապակայունացման լուրջ ներուժ:

Այս իմաստով առանձնանում է Թուրքիայի կողմից հայ-թուրքական ցամաքային սահմանի միակողմանի փակումը: Ավելին, Ադրբեջանն ու Թուրքիան շարունակում են տնտեսական շրջափակման և տարածաշրջանային ծրագրերից Հայաստանի մեկուսացման քաղաքականությունը:

Տարածաշրջանում կարևորագույն մարտահրավեր է մնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության չկարգավորված լինելը:

Թեև վերջին տարիներին զգալիորեն աշխուժացել էր կարգավորման բանակցային գործընթացը ԵԱՀԿ Մինսկի Խմբի եռանախագահների համաձայնեցված ձևաչափի շրջանակներում, այնուամենայնիվ, կողմերը դեռևս բանակցում են հիմնարար սկզբունքների շուրջ:

Ըստ ԵԱՀԿ ԱԳ նախարարների Հելսինկիի, Աթենքի, Ալմաթայի և Վիլնյուսի հայտարարությունների, ԵԱՀԿ Աստանայի գագաթաժողովի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարների լ'Ակվիլայում, Մուսկոկայում և Դովիլում ընդունված հայտարարությունների, հակամարտությունը պետք է կարգավորվի միջազգային իրավունքի երեք հիմնական սկզբունքների հիման վրա. ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության:

Ադրբեջանի իշխանությունները վարում են ապակառուցողական և ռազմատենչ քաղաքականություն՝ խոչընդոտելով տարածաշրջանի անվտանգությանը և կայուն զարգացմանը.

– աղավաղելով ԼՂ հակամարտության էությունը և կարգավորման հիմնարար սկզբունքները, Ադրբեջանը շրջանցում է բանակցությունների համաձայնեցված ֆորմատը՝ փորձելով ԼՂ հիմնահարցը ներառել այլ միջազգային ասյանների կամ մի շարք երկրների ազգային խորհրդարանների օրակարգում;

– վերջին 6 տարվա ընթացքում Ադրբեջանը գրեթե 20 անգամ բարձրացրել է իր ռազմական ծախսերը՝ խախտելով ԵՍՁՈԻ պայմանագրով հաստատված առաստաղները և ձեռք բերելով ոչ միայն պաշտպանական, այլև՝ բացահայտ հարձակողական զինատեսակներ:

Ադրբեջանը շարունակում է մերժել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկներն՝ ուղղված կողմերի միջև վստահության հաստատմանը և զինադարաի ռեժիմի ամրապնդմանը, մասնավորապես, հրաժարվելով.

- դուրս բերել դիպլոկահարներին հայ-ադրբեջանական սահմանից և ԼՂ-Ադրբեջան շփման գծից,
- ստեղծել զինադարաի խախտումների հետաքննության մեխանիզմ:

Տարածաշրջանի խաղաղ և կայուն զարգացման համար վտանգ է ներկայացնում նաև Ադրբեջանում իշխող հակաժողովրդավարական ավտորիտար վարչակարգը, որը սեփական ժողովրդին սնում է «թշնամի երկրների և ժողովուրդների» պատրանքներով, անտեսելով և՛ գլոբալ, և՛ տարածաշրջանային իրական մարտահրավերները:

Այս բոլորի հետևանքով տարածաշրջանի երկրների հնարավորություններն օգտագործվում են ոչ լիարժեք, շահերի համադրման փոխարեն տեղ են գտնում իրարամերժ մրցակցության դրսևորումներ, իսկ կայուն զարգացման ծրագրերի իրականացումը սկսում է սպառել չնախատեսված ջանքեր, ռեսուրսներ և ժամանակ:

Այս խնդիրների և մարտահրավերների առկայության պայմաններում Հայաստանը շարունակելու է մնալ հուսալի գործընկեր և միջազգային ընտանիքի անբաժանելի անդամ՝ առաջ մղելով և ջանակցելով մարտահրավերները հնարավորությունների վերափոխող յուրաքանչյուր նախաձեռնության, ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային և ազգային մակարդակներում:

Մեյնամակտիվ գոտում լայնամասշտաբ տեխնածիհ գործունեության, մասնավորապես, ինտենսիվ նավթ/գազարդյունահանման, հետևանքով տարածաշրջանում ավելանում է սեյսմիկ վտանգը:

4.2.3. Ազգային մակարդակ

- Տնտեսական մենաշնորհի, ստվերային տնտեսության և կոռուպցիայի առկայություն:
- Հասարակության տարբեր խմբերի միջև եկամուտների անհամաչափ բաշխում, հասարակության բնեռացման ուժեղացում: Աղքատության մակարդակի ավելացում:
- Աշխատանքային միգրացիա և արտագաղթ երկրից, մասնավորապես, սահմանամերձ գյուղերից:
- Հանրապետությունում ամբողջական չեն աշխատանքի պաշտպանության վերաբերյալ նորմատիվ-տեխնիկական ակտերը և ստանդարտները:
- Պարենամթերքի գների աճը կարող է երկարաժամկետ բնույթ կրել, որը Հայաստանի դեպքում լրա-

ցուցիչ լարվածություն է ստեղծելու ինչպես առևտրային և վճարային հաշվեկշիռների առումով /քանի որ Հայաստանը սննդամթերքի գուտ ներմուծող է/, այնպես էլ բյուջետային ծախսերի միջոցով աղքատության մակարդակի աճը կանխելու և աղքատության հաղթահարման ռազմավարության նպատակներին հասնելու տեսանկյունից:

– Այդպիսի գործոն է հանդիսանում նաև գլոբալ տաքացումը, որի դեպքում մեծանում է կլիմայի փոփոխման անկանխատեսելիության աստիճանը, ինչը նաև կարող է բերել գյուղատնտեսությամբ զբաղվողների եկամուտների կրճատմանը (մասնավորապես՝ գյուղատնտեսական գործունեության պայմանների վատթարացման միջոցով) և պետական ծախսերի աճին (պայմանների փոփոխությունը փոխհատուցելուն և գյուղական աղքատության աճը կանխելուն ուղղված ծախսերը):

– Էներգիայի առավել արդյունավետ օգտագործման և էներգախնայողության օրենսդրական դաշտը, ինչպես նաև այս ոլորտում իրականացվող քաղաքականությունը կարիք ունեն կատարելագործման, հատկապես քաղաքաշինության և սպառման բնագավառներում:

– Տրանսպորտային ոլորտում գործող տնտեսական գործիքները դեռևս բավարար խթաններ չեն ստեղծում արտանետումների նվազման, չվերականգնվող էներգետիկ ռեսուրսների բանական օգտագործման համար: Տրանսպորտային հարկերից ստացվող ֆինանսական միջոցները չեն նպատակաուղղվում ավելի էներգաարդյունավետ և սակավ արտանետումներով («կանաչ») տրանսպորտային փոխադրումներ ապահովող հասարակական (հատկապես՝ վերգետնյա և ստորգետնյա) էլեկտրատրանսպորտի զարգացմանը:

– Որոշ հիվանդությունների, այդ թվում՝ քաղցրեղի, երիտասարդացում:

– Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնում:

– Բնական ռեսուրսների գերշահագործում:

– Անապատացման վտանգի աճը:

– Ապօրինի ծառահատումների առկայություն:

– Բնապահպանական և սոցիալական խնդիրներն անտեսող «կոմերցիոն» շինարարության առկայություն:

– «Կանաչ տնտեսության» անցման օրենսդրական դաշտի անկատարությունը

– «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների մասով գիտական ուսումնասիրությունների սահմանափակ ծավալները, դրանց գծով առաջարկների սակավ թվաքանակը: Դեռևս բավարար արդյունավետ չեն օգտագործվում «կանաչ» նորամուծությունների խթանման գծով պետության միջամտության հիմնական՝ գիտական ուսումնասիրությունների ֆինանսավորման ապահովմանը և նորամուծությունների ներդրման նախնական փուլում խոչընդոտների վերացմանը նպատակաուղղված մեխանիզմները: Դեռևս ստեղծված չեն, հատկապես միջազգային բնապահպանական համաձայնագրերի (պայմանագրերի) շրջանակներում, բավարար մեխանիզմներ զարգացած երկրների կողմից զարգացող երկրներին «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների փոխանցման համար: «Կանաչ» տեխնոլոգիաների և նորամուծությունների շրջակա միջավայրի վիճակի բարելավման և բնապահպանական ծառայությունների ֆինանսավորման գործընթացում ֆինանսական/բանկային կապիտալի մասնակցության համար դեռևս ստեղծված չեն նպաստավոր պայմաններ:

– Էկոլոգիապես անվտանգ և մաքուր տեխնոլոգիաների ներդրմանը խթանող համակարգի բացակայություն:

– Էկոլոգիական մտածելակերպի բացակայություն:

– Էկոլոգիական կրթության գործող համակարգը դեռևս բավարար չի օգտագործում մարդկային մտածելակերպի փոփոխման ներուժը, որպես «կանաչ» տնտեսության անցման կարևոր գործոն՝ որոշումների ընդունման, վարքագծի փոփոխման, պահանջների (սահմանափակումների) սահմանման, կանաչ տեխնոլոգիաների, էկոլոգիապես մաքուր և բարձր որակ ունեցող արտադրանքի նկատմամբ պահանջարկի (հատկապես՝ էկոապրանքների պիտակավորման և հավաստագրման համակարգերի ներդրման ժամանակահատվածում) ձևավորման համար:

– Էթնոէկոլոգիական մշակույթի բացակայություն. որոշակի բնապատմական միջավայրի առանձնահատկություններով պայմանավորված՝ ժամանակի ընթացքում ձևավորված ավանդական բնօգտագործման գիտելիքների ու հմտությունների արժևորման պակաս:

– Գիտություն–արտադրություն կապի խզման պահպանում:

– Վնասակար արտանետումների, հոսքաջրերի և առողջությանը սպառնացող թափոնների ծավալների ավելացում:

4.3. Առաջարկություններ

- ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացում.
- Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի արմատավորում.
- Անհրաժեշտ է խթանել արտաքին ցնցումների կլանման և մակրոտնտեսական կայունության ապահովման գործում արտահանումն ու դիվերսիֆիկացիան, ինչպես նաև ապահովել բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի բացումը և աշխատանքի բարձր արտադրողականությունը.
 - Արդյունաբերական քաղաքականության իրականացում.
 - ՀՀ տնտեսության բացության աստիճանի մեծացում՝ համաշխարհային տնտեսությանը ինտեգրման խորացմամբ.
 - Գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմնական ինստիտուտների ստեղծում և զարգացում:
ՀՀ տնտեսական ռազմավարության կարևորագույն հենակետը գիտությունն է, գիտության զարգացումը, որը ենթադրում է արդյունավետ պետական քաղաքականության իրականացում՝ ուղղված գիտական ներուժի նպատակային վերարտադրությանը, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի կազմակերպմանը, գիտության և կրթության ինտեգրմանը և այլն: Այս իմաստով առաջընթացի առանցքային շեշտադրումը Հայաստանում մարդկային կապիտալի զարգացման վրա է, ինչի արդյունքում մրցակցությունն առավելապես հիմնվում է արդիական տեխնոլոգիաների ներդրման կարողությունների վրա, ինչն իր հերթին հանգեցնում է առանձին բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցման և, միաժամանակ, նոր արժեք ստեղծելու մեջ մարդկային գործունի դերի մեծացմամբ տնտեսական առավել արդյունավետ գործունեության ծավալման:
 - Տնտեսական գործունեության հավասար պայմանների ստեղծում, մենաշնորհի հետևողական վերացում:
 - Տարածքային համաչափ զարգացման ապահովում:
 - Պետական կառավարման որակի բարձրացում:
 - Երկրում ժողովրդավարական սկզբունքների ամրապնդում, օրենքների կիրարկումն ու իրավական պետության կայացման ապահովում:
 - Անհրաժեշտ են օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործառնական համալիր բարեփոխումներ, ուղղված Հայաստանի աշխատաշուկայի քրոնիկ անհավասարակշռության հաղթահարմանը:
 - ՀԿ համայնքի գործունեությունը կարգավորող օրենսդրության բարելավում, մասնակցային գործընթացների խթանում:
 - Արտագաղթի կանխմանը և ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացում:
 - Բնապահպանական օրենսդրության կատարելագործում:
 - ՀՀ կառավարության կողմից 2010թ. հաստատված «ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009թ. աշխատանքային ծրագրին համապատասխան մշակված և ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գրություններով ներկայացված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 876-Ն որոշմամբ ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի 2009թ. աշխատանքային ծրագրի, համաձայն միջոցառումների ժամանակացույցի, իրականացում:
 - Բնական ռեսուրսների բնական օգտագործում:
 - ԲՀՊՏ-ների համակարգի հզորացում, էկոլոգիական ցանցի ձևավորում:
 - Անտառային ռազմավարության վերանայում:
 - Ընդերքօգտագործման բնագավառում ռազմավարության մշակում, պոչամբարների օգտագործում որպես հումքի աղբյուր:
 - Բնակավայրերի, հատկապես մայրաքաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավում, այդ թվում՝ տարածական և լանդշաֆտային պլանավորման գործիքակազմի հավուր պատշաճի կիրառման և իրագործման միջոցով:
 - Այլընտրանքային էներգետիկայի զարգացում, մասնավորապես, հելիոֆիկացիայի ծրագրի մշակում և իրականացում:
 - Կայուն զարգացման սկզբունքներին, ծրագրերին և դրական փորձին նվիրված հեռուստահաղորդումների շարքերի կազմակերպում:
 - Համամարդկային և ինքնատիպ արժեքների ընդունմանը զուգահեռ, ազգային մշակութային նույնականացման պահպանում:

Հասպավումներ

ԱԷԿ՝ Ատոմային էլեկտրակայան
ԱԵԿԿԱ՝ Արևելյան Եվրոպա, Կովկաս, Կենտրոնական Ասիա
ԱՀԿ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀԿ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ԱՀՌԾ՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՄՆ ՄԶԳ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԲՀՊՏ՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ
ԳԷՀ՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԵԱՀԿ՝ Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպություն
ԵՀ՝ Եվրոպական հանձնաժողով
ԵԽ՝ Եվրոպայի խորհուրդ
